ԿԱԹՈՒ

ՍԼԵՄԱՆՆ ՍԼԻ

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

ГАДЖИЭ ДЖИНДИ
КАНД. ФИЛОЛОГ. НАУК

КАРР И КУЛУКЭ СЛЕМАНЭ СЛИВИ

КУРДСКИЙ НАРОДНЫЙ ЭПОС

(Исследование и текст)

Под редакцией проф. ОВ. МЕЛИКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1941

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.57-34
Ջ-71

ՀԱՋԻԵ ՋՆԴԻ
ՖԻԼՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԹԵԿՆԱԾՈՒ

Ստուգված է 1961 թ.

ԿԱՌ ՈՒ ՔՈՒԼՈՒԿԵ ՍԼԵՄԱՆԵ ՍԼԻՎԻ

ՔՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍ

(Հետազոտություն ու տեքստ)

Խմբագրությամբ պրոֆ. ՀՈՎ. ՄԵԼԻՔՅԱՆԻ

2213

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1941

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական ֆիլիալի Նախագահության որոշմամբ.

ՔՐԴԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԸ

(ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Քուրդ ժողովուրդը, անցյալներում, չունենալով գիր ու գրականություն, հուժկու երևակայությամբ, իր կյանքի, կենցաղի, պայքարի մասին սերնդե-սերունդ ստեղծագործել է հարուստ ու ճոխ ֆոլկլոր։

Քրդական ժողովրդական բանահյուսության գանձերի մասին հիացմունքով գրել են ակադեմիկ Ն. Մառը, հայ նոր գրականության նախահայր քրդագետ Խաչատուր Աբովյանը[1] և նրանք, ովքեր այս կամ այն չափով հետաքրքրվել ու ծանոթացել են այդ ժողովրդի հոգևոր ստեղծագործությանը։

Քրդական ֆոլկլորը լինելով աշխատավորական ստեղծագործություն, հանդիսանում է քուրդ ժողովրդի կյանքի բանավոր հանրագիտարանը։ Կարելի է ասել, որ ֆոլկլորը միակ կենդանի հուշարձանն է քուրդ ժողովրդի անցյալ դասակարգային պայքարի, քաղաքական և տնտեսական բաղխումների, նիստ ու կացի, մտահորիզոնի, փիլիսոփայական խոհերի և գեղարվեստական ճաշակի։ Կարելի է հաստատորեն նշել, որ ֆոլկլորից լավագույն հուշարձան կամ վկայություն չկա այդ հին ժողովրդի կյանքից։

Ինչպես ռուսական, հայկական, իրանական և մյուս ազգությունների, նույնպես և քրդական ֆոլկլորը բազմաժանր է։ Ժո-

---

[1] „По словам армянского писателя *Абовяна*, „Народная поэзия курдов совершила изумительные шаги и достигла возможного совершенства“. По его наблюдениям, каждый курд, каждая курдинка—врожденные поэты в душе. Со слов же Абовяна восторженный отзыв о высоких качествах курдских песен дает и Moritz Wagner в своем путешествии“ *(տես՝ Н. Марр*, „Еще о слове челеби“, *էջ 29)*։

ժողովուրդն ստեղծել է էպիկական, լիրիկական և դրամատիկական երկեր, պատմվածքներ, հեքիաթներ, առակներ, առասպելներ, անեկդոտներ ու բայաթիներ։

Ա. Քրդական ֆոլկլորում զգալի տեղ է բռնում հովվական աշխատանքային երգերի ցիկլը, որի մեջ առաջատար դեր է խաղում աշխատավոր մարդը՝ հովիվը, հովվուհին, նախրապանը, տնտեսուհին, որոնց աշխատանքը սերտորեն կապված է գյուղատնտեսական անասունների՝ ձիու, եզան, ոչխարի, կովի կատարած դերի և նրանց արդյունավետության հետ։ Հիշենք քրդական «Հոռովելը», «Լուր-դա-լուրը» և այլն։

Այդ աշխատավորները՝ կապված երկրի արոտավայրերի, սարերի ու ձորերի հետ, սառնորակ աղբյուրների մոտ, գույնզգույն ծաղիկների ու փարթամ բուսականության մեջ՝ երգել են բնությունը, սիրել լեռները, հովիտները, գետերը, անձրևն ու ցողը, ջուրն ու քամին, այդ ամենը կապելով իրենց տան և դրսի առօրյա աշխատանքների ու հոգսերի հետ։

Բ. Ոչ պակաս հարուստ է սիրային երգերի և պատմությունների ցիկլը։ Այդ երգերը զուլալ և մշտահոս լեռնային առվակների նման կարկաչում են՝ հրապուրելով մարդկանց սրտերը։ Նրանք այնքան անկեղծ ու սրտաբուխ են, այնքան գողտրիկ նկարագրություններ ու գեղեցիկ համեմատություններ ունեն, որ մարդ նրանց մեջ տեսնում է իր բաբախուն սիրտը, իր հարազատ զգացումները և է՛լ ավելի է սիրում կյանքն ու աշխատանքը, սերը, է՛լ ավելի է գոտեպնդվում կյանքում երջանիկ ապրելու համար։

Գ. Քրդական ֆոլկլորում իրենց արժանավոր տեղն ունեն բնությանը վերաբերող, նույնքան գեղեցիկ ու հրաշալի երգերը։ Եթե նախորդ երգերը ներկայացնում են աշխատավոր մարդուն, նրա ներքին ու արտաքին աշխարհը, ապա բնության երգերը, նույնքան ռեալիստորեն, պատկերացնում են այն սարերն ու հովիտները, արոտատեղերն ու մարգագետինները, ամառանոցներն ու զոզանները, տեղացող անձրևն ու ձյունը, շոգն ու ցուրտը, փոթորիկն ու քամին, որոնց պայմաններում ապրում է մարդը։

Դ. Քրդական ֆոլկլորի ամենահարուստ ցիկլերից մեկն են կազմում նաև հարսանիքի պարերգները, որոնք կոչվում են «Բլա-

մե գովանդե»։ Նրանք մյուս երգերից տարբերվում են իրենց համաչափ ռիթմով, երաժշտական եղանակներով և այլն[1]։

Այդ ցիկլի հետ են առնչվում նաև ծիսական երգերը։

Ե. Այնուհետև քրդական ֆոլկլորի գանձարանում քիչ չեն այն երգերը, որ վերաբերում են քուրդ կնոջ վշտին և ուրախությանը։ Դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի.

1. Բողոք բանի և ծախու, սարկացնող ամուսնության դեմ։ Այս երգերը ընդհանուր անունով «Հայ լո դըլո» կամ «Դըլո» են կոչվում։

Այս ստեղծագործություններում հանդես է գալիս քուրդ կինը, բողոքում է ծեծի, ղալանի, անհավասար ամուսնության և բազմակնության դեմ («Մընե բխասիյա», «Հայլո դըլո մարումո»)։

2. Օրորոցի երգեր, որ հայտնի են «Լուրի-լուրի» անունով։ Քուրդ կնոջ համար իր վշտերը փարատելու միջոց էր օրորոցի երգերի հորինումը։ Քուրդ կինն իր երեխայի հետ էր բաժանում իր վիշտը։

Ինչպես մյուս ժողովուրդների, նույնպես և քրդերի մեջ մայրական այդ երգերն իրենց մեջ ամփոփում են մեծ հուզականություն, սիրող մոր ամբողջական աշխարհը, մայրական զգայուն սրտի ամեն մի թրթիռը։

Զ. Քրդական ֆոլկլորում պակաս տեղ չեն գրավում նաև մանկական երգերը, լեգենդները, հեքիաթները, բազմապիսի արկածային զրույցները, խաղերը։

Է. Նշանավոր են քրդական ողբի երգերը։

Քրդերի մեջ կային հատուկ ողբասացներ, մանավանդ կանայք, որոնք մեծ հարգանք էին վայելում։ Ալագյազի շրջանի Ջարջարիս գյուղում այժմ էլ ապրում է Բասո Օջեն, ողբասաց մի պառավ կին, որին գրեթե ամբողջ շրջանի քուրդ և հայ բնակչությունը ճանաչում և առանձին հարգանքով է խոսում նրա մասին։

Ողբասացների առանձնահատկությունն այն է, որ նրանք, մահացած մարդու արժանիքներին համապատասխան՝ տեղն ու տեղը երգ են հորինում՝ գովաբանելով նրա կյանքն ու գործունեությունը։

---

1 Տես Կ. Զաքարյան և Հ. Ջնդի, «Քրդական ժողովրդական երգեր», Երևան, 1936 թ.։

Ը. Քրդական ֆոլկլորում նշանավոր են կռվի ու պայքարի երգերը: Այդ երգերն արտացոլում են ժողովրդի սոցիալական պայքարի փորձերը, աշիրաթների ու պետությունների կռիվները և այլն:

Հետաքրքրական են ժողովրդական խռովությունների—ապստամբություններին վերաբերող երգերը: Այս երգերն ուղղված են աշիրաթապետների—ֆեոդալների անողոք կարգերի դեմ:

Ահա ժողովրդական բանահյուսությունից մի հատված, որտեղ ասվում է, որ՝

Ալո սև գանգա կըրա գազի,
Գո Խալո, բավե մըն կըրիրի,
Ձե բա, չե բլխաբըրա—
Բա ամ բըներն քի ժը մա բարխա, քի բարանա,
Դա բարդե բրայո, հա բարդե
Ինգլիս ու Մըհո բագ դժմըն, դա բարդե[1]:

Բազմաթիվ են այսպիսի երգեր քրդական ֆոլկլորում:

Թ. Քրդական ժողովրդական ստեղծագործության մեջ մեծ տեղ է բռնում էպոսը, վիպերգը: Քրդերն ստեղծել են մի շարք էպիկական երկեր, որոնք իրենց գեղարվեստականությամբ ու բովանդակությամբ հետ չեն մնում մյուս ժողովուրդների նշանավոր երկերից: Այդպիսի ուշագրավ երկեր են՝ «Ռոստամ ու Զալ»-ի քրդական վարիանտները, «Մամեն ու Զինեն», «Ջամբիլֆրոշը», «Սիամանթոն ու Խջեզարեն», «Մամեն ու Այշեն», «Մուսոն», «Դավրեշե Ավդին», «Ալիե Խարզանը», «Սեվա Հաջին», «Խավլ ղուրբանը», «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվլին» և այլն:

Քրդական ֆոլկլորը, շնորհիվ իր գեղարվեստական ու հասարակական-պատմական բարձր արժեքի, շնորհիվ բովանդակության ու մոտիվների հարստության ու բազմազանության,

[1] Ալոն երեք անգամ ասաց (կանչեց),
Ասաց,—Խալո, դու իմ հայրիկ լինես,
Լավ եղիր, լավ աշխատիր,
Տեսնենք՝ մեզնից ո՞րն է գալը, որը խույս
Դե քշիր, եղբայր, հա քշիր.
Անգլիացին ու Մհո-բեգ թշնամի են, քշիր:

գրավիչ ու հափշտակիչ է, և այդ է պատճառը, որ այն միաժամանակ դարձել է հարևան ժողովուրդների սեփականությունը, տարածվելով աշխատավոր մասսաների մեջ, նրանց հոգեկան աշխարհում գրավելով իր արժանավոր տեղը։

Անշուշտ, այստեղ կարևոր հանգամանք է հանդիսանում ֆոլկլորի ինտերնացիոնալ բովանդակությունը. ըստ ակադեմիկ Ն. Մառի՝ „нерелигиозные курдские песни сложены как на любовные, так на героические сюжеты. Но дело не в сюжетах, обновлявшихся, а в богатом репертуаре мотивов. О необычайной пленительности народной поэзии курдов достаточно красноречиво свидетельствует тот факт, что курдская песня почетная и любимая гостья и у христиан-армян. Путешественник *Мориц Вагнер* утверждает, что „многие курдские и езидские песни в Передней Азии распространены и в турецком переводе“[1].

Նույնպես՝ „...у горных айсоров „существует общий обычай петь курдские песни и рассказывать курдские сказки“[2].

Քրդական ֆոլկլորը, շնորհիվ այդ շփման՝ իր մեջ է առել նաև հարևան ժողովուրդների ֆոլկլորային նյութերը և, այդպիսով, ավելի քան ճոխացել ու հարստացել։ Նա յուրացրել և քուրդ ժողովրդի համար հարազատ է դարձրել հայ ժողովրդի անմահ էպոսը՝ «Սասունցի Դավիթը», որը մինչև այսօր էլ պատմըվում ու տարածվում է քրդերի մեջ։ Պետք է նկատել և այն, որ մի շարք սիրային-կենցաղային ու հերոսական ֆոլկլորային նյութեր, որոնք գոյություն ունեն քրդերենում, հայ բանաստեղծների ստեղծագործություններն են[3]։

Իրանական մեծ բանաստեղծ Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի մոտիվները («Ռոստամ ու Զալ»-ի ամբողջական պատումները) նույնպես տեղ են գտել քրդերենում։ Ադրբեջանի մեծ պոետ Նիզամի Գյանջևիի «Լեյլի ու Մեջնուն» և այլ պոեմների մի շարք պատումներ վաղուց եղել են քրդական ֆոլկլորում։ Բյոռ-օղլու կյանքի

[1] Н. Марр, Еще о слове „челеби“, էջ 30։
[2] В. Ф. Минорский, „Курды“, Петроград, 1915 г., էջ 13։
[3] Տես Էմինյան ազգագրական ժողովածու, Ե. հատոր։

հետ կապված պատմությունները մինչև այժմ էլ երգվում ու պատմվում են քուրդ ժողովրդի մեջ։

Այժմ, սովետական երկրում ծաղկում ու զարգանում է քըրդական նոր ֆոլկլորը, որը մեծ մասամբ հերոսական երգ է, նվիրված մեր առաջնորդներին՝ Լենինին ու Ստալինին։ *Նրանց, որպես ժողովուրդների ազատարարների, ուղղված են ամենաջերմ ու սրտաբուղխ ժողովրդական երգեր։*

Քրդական նոր ֆոլկլորում երգվում ու մեծարվում են ընկ. ընկ. Մոլոտովը, Վորոշիլովը, Միկոյանը, Կիրովը, Բուդյոննին, Կարմիր բանակը և Սովետական Միության հերոսները։

Մեծ տեղ են գրավում կոլխոզշինարարության, նոր կենցաղի՝ սոցիալիստական շինարարության վերաբերող երգերը։

Քրդական սովետական ֆոլկլորը ցայտուն կերպով արտահայտում է աշխատավոր մասսաների սերն ու նվիրվածությունը հանդեպ Լենին-Ստալինի փառապանծ պարտիայի։

„ԿԱՌ ՈՒ ՔՈՒԼՈՒԿԷ ՍԼԵՄԱՆԻ ՍԼԻՎԻ“ ՎԻՊԵՐԳԸ

I

Քրդական ֆոլկլորի մեջ իր գեղարվեստական արժանիքներով, դեմոկրատական ոգով և հետաքրքրական բովանդակությամբ կարևոր տեղ է գրավում «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվի» անունով հայտնի ժողովրդական վիպերգը, որի վերլուծմանն է նվիրված այս աշխատությունը։

«Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվի», որ նշանակում է՝ Սլիվցի (Սլիվանցի) Սուլեմանի որդիք Կառն ու Բուլուկը, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ գրի է առել քրդագետ պրոֆ. Ս. Եղիազարյանը, որը և քրդերեն տեքստը ռուսերեն թարգմանության հետ հրատարակել է 1891 թ.[1]։

Այդ վարիանտի մասին, որը կոչվում է «Բուլուկ ու Կառ», Եղիազարյանը գրում է. „Эта сказка продиктована гелоинцем. Говор гелоинцев близок к наречию, употребляемому джалалинцами и вообще курдами, кочующими вблизи Арарата“[2]։

Այդ վարիանտի բովանդակությունը հետևյալն է.—

Ժամանակով ապրում էր Մըլեցի (Մըլի—քրդական ցեղ է) Ամար աղան. Նա ունենում է Փերիխան անունով մի հասունացած աղջիկ։ Նրա աղջկանը և՛ Թոռուններն էին ուզում, և՛ պզմամները, իսկ Մըլի Ամար աղան չէր կարողանում որոշել, թե իր աղջիկը որի՞ն տա։ Եթե աղջիկը Թոռուններից որևէ մեկին տար, պզմամները կթշնամանային իրեն հետ, իսկ եթե տար պզմամներից որևէ մեկին՝ կթշնամանային Թոռունները։

Այդ պատճառով Մըլի Ամար աղան Փերիխանին նրանցից և ոչ մեկին չի տալիս։

Փերիխանի ամուսնության հարցով զբաղվում են նաև Մըլի

---

1 *Տես* Записки Кавказского отдела имп. русск. географ. общества, кн. XIII, *էջ 110*։

2 *Նույն տեղում*։

ցեղի «մեծամեծները», բայց նրանք էլ չեն կարողանում մի որոշում ընդունել։ Մըլի Ամար աղան ընկնում է ծանր մտատանջության մեջ, ինչպես ինքն է ասում՝ «երկու կրակների մեջ», և երբ չի գտնում Փերիխանի ամուսնության հարցը լուծելու։

Մըլի Ամար աղային օգնության է գալիս նրա կինը, որն իմանալով իր ամուսնու մտատանջությունը, առաջարկում է նրան ճաշկերույթ սարքել, հրավիրել ցեղի բոլոր երիտասարդներին, «փարփուր ֆինջանը» սուրճով լցնել, Փերիխանի մատանին մեջը գցել և առաջարկել նրանց․ «Ով որ այս ֆինջանը վերցնի, սուրճը խմի, Փերիխանի մատանին ֆինջանից հանի ու դնի իր մատը, պարտավոր է գնալ արաբական ցեղի միջից Բեջան դամբիկը և մի երամակ սևալանջ ուղտեր բերել, որպես Փերիխանի ղալան, որից հետո Փերիխանը կհասնի նրան (բերողին)»։

Մըլի Ամար աղան հետևելով կնոջ խորհրդին, այդպես էլ անում է, սակայն ներկա գտնվող հազար մարդուց և ոչ մեկը չի համարձակվում առաջարկված պայմանն ընդունել։ Բոլորն էլ վախենում են ընդունել այդ հանդուգն և վտանգներով լի առաջարկությունը։ Մըլի Ամար աղան ընկնում է անհարմար և ամոթալի վիճակի մեջ։ Բոլորից վերջը կանչում են այրի Վարդակի երկու որդիներին՝ Կառին և Բուլուկին։ Չնայած Կառը խորհուրդ է տալիս և խնդրում է իր եղբայր Բուլուկին չմոտենալ ֆինջանին, բայց վերջինս ուշադրություն չի դարձնում նրա հորդորներին, գալիս, ընդունում է Մըլի Ամար աղայի առաջարկը, եղբորը հանդիմանելով, թե՝

— Որբուկ, մարդը մեռնում է, անունն է մնում․ առյուծը մեռնում է, կաշին է մնում։

Դրանից հետո Բուլուկը տեսնելով, որ կանգնած են կատարված փաստի առաջ, առաջարկում է եղբորը տուն գնալ՝ Սուրկ և Համադան ձիերը զենքերի ու ռազմամթերքի հետ միասին դուրս բերել, բայց այնպես, որ մայր Վարդակը չիմանա։ Նրանք իրենց այս մտադրությունը չեն կարողանում իրագործել։ Վարդակն իմանում է կատարվածի մասին և, գալով Մըլի Ամար աղայի մոտ, վեճի է բռնվում նրա հետ, անիծում, խայտառակում է նրան ու խնդրում է Բուլուկին ձեռք քաշել իր որոշումից, բայց, իհարկե, Բուլուկը մերժում է։

Գուլուկի հետ ճանապարհորդում են եղբայր Կառը, Մըլի Ամար աղայի ծառաներից Լջոյն Մըրտըըը և Նամաթը։

Վարդակն իր որդիներին խրատում է, որ չհետապնդեն այծյամներին, զգուշանան, որ ձիերը ջուր չխմեն նեխած ճահճային լճակներից, որ այնտեղ հասնելուն պես ծանոթություն տան արաբների մեջ ապրող իրենց յոթ քեռիներին, որպեսզի առիթ չլինի նրանց հետ կռվի բռնվելու և, այսպիսով, ողջ և առողջ վերադառնալ։

Սակայն ճանապարհորդության ընթացքում, Նամաթի դըրդումով, Գուլուկը մոր խորհուրդը մոռանում է և սկսում է հետապնդել արագավազ և կարծր քարերի միջով փախչող այծյամին. այնուհետև, երբ նրանք հասնում են նեխած ճահճային լճակներին, Նամաթը գիշերով, գաղտագողի, Սոսըկին՝ Գուլուկի զամբիկին՝ բաց է թողնում դեպի լճակները։ Ձին խմելով նեխած ջուրը, վնասվում է։ Այսպիսով՝ Վարդակի երկու նախազգուշական խրատներն էլ չեն պահպանվում։ Եղբայր Կառը տեսնելով այդ, Գուլուկին առաջարկում է վերադառնալ. սակայն նա մերժում է եղբոր առաջարկությունը, ասելով.

— Մենք ի՞նչ երեսով վերադառնանք, չէ՞ որ Ամար աղան կասի. Գուլուկը գյադա էր, վախից վերադարձավ։

Շարունակելով իրենց ճանապարհը, Գուլուկն ու Կառը ձեռք են բերում ուղտերը և Բեջան զամբիկը, բայց հենց այստեղից էլ արյունահեղ կռիվ է սկսվում նրանց և արաբական զորքի միջև, որի գլուխ էին կանգնած նրանց յոթ քեռիները։

Քեռիները, չճանաչելով իրենց քրոջ որդիներին, կատաղորեն կռվում են։ Գուլուկը նրանց հետապնդում է, մտածելով, թե՝ «յոթին էլ կբռնեմ, հետո կասեմ՝ ես ձեր քրոջ որդին եմ». սակայն Սոսըկը, որ վնասվել էր կարծր քարերի վրա վազելուց և նեխած լճակների ջրից խմելուց, չի կարողանում ապառաժից թռչել. հենց այդ ժամանակ քեռիները հետ են դառնում և նիզակի մի-մի հարված հասցնում «թշնամուն», իրենց քրոջ որդուն՝ Գուլուկին։

Այստեղ նույնպես Նամաթը խարդախություն է անում, չի օգնում Գուլուկին, բայց ամեն կերպ ցույց է տալիս, որ իբր թե ուզում է օգնել։ Սակայն Գուլուկի վիրավորվելով կռվի բախտը չի որոշվում հօգուտ արաբական միրի, այլ ընդհակառակը՝ Կառն

իր ընկերներով ոչնչացնում է յոթը քեռիներին և արաբական զորքին։

Վիրավոր Բուլուկը նախ սպանում է Սոսըկին, որ իրենից հետո չմնա և, նրան տեսնելով՝ չծաղրեն իրեն, ապա կտակում է եղբորը, որ իրեն դնեն կարավանի առաջին ուղտի վրա, մի ձեռքն ուղտի կողքին կախ ընկած թողնեն, որպեսզի շարժվի, և մայր Վարդակն այդ տեսնելով՝ լաց չլինի, մտածի, թե՝ «աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա»։

Կառը վերադառնալով, Բեջանը և ուղտերի երամակը հանձնում է Մըլեցի Ամար աղային։ Սակայն այստեղ էլ հանդես է գալիս դավաճան Նամաթը, որը, դիմելով Մըլեցի Ամար աղային, ասում է. «Բեջան զամբիկը ես եմ բերել, ուղտերը ես եմ բերել, Փերիխանին որդուս տուր»։

Այս բանը լսում է Լըզոյե Մըրտըըը, նա Փերիխանի մորը և Փերիխանին բացատրում է, որ Նամաթը ստախոս է, դավաճան, նրա պատճառով Բուլուկը կռվի վերջում սպանվեց, Բուլուկն ու Կառն են Բեջանն արաբներից խլել, Կառն է այդ բոլորը բերել։

Սրանից հետո միայն Փերիխանին, սրա համաձայնությամբ, տալիս են Կառին, իսկ Նամաթին վտարում են իրենց ցեղից, որից հետո մայր Վարդակը հանգստանում է։

* * *

Այնուհետև մեր վիպերգի երկու պատումներին հանդիպում ենք «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի Ե. հատորում (1904 թ.)։

Այդ պատումներից առաջինը կոչվում է «Բուլըք ու Կեառո» (քրդական բարբառէ ի հայ բարբառի վերածված)։

Հարգելի բանահավաք Ս. Հայկունին այդ պատումի մասին գրում է.

«Վեպս տարածված է Սուրմալվի Կուլաբ հայ գյուղի մեջ. ամբողջովին երգ է և քրդերեն շատ խրթին կերգվի. լսած եմ շատ անձերե. բառ առ բառ գրի առնելու հարմարություն չեմ ունեցած. այլ միայն պարունակությունն այլ և այլ անձերե հարցնելով լրացուցած և գրած եմ։ Վեպս ունի շատ ճյուղեր. ներկա վեպս լսածներուն մեջ ամենե ընդարձակն է»[1]։

1 Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ե., էջ 131։

Այս պատումի բովանդակությունը հիմնականում համընկնում է պրոֆ. Ս. Եղիազարյանի գրի առած պատումին, բայց ունի կարևոր լրացումներ. այսպես օրինակ՝ հիշվում է Սլեմանի նախրապան լինելու, նրա զամբիկը՝ Սոսիկը ծովաձիուց լինելու, հայ Պողոսի հանդես գալու մասին, այլև այն մասին, թե ինչպես Սլեմանը Վարդակին առևանգում՝ փախցնում բերում է Մըլի Ամար աղայի աշիրաթի մեջ:

Երկրորդ պատումը նույնպես կոչվում է «Բուլլըք ու Կյառո» և գրված է Արճեշի բարբառով: Այդ պատումի մասին բանահավաք Ս. Հայկունին գրում է.

«Իմ առաջարկությամբ գրի առած է Ալաշկերտի Ծաստուր գյուղացի Իսրայել Միրաքյան[1]: Ինչպես կերևի ասողը երգերն հայացուցած պատմած է, բայց թե գրվածքի և թե երգերու մեջ շատ թերություններ կային, կարգադրելու համար մեծ հոգ տարած եմ, և կարգի դրած»[2]:

Իր բովանդակությամբ այս պատումը նույնպես նման է մեր հիշած առաջին և երկրորդ պատումներին, սակայն իր անուններով՝ Փերիշան, Վարդակ՝ համընկնում է հետագայում հավաքած պատումներին:

Հետաքրքրականն այն է, որ նույն ժողովածվին կցված են նաև 13 քրդական ժողովրդական երգեր, որոնք ձայնագրել է Կոմիտասը և որոնցից երկուսն անվանվում են «Բուլըդ ու Գյառն»[3]: Սրանք վեպերգի հատվածներն են: 1936 թ. կոմպոզիտոր-ազգագրագետ Արամ Քոչարյանի կողմից ձայնագրվեց վեպերգի նաև մի այլ հատված, որը, առաջինների հետ միասին, կցում ենք մեր այս աշխատությանը:

Այնուհետև, 1933 թ. ՀՍՍՌ Լուսժողկոմատի և Կուլտուրայի պատմության նախկին ինստիտուտի կողմից կազմակերպված ֆոլկլորագետների գիտարշավի ընթացքում գրի է առնված մի այլ պատում: Հետագայում, դիսերտացիայի պատրաստելու կապակցությամբ, մինչև 1936 թ. վերջերը մենք հնարավորություն

---

1 Իսրայել Միրաքյանը վերջին տարիներս Թալինի շրջանի քրդական գյուղերում զբաղվում էր ուսուցչությամբ, 1937 թ. մեռավ Թալինի շրջանի Արեգ գյուղում:

2 Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ե., էջ 147:

3 Նույնը, էջ 566:

ունեցանք հավաքելու 29 պատում ևս[1], որոնք, պրոֆ. Ս. Եղիազարյանի պատումի հետ միասին, լույս տեսան «Քրդական ֆոլկլոր» խորագրով ժողովածուի մեջ[2]։

Այդ պատումները հետևյալ պատկերն ունեն։

1. «Բուլուկե Սըլեմին» ասել է անգրագետ, 48 տարեկան Ազո Գևորգյանը։ Նա, բացի հայերենից՝ քաջ գիտե նաև քրդերեն ու թուրքերեն լեզուները։ Ինքն Բագնոցից է՝ Մանազկերտի շրջան։

Ազոն այժմ ապրում է Աշտարակի շրջանի Հախս գյուղում, կոլխոզնիկ է։ Կարելի է ասել, որ նա քրդական ֆոլկլորի շտեմարանն է։

Այս պատումը գրի է առնվել 1933 թ. հոկտեմբերին։

Գրի առավ Հ. Ջնդին

2. «Կառ ու Բուլուկ»—գրի է առել քրդագետ պրոֆ. Ս. Եղիազարյանը, որի մասին արդեն խոսվել է։

3. «Կառ ու Բուլուկ»—ասել է կոլխոզնիկ, անգրագետ Հասոյե Մամոն, 55 տարեկան, ծնվել է Այնթափում։ Հետագայում ապրել է Ղարսի շրջանի Ենդուրե գյուղում, իսկ այժմ ապրում է Թալինի շրջանի Հակկո գյուղում։ Հասոյե Մամոն շատ լավ գիտե «Մամեն ու Զինե»-ն, «Ալիե Խարդանը» և այլ հայտնի վեպերը։

Գրի առան Ջեյնաբա Իբոն և
Հ. Ջնդին

4. «Բուլուկե Սըլիմին»—ասել է անգրագետ Սիմոն Հովհաննիսյանը, 55 տարեկան։ Ինքը Մշեցի է, Բադլու գյուղից։ «Բուլուկե Սըլիմին» սովորել է Դիարբեքիրում եղած ժամանակը։ Այժմ Աշտարակի շրջանի Ավան գյուղում նախրապանություն է անում։

Գրի է առել Պետոյանը

5. «Կառ ու Բուլուկ»—ասել է անգրագետ Աբասե Շամիշը, 41 տարեկան։ Աբասեն ապրում է Ալագյազի շրջանի Ջարջարիս գյուղում։

Գրի է առել Ս. Զաչյանը

1 Տես Հ. Ջնդի և Ա. Ավդալ—«Քրդական ֆոլկլոր» ժողովածու, էջ 7—257. Երևան, 1936 թ.։

2 Բացի այդ՝ վերջերս գրի առանք նաև երեք նոր պատումներ։

6. «Բուլուկե Սըլեմին»—ասել է անգրագետ, կոլտնտեսիկ, քըրդախոս, 65 տարեկան Տոնո Զատոյանը: Նա Մշի շրջանի Ցռոնք գյուղից է, իսկ այժմ ապրում է Աշտարակի շրջանի Օրգով գյուղում:

Այս պատումը Աշտարակի շրջանում, 1933 թ. հոկտեմբերին, գրի են առել ՀՍՍՌ Կուլտուրայի պատմության ինստիտուտի բրիգադի անդամներ Հ. Ջնդին և Շ. Կուժիկյանը:

7. «Կառ ու Բուլուկ»—ասել է Համիդե Ֆատի Հասանովը, 14 տարեկան, գրագետ, Կոտայքի շրջանի Դավալխարաբա գյուղից: Համիդը «Կառ ու Բուլուկ»-ը սովորել է իր երգիչ հորից՝ Ֆատիից:

Գրի առավ Հ. Ջնդին

8. «Կառ ու Բուլուկե Սըլեմին»—ասել է 70 տարեկան, անգրագետ Շէխե Մամոն: Նա ծնվել է Այնթափի շրջանում: Հետագայում գաղթել, բնակություն է հաստատել Ղարսի շրջանի Բաջալու գյուղում, իսկ այժմ ապրում է Թալինի շրջանի Ղաբաղթափա գյուղում. կոլտնտեսիկ է, գյուղի հայտնի դանգբեժն է: «Կառ ու Բուլուկե Սըլիմին» ասելու ժամանակ նրան օգնում էր նրա համագյուղացի, բանիմաց, հայտնի երգիչ կույր Մորովե խալաքը:

Գրի առավ Հ. Ջնդին

9. «Կառ ու Բուլուկ»—ասել է 21 տարեկան, ուսուցիչ Ահմադե Այոն Սադոյի: Սույնը սովորել է իր դանգբեժ, 45 տարեկան, անգրագետ եղբայր Մահմադից, իսկ վերջինս էլ սովորել է ոմն Մըկսեցի (Մոկսեցի) Մոլլա Ալիից:

Գրի առավ Հ. Ջնդին

10. «Կառ ու Բուլուկ Սըլիմին»—ասել է 69 տարեկան, անգրագետ Բաքրե Ամոն: Ծնվել է Այնթափի շրջանում: Հետագայում գաղթել և բնակություն է հաստատել Ղարսի շրջանի Ղարագալա գյուղում: Մեռել է Վաղարշապատի շրջանի Բյուրաքյանց գյուղում:

Գրի առավ Հ. Ջնդին

11. «Կառ ու Բուլուկ»—ասել է կոլտնտեսիկ, 60 տարեկան, անգրագետ Խամես Շամոն: Ծնվել է Ցամանչայիր գյուղում, ամուսնացել է Ղուզուլղուլա գյուղում (Ղարսի շրջան): Առաջին

իմպերիալիստական պատերազմի ժամանակ նա կորցրել է իր ա-մուսնուն: Այժմ ապրում է Թալինի շրջանում:

Գրի առավ Հ. Ջնդին

12. *«Կառ ու Բուլուկ»—ասել է Խամիս Շամոյի փեսա* Ասադե Օզմանը—*47 տարեկան, անգրագետ, կոլխոզնիկ: Ասադն ծըն-վել է Ղարսի շրջանի Ղուզուլղուլա գյուղում:*

Այժմ ապրում է Թալինի շրջանի Սաբունչի գյուղում:

Գրի առավ Հ. Ջնդին

13. *«Կառ ու Բուլուկ Սըլիմին»—ասել է* Մանուկ Վարդանյանը: *Մանուկը Մշեցի է, 65 տարեկան, այժմ ապրում է Բասարգեչարում. տիրապետում է քրդերեն լեզվին:*

Գրի առավ Թեմուր Իսայեվը

14. *«Սարհաթյա Կառ ու Բուլուկ» («Կառ ու Բուլուկի պատմությունը»)—ասել է ուսանող* Կակոյե Մըրազը: *Կակոյի ծնողները Ղարսի շրջանի Սոգութլու գյուղից են: Պատերազմի ժամանակ գալիս, բնակություն են հաստատում Ապարանի շրջանի Դյուզքյանդ գյուղում:*

Գրի առավ Հ. Ջնդին

15. *«Կառ ու Բուլուկ»—ասել է 80 տարեկան, անգրագետ* Ալիե Մամոն: *Ալին Թանդուրակի շրջանի Սարի Բուլաղ գյուղից է: Իմպերիալիստական առաջին պատերազմի ժամանակ գալիս հաստատվում է Թալինի շրջանի Բալաշբեկ գյուղում: Նա շատ հեքիաթներ գիտե:*

Գրի առավ Հ. Ջնդին

16. *«Կառ ու Բուլուկ»—ասել է Ղարսի շրջանի Ալլա Սընջո գյուղի բնակիչ՝ 60 տարեկան, անգրագետ* Բաքրե Սընջոն: *Բաքրն իմպերիալիստական առաջին պատերազմից հետո հաստատվել է Աշտարակի շրջանի Աշիրաբաթ գյուղում:*

Գրի առավ Հ. Ջնդին

17. *«Կառ ու Բուլուկ»—ասել է կոմերիտական, ուսուցիչ, 25 տարեկան* Ջասմե Ղասոն: *Ջասմն ապրում է Թալինի շրջանի Թըլըք գյուղում, այնտեղ էլ պաշտոնավարում է: Նրա ծնողները*

Ղարսի շրջանի Բաջալու գյուղից են: Նա վիպերգը սովորել է իր 80 տարեկան հորեղբայր Իսմայիլից:

Գրի առավ Հ. Ջնդին

18. «Կառ ու Բուլուկ»—ասել է 15 տարեկան ուսանող՝ Թեմուրե Սադըխը: Գրառելու ժամանակ Երևանում՝ նրան օգնում էր իր դասընկեր Հուսեյին Ահմադը:

Գրի առան Ջեյնաքա Իբոն և
Հ. Ջնդին

19. «Բուլուկ ու Կառո»—ասել է 48 տարեկան, կիսագրագետ Վ. Վարդանյանը: Նա Վանի շրջանից է. այժմ ապրում է Երևանում: Նա պարերի վարպետ է, շատ ֆոլկլոր գիտե, բայց քրդերեն լեզուն որոշ չափով մոռացել է: Քյոռ-օղլուց մի քանի պատումներ գիտե:

Գրի առավ Հ. Ջնդին

20. «Կառ ու Բուլուկ»—ասել է 22 տարեկան Ավդոյե Շավոն: Նա ուսանող է, Ալագյազի շրջանի Բոզիխամփ գյուղից: Ավդոն՝ «Կառ ու «Բուլուկ»-ը սովորել է իր համագյուղացի Բաքրե Ասադից:

Գրի առավ Հ. Ջնդին

21. «Կառ ու Բուլուկ»—ասել է սասունցի, մոտ 65 տարեկան Միրո Ղուկասյանը, որն այժմ ապրում է Թալինի շրջանի Աշնակ գյուղում:

Գրի առան Ք. Տոնոյանը և
Հ. Ջնդին

22. «Կառ ու Բուլուկ»—ասել է 19 տարեկան ուսանող Ալին, Երևանում: Սույնը սովորել է իր ազգական Ադինե Իսոյից: Ալին, բացի «Կառ ու Բուլուկից», շատ հեքիաթներ գիտե:

Գրի առավ Հ. Ջնդին

23. «Կառ ու Բուլուկ»—ասել է Մշեցի, 70 տարեկան Մանուկ Աջո Հարությունյանը: Ինքն ապրում է Թալինի շրջանի Ներքին Թալին գյուղում:

Գրի առավ Ք. Տոնոյանը

24. «Կառ ու Բուլուկ»—ասել է 15 տարեկան ուսանող Վազիրե Մըստաֆան, Երևանում:

25. «Կառ ու Բուլուկ»—ասել է 19 տարեկան ուսանող Իսկոյե Ամրը։ Իսկոն Ալագյազի շրջանի Ջարջարիս գյուղից է։

Գրի առավ Հ. Ջնդին

26. «Կառ ու Բուլուկ»—ասել է Ալագյազի շրջանի Բարվանսարա գյուղի բնակիչ 58 տարեկան, անգրագետ Աղոյե Հաջին։ Նա սույնը սովորել է իր հանգուցյալ հորեղբայր Կալոյից։

Գրի առավ Հ. Ջնդին

27. «Կառ ու Բուլուկ»—ասել է 15 տարեկան ուսանող՝ Մամեե Ալոն։ Մամեն ծնվել է Թելավում, ծնողները Թբիլիսիում բանվորություն են անում։ Նա սույնը սովորել է իր հայր Ալոյից։

Գրի առավ Հ. Ջնդին

28. «Կառ ու Բուլուկ»—ասել է Թալինի շրջանի Բառոժ գյուղի բնակիչ, 80 տարեկան անգրագետ Թեջոն։

Գրի է առել Ա. Ալոն

29. «Կառ ու Բուլուկե Սըլիմլի»—ասել է Թալինի շրջանի Թըլըք գյուղի բնակիչ, 16 տարեկան Սամանդե Ղայմազը։ Սույնը սովորել է իր հանգուցյալ հորեղբայր Իսմայիլից։ (Տես № 17 պատում)։

Գրի առավ Հ. Ջնդին

30. «Կառ ու Բուլուկ Սլեմին»—ասել է կոլխոզնիկ Շաքրե Մուրադը, 42 տարեկան, կիսագրագետ, Ալագյազի շրջանի Ջանոյի գյուղից։ Բացի այս վիպերգից՝ շատ ֆոլկլորային նյութեր գիտե։

Գրի առավ Հ. Ջնդի

Այսպիսով՝ առայժմ մեր ձեռքի տակ ունենք 35 պատում, որոնցից 2-ը հայերեն, 33-ը քրդերեն և նրանցից մեկը՝ ռուսերեն թարգմանությամբ (№ 2 պատումը)։

2

Բաղդատելով վիպերգության մեր ձեռքի տակ եղած բոլոր պատումները, մենք եկանք այն եզրակացության, որ նրանք բոլորը կարող են մի ընդհանուր անուն կրել և այդ մենք անվա-

նում ենք «Կառ ու Բուլուկն Սլեմանն Սըլիվլի», որ թարգմանաբար նշանակում է՝ «Սըլիվցի (Սլիվանցի) Սլեմանի որդիներ Կառն ու Բուլուկը»:

Մեր ունեցած №№ 8, 10, 13 և 30 պատումները կոչվում են «Կառ ու Բուլուկն Սըլեմին», №№ 1, 4 և 6 պատումները՝ «Բուլուկն Սըլեմին», № 29-ը՝ «Կառ ու Բուլուկն Սըլիվլի», № 14-ը «Սարհաթյա Կառ ու Բուլուկ» (Կառ ու Բուլուկի պատմություն), № 19-ը՝ «Բուլուկ ու Կառո», իսկ մնացածները՝ «Կառ ու Բուլուկ»:

Անկասկած, այս բոլոր վերնագրերը սազական են վիպերգի բովանդակությանը, սակայն, մեր կարծիքով՝ նրանք ամբողջական վերնագիր չեն կարող հանդիսանալ: Մեզ թվում է, որ վիպերգի անվան մեջ քրդերեն լեզվի ոգուն համապատասխան կըրճատումներ են տեղի ունեցել. մերթ կոչվելով «Կառ ու Բուլուկն Սլեման», կամ Սլեման բառի փոխարեն՝ Սլո (№ 18 պատում), մերթ «Կառ ու Բուլուկն Սլիվանի»—Սլիվանիի փոխարեն, Սըլիվլի և կամ ավելի կրճատ՝ «Կառ ու Բուլուկ»: «Սլեման» կամ «Սուլեյման», որը քրդերենում տղամարդու անուն է: Նրա կրճատ և տարածված ձևն է «Սլո»-ն: Ուրեմն աներկբա է, որ մեր վիպերգի «Սլեման» անունը տղամարդու անուն է, և նա հանդես է գալիս որպես Կառ ու Բուլուկ եղբայրների հայր, Վարդակա Հասե Դուգեի ամուսին: Սակայն այս «Սլեմանը» հիշվում է նաև «Սըլվլի» անունով, որը նույնպես Կառ ու Բուլուկի հայրն է, Վարդակա Հասե Դուգեի ամուսինը (№ 29 պատում): Այս ինչպես բացատրել:

Սըլիվլի կամ Սըլեվանի, որպես տղամարդու անուն, քրդերի մեջ չենք լսել, սովորաբար նա դրվում է անվան վրա և ցույց է տալիս, թե տվյալ անհատը որտեղացի է. այսպես օրինակ՝ հայտնի է «Սխաբանդե Սլիվլի» («Սխաբանդե Սըլիվլի ու Խջեզարե» սիրային վիպերգի հերոս) և այդ ցույց է տալիս, թե Սխաբանդը Սլիվանցի է, իսկ «Սըլիվլի» կամ «Սլիվանի»—դաշտի անուն է, որը գտնվում է Դիարբեքիրի հարավ-արևելյան կողմում, այսինքն այնտեղ, որտեղ ստեղծագործվել է վիպերգը: Պետք է նկատել և այն, որ այնտեղ Մըլլիների հետ կապված է նաև 4000 վրանաբնակ Սլիվլի կամ Սլիվանցի կոչված մի աշիրաթ[1]:

---

[1] Alexandre Jaba, „Recueil de notices et récits kourdes", էջ 7:

Ուստի սա մեզ իրավունք է տալիս ասելու, որ դժվար թե մեր վիպերգի հերոսի անունը Սըլիվլի լինի, այլ Սըլիվի—Սլիվանի պետք է հասկանալ, որպես տեղի կամ տոհմերի անուն։ Իսկ տոհմի անունը, պետք է ենթադրել, տեղի անունից է առաջ եկել։ «Կառ ու Բուլուկ» վիպերգում Սլեմանի բառը դարձել է ազգանուն, ստանալով Սլեմանե Սըլիվլի ձևը, ճիշտ այնպես, ինչպես Սխարանցե Սլիվլի, որը, առանձին վերցրած, կոչվում է միայն Սխարանց։

Իրենց միջավայրի և տոհմի անունով կոչվելու երևույթը սովորական է քրդերի մեջ. ինչպես օրինակ՝ Շերեֆ-էդդին Բիթլիսի, Ահմադե Խանի, նույնպես նաև հայերի մեջ, օրինակ՝ Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Սասունցի Դավիթ, Մովսես Խորենացի, կամ վրացիների և ադրբեջանցիների մեջ, այսպես օրինակ՝ Շոթա Ռուսթավելի, Նիզամի Գյանջևի և այլն։ Ուրեմն, Կառ ու Բուլուկը լինելով Սլեմանի ժառանգները, կարող էին կոչվել նաև «Կառ ու Բուլուկե Սլիվլի», ինչպես հիշված է № 29 պատումում։

Այսպիսով՝ վերականգնելով վիպերգի լրիվ և ամբողջական անունը, այն է՝ կոչելով «Կառ ու Բուլուկե Սլեմանի Սլիվլի», միևնույն ժամանակ, այդ իսկ անվամբ մեզ համար պարզվում է այն միջավայրը, որտեղից սկիզբ է առել վիպերգը՝ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլին»։

3

Մեր վիպերգության մեջ հիշատակված աշխարհագրական և տեղագրական անունները, ինչպիսին են՝ Էլա Մըլա, Էլա Արաբա, Սլիվլի, Խարուր (Խաբուր) գետ, ձյան Ջուդե, ձյա Ղարաջդաղե, ձյայե Սենջարե, Նեխած Լճակներ, Մերդին և այլն—մեզ համար ուղեցույց կարող են ծառայել վիպերգի աշխարհագրական միջավայրը որոշելու գործում։

Այստեղ մեզ հետաքրքրում է Էլա Մըլա—Մըլե աշիրաթը, որի ուր լինելու մասին հետևյալ տեղեկությունն ունենք. «Ես,— ասում է Մարկ Սայկսը,—եղա Դիարբեքիրի շրջանի Արքավան գյուղում, որի բնակչությունը հայեր և քրդեր էին։ Հանդիպեցի մի քուրդ բեկի։ Այդ անձնավորությունը հետևյալ տեղեկությունը

տվեց Իսմ. սուլթան Սելիմը, որը պարսիկներից գրավեց Քուրդիստանը, Սիրիան և Արմենիան (1512—1520), իր վեզիրին ուղարկում է մեր կողմերը։ Վեզիրը տեսնում է, որ քրդերը քոչվոր են և չեն մշակում երկիրը. այն ժամանակ վեզիրը նրանց ասում է՝ կամ դուք պետք է նստակյաց լինեք կամ պիտի գնաք Ջզիրե. ոմանք՝ մըլեցիներից չեն համաձայնում այդ առաջարկին և գնում են դեպի Ջզիրե, ոմանք բարձրանալով Դերսիմի լեռները, այնտեղ կազմում են մլան, ոմանք այդ քրդերից մնում են տեղում, մշակում երկիրը»[1]։ Մի այլ ճանապարհորդ գրում է. «Մենք գտանք շատ քուրդ ընտանիքներ, նրանք իրենց վրանները դրել էին Արխանայի ու Դիարբեքիրի միջև և պատկանում էին Մըլի աշիրաթին, որը բնակվում է այս դաշտի արևելյան լեռներում, մինչև Նեսիբինի դաշտը»[2]։ Այնուհետև Ջի-չի և Մըլի քրդերը, ասում է Լայարդը, որոնք գարնանը իրենց վրանները դնում են Մերդինի լեռների ստորոտում, այժմ իջել են Խաբուր գետի հարուստ արոտավայրերը և ուրիշ շատ արաբ ցեղեր նրանց հետ միասին իջել են այստեղ[3]։

Վերոհիշյալներից եզրակացնում ենք՝

ա) վիպերգում հիշատակվող Մըլի աշիրաթը գոյություն է ունեցել և այժմ էլ գոյություն ունի.

բ) Մըլի աշիրաթը գրավելով հյուսիս-արևմտյան Միջագետքը, մոտ է եղել արաբական ցեղերի հետ—Խաբուր գետի արոտավայրերի շրջանում։

Մեր վիպերգում հիշատակվում է նաև Արաբական էլ (էլա Արաբա) կամ միրե Արաբա, որոնց մոտից Կառ ու Քուլուկ եղբայրները փախցնում են Բեջան գամբիկը, ուղտերի երամակը՝ Խաբուր գետի հոսանքի վրա։

Այսպիսով, կասկածից դուրս է, որ մեր վիպերգը վերաբերում է «Մըլի» աշիրաթին, և նրա հարևան Արաբական էլին (էլաթին), որոնց բնակության սահմաններում հոսում է Խաբուր գետը։ Ինչպես հայտնի է, դեպքի միջավայրը Խաբուր գետի հովիտն է, որի վերին մասերի սահմաններում է Մըլի աշիրաթը։ Պետք է նկատել և այն, որ այդ շրջանները՝ մինչև Ջաբլ Աբդլ-Ազիզ՝ Ջրա-

[1] Mark Sykes, „The caliph's last heritage", էջ 360։

[2] Dupre A., „Voyage en Perse„, հ. 1, էջ 65։

[3] A. Layard, „Nineveh und Babylon", էջ 236—238։

ռատ ու հարուստ բուսականություն և շատ բարեբեր հողեր ունեն:

Արզլ-Աղբզից գետի հարավ մինչև Եփրատ և Խաբուրի գետաբերանը անապատ է: Այս շրջանումն են գտնվում մեր վիպերգի մեջ հիշատակված Կարե խաղալները (վայրի այծյամներ, եղնիկներ), որտեղ Բուլուկը հետապնդում ու որսում է մեկին, ինչպես և Գոլադանյանները (Նեխած Լճակներ), որտեղից Սոսըկը ջուր է խմում և անպետքանում:

Ահա թե Կառ ու Բուլուկի ճանապարհորդությունն ինչպես է նկարագրվում վիպերգում:

«Նրանց ռահվիրան (վալադը) Մըրտըը Աթոն էր. նա Կառին և Բուլուկին տարավ Գունի կոչված բլրակների ճանապարհով, այնպիսի ճանապարհով, ուր մակաղում են վայրի այծյամները: Նրանք Արաբստանի հողն անցան, ընկան ավազուտների և ավազների մեջ, յոթն օր ճանապարհ գնացին, նրանց ճանապարհի վրա ջուր չկար, վայրի այծյամները յավշան թփերի մոտից գլուխները բարձրացնում, փախչում էին. Բուլուկը, Սոսըկը հեծած, նրանց հետապնդում, քամանդով բռնում, գցում էր ձիու թամքի վրա՝ բերում»:

Էպոսում հիշատակված այս վայրում բնակվող բեդվին արաբները ամառը հետզհետե բարձրանում են գետի վեր՝ մինչև Ղարաջադաղ, իսկ աշնանը վերադառնում են գետի հարավ, անապատի խորքերը:

Այս տեղափոխությամբ՝ Խաբուր գետի վերին մասում բնակվող մըլլիները և սարերին հասանքի վրա գտնվող բեդվին արաբները շարունակ իրար հետ հարաբերության մեջ են և հաճախ՝ մոտիկ բարեկամ:

Խաբուր գետը իսկապես ամբողջ գործողության կենտրոնավայրն է. այս գետի վրա է, որ Բուլուկին հաջողվում է Բեջանի զամբիկը խլել, և ինչպես նկարագրությունից երևում է, Խաբուր գետի սարերին հասանքում է կատարվում դեպքը, որովհետև գետն անցնելու համար Բուլուկը ձիու սանձը հանում է, և ձին լողալով է անցնում գետը:

Խաբուր գետը հին ժամանակներից ի վեր արդեն հայտնի է: Նա ունի երեք գլխավոր ճյուղ, որոնցից արևմտյանն սկսվում է Ղարաջադաղի հարավային սարերից (Դիարբեքիրից հա-

րավ), միջինը՝ Ռաս-Ուլ-Այնուց և երրորդը՝ Նիսիբին քաղաքի հյուսիս-արևելյան կողմից, Ջաղջաղա անունով, Նիսիբինի մոտով անցնում և խառնվում է բուն գետի հետ։

Այս երեք գլխավոր ճյուղերը միանալուց հետո միայն գետը կարող է այնքան խորանալ, որ ձին լողալով անցնի։

Բացի այս, ինչպես ասինք, վիպերգում հիշվում է նաև ճյա Ջուդե։ Ճյա Ջուդե, Ջաբալ-Ջուդի՝ արաբերեն նշանակում է Ջուդի լեռ, հին անունով ծանոթ է իբր Սարարարդ. վիպերգում ասվում է, որ Կառը, Մըլի Ամար աղայի մի խումբ մարդկանց հետ մենամարտելիս վիրավորվում է «ու ձիու մեջքից ինչպես Ջուդի լեռն ընկնում է ձիու ոտքերի արանքը»։

Ճյաե Շանգալե, որ այժմ հայտնի է Սենջար անունով, գտնվում է Նիսիբինից դեպի հարավ՝ անապատի մեջ. դա մաքուր ջրերով և այգեվետ մի լեռնակղզի է, շրջապատված ընդարձակ արոտավայրերով։

Մերդինը վիպերգում հիշվում է Խաբուր գետի հետ։ Ըստ Պյոտր Լերխի՝ այդ երկսի սահմաններում են ապրել մըլեցիները[1]։ Layard-ը գրում է որ, «Մըլիները նախապես քրդական ամենահարուստ ցեղն են, այս ցեղը գրավել է Մերդինի լեռներից սկսած մինչև Խաբուր տարածվող դաշտավայրը»[2]։ Մյուս աշխարհագրական անունները (գրե Գավ-Գավա, Կավրե Զախմախա, Թաւիշի Դարե), որոնք աննշան տեղերի անուններ պետք է լինեն, ճշտել հնարավոր չէ։ Իսկ ճշտվածներն արդեն մեզ առաջնորդում են դեպի հյուսիս-արևմտյան Միջագետք՝ Դիարբեքիրից մինչև Նիսիբին, Սենջարից մինչև Խաբուր գետի բերանը, ուր և բնակվում է Մըլի աշիրաթը։

Վիպերգն ունենալով այսպիսի փաստական միջավայր, որը հաստատվում է աշխարհագրական անուններով, պետք է ենթադրել, որ արտացոլում է իրական դեպք։ Մեզ ոչ պակաս հետաքրքրում է նաև էպոսի ստեղծման ժամանակը պարզելու հարցը։

---

1 П. Лерх, „Исследования об иранских курдах", էջ 70։

2 A. Layard, „Nineveh und Babylon, էջ 237։

Վիպերգում չի հիշատակվում ստեղծման ժամանակը, սակայն ելնելով նրա բովանդակությունից, պետք է հավանական համարել, որ դա նոր գործ չէ, այլ գալիս է շատ հնուց[1]:

Վիպերգի ժամանակը որոշելու համար դիմենք մի շարք միջոցների: Քննենք գործող անձերի անունները, զենքերի տեսակները, տեղը և այլն, որոնք այս կամ այն չափով հիշվել են «Կառ ու Բալուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգում:

ա) Քրդագետ Պ. Լերխը[2], խոսելով Մըլլի աշիրաթի մասին (18-րդ դ.), հիշատակում է, թե «Թեմուր փաշան էր կառավարում Մըլլի աշիրաթը», իսկ Մարկ Սայկսը գրում է, թե 19-րդ դարի սկզբում, նախքան Իբրահիմ փաշան, որն ապրեց մինչև 20-րդ դարի առաջին քառորդը, Մըլլի աշիրաթը կառավարում էին նախ՝ Իբրահիմ փաշայի պապի պապի հայրը Էյուբ-բեյը, հետո՝ Թեմավլի-բեյը, հետո՝ Մահմադ-բեյը և հետո միայն՝ Իբրահիմ փաշան: Ընդունելով Մըլլի աշիրաթը իբրև աշիրաթներից մեկը և վիպերգը որպես իրական դեպքի արտացոլում, գտնում ենք, որ Մըլլի Ալի-Ամար աղան, որը մեր վիպերգության տվյալների համաձայն, այդ աշիրաթի աղան է եղել, 18—19-րդ դարերում չի ապրել: Նշանակում է՝ Մըլլի Ալի-Ամար աղան Թեմուր փաշայի նախորդներից է:

բ) Պետք է նկատել, որ «աղա» բառը «իշխան» առումով է գործածված Մըլլի-Ալի-Ամար աշիրապետի համար: «Աղա»—նշանակում է ազնվական, ազնվազգ իշխան[3]: «Աղա» ածականը քըր-

---

1 Պետք է նշել, որ «Կառ ու Բալուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգն իր կառուցվածքով՝ վախճանով, լեզվական ոճերով, տիպերի նմանությամբ, մասամբ և երաժշտական ռիթմով մեզ հիշեցնում է «Մամե ու Զինե» քրդական սիրային վիպերգը, որի խորը հնությունն անկասկածելի է, հետևապես հիմք ունենք ենթադրելու, որ մեր ներկա վիպերգն իր նախնական ձևով ու մշակությամբ կարող է մինչև անգամ «Մամե ու Զինե»-ի ժամանակակիցը լինել. այս մի կողմից և մյուս կողմից վիպերգի մեջ արտահայտված ամուսնության ձևը մեզ հիշեցնում է շատ խորը հնությունից մնացած հեքիաթների, լեգենդների մեջ, ինչպես օրինակ՝ «Փարվանան» հայկական լեգենդում հանդես եկող ամուսնության ձևը:

2 П. Лерх, „Исследования об иранских курдах", էջ 70:

3 Հ. Աճառյան, Արմատական բառարան, Ա. հ., էջ 119:

դերի մեջ մինչև ռևոլյուցիան ճիշտ նույն նշանակությունն ուներ՝ ազնվական, ազնվազգ՝ ոչ պետական պաշտոնյաների նկատմամբ։

Որպես այդպիսին, մենք հավանական ենք համարում, որ «աղա» *բառն ավելի հին պիտի լինի քրդերի մեջ, քան* բեյ, բեգ, բինբաշի, փաշա *բառերը, որոնք Թյուրքիայում պետական պաշտոնյաների տարբեր տիտղոսներն էին և որոնք, ամենայն հավանականությամբ, մուտք են գործել Մըլէ աշիրաթը՝ սուլթան Սելիմի պետության հաստատումից հետո, 16-րդ դարում։ Սրանից հետո է, որ ցեղապետ, տոհմապետ «աղաներին», «միրերին» ավել են նոր պաշտոններ ու տիտղոսներ՝* բեյ, բեգ, փաշա, բինբաշի *և այլն։*

Օրինակ՝ «Թոռնա սալա Շարո» (Շարոյի տան ազնվականներ) տոհմի իշխանները կոչվում էին աղա, *սակայն Հուսեինը, որը կոչվում էր նաև Բոռ-Հուսեին աղա, երբ պետության պաշտոնյա դառավ, արդեն ոչ թե կոչվեց Բոռ-Հուսեին աղա, այլ՝ Բոռ Հուսեին փաշա։*

Սրանք ապացույց են այն բանի, որ քրդերի մեջ «աղա» տիտղոսը վաղուց է գոյություն ունեցել։

Հենց այս տեսանկյունով պետք է բացատրել և մեր վիպերգության մեջ գործող Մըլէ Ալի-Ամար աղայի տիտղոսը։

Մեզ թվում է, որ եթե նա էլ Էյուբ-բեյի, Մահմուդ-բեյի և Իբրահիմ-փաշայի ժամանակակից լիներ, ապա նա ևս բեգ, բեյ կամ փաշա տիտղոսը կունենար։ Նշանակում է՝ Մըլէ Ալի-Ամար աղան ավելի առաջ է եղել, քան 18—19-րդ դարերում ապրող Էյուբ, Թեմավին, Մահմուդ, Իբրահիմ փաշաները և, հավանական է, որ նա ապրել է նույնիսկ սուլթան Սելիմի պատերազմից առաջ։

գ) Այնուհետև՝ վիպերգի յոթը պատումներից զենքերի անունները առանձնացնելով, մենք ստանում ենք հետևյալ պատկերը.

Սառը զենքեր

Տեսակները	*Քանի անգամ է հիշվել*
1. Ռըմ (Նիզակ)	*18 անգամ*
2. Շուր (Թուր)	*9 »*

3. Մարթալ (վահան)	3	անգամ
4. Զարկ (նիզակ, հարված)	2	»
5. Սորանի (մեծ դանակի տեսակ)	1	»

Հրազեն

Տեսակները	Քանի՞ անգամ է հիշվել
1. Փիշտո (հրացանի մի տեսակ)	1 անգամ
2. Բարութ (վառոդ)	1 »
3. Թվանգ (հրացան)	1 »
4. Գյուլլա (գնդակ)	3 »
4. Թոփ (թնդանոթ)	1 »

Առաջին հայացքից կարող է թվալ, թե զենքերով դժվար է որոշել վիպերգի ստեղծման ժամանակը, քանի որ հրազենի անունը կա, սակայն այստեղ մեզ օգնության է հասնում այն փաստը, որ կոնկրետ գործողությունը կատարվում է ոչ թե հրազենով, այլ սառը զենքով (նիզակով, թրով, սորանիով): Մեր ձեռքի տակ եղած բոլոր 30 պատումների մեջ էլ նույնն է: Պետք է նկատի ունենալ և այն, որ շատ տեղերում, երբ նիզակով կատարվող գործողություններն են պատկերվում, պատմությունն արվում է չափածո, իսկ չափածոն ավելի հնություններ ունի իր մեջ, «որովհետև երգը, մելոդիայով, չափով ու հանգով կապված լինելով, առհասարակ և միշտ ավելի լավ է պահպանում բովանդակության հաղորդման եթե ոչ շատ հին, ապա ամենից ավելի հին ձևերը»[1]: Արձակը միշտ ենթակա է փոփոխությունների: Մեր էպոսում հրազենի գործածության մասին, ընդհակառակը, ամբողջապես արձակով է պատմվում[2]:

Հարցի որոշման համար զենքերի քանակը նույնպես պետք է նկատի առնել: Օրինակ՝ սառը զենքը հիշվել է 33 անգամ, իսկ հրազենը՝ 7 անգամ: Բացի սրանից՝ երեք անգամ էլ հիշվել է «ջաբրխանա», որը նշանակում է զինամթերք: Կարծում ենք, որ այդ վերաբերում է և՛ սառը զենքերին, և՛ հրազենին:

---

1 Ակադեմիկ Ի. Ա. Օրբելի, «Սասունցի Դավիթ» էպոսի 1939 թ. հրատ. առաջաբանը, էջ XI:

2 Նիզակով է կռվում Բադուկը և իր քեռիների սղանությունը, թրով է կռվում Սանըկը և մելլայի սղանությունը:

Այս աչքի առաջ ունենալով, կարելի է հաստատորեն ասել, որ հրացանը վիպերգում նորամուծություն է, այնպես, ինչպես մի շարք այլ բառեր։ Օրինակ՝ սուտկա, յաշիկ, ակոշկա, և այլն, բառեր, որոնք, վիպերգի բովանդակությանը, ոճին ու կառուցվածքին նայելով, իսկույն զգացնել են տալիս իրենց նորամուծությունը։

Վառոդի գյուտը հայտնի է 14-րդ դարից (1338 թ.), իսկ նրա գործածությունը, այն էլ զենքի միջոցով, սկսվել է 16-րդ դարում։

Այսպիսով մի կողմից՝ հրացանի սակավ հիշատակությունը, մինչև անգամ, կարելի է ասել, գործածության բացակայությունը, և մյուս կողմից՝ նիզակի ու թրի որպես գլխավոր զենքերի անմիջական գործածությունը պետք է ապացույց համարել այն բանի, որ «Կառ ու Բուլուկն Սլեմանի Սլիվլի» վիպերգի հորինման ժամանակ հրացանի գործածությունն այդ կողմերում չի եղել։

Որ մեր վիպերգը 16-րդ դարից առաջ պիտի ստեղծված լինի, դրան ապացույց են նաև հետևյալ դիտողությունները։ Ինչպես հայտնի է, Սուլթան Սելիմը 16-րդ դարի սկզբում գրավում է Մըլլինների բնակավայրերը, տեղի բնակչությունը ենթարկում է իրեն, հետևաբար և այնտեղ նշանակում է իր կառավարիչները։ Սակայն «Կառ ու Բուլուկն Սլեմանն Սլիվլի»-ում ոչ միայն սուլթան Սելիմի կառավարիչների, այլև նույնիսկ նրա գոյության մասին ոչ մի բառով չի հիշատակվում։

Բացի սրանից, հավանական է, որ սուլթան Սելիմի զորքը զինված պիտի լիներ նաև հրացանի տեսակներով (եթե ընդունենք, որ մինչ այդ այն կողմերում հրացան չի եղել), որոնք 16-րդ դարում արդեն գոյություն ունեին։ Ուստի, հրացանով զինված զորքը գրավելով Մըլլինների բնակավայրը, հրացան պիտի տարածեին ժողովրդի մեջ և Կառ ու Բուլուկի ու նրանց քեռիների պես ռազմիկները նոր զենք՝ հրացան պիտի ունենային՝ թշնամուն դիմադրելու կամ նրա վրա հարձակվելու համար։

Սակայն, ինչպես վերն ասվեց, վիպերգում այդ հերոսների մոտ հրացանը չի գործողը, այլ սառը զենքերը, որոնք վաղուց արդեն գոյություն ունեին։

Այսպիսով, մեզ թվում է, որ մեր վիպերգությունը կապված

է եղել այնպիսի դարաշրջանի հետ, երբ դեռևս այդ միջավայրում նիզակն ու թուրն են գործածվել:

Ուստի, այս բոլորն աչքի առաջ ունենալով, կարծում ենք, որ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգության սկզբնական պատումը պետք է հորինված լինի 16-րդ դարից առաջ, թերևս էլ ավելի վաղ շրջանում՝ վառոդի ու հրազենի հայտագործումից առաջ, բայց ոչ 16-րդ դարից հետո:

Այսպիսով լուսաբանելով «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգի անվան, աշխարհագրական միջավայրի և ստեղծման ժամանակի հարցերը, հետաքրքրական է այստեղ դնել այն խնդիրը, թե նա ինչպես է ստեղծվել, ինչ հող է ունեցել և ով կարող է նրա սկզբնական հորինողը կամ հեղինակը լինել:

5

Առհասարակ ժողովրդական բանահյուսության հեղինակի հարց դնելը պատասխանատու խնդիրներից մեկն է, դժվար է գտնել և գրեթե անկարելի է լուծել այն, սակայն մեր վիպերգի յուրահատկությունը նկատի ունենալով՝ կարող ենք խոսել նաև նրա սկզբնական հեղինակի ով լինելու մասին:

Այդ խնդրի լուսաբանման համար անհրաժեշտ է վերհիշել մեր ներածականի այն հատվածը, ուր խոսվում է քրդական ֆոլկլորի ողբերգները հորինողների մասին: Արդեն ասվել է, որ քրդերի մեջ սովորություն կա հանգուցյալի դիակի վրա ողբերգներ հորինելու, որոնք հետագայում մշակվելով ու հղկվելով ժողովրդական հմուտ երգիչների կողմից, մտնում են ֆոլկլորային ծով և բազմաժանր նյութերի մեջ: Այդպես են ստեղծվել այն բազմաթիվ ողբերգները, որոնց այսօր մենք հանդիպում ենք քրդական ֆոլկլորային նյութերում:

Ոչ հեռու անցյալում՝ 1930 թ., դասակարգային թշնամու գնդակից սպանվեց այժմյան Ալագյազի Ջանոյի գյուղացի (նախկինում՝ Բյուրականասար) բոլշևիկ Կարապետե Ջանոն: Այժմ արդեն նրա մասին ողբերգ է հորինված, որը կոչվում է «Բլամա Կարապետե Ջանո» (Կարապետ Ջանոյի երգը): Ականատեսները պատմում են, որ այդ ողբերգը մի շարք լացող կանանց հետ հորինել է նրա կինը՝ Սասունը:

Սասունը անցյալ տարի մահացավ: Նրա հորինած ողբերգն

այժմ ժողովրդականացել է, և հետագա շրջանների բանասերը լսելով այդ, նրա սկզբնական հեղինակի ով լինելը պարզելու համար թերևս նույնքան դժվարությունների առաջ կանգ առնի, ինչ որ մենք այսօր՝ մեր վիպերգի սկզբնական հեղինակի նկատմամբ։

Այս սովորությունը, ինչպես ասացինք, մինչև մեր օրերը գոյություն ունի և տարածված է եղել Ասիայի շատ ժողովուրդների մեջ, ինչպես նաև հայերի մեջ։ Օրինակ՝ Փավստոսը Գնելի սպանության առթիվ նրա կին Փառանձեմի՝ ողբերգ հորինելու մասին գրում է.

«Իսկ կինն սպանելոյն Փառանձեմ զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկասիրտ ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր։

Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն, և ի ձայնարկուէքն ամ, եղև նա մայր ողբոցն։ Եւ ձայնարկուէքն ամ ի ձայն ողբոցն սկսան նուագել՝ զիրսն արփանացն Տիրիթայ, զակն գնելն, զքսութիւնն, զնարս մահու նիւթել, զսպանումն. ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին, զեղգեղեալ խանդաղատութեամբ։ Ի նուաձել իւրեանց ձայնիցն՝ իրքն յայտնեալ հաչակ հարկանէր»[1]։

Այս սովորությունը տեղ է գտել նաև մեր վիպերգի մեջ։ Եվ վիպերգի ողբերգները նյութ են տալիս մեզ մտածելու նրանց սկզբնական հեղինակի ով լինելու մասին։ Չէ՞ որ այս էպոսը նույնպիսի ողբերգություն է՝ հորինված Բուլուկի և քեռիների սպանության կապակցությամբ։ Ո՞վ կարող է այդ գործի սկզբնական հեղինակը կամ հորինողը լինել,—ահա մեզ հուզող հարցերից մեկը։

«Բուրդը մեռնում է,—գրում է Զաքարյանցը,—նրա թաղման հանդեսը կատարում են սովորականի համեմատ, հասարակ կերպով։ Կրոնական մասը շատ թույլ է և համարյա ոչինչ չկա *(ընդգծումն իմն է Հ. Զ.)... իսկ հանդուցյալի* մայրը *յուր ազգական և բարեկամ կանանց հետ շրջապատված ննջեցյալի գերեզ-*

[1] *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832 թ., էջ 120—121։*

մանը, տխուր և բարձր ձայնով երգում է, թվում է մի առ մի յուր որդու գործերը, նրա բնավորությունը, նրա առանձնակի հատկությունները և նրա կյանքի տխուր և ուրախ օրերը։ Երգում են կանայք հաջորդաբար և մեկը մյուսին ձայնակցելով, յուրաքանչյուրն յուր զգացումն է արտահայտում յուր սեփական ինքնուրույն ստեղծագործություններով»[1]։

Սրա հիման վրա մենք կարող ենք եզրակացնել, որ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգ-ողբերգը պետք է ամենից առաջ հորինված լինի Բուլուկլի և նրա քեռիների ամենամոտիկ ազգականի, հարազատի կողմից։

Եվ իսկապես, այդ օտար ցեղի մեջ ով կարող էր այնքան ցնցվել «գայլ-գամեշլի» նման «ռունալ» իր հերոս զավակի և հերոս եղբայրների համար, քան Վարդակա Հասե Դուզեն։

Մենք արդեն նախապես ասացինք, որ ըստ քրդական սովորության, մեռածի մարմնի շուրջը շատ մարդիկ են երգում և այն էլ ոչ միայն կանայք, այլև սրտակից բարեկամ տղամարդիկ, որոնք բրայո, բրայո (եղբայր, եղբայր) բացականչելու հետ միասին, նաև զրվատում ու երգով ողբում են նրա կորուստը։ Այդ տեսանկյունով էլ եթե մենք դիտենք մեր վիպերգը, կտեսնենք, որ Վարդակի հետ ողբում են նաև հայ Պողոսը, Ալիե Մուսեսանին, Կառը, Լքոյե Մըրոըըը։

Այստեղ բնորոշ է նաև այն, որ Լքոյե Մըրոըըը հայտնի է որպես երգիչ։

Մենք կարծում ենք, որ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» հերոսական վիպերգի նախնական հորինողները եղել են Վարդակա Հասե Դուզեն և նրա շուրջը եղած այն մարդիկ, որոնք կանգնած էին նրա մոտ ու վշտակցում էին նրան։

Այժմ անցնենք «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգի հասարակական և գեղարվեստական արժեքավորման խնդրին։ Նախ քննենք մեկը և ապա՝ մյուսը։

6

«Կառ ու Բուլուկէ Սլեմանե Սլիվլի» վիպերգը ժողովրդական լայն զանգվածների համար այսօր էլ նույնքան թարմ ու հուզիչ

---

1 «Արարատ», նոյեմբեր, 1914 թ., «Եզդի քրդեր», էջ 1021—2։

է, որքան «Մամն ու Զինե», «Լեյլի ու Մեջնուն», «Ռոստամի Զալ» քրդական վարիանտները, «Զամբիլֆրոշը», ինչպես նաև Քյոռ-օղլու մասին հորինված պատմությունները։

Ժողովրդական կոլեկտիվ մտքի այս ստեղծագործությունը այսօր էլ մի շարք պատումներով պատմվում, երգվում, բերնե բերան է անցնում, ժառանգվում և յուրացվում է նոր սերնդի կողմից։

«Կառ ու Բուլուկն Սլեմանն Սլիվլի»-ն տարածված է ոչ միայն քուրդ ժողովրդի մեջ, այդ թվում մահմեդական և եզդի դավանանքին պատկանող քրդերի մեջ, որոնք համահավասար չափով նրան սիրում, նրանով ապրում են և սերնդե սերունդ ավանդում, այլև մեծ չափով սիրված ու տարածված է քուրդ ժողովրդի դարավոր հարևան ու բարեկամ հայ ժողովրդի լայն խավերում։

«Կառ ու Բուլուկէ Սլեմանն Սլիվլի»-ն, ինչպես և քրդական ողջ ֆոլկլորը, գրավոր հիշատակարանների միջոցով չէ, որ տարածվել ու մասսայականացել է։ Դարեր շարունակ ժողովուրդն այն պահել-պահպանել և հասցրել է մինչև մեր օրերը։

Հարց է ծագում, թե ինչումն է գաղտնիքը, որ այս վիպերգը դառել է մնայուն, կամ ինչ ուժ է կարողացել այն պահպանել դարերի ու ժամանակների գրկում և ազատել մոռացումից ու անհետացումից։

Այդ գաղտնիքը, մեզ թվում է, թաքնված է նրա հիմնական գաղափարում, նրա դեմոկրատական էության մեջ, քուրդ ժողովրդի կյանքն ու կենցաղը խորը գեղարվեստականորեն արտահայտելու մեջ։

Վիպերգում մի կողմից հանդես են գալիս աղաները, միրերը, կրոնավորները և մյուս կողմից՝ նրանց աշխատավորները՝ հովիվները, խաշնարածները, ռազմիկները, որոնք հակադրությունն են իրենց վրա իշխող վերնախավի։

«Կառ ու Բուլուկն Սլեմանն Սլիվլի»-ում հիմնականորեն հանդես են գալիս որպես նախրապանի որդիներ, որբ ու հովիվ եղբայրներ Կառն ու Բուլուկը, նրանց մայրը՝ այրի Վարդակա Հասե Դուդեն, Կառ ու Բուլուկի ընկերներ հայ Պողոսը (Բոդոն), Հասե Մուսեսանին, Լքոյե Մըրտըզը ներկայանում են որպես մի խմբի՝ ներքնախավի ներկայացուցիչներ, իսկ մյուս կողմից՝ Մըլի Ալի-Ամար աղան, Թոփալ Մոլլան, խային (դավաճան) Նամաթը և

Մըլի Ալի Ամար աղայի կին Խանումը հանդես են բերված որպես տիրողներ, վերնախավի ներկայացուցիչներ։

Անգամ այս անուններին ծանոթանալով, կարելի է առանց վերապահումների ասել, թե ժողովուրդը—բանաստեղծն ինչ է ցանկացել նշել, որ այստեղ մենք գործ ունենք երկու տարբեր և հասկանալի պատճառով, իրար ներհակ սոցիալական խավերի ներկայացուցիչների հետ։

Մեր վիպերգը ժողովրդական մարդկանց մասին է, նրանց կենցաղի, սիրո, հերոսության և պայքարի պատմությունն է։

№№ 4, 6, 21 և 24 պատումներում հիշվում է, որ Մըլի Ալի Ամար աղան հովիվ Կառի կողմից գլխատվում է, իսկ № 5 պատումում՝ ժողովուրդը, արցունք քամող նկարագրությամբ, հիշում է, որ Մըլի Ալի-Ամար աղան ոչ միայն Փերիշանին չի տալիս Կառին, այլև անհավասար կռվում չարագործորեն սպանել է տալիս Կառին։

Վիպերգի ժողովրդական լինելու ապացույցներից մեկն էլ այն է, որ տիրող դասակարգերի մարդիկ նրանում գլխովին ծաղրված և մերկացված են իրենց բացասական կողմերով։

Այսպես, վիպերգում ցայտուն կերպով հանդես են բերվում տիրող դասակարգի ներկայացուցիչների անկարողությունը, նրանց վախկոտությունը, խորամանկությունն ու խարդախությունը, ագահությունը, որ արտահայտվում են Մըլի Ալի-Ամար աղայի, Թոփալ Մոլլայի, Մըլի Ալի-Ամար աղայի կնոջ և խայլին (դավաճան) Նամաթե Իսայի տիպերում, իսկ ժողովրդական հերոսները (Բուլուկ, Կառ, հայ Պողոս, Վարդակ, Լքո, Հասե Մուսեսանե) հանդես են բերվում որպես ասպետներ՝ անվախ ու մեծահոգի, ճշմարտացի ու բարձր և միայն մաքուր գաղափարների հետևող ու հետամուտ։

Նրանց հանդեպ ոչ միայն չկա այն թունավոր և սպանիչ ծաղրը, որ մենք նկատում ենք ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչների հասցեին (Մըլի Ալի-Ամար աղայի, Թոփալ Մոլլայի ու այլոց), այլև, ընդհակառակը, նրանք բոլորն էլ սիրվում են, հարգվում։

Այսպիսով՝ մեր վիպերգի մեջ նույնպես «դեմոկրատիզմի աղբյուրը հասարակ մարդիկ են՝ հովիվներ... արհեստավորներ, ժողովուրդը»[1]։

---

[1] Կիրպոտին — «Հայ ժողովրդի մեծ էպոսը՝ «Սասունցի Դավիթը», 1939 թ., էջ 17։

Այս առումով «Կառ ու Բուլուկն Սլեմանե Ալիվլի»-ն իր տեղայնությունից ու դարաշրջանից դուրս գալով դառնում է սոցիալական բողոք՝ ուղղված ամեն մի աղայի, ցեղապետի և նրանց կողմնակիցների դեմ, որտեղ էլ լինեն նրանք, որ դարաշրջանում էլ ապրած ու գործած լինեն նրանք։

Սակայն վիպերգի ժողովրդական լինելը չի սահմանափակվում ժողովրդական մարդկանց նկարագրությամբ, նրանց պայքարի ձևերով միայն, այստեղ դրվում է նաև նրանց աշխարհայացքի, գործունեության նպատակադրումը։

Հետաքրքրական է, որ վիպերգում կրոնին տեղ չի տրվում։ Վիպերգը, կարելի է հաստատապես ասել, որ կրոնական մոտիվներից զերծ մի գործ է։ Ընդհակառակը, վիպերգում մենք նկատում ենք պայքար կրոնի ներկայացուցչի դեմ, որը ծաղր ու ծանակի է ենթարկված։

Ժողովուրդը վիպերգում ըստ արժանվույն ծաղրի ու պարսավանքի ենթարկելով, մերկացնելով մոլլային, ի վերջո գլխատել է տալիս նրան։

Այդ կապակցությամբ մարդ հիշում է քրդական ժողովրդական մի հին երգ, որի առաջին տողերն են՝

Դա լեխըն, լեխըն, լեխըն
Դըժմընե մաղըն մալա ու շեխըն [1]։

Կրոնավորների դեմ ատելություն է սովորեցնում վիպերգը։ Ահա թե ինչու նրա մեջ հանդես բերված մոլլան, որին կոչում են նաև Թոփալ Մոլլա, ոչ միայն ամենասուր կերպով ծաղրվում է, այլև նա, ինչպես և Մըլլի Ալի-Ամար աղան, գլխատվում են ժողովրդական հերոսների կողմից։

Մեր վիպերգը ծաղրի ու ծանակի ենթարկելով աղաներին և մոլլաներին, նշանաբան է հանդիսացել քուրդ ու հարևան ժողովուրդների բարեկամության ու համերաշխությանը։

Ժողովուրդը Վարդակի բերանով անիծելով ու պայքարելով Մըլլի Ալի-Ամար աղայի դեմ, Կառի ձեռքով սպանել տալով նրան, Կառ ու Բուլուկի քեռիների միջոցով թոցնելով մոլլայի գլուխը

---

1 Դե՛, խփե՛ք, խփե՛ք, խփե՛ք
Մեծ թշնամինեը մոլլաներին ու շեյխերին։

և անարգանքի սյունին գամելով Նամաթե Իսային, մյուս կողմից՝ վեր է բարձրացնում աշխատավորների—ժողովուրդների եղբայրությունն ու համագործակցությունը և նրանց պայքարի հանուն աղայի ու կրոնավորի դեմ, տարբերություն չդնելով նրանց միջև (ազգի և ցեղի), ինչպես և սևերի։ «Մարվ-մարվա» (մարդը մարդ է), ասում է ժողովուրդը։

Վիպերգի հերոսներ Կառը, Բուլուկը, հայ Պողոսը, Ալիե Մուսեսանին, Լքոյե Մըրտըրը, բոլորն էլ աշխատավորներ են, միատեսակ հոգեբանությամբ և աշխարհայացքով, իրարից տարբերվում են միայն իրենց խոսուն անուններով և այն էլ միայն նրա համար, որ ցույց տրվի, թե նրանք պատկանելությամբ ովքե՞ր են, ո՞ր ժողովրդից կամ ո՞րտեղացի—և միայն, այո՛, միայն այդքան։

Կառ ու Բուլուկի ընկեր հայ Պողոսը (Բըղդոն), որ հանդես է գալիս որպես բժիշկ, ռազմիկ և արհեստավոր՝ ամենադրական տիպերից մեկն է. Կառ ու Բուլուկը նրան ասում են «մամո» (հորեղբայր), որը քրդերենում փոխարինում է նաև հայր բառին, ուստի ամենահարգի բառն է իբրև հարազատության, մոտիկության, հարգանքի նշան, իսկ նա Բուլուկին կոչում է «կուռե մըն» (իմ որդի, որդիս), որ նույնպես արտահայտում է նրանց փոխհարաբերությունը՝ հարազատությունը և փոխադարձ նվիրվածությունը։

Սակայն մեր վիպերգը չէ միայն, որ տալիս է հայ և քուրդ աշխատավորության դարավոր ու սերտ բարեկամության ցայտուն պատկերը. բազմաթիվ են այդ հարցին վերաբերող ֆոլկլորային նյութերը, որոնց մեջ քուրդ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում հայ շինականին, հայ ռամիկին, արհեստավորին, երգչին, հերոսին։

Ելնելով այդ երկու ժողովուրդների սոցիալական ու քաղաքական երբեմնի վիճակից, մեզ թվում է, թե նույն բարեկամական սերտ կապերով պիտի բացատրվի նաև այն, որ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվի» վիպերգն իր արժանավայել տեղն է գտել կրոնով ու լեզվով իրարից տարբեր երկու ժողովուրդների բանահյուսության մեջ։ Վիպերգն իր իդեալներով ու նպատակադրումներով զուգադիպել է նրանց փոխադարձ տենչերին ու իղձերին, և ահա, այդ է պատճառը, որ այն սիրվել ու տարածվել է

ոչ միայն քուրդ ժողովրդի մեջ, այլև, հավասարապես՝ հայ ժողովրդի մեջ։ Բավական է նշել, որ մեր ձեռքի տակ եղած (բացի Ս. Հայկունու հավաքած երկու պատումներից) 30 պատումներից 7-ը հայ բանասացներից է գրի առնված։

Բացի դրանից, մեր վիպերգը բնորոշ է նաև նրանով, որ նա չի դնում ցեղական, տոհմական խտրությունները, որ հատուկ էր տիրող խավերի՝ ֆեոդալների ու կրոնավորների շրջանում ստեղծված ֆոլկլորին[1]։ Ընդհակառակը, մեր վիպերգը լինելով աշխատավորական ստեղծագործություն, վեր է հանում, մեծարում է նախկինում քրդերի ամենահալածված, ծաղրված հատվածին՝ քուրդ մըրտըբներին (քուրդ բոշաներին)։

Հանձին Լըոյե Մըրտըբի վիպերգում մենք ունենք մի ազնիվ ու անկեղծ երգիչ (բագգադա) ասպետի, լավագույն հերոսի սքանչելի ու պայծառ կերպարը։ Վիպերգում արժանի տեղ է գրավում նաև Հասե Մուսեսանի (հավանական պիտի համարել, որ Հասեն Մուսեսանի տոհմից է եղել)։ Այստեղ ևս, չնայած ցեղական կռիվներին, վրիժառությանը, որ հրահրում էին ցեղապետները, մենք այլ բան ենք նկատում։ Հասե Մուսեսանին նույնքան հարգարժան է, որքան Կառը կամ Պուլուկը, որքան նրանց հերոս մյուս ընկերները։

Այս մարդիկ լինելով բախտակիցներ, միահամուռ ու միասիրտ են և մեկ մեկու պաշտպանում են աղաների դեմ։ Երբ Մըլէ Ալի-Ամար աղան դիմադրում է և չի ուզում Փերիշանին տալ սպանված Պուլուկի եղբորը՝ Կառին, նրանք ասում են.

— «Ինչպես թե Փերիշանին չես տա, Պուլուկը մեռել է, նրա փոխարեն Կառն է, եթե չտաս, մենք մինչև վաղն այս ժամանակ հավարի ջաղացը քո գլխի վրա կպտտեցնենք, դիվանդ կանենք»։

Այսպիսով, այս հերոսների խումբը մեզ ներկայանում է, որպես տարբեր ազգությունների և ցեղերի ներկայացուցիչների համերաշխության, սերտ բարեկամության նշանաբան, որ իրագործվում է աշխատավորների ձեռքով։ Այսպիսով վիպերգը աշխատավոր մարդկանց արիության, առաքինության պերճախոս, լայն կտավի գեղարվեստական դոկումենտ լինելով, միաժամանակ առաջ է քաշում մի այլ կարևոր խնդիր՝ ժողովրդական մարդկանց, աշխատավորների հերոսական լինելու և հերոս մնալու խնդիրը։

[1] «Մանջոլի», «Մուսո» և այլն։

Հայտնի է, որ Մըլը Ալի-Ամար աղան այն համոզմունքն ուներ, թե «քաջ տղամարդկանցից, առյուծներից, քաջ քեռորդիներից և հայրորդիներից» (խոսքը՝ ըստ վիպերգի, վերաբերում է կականներին, մըլլներին, մըրդեսյաներին և այլոց մեծամեծներին) մեկն ու մեկը, գուցե և շատ շատերը մրցելով իրար հետ, հաղթողը Ֆինջանը Փերիշանի ձեռքից կվերցնի և դրանով իսկ վըճռված կլինի նրա բախտը և նա կհասնի իր նպատակին։

Սակայն այդ «մեծամեծներից ոչ ոք ուժ չունեցավ և սիրտ չարեց մոտենալ ֆինջանին ու ֆինջանը դարձյալ մնաց իր տեղում։ Գողտուկ, աչքի տակով, ֆինջանին էին նայում, բայց վախից չէին համարձակվում ֆինջանը վերցնել»։

Իսկ «Կառին ու Թուլուկին մարդահամար չէին դրել, ասել էին՝ նրանք եթիմ են, նրանք ինչ են, որ այդպիսի գործերը կատարեն»։

Սակայն հենց այստեղ է, որ Կառի ու Թուլուկի հերթը դըրվում է ամբողջ հասակով. այսպես օրինակ՝

— «Ովքեր Կառ ու Թուլուկի Սլեմանի հետ լավ էին, ասացին. Սլեմանի որդիք Կառ ու Թուլուկը երկու եղբայրներ են, Երկու անկոտոշ սպիտակավուն սևաչյա, աչքերը սևով նախշած խոյեր.

Երկուսն էլ չէին եկել, ետ են մնացել—.
Հայ վի, վի, հայ վի, վի...
Զմնամ Սլեմանի որդիք Կառ ու Թուլուկից հետո»։

Իսկ՝

— «Ովքերը Կառ ու Թուլուկի հետ չունեին,
Ասում են՝ Կառ ու Թուլուկ որ կան՝ երկու գյադաներ են,

Ինչպես տանես՝ անես գյուղի նախրապաններ,
Նախիրը տանեն՝ առավոտից մինչ իրիկուն արածեցնեն,
Երեկոյան գան, ամեն մի տնից իրենց հացը հավաքեն»։

Սակայն ի զարմանս մեծամեծների և ի ուրախություն ժողովրդական մարդկանց, հակառակն է կատարվում — «երեք օր ու երեք գիշեր մնացող ֆինջանը» վերցնում է այդ նույն «եթիմ», «գյադա» և «հովիվ» Թուլուկը, հետո միայն «կականները, մըլլները և մըրդեսյա խոյերն սկսում են գոչել ու գոռալ, ուզում են Կառ

ու Բուլուկին խփեր» ասանել․ սակայն, ի պատասխան այդ սպա-
թալի վայնասունի, հանկարծակիի եկած և անսպասելի իրողության առաջ կանգնած Ալի-Ամար աղայից լսում ենք հետևյալը․

— Դուք անուններ ունեք, հարաքաթ չունեք,
Ձեզնից ով որ ձեռք բարձրացնի,
Կառն ու Բուլուկը նրան արմատախիլ կանեն։

Ժողովուրդն է հերոսների մայրը, ստեղծագործողը․ նա, ինչպես տեսնում ենք, իր հերոսներին շատ ցայտուն հակադրությունների միջոցով՝ ամենավճռական մոմենտում՝ վեր է հանում, ապտակելով բոլոր «մեծամեծներին»։ Դժվար թե Մըլլի Ալի-Ամար աղան երևակայեր, թե մի որևէ հովիվ կարող է իր պայմանն ընդունել, այդ դժվարին, մահաբեր գործին կպչել, որին ոչ մի աղա կամ բեյ սիրտ չէր անում մոտենալ։

Ա՛յս է մեր վիպերգի մեծագույն արժանիքներից մեկը։

7

Այնուհետև՝ վիպերգի հատկանշական կողմերից մեկն է նաև կանանց կատարած հասարակական դերը, նրանց վճռական և սրտացավ միջամտությունն ու գործունեությունը։

Առաջին կենտրոնական դեմքը հերոսուհի Վարդակա Հասն Դուզեն (Հասն Դուզեի դուստր Վարդակը) է, Կառ ու Բուլուկ եղբայրների մայրը։ Մենք նրան ճանաչում ենք հոր կողմից, որ «նա Հասն Դուզեի դուստրն է, յոթ եղբայրների քույրը», իսկ Հասն Դուզեն Արաբն Գեսի ցեղապետի քաջ ռազմիկներից մեկն էր և նրա թիկնապահը՝ իր յոթ հերոս որդիներով։

Վարդակա Հասն Դուզեն, որպես հերոսուհի, իր մեջ մարմնավորում է խիզախություն, ինքնուրույնություն, քաջություն, վրիժառություն, աշխատասիրություն, հեռատեսություն, կյանքի ու պայքարի մեծ փորձ և մայրական անսահման ջերմ սեր։

Վարդակի մեջ խոսում է ազատության տենչը, նա ենթարկվող և փափկասուն օրիորդ չէ, այլ ուժեղ, աննկուն կամքի տեր մի մարդ։ Թեև նա սիրում էր իր եղբայրներին, հորը, սակայն ստրուկի նման չի լսում նրանց։ Ուստի, չնայած քույրաղջկա կաշկանդումներին, նա դուրս է գալիս և իր սիրած «քաջալ

Սլեմանի հետ փախչում», մի բան, որ, ինչպես հետագայում կտեսնենք, համարվում էր օրինական և նույնիսկ հերոսական։ Հետաքրքրականն այն է, որ հանուն այդ սիրո նա ընդհարվում է իր հոր հետ, նույնիսկ սպանում է իրեն հետապնդող հորը, և նրա այդ քայլն ընդունվում է ժողովրդի կողմից։

Վարդակի փախուստը հովվի հետ՝ մեզ հիշեցնում է քրդական շատ կանանց տիպերին, որոնք, հանուն իդեալական սիրո, ոչինչ չեն խնայել, անգամ իրենց կյանքը. այդպիսիներից են անմահ Խջեզարեն, Լեյլին և ուրիշ հանրածանոթ անուններ։

Առևանգման այս երևույթը, որ գալիս է մայրիշխանության շրջանից, քուրդ կաշկանդված, ղալանով ծախու աղջկա միակ բաղձանքն է եղել, ահա թե ինչու Վարդակի առևանգումը հերոսացվում է բոլոր նրանց կողմից, ովքեր խիղախ են, արիասիրտ, ովքեր անկաշկանդ են իրենց կյանքը տնօրինելու գործում։

Սակայն Վարդակի այդպես լինելը չի սահմանափակվում միայն առևանգումով։ Նրա ամուսին Սլեմանը մեռել է. այժմ Վարդակն այրի է և պետք է փոխարինի իր ամուսնուն՝ խնամի և մեծացնի Կաուին ու Բուլուկին։ Լինելով այդպիսին, նա այստեղ էլ հանդես է բերում ինքնուրույնություն, տարբերվելով այն խղճալի ու անզոր քուրդ այրի կանանցից, որոնք ծնողների առաջարկությամբ թողնում էին իրենց հարազատ զավակներին և կրկին ծախվում ղալանով։ Նա նմանվում է այն ազնիվ թռչուններին, որոնք հոգատարությամբ մեծացնում և թռցնում են իրենց ձագուկներին, ինչպես քրդերն ասում են՝ «փըռա դըկըն», որ նշանակում է «թռցնել», ինքնուրույն դարձնել։

Ահա հենց այստեղ է, որ նրա քաջության հետ կապվում է նաև մայրական հոգսը, մայրական ջերմ սերը. մի հանգամանք, որ բարձրացնում է նրա հեղինակությունը և անսահման հարգանք է ներշնչում մեզ դեպի նա։ Ահա թե ինչու որդիները չափից դուրս հարգում, սիրում են նրան, բայց և նույնքան վախենում նրանից։ Նրանք ընդունելով Մըլե Ալի-Ամար աղայի պայմանը, գնում են տուն՝ ձիերը դուրս բերելու։

«Կաու ու Բուլուկը գնում են, բայց իրենց մոր վախից չեն համարձակվում ձիերը գոմից դուրս բերել։ Նրանք գնում են և տեսնում—մայրը՝ Վարդակը թոնրի մոտ նստած խմոր է հունցում։ Նրանք մյուս կողմից ծուխ են թողնում թոնրի մեջը, տունը ծխով

լցնում և այդ ձևով միայն նրանք ձիերն ու ռազմամթերքը դուրս են բերում»։

Սակայն նրանից ոչ միայն որդիներն են վախենում, այլև վախենում, մահու չափ սարսափում է Մըլլի Ալի-Ամար աղան։ Երբ զինված Վարդակը գալիս է իր որդիների հետևից՝

«Ամար աղան գնում է, պահ է մտնում, գիտի, որ եթե Վարդակը նրան տեսնի, իրեն կխփի, կսպանի»։

Վարդակա Հասեն բացի քաջությունից-հերոսությունից՝ ունի նաև ուրիշ լավ հատկություններ։ Նա մտածող, կշռադատող, հնարամիտ, փորձված է և անհուն սեր է տածում դեպի իր որդիները։ Որդիները նրան խաբում, մի կերպ ազատվում են նրանից ու ճանապարհ են ընկնում դեպի Արաբական էլաթը։ Ահա հենց այդ ժամանակ մենք հանդիպում ենք Վարդակին։

— «Վարդակը շատ խելոք էր, ասաց, իբր Ամար աղայի էլաթում հարսանիք է, իմ որդիները 12 նիզակ տարան, բեռնակիր ձիով մի բեռ վառոդ ու գնդակ տարան, վրան տարան, ջանըմ, ինքն իրեն ասաց. եղբայր Կուրին, Ալիև Մուսախանի. Նամաթի խայլին, հայ Բղդոյին, այս չորսին տարան, կա չկա, կռիվ կա, Թուլուկը կգնա կռվի»։

Վարդակը մայր է, զգում է որդիների յուրաքանչյուր շարժումը։ Նա անվեհեր է, չհուսահատվող, հանուն իր որդիների կյանքի պաշտպանության նա ամեն ինչ զոհաբերող մայր է։

— Միր, ասում է Վարդակա Հասե Դուզեն, դու ուզում ես իմ երկու որբիկներին ձեռքիցս հանես, ես այս նեհուրզ Թուրը կքաշեմ, դու միր չլինես, ինչ կլինես եղիր, քո գլուխը կթռցնեմ։

Կամ անիծելով ասում է.

Ամար աղան խեր չտեսնի,
Երեխան իր գրկում չռնի,
Ցորեն ցանի՝ մոլախոտ քաղի։

Վարդակը գիտե և՛ կռվել, և՛ անիծել։ Թեև նա մեծ կին է, բայց առույգ է և պատերազմիկ, նա ոչ միայն պատրաստ է Մըլլի Ալի-Ամար աղայի հետ մենամարտելու, այլև տեսնելով, որ որդիներն իրենց որոշումից հետ չեն կանգնում ու պիտի գնան, ծպտվում է և զինված հետապնդում իր որդիներին, մտածելով, թե գուցե այդ միջոցով կարողանա նրանց հետ դարձնել։

Եվ այսպես՝

«Վարդակն իր որդիների ետևից ընկավ։
Կառը դառնում, հետ է նայում, ասում.
Բուլուկ, եղբայր, այն կողմից մի բարակ դուման է գալիս.
Կարծես ավերող, չորացնող քամի լինի,
Ցավի մարդ, հոգեառ հրեշտակ լինի»։

Իսկ այդ ձիավորը ոչ այլ ոք էր, բայց եթե ծպտյալ Վարդակը։ Վարդակը հասնելով Կառին, նրան գետնին է խփում։

Բուլուկը Կառին օգնության է գալիս, մայրը չի դիմադրում նրան, վախենալով հետևանքից։ «Բուլուկը մորը խփում է գետնին, ուզում է սպանել», բայց երբ Վարդակը հանում է իր ստինքները, Բուլուկը ճանաչում է մորը և հետ է կանգնում իր որոշումից։

Բուլուկի կամակորության հակառակ՝ փորձված մայրը չի համառում, իրեն ճանաչել է տալիս որդուն և դրանով իսկ երկուսն էլ ազատվում են մահից։

Վարդակի չընկճվածությունը, հերոսական լինելը սերտորեն կապված է նաև նրա աշխարհայացքի հետ։ Տեսնելով, որ որդիները չվերադարձան, այս անգամ նա դիմում է մի այլ միջոցի— խոստանում է «ամուսնանալ» իրեն հետապնդող Թավալ Մոլլայի հետ, ասելով նրան. «Այս թուղթը տար տուր Հասան Դուզեի որդիներին, որ չսպանեն Կառ ու Բուլուկին, երբ վերադառնաս, քեզ հետ կամուսնանամ»։ Թղթում ծածուկ ավելացնում է սակայն, որ եղբայրները մոլլային սպանեն։

Այսպիսով՝ բնորոշ է նրա հակակրանքը դեպի կրոնական ներկայացուցիչը, և հանձին Վարդակի ոչ միայն այս, այլև մյուս բոլոր խնդիրներում, մենք տեսնում ենք մի քուրդ կնոջ, որը համեմատաբար զերծ է նախապաշարումներից։ Այդ առումով էլ, նա ևս ինչպես և Բուլուկը, կյանքին նայում է ռեալիստորեն, կարելի է ասել՝ մատերիալիստորեն, քաջ գիտակցելով, որ «աշխարհը երկու դուռ ունի, մեկից մտնում են, իսկ մյուսից դուրս են գալիս»։ Հետևաբար մահը նրան չի սարսափեցնում։ Նա գիտակցում է աշխարհի այդ անխախտ օրենքը։ Նրա մեջ խոսում է այն գաղափարը, թե՝ լավ է զոհվել պայքարի մեջ, կռվել դաշտում հանուն լավ գործի և պատվով մեռնել

քան քարշ գալ, լալ ու ողբալ: Նա կողմնակից է քրդական այն առածին, որն ասում է.

Բրա նա ճըլակա սաղ սալըբըմ,
Բրա բողա յակ ռոժի բըմ[1]:

Տեսնելով, որ այլևս Բուլուկը չկա, չկան նաև իր եղբայրները, Վարդակը որոշում է նախ ամուսնացնել Կառին ու Փերիշանին և ապա միայն ողբալ որդու և եղբայրների կորուստը:

«Վարդակը շատ լաց եղավ իր որդու և եղբայրների համար, բայց հետո մտածեց, թե՝ այս օտար էլաթ է, ինչու եմ լաց լինում: Իմ որդին ու եղբայրները Փերիշանի համար սպանվեցին, մի տեսնեմ՝ Փերիշանն էլ Կառին կառնի: Նախ մեկի հարսանիքը անեմ, իսկ հետո մյուսների սուգը»:

Եվ այնուհետև՝

«Վարդակն Ամար աղայի դռան առջև կանգնեց ու պահանջեց՝ այս րոպեին, ասաց, հարսս տվեք»:

Վարդակը ըմբոստ է, համարձակ, անկաշկանդ, զերծ ամեն տեսակ կրոնական նախապաշարումներից, արիասիրտ, անձնազոհ, որդեսեր մայր:

Այդ բոլոր գծերը խտացնում, վեր են հանում նրա, որպես ժողովրդական հերոսուհու, ռեալիստորեն կերտած գեղարվեստական չքնաղ կերպարը:

Այդ տեսակետից նա քուրդ աշխատավոր կնոջ մարմնացումն է. իզուր չէ, որ այդ նշանավոր անունով են կոչվում նաև շատ կանայք: Նրա անմահ անունը ժողովրդական լայն մասսաների մեջ խորը կերպով արմատավորվել, ժողովրդականացվել է: Չկա որևէ նշանավոր ղանդրեժ (ժողովրդական երգիչ), որ չփառենա Վարդակա Հասեի ողբերգները և մասնակցությունը չունենա նրա գեղարվեստական կերպարի կերտմանը՝ տալով նրա, որպես հասարակական գործչի նկարագիրը, նրա պայքարն ընդդեմ Մըլլ Ալի-Ամար աղայի: Նա անհունորեն հարազատ, ամբողջական ժողովրդական հերոսուհու կատարելատիպն է:

---

1 Թող հարյուր տարվա կովը չլինեմ,
Թող մի օրվա ցուլը լինեմ:

Վարդակէն հակադիր կերպար է Փերիշանը, Մըլը Ալի-Ամար աղայի դուստրը։ Սա վիպերգի ամենապասիվ կերպարներից մեկն է և հենց այդ պասիվությամբ էլ նա հետաքրքրական և ռեալ գեղարվեստական տիպ է ներկայացնում։

Փերիշանը, ինչպես հայտնի է, շուկա է հանվում, նա ամբողջովին ենթակա է իր հոր կամքին։ Չնայած «նա անվանի է, նրա ղալանը բարձրացել է գյուղերի նախիրներով, ոչխարների հոտերով, ձիերի երամակներով և յոթը կոտ արծիվների կաթով», չնայած իր գեղեցկությամբ չի զիջում քրդերի մեջ հայտնի և ոչ մի մըլի գեղեցկուհու, բայց և այնպես, նա դժբախտ է։

Նա հանված է վաճառքի. թե ով է լինելու նրա ամուսինը, նա ինքը չգիտե, գիտե միայն, որ հոր հրամանը պիտի կատարվի, սուրճի ֆինջանը պիտի ման ածի, և ով ֆինջանը վերցնի, խմի, արդեն ինքը նրանն է, իսկ թե վերցնողն ով կլինի, այդ միևնույն է նրա համար. նա պիտի ամուսնանա ղալանով— մի ձիով, մի երամակ ուղտերով, որպեսզի հայրը՝ Մըլը Ալի-Ամար աղան հասնի իր ըղձալի նպատակին։ Եվ նա լուռ ու մունջ, անձեն, անծպտուն, պիտի համակերպվեր։

Ահա թե ինչու խղճալի է Փերիշանը. նա նույնպես կցանկանար ամուսնանալ իր սրտով, և քուրդ կնոջը վերաբերող այն ասածը, թե՝

Հազար խոզլ ուլի ավդի,
Ուակի ճավե խու դի,
Դիլե խու ղավջի,[1]—

Փերիշանի մեջ ևս խոսում է։

Մենք արդեն ասել ենք, որ Փերիշանը և Բուլուկը նախապես իրար չէին տեսել, նույնիսկ մեկմեկու մասին չէին լսել, սակայն երբ Բուլուկը ֆինջանն ընդունում է, մենք Փերիշանի մեջ բեկումն ենք տեսնում, նկատում ենք, որ նա կցանկանար ամուսնանալ կամ Բուլուկի կամ Կաքի հետ։ Սիրելով Բուլուկին,

[1] Հազար երանի այն մարդուն,
Որ իր աչքով տեսնում,
Իր սրտով ամուսնանում է։

Նա անիծում է իր հորը, որը «սաբար» է դառել հովիվ Բու-լուկի մահվան. դիմելով Վարդակին, նա ասում է.

Վարդե, ծամ կտրած, էլ ինչու ես ապրում,
Սիրտս ցավոտ է, խորը վերքոտ, վիրավոր,
Սաբարի գլուխը խեր չտեսնի։

Եվ քանի որ Բուլուկն սպանվել է, Փերիշանը, պայքարելով դավաճան Նամաթ Իսայի դեմ, իր համաձայնությունն է հայտնում Կառի հետ ամուսնանալու։

Փերիշանի համաձայնությունը՝ ամուսնանալ հովիվ Կառի հետ, կամ Բուլուկի պայմանն ընդունելուց հետո նրան սիրելը եզակի դեպք չէ քրդերի մեջ։ Քրդական ֆոլկլորում դուք կարող եք տեսնել, թե ինչպես հասարակության բարձր խավերից ելած մի շարք աղջիկների առևանգումը հովիվների ու նախրապանների կողմից տեղի է ունենում հենց իրենց՝ այդ աղջիկների համաձայնությամբ (Լեյլի—«Լեյլի ու Մեջնուն»-ի հերոսուհին, Խջեզարեն—«Սիաբանդե Սլիվլում ու Խջեզարե» պոեմի հերոսուհին, Ադլա Թամաուն—«Դարվիշե Ավդի»-ի հերոսուհին և այլն)։

Այդ մասին է վկայում քրդի կնոջը վերաբերող հետևյալ ճշմարիտ, խորիմաստ առածը.

Բրա դըլի բը դըլ բա,
Բրա ժը վալաթե դուրբա,
Լը պըշտ տուրե փարսե բա,
Բըն է տուր ժի խուլբա[1]։

Մեզ թվում է, որ քուրդ կինն այս կամ այն չափով ապրելով մայրիշխանության տրադիցիաներով, բնության ազատ գրկում, չի կարողացել տանել այն ճնշումն ու կաշկանդումը, որ հատուկ է տիրող դասակարգերի ներկայացուցիչներին, մարդիկ, որոնք փողի և ահաբեկման միջոցով, բազմակնությամբ, ամեն կերպ իրավազրկում, դժբախտացնում էին այդ լեռնական,

1 Թող սիրտը սրտով լինի,
Թող հեռու երկրից լինի,
Թող մեջքին մուրացկանության տոպրակը լինի,
Տոպրակի տակն էլ ծակ լինի

ազատ բնության ծոցում ապրող, ազատ կյանքի սովոր քրդուհուն,— մի բան, որ քուրդ աշխատավորի՝ հովվի, նախրապանի, ռամիկի մոտ գոյություն չուներ և նրանց կանայք նույնքան ազատ էին, որքան և իրենք։ Ահա թե ինչու Փերիշանը գերադասում է հովվի հետ ամուսնանալ, ահա թե ինչու քուրդ կինը կգերադասեր «մուրացիկի հետ» ամուսնանալ, քան անբավ հարստություն ունեցող աղայի կամ բեգի հետ։

Այդպիսի դեպքեր աշխատավորների կյանքից մեզ հայտնի չեն, իսկ Մըլե Ալի-Ամար աղան, այդ հրեշը, իր հարազատ զավակին հանելով «բազար», ասում է.

«Բազարը որ կա, աստծու կամքն ու թողությունն է»։

Փերիշան նշանակում է խեղճ, անօգնական, և այդ շատ սազական է Մըլե Ալի-Ամար աղայի աղջկան։

Կանանց սեռից երրորդ անձնավորությունը Մըլե Ալի-Ամար աղայի կինն է։ Վիպերգում նրա անունը չի տրված, նրան անվանում են «խանում»։ Հետևելով ընդհանուր սովորության, «խանում» ասելով միայն հասկանում էին աղայի, բեգի և առհասարակ տիրող դասակարգին պատկանող մարդկանց կանանց։ Այդ տեսակետից էլ պետք է հավանական համարել, որ այստեղ «խանումը» նրա իսկական անունը չէ, այլ մեծարման նշանը։

Չնայած որ պատումների մեծ մասում խանումը հանդես չի գալիս, բայց և այնպես, որպես կին, նրա կերպարը մեզ հետաքրքրում է։

Այստեղ հատկապես զգալի է նրա գործունեությունը Մըլե Ալի-Ամար աղայի հետ միասին։ Ինչպես հայտնի է, նրա ամուսինը մի դժվարին խնդրի լուծման համար ինքը մենակ որևէ ելք չի կարողանում գտնել։ Փերիշանը նրան պետք էր, բայց թե ինչպես օգտագործի նրան, ինչպես նրան գործիք դարձնի և հասնի իր նպատակին, նա գլխակորույս հիմարանում է ու չի կարողանում որևէ որոշում ընդունել։ Նրան չեն կարողանում օգնել նաև «մեծամեծներից» ոչ ոք, կորած էր Մըլե Ալի-Ամար աղան և հրաշքի էր սպասում։

Ժողովուրդն այստեղ մի կողմից՝ ծաղրելով և ոչնչություն համարելով նրան, մյուս կողմից՝ այդ դժվարին խնդրի լուծման համար առաջ է քաշում խանումին՝ նրա կնոջը։

—«Խեր լինի, Ամար աղա,—ասում է նրա կինը,—եթե դու մտահոգվես, էլ չքավորներն ինչ անեն: Դու, որ այնքան տուն ու տեղ, ոսկի, արծաթ ունես, այդ դեպքում թող չքավորները գնան իրենց գլխին ջուրը, խեղդվեն»:

Խանումը խորամանկ է, և որ ամենից կարևորն է, հեռատես ու կշռադատող: Իմանալով իր ամուսնու տխրության պատճառը, որը Փերիշանի հետ էր կապված, ասում է.

—«Ամար աղա, ափսոսում եմ քեզ, դու տղամարդ ես, երկու հազար տան աղա ես, մինչև այժմ չես կարողացել մի ֆանդ գտնել, որ հակառակորդներդ քեզնից փախչեն»:

Եվ նա Մըլի Ալի-Ամար աղային օգնում է, ցույց է տալիս, թե ինչ ճանապարհով կարելի է ոչ միայն Փերիշանից ազատվել, այլև նրան օգտագործելով հասնել ըղձալի նպատակի:

—«Ամար աղա,—ասում է կինը,—այսօր հանդիստ քնիր, վաղը ճաշկերույթ սարքիր, էլաթի բոլոր երիտասարդներին կանչիր, ճաշկերույթից հետո փարփուր ֆինջանը սուրճով լցրու, Փերիշանի մատանին գցիր մեջը, հետո կանչիր. Ո՛վ պզմաճներ, թոռուններ, ով որ այս ֆինջանը խմի, Փերիշանի մատանին գնի իր մատը, պետք է գնա Արաբական էլաթը, Բեջան ղամբիկը և մի երամակ սևաչանջ ուղտեր բերի, որպես Փերիշանի ղալան»:

Ժողովուրդը առաջ քաշելով խանումին, որպես կնոջ, ոչ միայն նրան համեմատում է Մըլի Ալի-Ամար աղայի հետ, այլև հակադրում է նրան, ահա թե ինչու ժողովրդական առածն ասում է.

Շեր, շերա,
Ջը ժընա, չը մերա[1]:

Կամ՝

Ժըն ժի հայա, ժնկոկ ժի հայա,
Մեր ժի հայա, մերկոկ ժի հայա[2]:

Ժողովուրդը, կնոջը հակադրելով Մըլի Ալի-Ամար աղային, Ամար աղային անվանելով «մարդուկ», բայց և այնպես նա չի

---

1 Առյուծն առյուծ է,
Ինչ կին, ինչ տղամարդ:
2 Կին էլ կա, կնուկ էլ կա,
Մարդ էլ կա, մարդուկ էլ կա:

արտահայտում իր դրական վերաբերմունքը հանդեպ Խանումի, այլ, ընդհակառակը, դրանով իսկ ցույց է տալիս, որ տիրող դասակարգին պատկանող կինն էլ նույնքան բացասական տիպ է, որքան և այդ դասակարգին պատկանող տղամարդը։

Խանումը Փերիշանով հետաքրքրվում է այն չափով միայն, որչափով որ Փերիշանն անհրաժեշտ է նրան իր անունը, պատիվը բարձրացնելու համար։ Կարելի է ասել՝ նա նույնքան բացասական վերաբերմունք ունի դեպի իր աղջիկ զավակը, որքան Մըլի Ալի-Ամար աղան։ Նա չունի աշխատավոր Վարդակի սիրող, իր զավակների համար այրվող սիրտը։

Ահա հենց այստեղ է նրանց դասակարգային պատկանելության խորը տարբերությունը, նրանց վերաբերմունքի տարբերությունը դեպի հարազատ զավակը։ Վարդակն իր որդիների պաշտպանության համար հանդես է գալիս որպես «զուբրա զավ բը խուն» (արյունաբերան գայլուհի), իր որդիների համար պայքարող, անձնազոհ, իսկ Խանումը, դրան հակառակ, յուր աղջկանն է զոհ դարձնում, որպեսզի ինքը փառքից չզրկվի, ինչ որպես խանում։

8.

«Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլխլի» վիպերգը բարձր է իր գեղարվեստականությամբ։

Այն մի ռեալիստական ստեղծագործություն է, որի մեջ դուք չեք նկատում ոչ մի անբնական, հակամարդկային, կեղծ կամ շինծու երևույթ։

Նրա պատմելաձևը յուրահատուկ տեղ է գրավում քրդական ողջ ֆոլկլորի մեջ. դա հատկապես զգացվում է նրա ոտանավորի վերջավորությամբ, այն է՝ «հայ վի, վի, վի», կամ, ուղղակի՝ «վի, վի, վի» բացականչություններով, և դա նշան է, որ վիպերգը հագեցված է ողբերգությամբ։ Այսպիսով՝ նրա յուրահատուկ ձևն իր հերթին տոն է տալիս վիպերգի ամբողջ ներքին էությանը, բովանդակությանը, իսկ բովանդակությունն իր գեղեցիկ նկարագրություններով ներդաշնակում է նրա այդ ձևին։

Այս վիպերգի սյուժեն և՛ սիրահարական է, և՛ հերոսական։ Սակայն սիրահարությունն այստեղ մտնում է միայն, արտահայտված մի քանի թռուցիկ մոտիվներով։ Մըլի Ալի-Ամար աղայի

դուստր Փերիշանը, ըստ վարիանտների գերակշռող մասի՝ Բուլուկին չի տեսել, չի լսել նրա մասին, Բուլուկը նույնպես նրան չի տեսել, չի լսել նրա մասին: Փերիշանը հրապարակով, որպես մարդ-ապրանք վաճառքի է հանվում: Բուլուկը, որպես «գնորդ», Մըլի Ալի-Ամար աղայի պայմանն ընդունելով, ցանկանում է այդ գեղեցկուհուն իրեն կին վերցնել, և այս ամբողջը կատարվում է կարճ ժամանակամիջոցում: Ուստի Փերիշանը դեռ չի հասցնում սիրահարվել: Նրա մեջ բացակայում է Ջինեի տապակվող սերը Մամեի համար, նա չունի Խջեզարեի համարձակությունն ու անձնազոհությունը հանուն իդեալական ջերմ սիրո, հանուն հովիվ Սիամանթոյի: Եվ այդ տեսակետից Փերիշանը իր այդ վիճակով մեզ հիշեցնում է Րաֆֆու նկարագրած «գեղեցիկ ու թանգագին Ումիդդուխտին»: Ահա ձեր առաջն է նա, Ումիդդուխտը, արյունարբու Շապուհի քույրը, որը «Մեհրուժանի մասին գաղափար անգամ չուներ նա, նրան չէին ասել, թե ինքը Մեհրուժանի նշանածն է և մի օր պետք է նրա կինը լինի»:

«Պարսից արքունիքում նա էակ չէր, այլ իր էր,—այն գեղեցիկ ու թանգագին իրերից մեկը» («Սամվել»):

Սիրահարական գծեր մենք չենք նկատում նաև Բուլուկի մոտ:

Մենք գտնում ենք, որ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգի սյուժեն հիմնավորապես հերոիկա է, որը հիմնված է ճշմարտության, ազնվության, անխարդախության, ուժի, վրիժառության, անվախության, լավ անվան, մաքուր խղճի, անբիծ բարոյականության վրա:

Ընդունելով Մըլի Ալի-Ամար աղայի պայմանը, Բուլուկը, հակառակորդ եղբորը հանդիմանելիս՝ ասում է.

Վորբուկ բրա մարըվ մեր բա,
Բըրա ռոկե լը դընե բա[1]:

Այս է մեր վիպերգի հիմնական գաղափարը:

Վիպերգի իմացական արժեքը հատկապես շատ կոնկրետ

1 Թող մարդը տղամարդ (այր, քաջ) լինի,
Թող մի օ՛ր աշխարհում լինի:

կերպով արտահայտված է առածների մեջ: Վիպերգում դուք հանդիպում եք այսպիսի առածների ու ասացվածքների.

Բարևե նեը, սարա քեր[1]:

Կամ՝

Հազար պազե Դավրեշ ըը չոլեբա,
Հազար քիսե մորկըրի ըը արդե բա,
Բրա ռոկի Նավե մերըվ ըը դնեբա[2]:

Կամ՝

Բարևե չե, Թըմի գանի բար քերինը[3]:
Ազ ռըմըմ, Նաչըմա Թեւեդա[4]:

Կամ՝

Դնյու դու դարիյա,
Բը յակի մարի տե,
Բը յե դընե դչա[5]:

Կամ՝

Դընյա հա հատիա,
Վե հա ժի հառա[6]:

Կամ՝

Դաստե Թան ե:
Դանգ ժե Նայե[7]: Եվ այլն:

Այս առածները, որոնք գեղարվեստորեն զարդարում են վիպերգը, տալիս են կոնկրետ պատկերացումներ, եզրափակում են նրա մեջ դրված յուրաքանչյուր խնդիր, արտահայտում են ոչ միայն վիպերգն ստեղծողի աշխարհայացքի էությունը, այլև քուրդ ժողովրդի ողջ աշխարհայացքը հանդեպ կյանքի, հանդեպ կյանքի համար մղվող պայքարի, հանդեպ այն նպատակների, որոնց իրականացման համար պայքարում է նա:

---

1 Արու գառը դանակի համար է:

2 Դերվիշի հազար ոչխար հանդում լինի,
Հազար կնքված քսակներ (պորտմաններ) գետնի վրա լինեն—
Թող միայն մի օր մարդու անունը աշխարհում լինի:

3 Լավ գառը միշտ դանակի բաժինն է:

4 Ես նեղակ եմ, պարկում չեմ տեղավորվում:

5 Աշխարհը երկու դուռ ունի. մի դռնով մարդ գալիս է, մյուսով գնում:

6 Աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա:

7 Մենակ ձեռքը ծափ չի տա:

Ավելին՝ ժողովուրդն իր կենսափորձով զգացել է այն ճշմարտությունը, որ անհատն իրենից ոչինչ չի ներկայացնում. մի ձեռքը ծափ չի տալ, և ահա հենց այստեղ է դրվում կոլեկտիվ ուժի մեծության գաղափարը, այն ուժի, որին ոչինչ չի դիմանում։

«Քրդեր,—ասում է Ս. Հայկունին,—ավելի առածներ ունեն... անմիջապես մի առած կամ երգ ստեղծելը բնական դարձած է նոցա մեջ»[1]։

Եվ իսկապես, չկա ֆոլկլորային նշանակալից մի նյութ, որը զարդարված չլինի այդ խորիմաստ, կոնկրետ առածներով։

«Կառե ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի»-ի ոճը—դա ժողովրդի ոճն է՝ գեղարվեստական պատկերավոր նկարագրություններով, կարճ ու հատու բառերով, գեղեցիկ ոճերով, ամփոփ ու խորիմաստ մտքեր արտահայտող նախադասություններով[2]։

Վիպերգի գեղարվեստական հատկանիշներից մեկն է նաև հիպերբոլան։ Այսպես օրինակ՝ Կառի հաղթությունը հետևյալ ձևով է պատկերացվում.

Հասե Դուդեի զորքը եկավ,
Քարերով, հողով։

Իսկ հետո՝

«Նրանք այնքան էին, որքան (չոլի) հանդի քարեր, դաշտերի վարդեր»։

Հիպերբոլայի օրինակ կարող է հանդիսանալ Փերիշանի ղալանը.

Նրա ղալանը բարձրացել է
Գյուղերի նախիրներով,
Մաքի, ոչխարների հոտերով,
Ձիերի երամակներով,
Յոթը կոտ արծիվների կաթով,
Յոթը բեռ կոտոշավոր օձերով։

Բազմաթիվ են հիպերբոլիկ պատկերավոր արտահայտու-

1 «Էմինյան ազգագրական ժողովածու»,—1906 թ., հատոր Զ., էջ 257։
2 Տես «Վիպերգի լեզուն» հատվածը։

թյունները, որոնք բղխում են մեր վիպերգի ներքին կառուցվածքից և համապատասխան են նրա ոգուն։

Նրա գեղարվեստական առանձնահատուկ կողմերից մեկն էլ պարզությունն է։ Նրա յուրաքանչյուր բառն այնքան դինամիկ, հնչող ու տպավորիչ է, որ մեկ անգամ լսողը դժվար թե մոռանա, ուստի այդ է պատճառը, որ երգչի կողմից հափշտակությամբ յուրացվում է, դառնալով նրա սեփականությունը։ Այդ պարզությունը նրան մատչելի է դարձնում թե՛ պատանիներին, թե ծերունիներին։ Ահա թե ինչու «Կառ ու Բուլուկն Սլեմանն Սլիվլի»-ն այնքան լայն տարածում պիտի ստանար։

Մեր վիպերգում մեծ տեղ են բռնում էպիտետները (Մըլէ Ալի-Ամար աղան, Թոփալ Մոլլան, Խայլին Նամաթ և այլն)։ Այդ էպիտետներն առաջին հերթին մարդուն զգալ են տալիս, թե ժողովուրդն ինչ միտումներ ունի այս կամ այն գործող անձի վերաբերմամբ՝ համակրա՞նք, թե՞ հակակրանք, որը հետզհետե պարզվում է վիպերգում բերված գործողությունների միջոցով։

Վիպերգում ժամանակը, տարածությունը և արագությունն ակնթարթային են. ամեն ինչ «մե դալե» (այդ մոմենտին) է կատարվում. Կառի ձի հեծնելը և «Խեմուր գետի մոտ գտնվելը» մեկ է լինում։ Չկան կրկնություններ, կա ակնթարթ, մոմենտ— դինամիկ է վիպերգի ողջ էությունը։

Պատկերավորման տեսակետից վիպերգում կարևոր տեղ են բռնում բնութագրերը, որոնք չափազանց սեղմ ու կոնկրետ ձևով տալիս են ժողովրդական և տիրող դասակարգի մարդկանց տարբեր խարակտերները. այսպես օրինակ՝

...Վեր է կացել Բուլուկն Սլեման
Մի դույլ ոչխարի կաթ է կթել,
Իրեն յոթը հացը մեջն է փրթել, կերել,
Կամաց-կամաց գեալի տունն է եկել,
Եկել Սուրկլին դուրս է տարել,
Յոթը ուղտի փալան իր նիզակով վերցրել,
Ձախ թևի կողմն է գցել,
Ծերունի մարդիկ տեսել ու վախով են բռնվել,

ասել են — այս տնաշենի սիրտը երկաթ է թե՞ պողպատ։ Ծանոթ մարդիկ ասել են՝

Սարերի գլխի հովիվն է նա,
Աշխարհից ոչինչ չի հասկացել...

Կամ՝

Երբ «Բուլուկը սուրճի փինջանը վերցրել է, դիվանի մարդիկ այնպես են խառնվել, որ իրար ղալյոնները ոտքի տակ տվել, ջարդ ու փշուր են արել»։

Պատկերավորումն ավելի ցայտուն ու կենդանի է, երբ այն շաղկապվում է բնության տարրերի ու երևույթների հետ։ Օրինակ՝ Բուլուկի և քեռիների արյան մասին ասվում է.

«Ջրի տեղ Թեմուր գետը դառնում է արյուն, հոսում»։

Կամ Բուլուկը մահանալու ժամանակ եղբորը կտակում է.

«Վեր կացեք, ինձ դրեք առաջին ձիու վրա, ձեռքս հանեք, իմ կողքից թողեք, մի ձու դրեք իմ ձեռքի մեջ, երբ որ մայրս՝ Վարդեն գա, թող ձեռ չկտրի, ասեցեք, Բուլուկն ասում է. Ես աշխարհը դարձրի ինչպես մի ձու, ձուն էլ քարին խփեցի, գնաց, աշխարհի վերջն ունայն է, ինձ էլ չմնաց, աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա»։

Վիպերգի մեջ շատ հուզական և անմոռանալի է նաև հետևյալ պատկերը. Բուլուկը մեռել է, Կառն իր վեց քեռիների և եղբոր համար յոթը սև է կապել գլխին, նրա առջև է սպանված Բուլուկի դիակը, որի մի ձեռքը շարժվում է առաջ և հետ՝ ի նշան այն բանի, որ աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա։

Հովիվները, նախրապանները տեղյակ չլինելով եղելության, բայց իմանալով, որ նրանք գալիս են, հավաքվում՝ Վարդակին «աչքալուս» են տալիս, թե՝ «աչքդ լույս, որդիներդ եկան»։ «Վարդակը շատ ուրախացավ, վերցրեց երկու ձեռք դհոլ-զուռնա, գնաց Բուլուկին դիմավորելու»։ Սակայն նրա առջև բացվում է անսպասելի, սարսափելի իրողությունը,—Բուլուկը սպանված է։

Սակայն վիպերգի պատկերավոր կողմն ավելի ցայտուն և ակնբախ է դառնում, երբ քննում ենք համեմատությունները։ Այսպես օրինակ՝ Վարդակը, Մըլի Ալի-Ամար աղային դիմելիս՝ ասում է.

Ալի Ամար աղա, դու ինչպիսի՜ չար գործ արեցիր,
Դու իմ ծամերն երկու կողմից կտրել տվեցիր.
Դու Ալաշղաղ լեռը իմ հոր վրանի վրա թեքեցիր։

Կամ՝ Կառը Մըլի Ալի-Ամար աղայի մարդկանց դեմ կռվելիս՝ նրանցից վիրավորվում և ընկնում է. այդ առթիվ բանասացը երգում է. «Կառը ձիու վրայից ինչպես Ջուղե լեռն ընկավ»։

Կառ ու Բուլուկ եղբայրները հանդես են գալիս որպես «Դու բարանե կալա զարդաշ ճավնեշին» (=երկու անեղջյուր, սպիտակավուն, կապուտաչյա խոյեր)։

Իսկ Վարդակը հանդես է գալիս որպես «արյուներախ գայլ», նրա եղբայրները՝ որպես «յոթը կապամենջք գայլեր», «Ներիններ»։

Կամ՝

Մըլի աշիրաթի մեծամեծները, որոնց հավաքել էր տվել Մըլի Ալի-Ամար աղան իր դուստրին «ամուսնացնելու» համար, «բոլորն իրենց քթերը գարնան թոխլիների նման կախել էին, ոչ ոք սիրտ չէր անում ֆինջանը վերցնել»։

Այսպիսի համեմատությունները, որոնք կապված են ժողովրդի կենցաղի հետ, նյութական և առօրյա կյանքի հետ, անզուգական հմայք են տալիս վիպերգին, նրանցով իսկ ի հայտ է գալիս ժողովուրդ-բանասացի հուժկու երևակայության բարձր թռիչքը, նրա բնավորության և տնտեսական կյանքի հատկանշական կողմերը—նրա ոգուն համապատասխան։ Այդ համեմատությունները յուրահատուկ են վաչկատուն քրդերին (լեռ, գայլ, խոյ, թոխլի, և ոչ թե, ասենք, դաշտ, գոմեշ, գնացք, ինքնաթիռ և այլն)։

«Նրանք (այսինքն քրդերը. Հ. Ջ.)—գրում է Խաչատուր Աբովյանը,—շատ պարզ և անպաճույճ երգում են իրենց հովիտները, լեռները, ջրվեժները, ծաղիկները, զենքերը, նժույգները, զինվորական քաջագործությունները, իրենց գեղեցկուհիներին և նրանց հրաշալի հատկությունները,—ամեն բան, որ միայն մատչելի է նրանց զգացմունքներին և ըմբռնողության, զարդարում են **համեմատություններով** (ընդգծումն իմն է. Հ. Ջ.) և ձգնում են ավելի ևս կենդանի ներկայացնել այդ բոլորը քաղցրանվագ երգերով»[1]։

Եվ այս առումով՝ մեր վիպերգի իրական հասարակական-գեղարվեստական մեծ արժեքներից մեկն էլ այն է, որ հարազատորեն է տալիս իր միջավայրը, նրա մեջ «Գաղափարների, պատկերացումների, գիտակցության արտադրությունը նախ և

1 Տես „Кавказ" թերթ № 47, Թիֆլիս, 1848 թ.

առաջ անմիջականորեն հյուսվում է մարդկանց նյութական գործունեության և նյութական հարաբերությունների մեջ—իրական կյանքի լեզվի մեջ։ Մարդկանց մտապատկերները, մտածողությունը, հոգեկան կապերը հանդիսանում են այստեղ դեռևս ուղղակի ծնունդը նրանց նյութական պրակտիկայի[1]»։

Մեր վիպերգի գեղարվեստական բնորոշ գծերից մեկն է նաև երգիծանքը, որն առաջ է բերում հետաքրքրություն, թարմություն և վարակում է ծիծաղով։

Հետաքրքրական է Կառ ու Բուլուկի մանկությունը և նրանց հոր խրատ-էպիզոդը։ Կառ ու Բուլուկը երբ մեծանում, դառնում են 4—5 տարեկան, սկսում են իրենց հասակակիցների գլուխները ջարդել։ Երեխաների հայրերը գալիս են Սլեմանի մոտ բողոքելու, որ Կառ ու Բուլուկին խրատի, իսկ հայրը այդ լսելով հանդերձ՝ երեկոյան իր որդիներին ասում է.

— Տղեք, այսօր դուք քանի՞ երեխայի գլուխ ջարդեցիք։

Ասացին. Երեք-չորսի գլուխ։

— Վաղը խփեք, ինն ու տաս հոգու գլուխ ջարդեցեք,— ասաց Սլեմանը։

Առանձնապես և հատուկ ծաղրի են ենթարկված վիպերգի մեջ կարևոր դերերով հանդես եկող Մըլի Ալի-Ամար աղան, Թոփալ Մոլլան և Խային Նամաթե Իսան։

Մըլի Ալի-Ամար աղան վիպերգում շատ անգույն և բացասական գծերով է հանդես գալիս։ Փերիշանին հաջող կերպով ամուսնացնելը նրա համար դարդ ու ցավ է դարձել, մյուս կողմից՝ նա տանջվում, այրվում է, թե ինչպես, ինչ հնարքով ձեռք բերի Բեջան գամբիկը, որով և ստորացրած կլինի իր հարևան արաբական միրին՝ Գեսիին, իսկ միրին ստորացնելով կմեծացնի, իր բարձրության գագաթնակետին կհասցնի իր փառքն ու մեծությունը։ Սակայն Մըլի Ալի-Ամար աղայի ցանկություններն այնքան էլ հեշտ լուծելի ցանկություններ չեն։ Պետք է մտածել, մի ելք գտնել, բայց Մըլի Ալի-Ամար աղան չգիտե մտածել, չի կարողանում մի ելք գտնել, և այդ է պատճառը, որ նա հիմարանում, գլխին տալիս և գոչում է, թե «ընկել է երկու կրակի մեջ»։ Նրա համար սոսկալի է էլքաթների կամ մալքաթների հե-

1 Մարքսը և Էնգելսը արվեստի մասին, Պետհրատ, էջ 20։

ռացումը. Նա զգում է այդ, սակայն ինչ կարող է անել, երբ ելք չի գտնում ծուղակից դուրս գալու։

— Այ կին, ասում է «խեղճ» Մըլի Ալի-Ամար աղան, աղջիկդ ոչ գող է, ոչ էլ անառակ, բայց Թոռունի աչքն էլ, պզմամի աչքն էլ քո աղջկա վրա են, ես չգիտեմ՝ որին տամ, ես ընկել եմ երկու կրակի մեջ։

Եվ ահա, թշվառականը, իր կնոջ խորհրդով, ելք է գտնում՝ պետք է Փերիշանին հանել վաճառքի, նրան փոխարինել մի արաբական հայտնի ձիով և ուղտերի երամակով։

Եվ ինչքա՞ն է ուրախանում նա. լավ է զավակից զրկվել, քան աղայությունից, լավ է նրան վաճառքի հանել, ապրանք դարձնել, քան հրաժարվել իր աղայական մեծությունից ու փառքից։ Չէ՞ որ արաբական միրից խլելով նրա ամենաթանգագին ձին, նրա տակի հուշակավոր զամբիկը՝ Բեջանին, դրանով իսկ կշլացնե իր շրջակա աշիրաթապետներին։

Մըլի Ալի-Ամար աղային հատուկ է նաև վախկոտությունն ու քծնությունը։ Նա սարսափած այրի Վարդակի հարձակումից, ասում է.

«Վարդե, ես ինչ անեմ՝ այդքան բուղաներ ու բարաններ եկան, ոչ ոք Ֆինջանը չվերցրեց, Բուլուկն ասաց՝ ես նիզակ եմ, չեմ տեղավորվում պարկում»։ Դրանով է նա ուզում վտանգը հեռացնել իրենից։

Սակայն հետագայում մենք տեսնում ենք հրեշավոր խոստմնազանցություն. այսպես՝

— «Վարդակը վեր կացավ գնաց Ալի-Ամար աղայի տուն՝ իր հարսն ուզեց, բայց Մըլի Ալի-Ամար աղան աղջիկը չտվեց և Վարդակը փուռ ու փոշման վերադարձավ իր որդու մոտ, ասաց. Մըլի Ալի-Ամար աղան աղջիկը չտվեց, Բուլուկն էլ սպանվեց, քո յոթը քեռիներն էլ նրա հետ, հիմա էլ Բեջանին հեծնում, իր բեխերն է ոլորում»։

Մեզ թվում է, եթե Բուլուկն էլ չսպանվեր, Մըլի Ալի-Ամար աղան դարձյալ պիտի դիմադրեր, Փերիշանին չէր տա, նրան Կառն ու Բուլուկը չեն հետաքրքրում, նրան չի հետաքրքրում նաև Փերիշանի ողբալի վիճակը։ Մերժելով Կառին, որը նրա պայմանն ամբողջովին կատարել էր, Մըլի Ալի-Ամար աղան հանդես է գալիս որպես ստախոս, խաբեբա, երդմնազանց և ագահ, դրա-

նով իսկ ապացուցում, որ ոչ թե ինքն է Փերիշանի ձեռքից «ընկել երկու կրակի մեջ», այլ անօգնական Փերիշանն է այդ կրակում տապակվողը։

Կառը հովիվ է, իսկ հովիվն աղայի փեսան չի կարող լինել, երկրորդ՝ նա՝ Ամար աղան կարող է Փերիշանի գլխաց նոր ղալան ստանալ։

Սոոր, մարդկային արժանիքներից միանգամայն զուրկ է Մըլի Ալի աղան և դրա համար էլ ժողովուրդն իր ստեղծագործության մեջ արդարացի վճիռ է կայացնում նրա նկատմամբ.

Հետո Կառոն թուրը քաշեց,
Ամար աղայի գլուխը թռցրեց։

Այլ վերաբերմունք չէր էլ կարող լինել. ժողովուրդը պիտի հաղթեր Մըլի Ալի-Ամար աղային և նա հաղթում է։

Բացասական և ծաղրական հաջորդ տիպը Մոլլան է, որին կոչում են նաև Թոփալ Մոլլա։ Թոփալ Մոլլան վիպերգում հանդես է գալիս որպես խաբեբա, ագահության, խարդախության տիպիկ մարմնացում և, որպես այդպիսին, նա ոչ միայն գործելակերպով է ծաղրվում, այլև ֆիզիկական արատով — թոփալ լինելով։

Թոփալ Մոլլան մտադրվում է այրի Վարդակա Հասե Դուդեի հետ ամուսնանալ։ Բուրդ այրի կինը դժվարությամբ է երեխաներից ձեռք քաշում և ամուսնանում ուրիշի հետ, կամ դժվարությամբ է համաձայնում այն մտքի հետ, որ որևէ այլ մարդ գա իր տան վրա, ամուսնանա և հոգ տանի իր երեխաների մասին, իսկ Վարդակի պես կինը ոչ միայն դժվարանում է համաձայնել այդ մտքի հետ, այլև միանգամայն դեմ է դրան։ Նա և՛ տղամարդ է, և՛ կին, որին քրդերն ասում են ժընմեր։ Այս լավ գիտակցում է Մոլլան և ահա հարմար առիթի է սպասում, որպեսզի անցնի գործի։ Կառն ու Բուլուկը գնում են Բեջան զամբիկը բերելու, այրի Վարդեն մարդ է փնտրում, որպեսզի նրա միջոցով նամակ ուղարկի իր եղբայրներին և զգուշացնի կատարվելիքի մասին։ Նա տոգորված է հարազատ որդիներին և եղբայրներին մահից ու արյունահեղությունից ազատելու ցանկությամբ։ Եվ ահա, ըստեղից որտեղ հանդես է գալիս Մոլլան, այն էլ Թոփալ Մոլլան, որը հանձն է առնում նամակը հասցնել տեղ, սակայն՝

«Մոլլան վեր կացավ, օրական երկու ժամ ճանապարհ գնաց, ինքն իրեն ասաց, թող Կառն ու Բուլուկն սպանվեն, որպեսզի ես նրանց մորն առնեմ»։

Ահա թե ինչպիսի «նամակատար» է Մոլլան։ Վարդակը բոլոր միջոցները գործադրում է, անգամ «համաձայնություն» է տալիս նրա հետ ամուսնանալու, միայն թե փրկվեն որդիները և եղբայրները, իսկ «նամակատարը», չնայած իր խոստմանը, ամեն կերպ աշխատում է, որպեսզի ոչ թե փրկվեն նրա որդիները, այլ սպանվեն, կորչեն և, այդպիսով, հեշտանա և հնարավոր դառնա Վարդակի հետ ամուսնանալը։

Սակայն դա Մոլլայի բնավորության մի գիծն է միայն, նրա մյուս հատկանշական գիծը՝ ագահությունն է, որ մենք ժողովրդի մարդկանց մոտ չենք նկատում։ Այսպես՝ Մոլլան իր ճանապարհը շարունակելով, գնում, հասնում է մի գյուղ, որտեղ մարդ է մահացած լինում. գյուղի մարդիկ գալիս խնդրում են նրան, որ դա մեռելին թաղի, բայց Մոլլան չի համաձայնում»։

— «Ես բան ունեմ, վաղ կերթամ, ասաց Մոլլեն։

Ասին.— Բեզի գոլեն հալխ շատ կտանք, մեռելի շորեր էլ կտանք։

Էդլա որ ասին, Մոլլեն տեսավ որ հալխ շատ կառնի, իջավ էդ տեղ, խատած գլուխ»[1]։

Իսկ մի այլ պատումում Վարդակն ասում է. «Կա, չկա, Մոլլան ագահ մարդ է»։

Մոլլան այն ժամանակ է նամակը տեղ հասցնում, երբ Բուլուկն արդեն սպանված է լինում, սպանված են լինում նաև քեռիները։

Ահա թե Մոլլան իր եղեռնագործությամբ, չարությամբ, ագահությամբ ուր է հասցնում գործը և փաստորեն դառնում է ազնիվ հերոսների սպանության պատասխանատուն։ Այսպիսի բնութագիր տալով Մոլլային, ժողովուրդն ընդհանրապես նշում է կրոնավորների բացասական կողմը։

Այդ տեսակետից Մոլլան նույնքան չգեղազանցված բացասական կերպար է քրդական ֆոլկլորում, որքան «Դըմ-դըմ»-ի մեջ նկարագրված կրոնավորը, որն իր խաբեբայությամբ պատճառ է

---

1 «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ե., էջ. 153։

դառնում ամբողջ բերդի կործանմանը, և կամ Ալեքսանդր Ծարայի հավաքած հեքիաթների մեջ նկարագրված ագահ, խորամանկ մոլլաները։

Սակայն ժողովուրդն անհաշտ է և հզոր. պատռելով հոգևորականների դիմակը, նա հեշտությամբ Թոփալ Մոլլային իր ձեռքից բաց չի թողնում, այլ խոսքով՝ ժողովուրդ-հումանիստը թույլ չի տալիս, որ Թոփալ Մոլլան հասնի իր «մուրազին», մինչդեռ նա շատ ժողովրդական հերոսների ազատելով բոլոր դժվարություններից, փորձանքներից, սովից և ամենադժոխային վայրերից՝ նրանց հասցնում է իրենց մուրազին։

Երրորդ բացասական տիպը Նամաթե Իսան է, որը հանդես է բերվում որպես խային (դավաճան)։

Վիպերգում Նամաթե Իսան մերթ հանդես է գալիս որպես Կառ ու Քուլուկի հորեղբայր, մերթ Մըլի Ալի-Ամար աղայի ծառան։

Նամաթե Իսայի համար բնորոշ է «խային» (դավաճան), ստոր և քծնող, վախկոտ, ստախոս լինելը։ Նա նույնպես մեծ ախորժակ ունի Փերիշանին իր «քաչալ և քութխոր» որդու համար բերել, սակայն չկարողանալով Մըլի Ալի-Ամար աղայի պայմանն ընդունել, օգտվում է հանգամանքից, Կառ ու Քուլուկի հետ միասին ճանապարհվում է դեպի արաբական ցեղը՝ Բեջան դամբեկը բերելու, այն հաշվով, որ նրանք բերեն, բայց ինքը մեջտեղից օգտվի, հաղթանակը վերագրի իրեն ու իր անվանը, և այս նկատառումներով էլ նա գործադրում է բոլոր նենգ միջոցները։ Զգալով Սուրկի գլխավոր դերն առաջիկա մարտում, նա հրահրում, ստիպում է Քուլուկին՝ վայրի այծյամներին հետապնդել, այն էլ այնպիսի տեղ, ուր կարծր քարեր են լինում, որոնց մեջ ձին, հետապնդելով արագավազ այծյամներին, ոտքերից կարող էր շուտ վնասվել, ուրեմն և պատճառ դառնալ Քուլուկի կորստյան։

Հետևողականորեն տանելով իր մութ և նենգավոր գործը, Նամաթն աշխատում է Վարդակի երկրորդ խորհուրդը որդիներին — չթողնեն, որ Սուրկին Նեխած Լճակներից խմի — նույնպես խափանել, և իսկապես, երբ՝

«Բոլորն էլ քնեցին, Նամաթը կամաց վեր կացավ, Սուրկին տարավ, տարավ թողեց Նեխած Լճակների մոտ, իսկ ինքը վերադարձավ, եկավ իր տեղում պառկեց»։

Նա չի մասնակցում քեռիների և քրոջ որդիների կռվին, ընդհակառակը, հրահրում է, որ նրանք իրար սպանեն, բայց այնպես է ցույց տալիս, թե իսկապես ինքն ուզում է Կառ ու Բուլուկին օգնել։

«Երբ Նամաթը բլրակի վրայից տեսավ, որ Բուլուկն ընկավ, զորքը փախչում է, ընկերներին ասաց.

— Գնանք Կառ ու Բուլուկին օգնենք»։

Ահա թե ինչ նենգավոր, խարդախ տիպ է Նամաթը, որին, իսկապես, կարելի է մի բառով միայն որակել—դավաճան։ Եվ հասկանալի է, թե ինչու։ Այդ բոլորը նա անում է Փերիշանին իրեն հարս բերելու նպատակով։

Այդպիսի խաբեբա, նենգ, դավաճան տիպերը մեծ տեղ են գրավում քրդական ֆոլկլորում, որոնք շեքսպիրյան Յագոյի հատկանշական գծերն ունեն և ընդհանրապես շատ նման են Յագոյին։ Այս առիթով կարելի է հիշատակել «Մամե ու Զինե»-ի մեջ հռչակավոր, չարության մարմնացում Բաքոյե Ավանին, որին ուղղակի կարելի է անվանել Յագո, կամ «Դըմ-դըմ»-ում՝ ուստող և ուրացող Խան Մահմեդե Մալաքանին, «Լուր-դա-լուր»-ի մեջ հիշվող աղային և այլն, որոնք իրենց բացասական գործողություններով պարզապես չարության, նենգության և խարդախության մարմնացումն են։

Այդ բացասական տիպերին հակադիր՝ իրենց հերոսական ջերմ և լավագույն ընկերական գծերով վիպերգում մարմնավորվել են այնպիսի դրական կերպարներ, ինչպիսիք են՝ Բուլուկը, Կառը, հայ Գողոսը, Ալի Մուսախանին, Լքոյե Մըրտըը, Վարդակա Հասե Դուզեն և այլն։

Ահա Բուլուկե Սլեմանե Սլիվին (Սլիվանցի Սլեմանի որդի Բուլուկը). Նա վիպերգի կենտրոնական դեմքն է՝ որը, հովիվ, երիտասարդ մի անձնավորություն, որն իր մեջ մարմնավորում է հերոսություն և անվեհերություն։ Նա անխարդախ է ու ազնիվ, վեհանձն է ու մարդասեր, սիրում և հարգում է իր մորը, թերևս չի ենթարկվում նրան. Բուլուկը միաժամանակ վրիժառու է, հպարտ, պարտաճանաչ և պատվասեր։

Բուլուկն ընդունում է Փերիշանի հետ ամուսնանալու առթիվ Մըմ Ալի-Ամար աղայի առաջարկած պայմանը։

Ֆինջանի ընդունումը Բուլուկի կողմից—դա նշան է, որ

Նա հանձն է առնում ծայրահեղ աստիճանի դժվարին մի գործ, որը կարող է գլուխ գալ միմիայն անձնազոհությամբ. այդ բանը սիրտ չեն անում կատարել մեծամեծների «քաջերը», որոնք «դագանի, աչքի տակով նայում էին ֆինջանին, բայց վախենում էին այն վերցնել»։

Գուլուկը—դա խորհրդանշանն է հովիվ մարդու քաջության՝ ընդդեմ բոլոր էլբաթների և մալբաթների աղնվականների։ Գուլուկ—դա նշանակում է, որ միմիայն ժողովրդին և ժողովրդի հերոսին է հատուկ հանդգնությունն ու արիասրտությունը։ Ահա թե ինչու Գուլուկի բերանով ժողովուրդն արտահայտում է այն վեհ, բոլոր դարերին և ժամանակներին հատուկ, յուրաքանչյուր ժողովրդական հերոսի վայել առածը, որն ասում է, թե՝

Մեր ղըմրա, նավ ղըմինա,
Շեր ղըմըրա, ճարմ ղըմինա,
Դընյայեդա հար մերանի ղըմինա[1]։

Որպես հերոսության մարմնացում, Գուլուկին միայն հատուկ է արդարությունը, ճշմարտախոսությունը և խոստման կատարումը։ Գուլուկը հետագայում, իհարկե, կարող էր լսել իր փորձված մորը, լսել և եղբորը, չգնալ Արաբական էլաթը, բայց նա այդ չի անում, որովհետև նա տված խոսքը չկատարելը մեծ հանցանք է համարում։

Գուլուկի համար ատելի է պղծությունը և խարդախությունը՝ անգամ թշնամիների հանդեպ, նա դեմ է ամեն տեսակ ստորության։ Գուլուկը գիշերով գնում է Մըլե Ալի-Ամար աղայի «տունը՝ երկու հազար տան մեջ, նրա վրանի դռան մոտ»։ «Նայեց տեսավ, որ միրը (ի միջի այլոց մի քանի պատումներում հիշվում է, որ Գուլուկի հայրն սպանվել է միրի կողմից) քաղցր քնի մեջ է. Գուլուկն իր խենչալը քաշեց, ասաց՝ նրա գլուխը պիտի թռցնեմ. մի անգամ էլ մտածեց, ասաց՝ սա մուխանաթություն է, լավ չէ։ Բերեց մի թուղթ գրեց, ասաց՝ գիտացած եղիր, որ ես քո գլխի համար եմ եկել, ես անցյալ գիշեր

---

1 Մարդը մեռնում է, անունն է մնում,
Առյուծը մեռնում է, կաշին է մնում,
Աշխարհումս քաջությունն է մնում։

կարող էի քեզ սպանել, երբ դու քնած էիր, բայց մեր տունը մուխանաթություն չի անում, դու վաղն արի Խեմուր գետի մոտ, իրար կփորձենք»:

Նրա մեջ խոսում է վեհանձնությունը. նա լավ է համարում պատվով մեռնել, քան գողի կամ անճարակ մարդու անուն վաստակել:

Հավատարիմ մնալով իր հասկացողությանն ու համոզմունքին, Բուլուկը, ի ցույց բոլոր աղաների, ամենավճռական մոմենտում անգամ չի նահանջում: Նա, որ արդեն վաղուց էր ձեռք բերել Բեջանին և ուղտերի երամակը, ի հարկե, հեշտությամբ և առանց արյունահեղության կարող էր բերել-հասցնել տեղ և դրանով իսկ տիրանալ Փերիշանին. այս դեպքում ինքն էլ չէր զոհվի, մանավանդ եթե իր քեռիների հետ նախապես բացատրվեր, ամեն չարիքից կազատվեր, սակայն այդ կլիներ սովորական հասարակ պատմություն: Հերոսը երկու ճանապարհ ունի՝ կամ հաղթել և հաղթողի վիճակում մնալ, կամ՝ մահու և կյանքի գնով հաղթվել, որը նույնպես նշանակում է հաղթել: Հերոսի համար ուրիշ ելք չկա:

Հետաքրքրական են այստեղ նաև քեռիների մոլորումները. չնայած այն սիրուն, որ նրանք տածում են դեպի իրենց քույր Վարդակը, բայց և այնպես, հերոսի անունը չարատավորելու համար, անկախ իրենց կամքից՝ ներգրավվում են կռվի մեջ: Նրանք լսում են իրենց փոքր եղբորը և գալիս են քրոջ որդիների դեմ կռվելու:

Բուլուկի թույլ կողմը՝ ձին է, իր մոտիկ բարեկամ և հավատարիմ Սուրիկը, նրա հիվանդությունը: Բուլուկը չէր մտահոգվում իր ձիու մասին, որը նիխած ջուր էր խմել, որին վազեցրել էր կարծր քարերի վրայով: Նա, չմտահոգվելով այդ մասին, մոռացել էր նաև իր մոր՝ Վարդակի խորհուրդները՝ հատկապես Սուրիկին հետևելու և իր քեռիների հետ բացատրվելու առթիվ: Մոռանալով մոր խորհուրդները, նա տուժում է, ի հարկե: Սակայն չենթարկվելով մորը, նա միևնույն ժամանակ հարգում և չափից դուրս սիրում է նրան՝ չի մոռանում նրա սպիտակ կաթը:

Նա, ի սեր իր «մոր սպիտակ կաթի», եղբայր Կաւին մե-

զղջում է, թե ինչու վեց քեռիներին սպանել է (չնայած որ քեռիներն իրեն մահամերձ վիրավորել են)։

Սակայն լինելով հոգատար ընկեր, մեծ երախտագետ դեպի մայրն ու հարազատ ընկերները—գծեր, որոնք համամարդկային են, նա միևնույն ժամանակ վրիժառու է. նրա մեջ ուժեղ է տոհմատիրական հասարակարգի պայմաններում հարգի վրիժառությունը։ Թեև մահամերձ վիճակում, բայց և այնպես նա իր եղբայր Կաուին ասում է.

— Իսկ իմ երկրորդ կտակն այն է, որ դու իմ վրեժն Ալի-Ամար աղայից առնես... և նրա աղջկանը քեզ համար բերես։

Այսպիսի անձնավորություն է Բուլուկը։ Իր խիզախությամբ, անխարդախությամբ, վեհանձնությամբ, շիտակությամբ իր բարոյական և հերոսական մահով ազնիվ, բայց անփորձ հերոս հովվի խտացած կերպարն է, վիպերգի շունչը։

Բուլուկե Սլեմանի որոշ դրական գծերի լրացումն է նրա եղբայրը՝ Կաուե Սլեմանը (Սլեմանի որդի Կաուն)։ Հանձին Կաուի մենք ունենք մի կշռադատող, հեռատես, եղբոր և հատկապես մոր հանդեպ ջերմ հարգանք ու սեր տածող մի ազնիվ, խոհեմ հովիվ։

Բուլուկն ասաց Կաուին.— Գնա դիվանին սալամ արա, հարցրու Ամար աղայից, թե այդ ինչ բան է (ինչ կռվի նշան է), ֆինջանը վերցրու խմիր։

«Կաուը եկավ, սալամ տվեց, իսկի էլ չհարցրեց, թե այդ ինչ ֆինջան է։ Կաուը մտածեց, որ իր եղբայրը ջահելություն է անում, տաքարյուն է, այստեղ նստողներից ամեն մեկը երեք-չորս հարյուր ձիավորի տեր է, եթե նրանք չեն վերցնում, ինքն ինչու վերցնի»։ Ժողովուրդը տալիս է երկու եղբայրների տարբեր մտածելակերպը և ավելի ցայտուն է դարձնում Կաուին, այդ չափված-ձևված գործ անողին և նրա բնավորության այդ գծերն արտահայտում է մի բառով—կառ (խուլ), որը միևնույն ժամանակ նրա անունն է։ Կաուն զգում է, թե ինչ է նրանից սպասում, զգուշացնում, պախարակում է եղբորը, թե ինչու այդքան «մեծամեծների» միջից ոչ ոք սիրտ չի արել ֆինջանը վերցնելու և միայն նա է վերցրել։ Նա դեմ է եղբոր ձեռնարկած գործին, բայց հետևում է նրան, չի հակառակում, և դրանով ժողովուրդը նրա մեջ մարմնավորում է եղբայրների փոխադարձ սերն ու հարգանքը։ Դեմ լինելով եղբոր ճանապարհորդությանը, որը

կորստաբեր էր համարում նա, որոշում է իր անփորձ եղբորը մենակ չթողնել, ինքն էլ նրա հետ գնում է։ Եվ ահա այս ճանապարհորդության ժամանակ է, որ նա ամեն քայլափոխին հետևում է եղբորը, նրան օգնում Բեջանը ձեռք բերելու, և փորձում է նրան հետ դարձնել առանց արյունահեղության։

Կարին հատուկ է հարգանքը իր հարազատ մոր հանդեպ։ Ժողովրդական բանասացը Բուլուկին ափսոսում և անգամ կշտամբում է, որ նա իր մորը (այս դեպքում կնոջ խոսքը բանի տեղ դնելու-չդնելու խնդիրն է) չի լսել, իսկ Կարին, ընդհակառակը, վեր է հանում, գովերգում նրա այն դրական կողմը, որ նա լսում է մորը։

Նա իր համառող եղբորը՝ Բուլուկին հանդիմանելով ասում է.

«Մեր մայրն է գալիս, մեզ ճանապարհներ է ցույց տալիս, խորհուրդներ է տալիս, մենք նրանից հալալ կաթ ենք ծծել»։

Կամ, մի այլ տեղ՝

«Նրա եղբայր Կառն ասաց.—Հուրթ-օջախդ քանդվի, դու այդ անաստծուն սպանեցիր (Սոսըկի մասին է խոսքը. Հ. Ջ.), դու բոլորովին մեր մոր խորհուրդը չկատարեցիր»։

Հարգանք դեպի մայրը, դեպի եղբայրը,—ահա Կառի լավագույն մարդկային գծերից մեկը։

Սակայն Կառը միշտ կառ չէ (հանդիստ, ծանր), նա միաժամանակ հերոսության մարմնացումն է, հարկ եղած դեպքում դառնում է առյուծ։

«Ես երդվել եմ, ասում է նա, իմ եղբոր համար կսպանվեմ, բայց նրան մենակ չեմ թողնի։ Ներքին անապատի առյուծն եմ ես»։

Եվ նա, այն խորհրդատու, համեստ և ծանր Կառը, տեսնելով, որ «Սոսըկը մենակ է մնացել, Բուլուկը չկա, աշխարհը գլխին պտտվեց, էլ քեռի չհարցրեց, «կատաղած գայլի» նման մեջ ընկավ, թույլ չտվեց՝ մեկն ու մեկը ետ դառնա, «բոլորին կոտորեց»։ Վրեժխնդրությանը զուգակցվում է նաև պատվախնդրությունը. երբ նա լսում է, որ Մըլի Ալի-Ամար աղան Փերիշանին իրեն չի տալիս, Մըլի Ալի-Ամար աղայի հետ կռվում է, «բայց մենակ մարդը որ առյուծ Ալին էլ լինի, ոչինչ չի կարող անել»։ Իսկ ինչ աներ Կառը, նամուսի տեր այդ մարդը—նա չէր ուզում փախուստի մատնվել, լավ էր համարում մեռնել, քան փախչողի

անուն վաստակելու Նրա վերքերը շատանում էին։ Նա հառաչելով ասաց. «Ա՛խ, թիկունք, և ձիու վրայից, ինչպես Ջուղի լեռ, ընկավ գետին»։

Որպես հերոսի կերպար Կառն իր մեջ մարմնացնում է այն նշանավոր գաղափարը, թե՝

«Ավելի լավ է մեռնել, բայց մեռնել փառքով, քան ապրել ամոթալի կյանքով» (Ռուսթավելի)։

Հենց որպես այդպիսին, նա ժողովրդական լավագույն հերոսի կերպարն է, հանձին նրա դրսևորվում են հովիվ մարդու վեհանձնությունը, մարդկային լավագույն գծերը։

Եվ այսպես՝ Կառ ու Քուլուկ եղբայրները մեր վիպերգի կենտրոնական հերոսներն են, նրա լավագույն զարդը, առանց մեկի չի կարելի պատկերացնել մյուսին, ինչպես և առանց երկսի չի կարելի պատկերացնել «Կառ ու Քուլուկն Սլեմանի Սլիվի» վիպերգը։

Վիպերգի կենտրոնական դեմքերից մեկն է հայ Պողոսը, որը հիշվում է նաև Բդդո անունով։ Այստեղ մեզ համար հետաքրքրականն այն չէ, թե այդ անուններից որն է այսպես կոչված նախնականը, այլ այն, որ վիպերգում գործում է հայ աշխատավոր հերոսներից մեկը, որը վիպերգի բոլոր պատումներում հանդես է գալիս, ըստ մեծի մասին, հայ Բդդո անունով։

Բդդոն ամենադրական տիպերից մեկն է, ժողովրդական հերոս Քուլուկը նրան կոչում է «հորեղբայր», իսկ նա Քուլուկին՝ «իմ որդի, որդիս»։

Ինչպես արդեն հիշատակվել է, հարազատության տեսակետից այս կոչումները քրդերի մեջ ամենահարգելին են և ցույց են տալիս, թե նրանք՝ Քուլուկը և հայ Բդդոն՝ որպես աշխատավոր ժողովուրդների ներկայացուցիչներ՝ որքա՜ն սերտորեն են կապված իրար հետ։

Հայ Բդդոն (75 տարեկան) հանդես է գալիս որպես ռանձվիրա, փորձված արհեստավոր, «գիտուն, լոխման հեքիմ»։

Սակայն այս գծերի հետ միասին նա սառնարյուն է, խաղաղասեր, իսկ հարկ եղած դեպքում՝ անվեհեր ռազմիկ, ընկերասեր, անսահման հավատարիմ իր ընկերներին։

«Որդիս,—հայ Բդդոն ասում է Քուլուկին,—այդ օրը կես գիշերին մենք հարձակվեցինք Ալի Սվանի Կեկլի օբի վրա։ Ես

էր, քո հայրը և Դալի Ղարդաշը։ Մենք քո մորն օրից հանեցինք, փախցրինք։ Ես այն ժամանակ 21 տարեկան էի, իսկ այժմ 75 տարեկան եմ»։

Եվ այժմ Սլեմանը չկա, չկա նաև նրանց ընկեր Դալի Ղարդաշը, իսկ հայ Բրդոն այժմ Սլեմանին փոխարինելով որպես հայր, հետևում է իր ընկերոջ հերոս որդիներին՝ Կառին ու Բուլուկին։ Սակայն լինելով այդպիսին, նրա մեջ խոսում է խաղաղասիրության տենչը։

«Բրդոյի ասածն այն է, որ քեռիներն ու քրոջ որդիներն իրար ճանաչեն, իրար չկռվեն, մի վատ բան դուրս չգա»։

Նա ցանկանում է երգի միջոցով քեռիներին ծանոթացնել իրենց քրոջ որդիների՝ Կառի ու Բուլուկի հետ, որ «մի բան դուրս չգա», բայց անհնար է դառնում։

«Քեռիների և քրոջ որդիների կռիվը սարսափելի է...»

Եվ ահա այստեղ, այդ 75 տարեկան, խաղաղասեր, հանգիստ Բրդոն, ի սեր իր ընկերոջ որդիների, որպես «երկնքի դրոշ» հարձակվում է թշնամու բանակի վրա։ Ավելին՝ նրա հետ հանդես է գալիս և մի այլ հայ հերոս, որոնք միասին օգնում են Կառին, այսպես.

«Բուլուկի ընկնելը երբ տեսավ Կառոն, ձայն ձգեց իր ընկեր երկու հայերուն, որ իրեն օգնեն։ Դուք ձիավորների առաջը կտրեցեք, մի թույլ տաք փախչելու, ես Բուլուկի վրեժը պիտի լուծեմ»։ Եվ այնուհետև՝

«Բադդեր Փլին (հայ Բադդո), Ղուկե Լեզկոն ամբողջ բանակի առաջը բռնեցին, սկսան վեց հազար ձիավորի հետ կռվել...»։

Հայ Բրդոն «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» քրդական ժողովրդական վիպերգում կրում է Սասունցի Դավթի բնավորության մի քանի գծերը։ Հանձին նրա (առանձնապես նրա վերաբերմունքը հանդեպ Կառ ու Բուլուկ եղբայրների և նրանց ընկերների) այստեղ զգացվում է այն «կարեկցությունը և քնքշությունը, որ հաճախ հատուկ է հայերին» («Իզվեստիա», 21 հունվարի 1940 թ.)։

Բրդոն վիպերգի ամենադրական տիպերից մեկն է. նա քուրդ բանասացի և ընդհանրապես քուրդ ժողովրդի սրտի ամենամոտիկ անձնավորություններից է, դառնալով վիպերգի անբաժանելի և հիմնական, կարկառուն դեմքերից մեկը, նա հայ և քուրդ

ժողովուրդների բարեկամության նշանաբանն է, նա նույնպես, ինչպես Կառն ու Բուլուկը, հավասարապես սիրելի է այդ ժողովուրդներից թե՛ մեկին և թե՛ մյուսին։

Մըրտըր Լըքոն—վիպերգում հանդես է գալիս որպես դանդբեժ (երգիչ), որը հատուկ է նրանց ցեղին. Նա ազնիվ անձնավորություն է պաշտպան՝ իր ընկերներին՝ Կառին, Բուլուկին և հայ Բղդոյին։ Երբ դավաճան Նամաթը ուզում է խարդախությամբ Փերիշանին իր որդու համար վերցնել, Մըրտըր Լըքոն այս մասին լսելով, գնում է Փերիշանի և Մըլի Ալի-Ամար աղայի կնոջ մոտ և ասում.

—«Մայրիկ, Նամաթը սուտ է ասում, Բուլուկն իր ձեռքով Բեջանը և ուղտերը բերեց։ Նամաթը նրանց դավաճանեց։ Թողեց, որ Բուլուկի ձին նեխած լճակներից ջուր խմի։ Այդ պատճառով էլ Բուլուկը կավի դաշտում ընկավ»։

Ժողովուրդն այդ տեսակետից ճիշտ է գնահատել աշխատավոր Մըրտըրըին, թեպետ մըրտըրությունը արհամարհելի էր համարված, բայց վիպերգի մեջ այդ բանը չենք նկատում, ընդհակառակը, ժողովուրդ-բանասացը համակրանքով է խոսում Մըրտըր Լըքոյի մասին, վիպերգում հանդես բերելով նրան որպես ազնիվ ու անկաշառ մի անձնավորություն, և այդ առումով՝ Մըրտըր Լըքոն ամենասիրելի տիպերից մեկն է։

Ալին Մուսխանի—սա հայտնի է իր քաջագործություններով, հերոսությամբ, վիպերգի դրական տիպերից մեկն է։

Եվ այսպես, տալով մեր վիպերգի տիպերի վերլուծական բնութագրերը, մենք իրավամբ կարող ենք հանգել այն ճշմարտությանը, թե՝ «ամենախոր և վառ գեղարվեստական կատարյալ հերոսների տիպերն ստեղծված են ֆոլկլորի՝ աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ»[1]։

* * *

Վիպերգը լինելով ռեալիստական գեղարվեստական ստեղծագործություն, բայց և այնպես ունի հեքիաթային, նաև առասպելաբանական տարրեր։ Հասկանալի պատճառով, նա քարացած չի եղել, ուստի և անխուսափելիորեն չի պատճենավորվել, այլ

1 Մ. Գորկի. «Խորհրդային գրականության խնդիրները», էջ 44։

«հասուն գետի պես նորոգվել է թարմ վտակներով՝ սկզբից մինչև վերջին ասացողը». դրանով պիտի բացատրել նրա իրարից տարբերվող անունները, տարբեր, գրեթե վիպերգի ընդհանուր կառուցվածքից դուրս էպիզոդները, տեղագրական և աշխարհագրական անունները: Օրինակ՝ ոճի Վալոյի վերաբերող էպիզոդը (№ 1 պատում), հարսի հանդես գալը (№ 4 պատում), ինչպես նաև Բուլուկի երկու անգամ ամուսնանալը և որդի ունենալը (№ 10 պատում) կամ Սլեմանի փադիշահ լինելը (№ 7 պատում) և այլ հատվածներ:

Վիպերգում կան նաև առասպելաբանական հատվածներ, օրինակ՝ Բեջանի ծովաձիուց լինելը:

Այս ամբողջից բխում է այն ճշմարտությունը, որ «Կառ ու Բուլուկն Սլեմանի Սլիվլի» վիպերգն իր մեջ է առել քրդական ֆոլկլորի այլ և այլ հատվածներ, որոնք բոլորովին կապ չունեն նրա հետ և դա ապացույց է այն բանի, որ ինչպես վիպերգը քարացած չի եղել, այլ հոսել, հարստացել է նաև այնպիսի էպիզոդներով, որոնք դժվարանում ենք վիպերգից առանձնացնել. օրինակ՝ № 1 պատումի մեջ Փերիշանի նկարագրությունը: Վիպերգի հարստացման և դարերի ընթացքում իրար հաջորդած հասարակարգերի կնիքն արտահայտող մյուս ապացույցներից է լեզուն, նոր բառերի առկայությունը. այդ բառերից են, օրինակ՝ յաշիկ, սուտկա, կոմիտ և այլն:

Թեև վիպերգն իր մեջ ընդունել է նորանոր էպիզոդներ, սակայն իր որակով և ամբողջականությամբ մնացել է կուռ, չի աղավաղվել կամ առանձին մասերն իրարից չեն անջատվել: Մեր 32 պատումներում էլ բովանդակությունը, սյուժեն, վիպերգի գեղարվեստական կոմպոզիցիան ու հաջորդականությունը միևնույնն են, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե նա գեղարվեստորեն որքան կուռ և միաձույլ է եղել: Լինելով այդպիսին, նա իր հերթին իր ազդեցությունն է գործել քրդական ֆոլկլորի վրա՝ մասնավորապես հերոսական—ողբերգականի վրա: Այստեղ հատկապես պետք է մատնանշել նրա չափածոն, որը միևնույն ժամանակ երգվում է: Հետաքրքրականն այն է, որ նրա հատվածները շատ անգամ երգվում են առանձին, կամ այլ ֆոլկլորային նյութերի հետ. օրինակ՝ «Ծազալըմ-խազալ»:

Բացի այս, քրդական ֆոլկլորում շատ տարածված և հանրածանոթ են մեր վիպերգի մեջ եղած անունները—Հասե Դուդե, Արաբե Գեսի, Վարդակա Հասե Դուդեն, որոնք հիշատակված են նաև հայկական մի շարք ֆոլկլորային նյութերում[1]։

Այնուհետև մեր վիպերգը ոչ միայն իր ազդեցությունն ունի ֆոլկլորային նյութերի վրա, այլև շոշափվել է նաև գեղարվեստական գրականության մեջ։ Այդ տեսակետից բնորոշ է հանգուցյալ քրդագետ Հակոբ Ղազարյանի (Լազոյի) «Բուրդ Ջասիմի պատմությունը» խորագրով վիպակը։

Այս պատմվածքն իր բովանդակությամբ, ոգով ու ոճով շատ նման է «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվի» վիպերգին։

Մեր վիպերգը, ինչպես արդեն ասվել է, պատմվում է խառն՝ արձակով և չափածոյով։ Այս ձևը հատուկ է քրդական ողջ սիրային և հերոսական վիպերգներին, սակայն վիպերգի №№ 4, 6, 20, 21 և 26 պատումներն ամբողջովին չափածո են և ծայրից-ծայր երգվում են։ Բացի այդ, նրա արձակը տողատելով՝ դարձյալ ստանում ենք չափածո. այս հանգամանքը մեզ առիթ է տալիս ենթադրելու, որ նրա սկզբնական պատումները կարող են մեծ մասամբ չափածո եղած լինել։

* * *

Վիպերգին հատուկ է քրդական ոտք, իր հորինվածքով պարզ է, կա եղանակ, շեշտ, հանգիստ,—այսպես օրինակ՝

Հար հաֆտ խալե վա տրակչինա,
Հասպե բըն վանդա խալ-խալինա,
Նավքելե վանա նավ տաժինա,
Սըմե վանա սըմ կոդինա,
Գուհե վանա գուհ քեվրիշկինա[2]։

---

1 Տես Գրականության և լեզվի ինստիտուտի ֆոլկլորային արխիվը։

2 Ձեր յոթը քուռինները էլ արադավազ են,
Նրանց տակի ձիերը խալ-խալի են,
Նրանց մեջքերը բարակի մեջքի նման են,
Նրանց պճեղները կլոր կոտի նման են,
Նրանց ականջները նապաստակի ականջների նման են։

Ըստ վանկերի կարելի է նաև հատել, որով ստանում ենք 8—5—3, կամ՝ 9—5—4։

Վիպերգի չափածոն երգվելով, ոչ միայն վանկերի քանակով (9) և հանգերով է նմանվում (ինա), այլև այստեղ նման են տողի միջին բառերը. այսպես՝ մեր բերած օրինակից «վանա» ամբողջական բառը, որը կրկնվում է նաև մյուս տողերում, դյուրություն է ստեղծում երգողի համար. այնուհետև կարևոր է նաև տողերի մեջ գործածվող բառերի նմանահնչյունությունը, որն ստեղծում է անհրաժեշտ ներդաշնակություն և մեղեդի— այսպես օրինակ՝ տրակչինա, սաժինա, քեվրիշկինա, այնուհետև՝ դամչինա և այլն։

Նույն ձևով են շարադրված նաև վիպերգի մյուս հատվածները,—այսպես օրինակ.

Բոլոգե վանա սորըն դավաթուկինա, հա՜յ վի, վի, վի[1],
Շարե վանա ռաշա համուղինա, հա՜յ վի, վի, վի,
Հասպե վանա բոզա խալ-խալինա, հա՜յ վի, վի, վի,
Գուհե վանա գուհ քերվիշկինա, հա՜յ վի, վի, վի։

Այս քառյակում, բացի կրկնվող բառերի նմանությունից և հնչյունների նմանահնչյունությունից, նկատելի են նաև վանկերի թվի շատությունը՝ 10—5—5, 9—4—5 և նրանց վերջավորությունը՝ «վի, վի, վի», կամ «հա՜յ վի, վի, վի», բացականչությամբ, որն ըստ հարկի կարելի է երկարացնել և նույնիսկ տողի պակաս վանկերը փոխարինել նրանով. օրինակ՝ ունենք այսպիսի երգվող տող՝

Խալե տա հաֆան[2]։

Ռուսնավորի այս տողը ոչ իր վանկերի քանակով և ոչ էլ հանգերով չի համապատասխանում մեր բերած օրինակներին, սակայն դա երգվում է վերջում ընդունելով, «վի, վի» կամ՝

1 Նրանց քոլոզները կարմիր ուղտի բրդից են, հա՜յ վի, վի, վի,
Նրանց շորերը սև մահուդից են, հա՜յ վի, վի, վի,
Նրանց ձիերը սպիտակ խալ-խալի են, հա՜յ վի, վի, վի,
Նրանց ականջները նապաստակի ականջներ են, հա՜յ վի, վի, վի

2 Քո քերիները յոթ են։

«հայ վի, վի» երկարացնող, ողբ արտահայտող բացականչությունը, նման քրդական այն «լո, լո» կամ «լե, լե»-ներին, որոնք դարձյալ լրացնում են երգվող թերի վանկերը, բայց այն տարբերությամբ, որ նրանք մեծ մասամբ հանդես են գալիս երգվող քառյակի կամ հնգյակի սկզբից և արտահայտում են սեր, սիրահարություն, քաջություն և այլն, իսկ մեր վիպերգի վի, վի, հա՜յ վի, վի բացականչությունները, ընդհակառակը, հանդես են գալիս վերջում և արտահայտում են վիշտ, դժբախտություն։

Սրանով էլ պետք է բացատրել վիպերգի այն տողերի երկար և կարճ լինելը, որոնք միևնույն քառյակում կամ հնգյակում՝ երգվում են։

Վիպերգին, ինչպես արձակին, նույնպես և չափածոյին հատուկ են կրկնություններ՝ ոչ միայն իրար նմանվող բառերով ու նմանահնչյունությամբ, այլև նույն բառի գործածությամբ առաջին և երկրորդ տողերում. այսպես օրինակ՝

Հասալե վանա նավատժինա,
Նավատժիյա, դելդամչինա,
Դելդամչիյա, գուհ քերվիշինկա և այլն[1]։

Առաջին տողի վերջին բառը կրկնվում է երկրորդ տողում որպես առաջին բառ։

Կամ մի այլ օրինակ.

Նա թովալըմ ժը փիյա,
Նա կառըմ ժը գուհա,
Նա շըլըմ ժը դաստա,
Նա լալըմ ժը ազմանա,
Նա կոըըմ ժը ճավա[2]։

---

[1] Նրանց ձիերը բարակի մեջ ունեն,
Բարակի մեջ—պոչները մորակի են,
Պոչները մորակ-ականջները նապաստակի են։

[2] Թոփալ չեմ ոտքերից,
Խուլ չեմ ականջներից,
Քաշված չեմ ձեռքերից,
Կույր չեմ աչքերից։

Թվում է՝ այս օրինակներից կարելի է գաղափար կազմել թե որքա՜ն ռիթմիկ, որքա՜ն երաժշտական, երաժշտական բոլոր կողմերով[1] օժտված, հարուստ գործ է մեր վիպերգը։

1 Կոմիտասը, որը 1899 թ. վերջացնում է իր երաժշտական բարձրագույն կրթությունը, 1904 թ. ավարտական շարադրություն տալով «Քրդական երաժշտությունից», ձայնագրում է 13 քրդական ժողովրդական երգեր (տես Էմինյան ազգագրական ժողովածու, Ե. հատոր), որոնցից երկուսը մեր վիպերգի տարբեր պատումների տարբեր հատվածներն են։

ՎԻՊԵՐԳԻ ԼԵԶՈՒՆ

Տալով վիպերգի բովանդակության էությունը՝ նրա հասարակական արժեքավորման տեսանկյունով, պետք է այստեղ հիշատակել նաև նրա լեզվի մասին:

Մեր վիպերգի լեզուն ժողովրդական է. նա նման չէ այն կրոնական հատ ու կենտ ֆոլկլորային նյութերին, որոնք համարյա թե արաբերեն են՝ ժողովրդին անհասկանալի, հիշենք, օրինակ՝ «Բայթա սբե» (առավոտյան բայաթի), «Մանջոլի», «Շեյխե սանանիա ու Դոտա գուրջա», «Շարե» և այլն:

Վիպերգի լեզուն պարզ ու հասկանալի է. նրա ոճը, ոտանավորն ու եղանակը, հերոսների խոսակցական լեզուն ոչ միայն Մըլլի ցեղին են հատուկ, այլև մյուս քրդերին: Դա քուրդ ժողովրդի սովորական խոսակցական, կենդանի լեզուն է:

Վիպերգում գեղարվեստորեն տրված են համեմատություններ, փոխաբերություններ, էպիտետներ: Նրա բառապաշարը հարուստ է և վերցված է կյանքից, կենցաղից:

Վիպերգը, ինչպես և խոսակցական լեզուն, իր մեջ բովանդակում է մի շարք օտար բառեր, մանավորապես արաբերեն և թյուրքերեն:

Վիպերգն իր հնչյունականությամբ մեծ ազդեցություն է թողնում ունկնդիրների վրա. քիչ դեպքեր չեն հայտնի, երբ ունկընդիրները հուզվել և նրանցից շատերը նույնիսկ լաց են եղել. նրանք ապրել են այդ կենդանի հերոսներով և մեծ ցասումով լցվել դեպի Մըլլի Ալի-Ամար աղան, Թոփալ Մոլլան, Խալին Նամաթե Իսան, իսկ մյուս կողմից՝ տաղանդավոր երգչի կողմից նա իսկույն յուրացվել է, դառնալով նրա սեփականությունը:

Վիպերգն այդպիսին լինելով հանդերձ, այնուամենայնիվ զերծ չէ որոշ քերականական՝ հնչական տարբերություններից, որոնք, ինչպես երևում է, հատուկ են կուրմանջի քրդերենին,

ուստի ընթերցողին տեղյակ դարձնելու համար խոսենք նաև այդ առթիվ։

Ըստ Շերեֆ-Էդդինի՝ Բիթլիսի[1] քրդերենը բաժանվում է հետևյալ բարբառախմբերին՝ կուրմանջի, լուրի, կալհուրի, գուրանի և միայն հետագայում ի հայտ բերվեց նաև զազա[2] լեզվախումբը։

Այս բարբառախմբերը, որոնք ընդհանուր անունով քրդերեն են կոչվում, իրարից բավականաչափ տարբերվում են։

Այստեղ մեր նպատակից դուրս է խոսել այդ բարբառներից յուրաքանչյուրի մասին առանձին։ Մեզ հետաքրքրում է կուրմանջի բարբառը կամ լեզուն, որով ավել է մեր կողմից ուսումնասիրվող նյութը։

Ուշադրության արժանի երևույթ է, որ քուրդ ժողովուրդը, այսինքն կուրմանջը՝ ինքն իրեն անվանում է «կուրմանջ», իսկ իր լեզուն՝ «կուրմանջի»։ Քուրդ մարդը երբեք ինքն իրեն չի ասում «քուրդ», այլ «կուրմանջ», ճիշտ այնպես, ինչպես հայերն իրենք իրենց անվանում են հայ, իսկ օտարները, ընդհակառակը, չեն իմանում «հայ» անունը, այլ ասում են «արմեն»։ Օտարներն են, որ կուրմանջներին անվանում են «քուրդ»։

Թե ինչ է նշանակում «կուրմանջ» բառը և ինչ ծագում ունի, դեռ հայտնի չէ։ Իսկ քրդագետ Ժարդին իր՝ Քերականության[3] նախաբանում հաղորդում է, թե Մոսուլում տեղացիները «կուրմանջ» ասելով հասկանում են ոչ աշիրաթ կազմող տարրերին՝ քուրդ, հրեա և եզդի միասին առած, որոնք ապրում են մի աշիրաթի հովանավորության տակ կամ նրանց հետ խառը, բայց որոնք աշիրաթ չեն կազմում։

«Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվի»-ի այս 30 պատումները կուրմանջի լեզվով են ասվել, որը, ըստ վիպերգի ասացողների, տեղագրորեն հետևյալ պատկերն է ներկայացնում՝ Մանազկերտ, Արարատյան դաշտ, Կարս, Մուշ, Ապարան-Ալագյազ, Կոտայք,

---

[1] «Շերեֆ-Նամե»-ի հեղինակը, որի մասին ակադեմիկ Մառը տալիս է հետևյալ տեղեկությունը. „Автор этой единственной национальной истории жил в XVI веке". Տես „Еще о слове „челеби", էջ 25։

[2] П. Лерх, „Исследования об иранских курдах", էջ 59.

[3] Jardine K. F. Bohdinan Kurmanji, a grammar of ihe kurmanji of the kurds.

Ղամարլու, Այնթափ, Թանդուրակ, Թալին, Վան, Սասուն, Վեդի և Թելավ։

Ըստ ազգության՝ քրդեր, որոնցից՝ ա) եզդի քրդեր՝ 13, բ) մուսուլման քրդեր՝ 10, հայեր 7։

Այս է «Կուռ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի»-ի տեղագրական և ազգային պատկերն ըստ ասացողների։ Չնայած որ ասացողներն ըստ վայրերի և ըստ ազգությունների իրարից տարբեր են եղել, բայց 30 պատումների մեջն էլ լեզուն ամբողջովին միատեսակ է, բացառությամբ մի քանի տարբերությունների, որոնք այժմ կմատնանշենք։

1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվական համեմատությունը ցույց է տալիս, որ հենց սկզբից «Կուռ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի»-ում որոշ հնչյունական տարբերություններ կան։ Օրինակ՝ «բ» և «վ» հնչյունների տարբերությունը։

«բ» և «վ» հնչյունների փոփոխությունը

Առաջին պատում		Երկրորդ պատում		Երրորդ պատում	
բ	*վ*	*բ*	*վ*	*բ*	*վ*
ռաբա̈	*ռավա̈*	*նաբեժի*	*ջավ*	*բեժըմ*	*սավա*
դըբև	*դըվև*	*բեժըմ*	—	*մըբաըբ*	*նավեժի*
սըբա̈	*սըվա̈*	*՚դաբ*	—	*նաբի*	*բըվըմ*
նաբա̈	*բըվա̈*	*սըբա̈*	—	*շաբա՚ղ*	*դըբինա̈*
խբաբ	*խբավ*	*մըբաըվ*	—	*օբա̈*	*դավեժա̈*
դըբա̈	*դըվա̈*	*նաբա̈*	—	*բեժա̈*	*դըվև*
					և այլն։

Հինգերորդ պատում		Վեցերորդ պատում		Յոթերորդ պատում	
բ	*վ*	*բ*	*վ*	*բ*	*վ*
դըբա̈	—	*բաբո*	*դըվև*	*ռաբու*	*ռավա̈*
ջաբ	—	*նա̈բինա̈*	*դըվեժա̈*	*մըբաըբ*	*մըբաըվ*
շավդա̈	—	*խա̈բա̈բ*	—	*սըբև*	*սըվև*
ռաբա̈	—	*ջա̈բա̈բ*	—	*բըդանբա̈*	*դըվեժա̈*
խըբաբ	—	—	—		*բվինա̈*
					և այլն։

Այս է «ր» և «վ» հնչյունների տախտակը, որ բղխում է մեր հիմնական պատումներից։

Վերոհիշյալից նկատում ենք, որ՝

ա) «ր»-ով ավելի շատ բառեր են գրված, քան «վ»-ով։

բ) Որոշ պատումներում (№ 2) «վ»-ն ավելի գերակշիռ տեղ է բռնում։

գ) Այդ երկու հնչյունները համազոր են հանդես գալիս (№ 7)[1]։

2. «՚Ղ» ԵՎ «Խ» ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

№ 4 պատում		№ 6 պատում	
՚ղ	*խ*	*՚ղ*	*խ*
—	*խուրջան*	—	*խճատ*
—	*խիղ*	—	*խճատանի*
—	*խավճ*	—	*խճլուն*
—	*գճխ-գճխ*	—	

Այս է «՚ղ» և «խ» հնչյունների տախտակը։ Բացի № 4 և № 6 պատումներից, մյուսներում ամենուրեք «՚ղ» է գործածված, իսկ այդ երկուսն էլ հայ երգիչներն են ասել։ Հայերենում չունենալով «՚ղ» հնչյունը, նրանք չէին կարողանում «՚ղ» արտասանել, այլ դրա փոխարեն «խ» են արտասանել։ «՚ղիղ» բառի փոխարեն ասել են «խիղ» և այլն։

«՚ղ» հնչյունն ամեն տեղ միևնույն գործածությունն է ունենում, միայն օտարներն են, որ չեն կարող արտասանել այն և այդ պարզ հայտնվում է նաև մեր վիպերգության մեջ։

3. ԲԱՅԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԸ

Բայի ժխտական ձևը քրդերի մեջ կազմվում է «մը» և «նը» ժխտականներով։

«Մը» գործածվում է միմիայն արգելական ձևի մեջ, որով արգելվում է գործողություն կատարել, իսկ բայի մյուս ձևերը ժխտական դարձնելու համար գործ է ածվում «նը»։

---

1 Նախապես մեր ձեռքի տակ կար 7 պատում. լեզվական վերլուծությունը հենց նրանց հիման վրա է կատարվել։ Հետագայում, երբ մյուս պատումները գրի առանք, նկատեցինք, որ նշված օրինակները վերաբերում են նաև այդ պատումներին, ուստի մենք բավականացանք եղածով։

«Մա̈» արգելականի գործածությունը

№ 1 պատում

Տո̈ւ խամա̈ մա̈քշի՛նա,
Կո̈ւռո, գա̈րա̈վա̈ մա̈կա̈,
Պա̈յ Բուլըկ մա̈քա̈վըն,

№ 2 պատում

Սյար մարըն
Վա̈րըն, մա̈չըն.
Տե մաչըն։

№ 2 պատում

Տո̈ւ մա̈տրսա̈
Վա̈րա̈ մա̈չա։

№ 6 պատում

Լավո, մա̈չա̈
և այլն։

«Ր» և «ռ» հնչյունների գործածությունը

Այս հնչյունների տարբերությունները նշելու համար վերցնում ենք մեր № 1 պատումում «ր» և «ռ» տառերով գործված բառերը, որոնցով հնարավոր է մյուսների մասին ևս համապատասխան կարծիք կազմել։

«Ռ»-ով գործածվող բառերը

Օրինակ՝ կո̈ւռապ, ռաքա̈, վա̈գա̈ռանդըն, զառ, խավռա, կա̈ռ, ուռմ, թեռ, փոռ, գառան, մա̈ռ, ռա̈վո և այլն։

«Ր»-ով գործածվող բառերը

Օրինակ՝ բա̈րե, Ամար, իջար, ա̈րար, տըրս, գա̈րքա̈տ, գա̈րմ, վերգա̈րե, Վա̈րդա̈կ, հա̈րյա̈կ, կըրըն, պըրս, կըր, ՚հա̈յրան, գա̈վար, գրեգան, բըրա, խա̈գուր, բար, Նըկարըն, հա̈րգո̈, գոր և այլն։

Վերոհիշյալ բառերի հիման վրա, որոնք մյուս պատումների մեջ էլ նույն արտասանությունն ունեն, գտնում ենք, որ իսկապես «ր» և «ռ» հնչյունները քրդերենում իրարից տարբերվում են, այն է՝ փափուկ ր *և կոշտ* ռ. *ճիշտ այնպես, ինչպես «կ» և «ք» կամ «պ» և «փ» հնչյունները հայերենում։*

Եվրոպական քրդագետներն իրենց ուսումնասիրություններում մեծ մասամբ չեն տարբերել այս հնչյունները, այդ պատճառով էլ շփոթության տեղիք են տվել[1]։

---

[1] *Տես* „Записки Кав. отд. имп. русск геог. общества", кн. XIII, *էջ 64—65.*

4. «Ր» ԵՎ «Լ» ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՐ ՓՈԽԱՐԻՆԵԼԸ

«ր» և «լ» հնչյունների փոփոխությունը տատանվում է։ Տվյալ պատումում շատ անգամ երկուսն էլ զուգընթացաբար են գործածվում։ Նրանք որոշ բառերի մեջ, այսպես ասած, դեռևս կայուն դիրք չեն ունեցել։ Օրինակ՝ № 6 պատումում «հöրա» և «բլլա» բառերը, № 2 պատումում՝ «բըլա» և «գուստիր» բառերը, իսկ № 4 պատումում «հալա» և «բըրա», և այլն կամ ասվում է նաև «գլովöռ» և «գռովöռ»։

Այս երկու հնչյուններն էլ ընդհանրապես բոլոր պատումներում գործ են ածվում, ուստի այժմ չի կարելի որոշակի ասել, թե «ր»-ն այսինչ պատումումն է գործածվել, իսկ «լ»-ն այնինչ պատումում. գուցե կարիք լինի այս հարցի կապակցությամբ հատուկ ուսումնասիրություն։

5. «Ս» ԵՎ «Զ» ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 1 պատում		№ 2 պատում		№ 4 պատում	
ս	*զ*	*ս*	*զ*	*ս*	*զ*
խըլաս	*գöրբազ*	*խըլաս*	*զարբազ*	*պըսմամ*	*öզման*
öսման	*öզման*	—	—	—	—

Այս փոփոխությունները դարձյալ ընդհանուր են և կարելի է նկատել բոլոր պատումներում. այսպես՝ öսման—öզման, պըսմամ—պըզմամ և այլն, իսկ գործածության մեջ, թվում է, «զ»-ն ավելի գերակշռում է։

6. ԲԱՌԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԱՍԻՄԻԼԱՑԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

№ 1 պատումում հանդիպող կրճատումների օրինակներ

Կրճատված բառ	*Պետք է լինի*
Գըլև	*Գըրևժö*
գօ	*գօտ*
Սըլօ	*Սըլեման*
Բöլօ	*Բöլըկ*
Վարդև	*Վարդակ*

Սրանք մի-մի ապացույց են, որ իսկապես քրդերենում կրճատումներ կան, այն էլ գլխավորապես բառի վերջից։ Եթե այս հանգամանքն աչքի առաջ ունենալով՝ պարսկերեն որոշ բառեր համեմատենք համապատասխան քրդերեն բառերի հետ, կտեսնենք, որ դրանք մեծ մասամբ կրճատման պատճառով են իրարից տարբերվում, իսկ այդ կրճատումները մեծ մասամբ տեղի են ունեցել քրդերենում. ահա մի քանի օրինակներ.

Պարսկերեն	Քրդերեն	Հայերեն
մանադըու	մանդը	մատակ
քըրբաս	կըրաս	շապիկ
գավրաս	գարըս	կորեկ
գանդըմ	գընըմ	ցորեն
էնգուբին	հնգըվ	մեղր
գաու	գա	եզ
Մահմուդ	Մհո	Մահմուդ, Մհո
	և այլ բազմաթիվ բառեր։	

Քրդերենի մեջ կրճատումները լինում են՝

ա) Բայերի մեջ—անցյալ կատարյալի, եզակի երրորդ դեմքի վերջավորության ժամանակ՝ «գոտ»—«գո», «գիտ»—«գի» և ներկա ժամանակում՝ «դըրեժը»—«դըրե» և այլն։

բ) Գոյականների մեջ. օրինակ՝ Սըլեման—Սըլո, Բըլըկ—Բըլո, Վարդակ—Վարդե և այլն։

գ) Դերանունների մեջ, առաջին դեմքում՝ «ազ»— «ը», «մըն»—«մը», երկրորդ դեմքում՝ տուե—տե։

Այսպիսով՝ քրդերենի որոշ բազմավանկ բառեր վեր են ածվում ավելի կարճ ձևերի։

Քրդերենում գոյություն ունեն նաև ասիմիլացիայի երևույթներ. օրինակ՝ սըրժեկըրըն—շըրժեկըրըն (մորթել, գլուխ կտրել)։

Վերոհիշյալ բացատրությունները բոլոր երեսուն պատումներին էլ վերաբերում են։

7. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

№ 1 պատումում

դո, Բօ̈լըկ,
Կյ̈առո բըն կօ̈շաըն։
Կառ ու Բուլըկ

№ 2 պատումում

Կյ̈առ ու Բօ̈լըկ
Գըդմամօ̈կը վը
վօ̈ թոռնօ̈կը վը
հօ̈րուն։
Ռոժօ̈կե ռուսպիան վօ̈
մա՛ղուլե էլե բօ̈րօ̈լ բուն.
և այլն։

Այսպես՝ վիպերգի մեջ հաճախ բառերը շարվել են առանց շաղկապների, ինչպես՝ «դո, Բօ̈լըկ, Կյ̈առո» և այլն։

Այնուհետև՝ որտեղ շաղկապ է գործածվում, այնտեղ էլ կա արտասանության տարբերություն, երբեմն «ու», երբեմն «վօ̈» և երբեմն «օ̈»։

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես մյուս լեզուները, այնպես էլ քրդերենը՝ ևս ունի բազմաթիվ փոխառություններ, որոնք մեծ մասամբ արաբերենից և մասամբ թյուրքերենից են։ Այդ ապացուցում է և մեր կողմից ուսումնասիրվող նյութը։

Մենք այստեղ դժվարանում ենք քրդերենի և նոր պարսկերենի հարաբերությունների մասին խոսել, որովհետև երկուսն էլ իրար շատ մոտ են, նմանություններ ունեն, ուստի դժվար է որոշել, թե նույն բառը, այսպես կոչված «ընիկ» քրդերեն է, թե՞ պարսկերենից է փոխ առնված։ Օրինակ՝

Պարսկերեն	Քրդերեն	Հայերեն
նան	*նան*	*հաց*
աբ	*ավ*	*ջուր*
բաբ	*բավ*	*հայր*
բօ̈րաբօ̈ր	*բօ̈րաբօ̈ր*	*հավասար*
ռօ̈հ՝	*ռօ̈հ՝*	*հոգի*
շօ̈րաբ	*շօ̈րավ*	*գինի*
յօ̈կ	*յօ̈կ*	*մեկ*
դու	*դօ̈*	*երկու*
սե	*սե*	*երեք*

Այսպես են և բոլոր թվականները և այլ բազմաթիվ բառեր։ Այս հարցի պարզաբանման համար հատուկ ուսումնասիրության կարիք է զգացվում։

1. Ինչպես պարզվում է, քրդերենում փոխառյալ բառերը որոշ փոփոխության են ենթարկվել։ Նրանցից մի քանիսն ընդունել են քրդերեն վերջավորություններ, օրինակ՝ խըզմա̈տ-քար, Ֆըկըր-կըր և այլն։

2. Քրդերեն բառերն օտար վերջավորություններ են ընդունել. օրինակ՝ տըրս-միշ, դավրա̈-միշ և այլն։

3. Քրդերեն «բե» ժխտականով բառեր՝ բե-իթբար, բե-ֆա̈յդա̈ և այլն։

4. Քրդերենն ընդունել է նաև այնպիսի բառեր, որոնք արաբերեն և թյուրքերեն բառերի բարդություններից են ստեղծված. այդ տեսակի բառերը, հավանական է, այդ լեզուներից մեկի միջոցով են անցել քրդերենի մեջ։ Այդ շարքի բառերից են՝ Ֆըկըր-միշ, բազըրգան-բաշի, ադր-սոնդի, դա̈վա̈-դա̈լու և այլն։

Սրանք միայն օրինակներ են, որոնք քաղել ենք «Կառ ու Բուլուկից», սակայն քրդերենի մեջ այդ ընդհանրացնելու համար դարձյալ կարիք կա հատուկ ուսումնասիրության։

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Քրդերենը շատ մեծ ընդունակություն ունի բարդ բառեր կազմելու։ Լեզվի այդ հատկությունը մեծ դյուրություն է տալիս նոր գաղափարների համար նոր բառեր կազմելիս։ Քրդերենի մեջ բարդ բառեր կազմելու փայլուն օրինակ կարող են հանդիսանալ մեր վիպերգում եղած բարդ բառերը։

Եթե մենք բարդ բառերն ըստ իրենց կազմության խմբերի բաժանենք, կստանանք հետևյալ պատկերը՝

Կրկնակ բառեր՝ գըրա̈-գըր, նոբատ-նոբատ, ճան-ճանի, ՚զուլապ-՚զուլապ, զավ-զավ, խան-ման, խար-մել, ա՚ղար-ա՚ղար, սըն-սըն, քա̈բար-քա̈բար, վախտ-վախտ, ռա՚դ-բա՚դ, զա̈վա̈-մա̈վա̈, պա̈ղ-մա̈ղ և այլն։

Վերոհիշյալ բառախմբերից կարելի է հետևյալ եզրակացություններն անել՝

ա) Կան մի խումբ կրկնակ բառեր, որոնք երկու դեպքում էլ նույն են մնում, ինչպես առաջին պարզ բառն է արտասան-

վում, նույնպես էլ երկրորդը. այդպես են արտասանվում, օրինակ՝ նօբատ-նօբատ, քօ̈բար-քօ̈բար և այլն։

Այս տեսակի բառերը կարող են իրարից անջատ էլ գործածվել. օրինակ՝ Հօ̈սօ նօբօ̈դարն (Հասոն պահակ է), իսկ Ալօ քօ̈բարն (հպարտ է)։

բ) Այդ ենթախմբին պատկանում են այնպիսի բառեր, որոնցից մեկը մյուսի վրա ազդելով՝ առաջ է բերում նման արտասանություն. օրինակ՝ գօ̈լօ̈-մօ̈լօ̈, պօ̈ղ-մօ̈ղ և այլն։

Բարդության տեսակները

1. Գոյականն ածականի հետ՝ սար-խաշ, մեր-խաս, ճավ-հեշին, փեսիր-ռաշ, քում-ռաշ, զաֆ-սօ̈'զատ, մալ-խրավ, մալ-միբաթ, չար-'զաֆաս և այլն։

2. Երկու գոյականներ՝ բար-խանա, ալաֆ-ազըր, սըմ-կոզի, գօ̈վ-գօ̈մ, սօ̈ր-քօ̈լ, գօ̈լօ̈-թուկի, շըվ-'զալուն, հուրթ-օջաղ, քօ̈ր-բերի, գել-'զամչի, բավ-քառի և այլն։

3. Գոյականը բայարմատների հետ՝ սօ̈ր-շօ, փառ-կօ̈ռ, նամ-գար, զըլ-շավառ, քուռ-խուր, դուր-բին, զառ-քեշ, խուն-խուր և այլն։

4. Նախադրություններ գոյականի հետ՝ նավ-առօ̈մի, պաշ-կոն և այլն։

5. Նախադրություններ բայարմատի հետ՝ փեշ-քեշ, վօ̈-խարըն և այլն։

ԱԾԱՆՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրդերի մեջ կա երկու սեռ՝ արական և իգական։

Արականի վերջավորությունը լինում է «ե», «ի» և մասամբ, կոչականի ժամանակ՝ «օ». օրինակ՝ Ահմադե Խանի, 'Հօ̈միդե Զօ̈ռօ, 'Հօ̈միդօ և այլն։ Իսկ իգականի վերջավորությունը՝ «ա», «օ̈» և մասամբ, կոչականի ժամանակ՝ «ե»։ Օրինակ՝ Թուկասա Խամո, Բեզարա-Շարո, Վարդե և այլն։

«Վե» (ուե) դերանունը գործ է ածվում իգական սեռի անվան փոխարեն, իսկ «վի» (ուի)—արական սեռի անվան փոխարեն, օրինակ՝ ավի (օ̈ուի) գոռ (նա ասաց, հասկացվում է, որ կինն է ասողը), իսկ եթե ասենք, ավե գոռ հասկացվում է, որ տղամարդն է ասողը։

Ըստ այդ կանոնների էլ գրի են առնվել «Կառ ու Բուլուկի» 23 պատումները, իսկ մյուս 7 պատումների մեջ, որոնք հայ երգիչներն են ասել, արական և իգական սեռերի գործածությունը խառն է։ Այստեղ երկու սեռերի փոխարեն մեկն է գործածվում. օրինակ՝ № 1 պատումում ասվում է. իջա 'գլդօ̈կի Ամօ̈ր ադա հօ̈յօ̈, նավե վի Փօ̈րիշօ̈նօ̈, Վօ̈րդօ̈կ սօ̈րե խո դըշուշա, ջարին վի դըղիկավա չու օ̈լամ դա Վարդակեսա. ա՛գլե Վարդակա փուկօ̈ռ օ̈՛գլե վի Նաբըռօ̈ և այլն։

№ 2 պատումում ասվում է. խիդօ̈կի վի (ուի) ժի հօ̈բու, նավե վի Փօ̈րիխան բու, Ամօ̈ր ադա խիդե խո նօ̈դա պըդմամե։ Փօ̈րիխանե մըն նավ օ̈շիրադա բե բախտ կըր և այլն։

№ 6 պատումում ասվում է. գիվանօ̈կի խաշ դանիյօ̈ և այլն։

Այս օրինակները պարզ ցույց են տալիս, որ սեռերն իսկապես իրար հետ շփոթել են—երկուսի փոխարեն մեկն են գործածել և, այդպիսով, անհնար է դառնում քրդերենում տարբերել թե որն է արական սեռին պատկանողը և որը՝ իգական։

Հարց է ծագում, թե ինչո՞վ պետք է բացատրել այդ հանգամանքը։

Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է աչքի առաջ ունենալ հայերեն լեզվի յուրահատկությունը։ Հայերենում սեռեր չկան. օրինակ՝ Նա ասելով՝ կարելի է և՛ տղամարդ հասկանալ, և՛ կին, նայած թե տվյալ դերանունը նախադասության մեջ որի՛ փոխարեն է գործածվել, ըստ այնմ էլ հասկացվում է, թե այսինչ նախադասության մեջ «նա»-ն կնոջ անվան դերանունն է և ոչ տղամարդու, իսկ քրդերենում այդպես չէ, ուստի հավանական է թվում, որ հայ երգիչները չեն զգացել այդ տարբերությունը և դրա հետևանքով էլ քրդերենում սեռերի տարբերությունը չեն նկատել, երկուսի փոխարեն գործածելով մեկը[1]։

1 Այս հանգամանքը պարզվեց նաև 1931 թ. ֆոլկլորական էքսպեդիցիայի ժամանակ (անդամակցությամբ Զարդոյե Գյանջոյի, կոմպոզիտոր Կարո Զաքարյանի և տողերիս գրողի), Ապարանի շրջանի Ջամուշլի գյուղում։ Տեղի քրդագետ, երկարամյա ուսուցիչ ընկ. Նշան Ռշտունին երգեց «Բերիվանե»-ն, բայց երգելու ժամանակ նա չէր կարողանում զանազանել «վե» և «վի» վերջավորությունները։ Մի քանի անգամ գյուղացիները հիշեցրին, որ «վի»-ի փոխարեն «վե»-ն ասի, բայց ուղղումն արդյունք չտվեց։

№№ 1, 2, 4 և 6 պատումների մեջ, որոնք հայ երգիչներն են ասել, հոգնականացուցիչ մասնիկը «ան» վերջավորությունն է, իսկ մյուսներում, որոնք քուրդ երգիչներն են ասել «ա»-ն և «ե»-ն է. օրինակ՝

№ 1 պատումում՝ 'դա̈նթա̈րե գա̈վան, Մըլան ու Կեկան, ա̈մ դըշն վա̈լաթե Արա̈բան, ընդեդ հա̈ալե վա̈ դըրըսա, հա̈ռա̈, պեշյա խալանեդ խո, խալանեդ վա և այլն։

№ 2 պատումում՝ ձա̈վե հա̈րդույան քա̈տբու Փա̈րիխանե. Ռոժակե Ռուսպիյան վա̈ մա՛դուլանե էլե բարավրուն, համու խար-տանե էլե նեզիկի հազար մերան բարավրուն։ Խուլաման գոտըն, սյարան զաքա̈տըն ռե։ Խալան գոտ, հասպան գրեդա և այլն։

№ 4 պատումում՝ Տա̈ մըն նա̈տըրբսինա̈ ժը Խալանա̈, Կա̈ռե բրա ու հա̈վալեդ վի (ուի) հատըն, գըհիշտընե։

№ 6 պատումում՝ Տա̈ յա̈կի ժը խալանան բըհեկի, Սուֆրա̈կի բաքըրան ռախըստիյա, կավր—մա̈վրան, ադան ու վա̈զիրան, սե սա-լան, գազի Կեկան, Մըլան, Բա̈րա̈զան, մերան ու մերխասան, Ռըման, Ռըմբազան կըր և այլն։

Պետք է նկատել, որ «ան» հոգնականացուցիչ մասնիկը պահ-պանվել է և այն ենթաբարբառների չափածո ֆոլկլորում, որոնք արդեն «ան» չեն գործածում։ Այդ են ապացուցում «Կառ ու Բու-լուկի» №№ 9 և 7 պատումները։ Օրինակ՝ գազի էլա Կեկան, Մըլան կըր կամ լավո, շիվա Խալե վա̈ (ուա̈) շավե յա̈կ կարե խա̈զալանըն և այլն։

Հետևաբար պետք է ընդունել, որ քրդերենում, պարսկերենի նման, մի ժամանակ հոգնականացուցիչը «ան» հետադիրն է եղել, որն այժմ որոշ ենթաբարբառներում փոխարինվել է «ա»-ով և «ե»-ով։ Օրինակ՝ խալե վա, ռե ու դըրբա հուն նըզանըն և այլն, և կամ շատ անգամ ենթակայի վրա ոչինչ չի դրվում, իսկ նրա հոգնակի լինելը ստորոգյալից կարելի է իմանալ. օրինակ՝ դա̈վա̈ հատըն—ուղտերը եկան—եթե քրդերենը բառացի թարգմանենք, կլինի՝ ուղտ եկան, և այս դեպքում ենթական հասկացվում է մեկից ավելի, որովհետև ստորոգյալը հոգնակի դեմքով է՝ հատըն և ոչ թե եզակի՝ հատ։ Այս դեպքում եզակիի ենթական հավաքա-կան իմաստ ունի։

Բացի սրանից, քրդերենում հոգնակի դարձվում է և «եդ» կամ «դ» վերջավորությամբ, որը հանդես է գալիս նաև «Կառ ու Բուլուկ»-ում։ Օրինակ՝ ա̈մ հա̈նա̈ ռոժեդ օղըրմեդ գըրան խա̈լա-մեդ հ՚ա̈ֆտ խալեդ խռնա̈ և այլն[1]։

Սոանն էլ իր Քերականության մեջ ճշտում է հոգնակա-նացուցիչ «ան» մասնիկը։

Այս է ընդհանուր առմամբ քրդերենում և մասնավորապես «Կառ ու Բուլուկ»-ում հանդիպող հոգնականացուցիչ մասնիկների գործածությունը։

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՅՑԱԿԱՆ ԵՎ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներգործական բայերի ուղիղ խնդիրը սովորաբար դրվում է հայցական հոլովով. օրինակ՝ Բա̈լըկ գաղի Կա̈ռռ կըր։ Կա̈ռռ Բուլըկ անի (Բուլուկը Կառին կանչեց։ Կառը Բուլուկին բերեց և այլն)։

Բայց կան ենթաբարբառներ, որոնց մեջ ներգործական բայերի ուղիղ խնդիրը դրվում է տրական հոլովով. օրինակ՝ Կա̈ռռ Բուլըկռա Ռակըր։ Ամե հա̈ռըն Բուլըկռա գաղիկըն։

Իսկ տալ նշանակություն ունեցող բայերն ունենում են երկու խնդիր՝ հայցական և տրական. օրինակ՝ խադե ժը մա̈ռա ՚ղիղըկ դայա̈ (աստված մեզ մի աղջիկ է տվել)։

Այստեղ «՚ղիզակ» հայցական հոլովով է, ուղիղ խնդիրը, իսկ մա̈ռա—տրական հոլովով է՝ երկրորդ լրացուցիչ։

Կան ենթաբարբառներ, որոնց մեջ տրականը կազմվում է առանց հետադիր մասնիկի, ինչպես մեր տեղական բարբառը. օրինակ՝ փոխանակ ասելու իջա վա̈կի ՚ղիզա խո բըդըմ Մալըա-թառա, էլըաթ ժը մըն բար դըկըն, վա̈կի բըդըմ Էլըաթառա, Մալըար ժը մըն բարդըկըն, ասում են՝ իջա վակի ՚ղիզա խո բըդըմ Մալըաթա, Էլըաթ ժը մըն բար դըկըն, վակի բըդըմ Էլըա-թա Մալըաթ ժը մըն բար դըկն։

[1] Տե՛ս L. O. Fossum.—„Kurdish grammar.", էջ 220.

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կառ ու Բուլուկն Սլեմանն Սլիվի»-ի մեջ գործածված լեզվական անհամաձայնությունների մասին խոսելիս՝ պետք է նկատի ունենալ երկու տեսակի անհամաձայնություն.

ա) Երկրորդական նախադասության մեջ գլխավորը թվով չի համաձայնում նախորդ նախադասության գոյականին:

բ) Ստորոգյալը հոգնակի, ենթական եզակի:

Առաջին խմբից բերենք մի քանի օրինակ:

Առաջին պատումում ասվում է՝ դո Բո̈լլըկ, Կառո ըսն կո̈շալըն, վակի ծ̈ղ դյա վի (ուի) բըստինըմ (ասաց՝ Բուլուկ, Կարը սպանվեն, որպեսզի ես Նրա մորն առնեմ), այնինչ պետք է լիներ՝ դո, Բո̈լլըկ, Կո̈ռո ըսն կո̈շալըն, վո̈կի ծ̈ղ դյա վաՆ բըստինըմ (ասաց՝ Բուլուկ, Կարը սպանվեն, որպեսզի ես ՆրաՆց մորն առնեմ):

Երրորդ պատումում ասվում է՝ Կո̈ռ ու Բուլըկ զառ բուն, պըճուկ, չո̈նդ սալ քո̈տո̈ օրթե, մազըն բու (Կառ ու Բուլուկը երեխա էին, փոքր, մի քանի տարի անցավ, մեծացավ), այստեղ էլ ենթակայի և բայի անհամաձայնություն ենք նկատում: Այնինչ հոգնակին պետք է գործածվեր այսպես՝ Կո̈ռ ու Բո̈լըկ զառ բուն, պըճուկ, չանդ սալ քո̈ր օրթե, մազըն բուն (Կառ ու Բուլուկ երեխա էին, փոքր, մի քանի տարի անցավ, մեծացաՆ):

Չորրորդ պատումում ասվում է՝ դո̈ վե գավե Հո̈սո̈նե Դուզե տարուն, հո̈սպե խո դո̈րվա քըշանդըյա (այդ բոպեին Հասանե Դուզեի որդիները վեր կացան, իր ձին քաշեց դուրս):

Այս օրինակներն ապացույց են այն բանի, որ իսկապես «Կառ ու Բուլուկն Սլեմանի Սլիվի»-ում գոյություն ունեն լեզվական անհամաձայնություններ, որոնք, ինարկե, որոշ դարաշրջանի տնտեսական-քաղաքական կյանքի հետ են կապված եղել:

Քրդերի մեջ այսպիսի մի սովորություն գոյություն ուներ. երբ աղան, կամ բեգն իր ամբողջ զինվորական կազմով կամ իրեն շրջապատող մարդկանցով մի գործի էր լինում, միայն նրա մասին էր խոսվում, թե՝ «հեծավ, գնաց, կռվեց» և այլն, այնինչ թեև նույն բոպեին տասնյակ մարդիկ էլ նույն գործողությունն

չէին անում, բայց նրանց մասին և ոչ մի խոսք։ Այս վերաբերում էր նաև տան տիրոջը և տան անդամներին։ Խոսելով տան տիրոջ մասին, շատ անգամ կնշանակեր խոսված է նաև ընտանիքի անդամների մասին։ Այդ է պատճառը, որ ասվում է՝ Կöռո, Բöլըկ ըեն կöշըրն, վակի աղ դյա վի (ուխ) բըստինըմ։ Ասված է երկուսի մասին, սակայն գործողությունը կատարելու ընթացքում մեկն է նկատի առնված՝ տան ավագը։ Կառի և Բուլուկի մորն առնողը երկուսի հետ գործ չունի, նա ըստ սովորության, տան ավագի մասին է խոսում, նրան է ճանաչում։

Նույն է ասում նաև հետևյալ նախադասությունը՝ դö վե գալե Հ'öամնե Դուգե ռաբունö հöսալե խո դöրվա քըշան գէյö։

Այս դեպքում էլ հասկացվում է, որ խոսակցությունը վերաբերում է մեկին։

Սակայն նրա հետ պետք է հասկանալ և շատերին, որովհետև առաջին նախադասության մեջ ասվում է՝ դö վե գալե Հöամնե Դուգե ռաբունö. և հետո միայն գործողության մեջ խոսվում է մեկի մասին՝ հասալե խո դöրվա քըշանդիյö։ Այնինչ պետք է լիներ՝ հöսալե խո դöրվա քըշանդըրնö։

Այս էլ լեզվական անհամաձայնության օրինակներից մեկը, որը, ըստ լեզվական կանոնների, սխալ է, սակայն ըստ ժողովրդական իմաստավորության՝ ճիշտ։

ՄԱՅՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ «ԿԱՌ ՈՒ ՔՈՒԼՈՒԿԵ ԱԼԵՄԱՆԵ ԱԼԻՎԼԻ» ՎԻՊԵՐԳՈՒՄ

«Կառ ու Քուլուկե Ալեմանե Ալիվլի» քրդական վիպերգության մեջ կանայք իրենց դերերով կենտրոնական տեղ են գրավում։

Հանձին Մըլլ Ալի-Ամար աղայի կնոջ՝ Խանումի, նրանց դուստր Փերիշանի և այրի Վարդակա Հասն Դուզեի՝ մենք վիպերգի բոլոր պատումներում գտնում ենք մայրիշխանության վերաբերող արտահայտություններ ու հետքեր։ Այսպես օրինակ՝ քուրդ աղջիկ, ինչպես և ամուսնացած կին գնելու և առհասարակ նրանց առևանգելու սովորությունը, որը տեղ է գտել վիպերգում և որը մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան հարատևում էր, մեր կարծիքով՝ մնացել է շատ հին ժամանակներից, դեռևս մայրիշխանության շրջանից։

Կնոջ գնման ու առևանգման երևույթների մասին Ֆրիդրիխ Էնգելսը իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում գրում է.

«Մինչդեռ ընտանիքի նախկին ձևերի ժամանակ տղամարդիկ ամենևին կարիք չունեին կին ճարելու մասին մտածելու, ընդհակառակը՝ պետք եղածից ավելի կին կարող էին գտնել, այժմ կանայք հազվագյուտ դարձան և նրանց հարկավոր էր փնտրել։ Այդ պատճառով էլ՝ զուգամուսնության հաստատումից հետո սկսվում է կանանց առևանգումն ու գնումը...»[1]։

Ա. Քուրդ կնոջ գնումը.—*Այդ գործարքը կատարվում է դրամական կամ ապրանքային փոխանակությամբ. օրինակ՝ կնոջ փոխարեն նրա տիրոջը գնողը վճարում էր կամ դրամ, կամ ոչխարներ, խոշոր եղջյուրավոր անասուններ, ձի և այլն։*

---

1 Ֆ. Էնգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 36։

Բացի այս, գոյություն ուներ նաև մի այլ ձև, որը կոչվում էր բարդելի և թարգմանաբար նշանակում է երկու ամուսնացող աղջիկների (կանանց) փոխանակում իրենց հարազատ եղբայրների կամ ամենահարազատ տղամարդ ազգականների միջև, որպես հարսնացու, որ կատարվում էր փոխադարձ համաձայնությամբ։

Այդ երևույթը տեղ է գտել նաև մեր վիպերգում։ Գոնե այդ է վկայում նրա մեջ գործող Մըլլի Ալի-Ամար աղայի հասունացած աղջկա՝ Փերիշանի «գնումը» Կառի կողմից՝ Բեջան գամբիկով և մի երամակ ուղտերով։ Բացի այս, այդ երևույթը, որ ամուսնացող աղջկան իրավազրկում, ապրանք, հարստացման միջոց էր դարձնում նամանավանդ տիրող դասակարգի ձեռքում, իր բազմապիսի կողմերով արտացոլված է մի շարք ֆոլկլորային նյութերով։

Բ. Կնոջ առևանգումը.—Կնոջ առևանգումը սերտորեն կապված է կանանց գնման հետ։ Այս երևույթը շատ տարածված էր քրդերի մեջ։ Այդ տեսակետից բոլորովին պատահական չէ, որ մեր վիպերգի հերոս Բուլուկի հայրը՝ Սլեմանե Սլիվին չուզենալով զրկվել իր սիրած ձիուց՝ Սոսըկից և չունենալով գնելու (ղալան տալու) կարողություն, իր սիրածին՝ Վարդակա Հասե Դուգելին առևանգում է։ Եվ սա եզակի դեպք չէ, իհարկե։ Կնոջ առևանգումը ընդունված և սովորական երևույթ էր, ժողովուրդն այդպիսի դեպքերը համարում էր հերոսություն և գովատում էր դրանք՝ երգեր հորինելով։

Բոլորովին անբնական և ամոթալի երևույթ չէր այս. ընդհակառակը, քրդերի մեջ «բախտավոր է համարվում ամուսնությունը, երբ տղամարդ-հերոսը առևանգել է իր սիրուհուն հոր ընտանիքից, կինը այսպիսի դեպքում մի առանձին հպարտությամբ է նայում իր ընկերուհիների վրա»[1]։ Այս առթիվ քրդական հայտնի առածներից մեկն ասում է. «Ռավա ժնե, ադաթե դնե» (կնոջ առևանգումն աշխարհի ադաթն է, օրենքն է). և դարերի կյանք ունեցող այս «ադաթը», այս «օրենքը» արտահայտվել է ոչ միայն մեր վիպերգում, այլև բազմաթիվ գողտրիկ հուզումնալից սիրային երգերում։

---

1 Րաֆֆի—«Կայծեր», Ա. հատոր, էջ 228։

Հետաքրքրական է, որ ոչ միայն կինն էր առևանգվում տղամարդու կողմից, այլև տղամարդը՝ կնոջ կողմից, սակայն տարբեր ձևով։ Առևանգման այս ձևը քրդերենում կոչվում է «սարդա ռունշտանդըն», որը թարգմանաբար նշանակում է՝ «տանը նստել»։ Այսպես՝ եթե որևէ աղջիկ սիրում էր մի երիտասարդի և ցանկանում էր նրա հետ ամուսնանալ, կամ թե երիտասարդը ժամանակին նրան խոստում է տվել ամուսնանալու, իսկ հետագայում նրանից հեռացել է, ապա աղջիկը կարող էր գնալ նրա տանը նստել, և ոչ ոք իրավունք չուներ նրան տնից դուրս անել, որովհետև դրանով խախտվում էր կնոջ պատիվն ու հարգանքը, որն ամեն ինչից բարձր էր համարվում, իսկ տան երիտասարդը պարտավորվում էր, անկախ իր ցանկությունից, նրա հետ ամուսնանալ։

Այսպիսով՝ վիպերգի հերոսուհի Վարդալա Հասե Դուդեի առևանգումը Սլեման Սլիվիի կողմից և Փերիշանի գնումը (գալան տալը) պատահական, եզակի դեպքեր չեն, այլ գալիս են քրդական հինավուրց սոցիալ-հասարակական կյանքից. նման դեպքերի ականատես ենք եղել նաև մենք՝ ժամանակակիցներս։ Ուստի մենք գալիս ենք այն եզրակացության, որ կանանց առևանգումն ու գնումը, որոնք տեղի են ունեցել վիպերգում և որոնք շարունակել են քրդերի մեջ գոյություն ունենալ մինչև 20-րդ դարը, գալիս են «զուգամուսնության»—«զույգային ընտանիքի» կազմավորման շրջանից, իսկ «Զույգային ընտանիքը, որ ինքը չափազանց թույլ էր և չափազանց անկայուն, որպեսզի սեփական տնտեսություն ունենալը դարձնի պահանջ կամ գեթ լոկ ցանկություն առարկա, ամենևին չի քայքայում ավելի վաղ ժամանակներից մնացած կոմունիստական տնտեսությունը։ Իսկ կոմունիստական տնտեսություն—նշանակում է կանանց իշխանությունը տան մեջ...»[1]։

Բացի այս, մայրիշխանության հետքերը նշելու և ակնհայտ դարձնելու տեսակետից կարևոր տեղ են գրավում քուրդ կնոջ հասարակական դիրքն ու դերը հասարակության մեջ։ Այդ տեսակետից քննենք թե մեկը և թե մյուսը։

1 Ֆ. Էնգելս,—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» էջ 37։

Շերեֆ-Էզզինը պատմում է, որ իր նախնիքներից մեկի՝ Էմիր Շերեֆի կին Շահումե խաթունը, դեռ ամուսնու կենդանության ժամանակ, ամբողջ երկիրն ինքն էր կառավարում։

«Ամենաանհեթեթ պատկերացումներից մեկը,— ասում է Էնգելսը,— որ մնացել է մեզ 18-րդ դարի լուսավորության շրջանից, այն պատկերացումն է, թե կինը հասարակության զարգացման սկզբում իր ամուսնու ստրուկն է եղել։ Կինը ոչ միայն ազատ է, այլև բարձրահարգ դիրք ունի բոլոր վայրենիների և ստորին ու միջին շրջանի բոլոր բարբարոսների, մասամբ նաև վերին շրջանի բարբարոսների մեջ։ Թե ինչ դիրք ունի նա դեռևս զուգամուսնության մեջ, այդ մասին թող վկայի Արթուր Ռայթը (Arthur Wright), որ երկար ու ձիգ տարիներ միսիոներ է եղել սենեկա-իրոկեզների մեջ. «Ինչ վերաբերում է նրանց ընտանիքներին, այն ժամանակ, երբ նրանք դեռևս ապրում էին հին երկարավուն տներում (բազմաթիվ ընտանիքների կոմունիստական տնտեսություններ)... Սովորաբար տունը կառավարում էին կանայք... Կլանների (տոհմերի) մեջ և առհասարակ էլ ամենուրեք մեծ ույժ էին կանայք։ Երբեմն նրանց համար ոչինչ բան էր ցեղապետին իշխանությունից զրկել և նրան հասարակ զինվոր դարձնելը»[1]։

Մեր կարծիքով՝ նախկինում վաչկատուն քրդերի մեջ նույն դերն էին խաղում կանայք և այդպիսի կանանցից մեկն է նաև Մըլի Ալի Ամար-աղայի կինը։

Սակայն մեր տեսակետը միակողմանի կամ թերի կլիներ, եթե այստեղ չնկարագրեինք վիպերգի հերոսուհուն՝ աշխատավոր, այրի Վարդակա Հասե Դուզեին, որը մեծացրել էր իր երկու որդիներին՝ Կառին ու Բուլուկին, միաժամանակ տանելով երկու դեր՝ հոր և մոր դերը։ Այդ տեսակետից պատահական չէ, որ մեր հավաքած վերջին պատումներից մեկն այդ հերոսուհու անունով է կոչվում, այն է՝ «Կառ ու Բուլուկե Վարդակե»։ Ճիշտ այնպես, ինչպես և այժմ շատ քուրդ մարդիկ իրենց մայրերի անունով են հայտնի, ինչպես օրինակ՝ Ավդալե Զայնե (նշանավոր կույր աշուղ), Ջամալե Շարիբանե, Ասլանե Կավե (Ալագյազի շրջանի Ֆարվանսարա գյուղացի) և այլն,

---

1 Ֆ. Էնգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 37—38։

Այնուհետև՝ ոչ միայն այդ, այլև հայտնի են շատ գերդաստաններ, տոհմեր իրենց մայրական անուններով, ինչպես օրինակ՝ Ջեռեյա, Ձիլեյա, Շարեյա, Խաճեյա, և այլն—կանանց անուններ, որոնք, ինչպես երևում է, մեծ մասամբ վաղ ժամանակներից՝ մայրիշխանության շրջանից են գալիս։

Վարդակն էլ որպես այդպիսին, ամբողջ տունը նրան է ենթարկվում։ Նա, և ինչպես շատ քուրդ կանայք, լինելով «այր մարդկանց պես քաջ և հարկ եղած ժամանակ զենք գործածող»[1], մեծ ազդեցություն ունի իր քաջ որդիների վրա։ Կառն ու Բուլուկը նրանից վախենում են, հարգում են նրան։ Բուլուկը, մահամերձ վիճակում, իր եղբորը կտակում է. «Բերեք իմ դիակը դրեք դագաղի մեջ։ Դրեք առաջին ուղտի վրա, երկու ձեռքս դուրս հանեք։ Հիմա մայրս՝ Վարդակն իմացած կլինի, բարկությունից ձեզ բոլորիդ կկոտորի, իսկ երբ տեսնի, որ ձեռքերս շարժվում են, նա բանիմաց է, խելույն կհասկանա, որ աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա, այդ ժամանակ ձեզ չի վնասի», և այլ օրինակներ։

Վարդակից սարսափում է անգամ Մըլի Ալի Ամար աղան. Վարդակը տեսնելով, որ Բուլուկն սպանվել է, իսկ Մըլի Ալի Ամար աղան չի ուզում Փերիշանին տալ Կառին, նրան ասում է. «Ամար աղա, Բուլուկը մեռավ, թող Կառն ապրի, ես քեզ ասում եմ՝ ինչպես վայել է, հարսիս տուր, իսկ եթե հարսս չտաս, ես քո տունն ու տեղը կավերեմ»։

Եվ ինչ, այն Ամար աղան, որն սկզբում դիմադրում էր, չէր ուզում Վարդակին լսել, «այժմ վախեցավ, մտածեց, ասաց.— Ջե՞ որ սա այդպիսի գործեր կատարողների մայրն է, պետք է, որ նրա հարսը տամ»։

Աշիրապետը ծանոթ լինելով, որ «...Քրդի կինը կռվի ասպարիզում նույնքան կատաղի է և քաջասիրտ, որքան իր ամուսինը»[2], ժողովրդի վճռով, ստիպված, ավելի շուտ «վախեցած», Փերիշանին տալիս է Կառին[3]։ Այսպիսով՝ Վարդակը հանդես է գալիս որպես մարտիկ, պայքարող, նման այն քրդուհիներին,

---

[1] Էլիզե Ռեկլյու—«Լազիստան, Հայաստան և Քրդստան», էջ 32։

[2] Րաֆֆի—«Կայծեր», Ա. հատ. էջ 228։

[3] № 5 պատումում հիշվում է, որ Կառն սպանվում է Մըլի Ալի Ամար աղայի ծառաների կողմից։

որոնք «...պատերազմասեր ամազոնկաների նման հայտնի են իրենց քաջությամբ և անվախությամբ»[1] (հակառակ Մըլի Ալի Ամար աղայի վաճառքի հանած աղջկան)[2]:

Վարդակը, ինչպես և այժմ շատ կանայք, մեծ հարգանք են վայելում, կարելի է ասել, որ նա իր որդիների և եղբայրների կողմից պաշտվում և ամեն բանից բարձր է դասվում: Նույնիսկ Բուլուկը, այդ անհնազանդ, բիրտ երիտասարդ հովիվը, մոր առաջ խոնարհվում, աղերսանքով է դիմում նրան: Չնայած Բուլուկը վիրավորված էր քեռիների կողմից և մահամերձ, բայց ի սեր իր հարազատ մոր, նրա սպիտակ կաթի՝ ողջ է թողնում իրեն՝ Բուլուկին սպանելու ձգտող քեռուն, ասելով՝ «Եղբայր Կառո, այդ մի քեռուն էլ մեր մայր Վարդակի խաթեր համար մի՛ սպանիր: Այդ տղամարդկանց սերունդը երկրի երեսից մի՛ վերացնիր, թող ապատվեն»:

Այնուհետև, քուրդ կնոջ հարգանքի, հեռավոր պաշտամունքի օրինակ կարող է հանդիսանալ լեգենդար գեղեցկուհի Խոքումա Ցարխոն, որի պաշտամունքը դեռ ոչ հեռու անցյալում որոշ վայրերում պահպանվում էր. ըստ ավանդության՝ Խոթումա Ցարխոն կանանց օգնության էր գալիս ծննդաբերության և նոր գործեր սկսելու ժամանակ (խալի, գորգեր գործելու ընթացքում): Այդպիսի դեպքերում կանայք նրան օգնության էին կանչում:

Դեպի կինը եղած հարգանքի նշան է նաև այն, որ երբ տղամարդկանց կռվի ժամանակ որևէ կին միջամտում է և իր գլխի լաչակը պարզում նրանց առջև, նրանք տմարդություն են հա-

[1] Տես Խ. Աբովյանի „Курды“ հոդվածը „Кавказ“ թերթում 1848 թ. № 50-ում

[2] Քրդերի մեջ, մասնավորապես տիրող դասակարգերի մոտ, աղջկա և կնոջ վիճակների միջև տարբերությունը մեծ էր: Ամուսնության և տան ղեկավարման գործում աղջիկը ձայն չուներ. նա պարտավոր էր ենթարկվել ծնողներին, լռակյաց լինել, բայց երբ ամուսնանում էր, ամբողջ տան տնտեսական ղեկավարությունն իր ձեռքն էր առնում և նույնիսկ հանդես էր գալիս հասարակական կյանքում, մանավանդ երբ նա այրիանում էր կամ բազմակնության դեպքում՝ առաջին կինն էր հանդիսանում:

Այդ պարզ նկատվում է նաև մեր վիպերգում, այն է՝ մի կողմից Փերիշանը և մյուս կողմից՝ աղայի կինն ու Վարդակա Հասե Դուգեն:

մարում այդ լաչակի վրայով անցնել և այդպես էլ կռիվը դադարեցնում են[1]։

Այդ երևույթը մեր վիպերգության 4-րդ պատումի մեջ հիշվում է, սակայն Կառ ու Բուլուկ եղբայրների ռազմիկ քեռիների կողմից՝ որոնք արաբական միրի հրամանին էին ենթակա, անուշադրության է մատնվում։ Էնգելսը գրում է. «Հենց նոր մեռնող մայրական իշխանության մի այլ մնացորդ է՝ հռոմեացիների համար գրեթե անհասկանալի այն հարգանքը, որ տածում էին գերմանները կանացի սեռի հանդեպ»[2]։

Անհետաքրքիր չէ նաև ամուսնական ձևը քրդերի մեջ, որն իր արտացոլումն է գտել մեր վիպերգում և որը, մեր կարծիքով, նույնպես գալիս է վաղ շրջանից, այն է՝ պունալուա ընտանիքի կազմավորման շրջանից, երբ «...սեռական փոխադարձ հարաբերություններից բացառվում էին ծնողներն ու նրանց զավակները, ապա երկրորդ առաջադիմական քայլը եղբոր ու քրոջ ամուսնական հարաբերությունների բացառումն էր»[3]։

Մեր վիպերգում հիշվում է, որ Բուլուկը մահանալու ժամանակ կտակ է անում եղբորը՝ Կառին առնել իր նշանած Փերիշանին, նա ասում է. «Երբ վերադառնաք, Ամար աղայի աղջկանը կառնես, թող Փերիշանին քեզ տա, նոր միայն Բեջանը տուր նրան»։ Վարդակը, պայքարելով, Բուլուկի նշանած Փերիշանին բերում է Կառի համար, և այդ հանգամանքը ոչ միայն վիպերգում է հիշվում, այլև մինչև վերջերս գոյություն ուներ ժողովրդի կենցաղում։

Մինչև վերջին ժամանակներն էլ քրդերի մեջ սովորություն կար, որ կանայք, այրիանալով, չէին հեռանում իրենց ամուսնու տնից, այլ մնում էին, որպեսզի շարունակեին տանտիրությունը, որպես անձնական սեփականություն պահելով իրենց հետ բերած օժիտը։ Ամուսնության խնդիր ծագելու դեպքում, եթե ծնողների

---

1 «Քուրդը դադարեցնում է իր կռիվը, երբ հակառակ կողմից միջամտություն են գործում կանայք», Րաֆֆի—«Կայծեր», հատ. Ա., էջ 227—228։ Իբրև հարգանքի նշան՝ քրդերի մեջ սովորություն կա ինչպես տղամարդկանց, նույնպես կանանց գլխով երդվել։

2 Ֆ. Էնգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 153—154։

3 Ֆ. Էնգելս, նույն տեղում, էջ 24։

կողմից ճնշում չէր լինում, այլ կանայք ամուսնանում էին իրենց մահացած ամուսինների ամենամոտիկ ազգականներից մեկի հետ, մեծ մասամբ ամուսնու եղբոր, հորեղբոր որդու հետ։ Այդպիսի ընտանիքներ շատ շատ էին, իսկ եթե հեռանում էին ընտանիքից, համաձայնելով ուրիշի հետ ամուսնանալ, այդ դեպքում նրանք իրենց շիկարը (օժիտը) հետ էին վերցնում, բայց այսպիսի դեպքեր ընդհանրապես շատ հազվագյուտ էին։

Այսպիսով՝ քրդերի մեջ բացառվում էր ծնողների ու սրանց զավակների և քույր ու եղբայրների ամուսնությունը միայն, իսկ մնացած դեպքերում բոլորի հետ կարելի էր ամուսնանալ. սա ոչ այլ ինչ էր, բայց եթե պունալուա ընտանիքի սխեմը։

Մեր վիպերգությունը, բացի այս, ունի մի այլ պատմական առանձնահատուկ կողմ ևս։ Նա հյուսված է քեռիների և քեռորդիների (քրոջ որդիների) կռվի, նրանց սպանության շուրջը, մի հանգամանք, որ ֆոլկլորային այլ նյութերում չենք հանդիպում։ Վիպերգում գործող Վարդակը՝ Կաո ու Բուլուկ եղբայրների մայրը՝ դիմելով Մըլե Ալի Ամար աղային, ասում է.

Ամար աղա, քար ու քանդ լինի քո,
Քար ու քանդ լինի քո քոշկ ու սարան,
Դու քեռորդիներին ուղարկում ես դեպի քեռիներ,
Քեռիների ու քեռորդիների կռիվն այնպիսին է,
Ինչպես այն դարդը, որ դարման չունի[1]։

Կամ՝

Ո՞վ է տեսել, ո՞վ է լսել,
Որ մարդ քեռորդիներին
Կռվի ուղարկի քեռիների վրա։

---

1 Քրդական ֆոլկլորը քեռիների ու քեռորդիների փոխադարձ սիրո հարգանքի, պաշտպանության, ամուր կապի կենդանի հուշարձանն է։ «Ալիե խարզան» (քեռորդի Ալին) — որ կոչվում է նաև «Լո խալո» (Լո քեռի) — հերոսական վիպերգությունը քրդական ֆոլկլորի գեղեցիկ դրվագներից մեկն է, որն անձնազոհության և նվիրվածության ցայտուն օրինակ է դեպի քեռորդին։ Սա չգերազանցված սխրագործությունն է, ուր քեռին նախ՝ անձնվիրաբար կռվում, պայքարում է իր քեռորդուն՝ Ալիին ազատելու համար սուլթանական Թյուրքիայի պահակախմբերի ձեռքից և ապա՝ վրեժ է առնում այն քուրդ կրոնավորից, որը հետագայում սպանում է Ալիին։

Ամար աղան խնչալա խեր կանի,
Երբեք խեր չի տեսնի,
Այս երեք օր ու երեք գիշեր է
Դու մեծ ճլաթը հավաքում ես,
Երկու թֆալ ունեմ ես,
Կատվի նման բերանս առնում, մտն եմ բերում։

Այսքան դար ու ժամանակ է անցել,
Ո՞վ է լսել ու տեսել՝ քեռորդիները թշնամանան,
Քեռիների վրա ուղարկվեն կռվի։

Եվ իսկապես՝ «այսքան դար ու ժամանակ է անցել», բայց մինչև այժմ մեզ հայտնի քրդական ֆոլկլորային նյութերում նման եղեռնագործություն, նման սարսափելի երևույթ չի լսվել, չի արձանագրվել։ Սա այնպիսի երևույթ է, որն այլ խոսքով չի կարելի որակել, քան որակում է Վարդակը, ասելով՝

«Քեռիների ու քեռորդիների կռիվը այնպիսին է,
Ինչպես այն դարդը, որ դարման չունի»։

Վիպերգի մեջ այդ հարգանքը մենք նկատում ենք նաև քեռիների վերաբերմամբ։ Կառը քեռիներին հայտնում է, թե՝ «Մենք որ կանք, Վարդակի որդիներն ենք, ամենադժվարին և ծանր օրերին (այսինքն կռվի) մենք մեր քեռիների խուլամն (ծառան) ենք։

Մեր քեռիները մեր գլխի թագն են»։

Եվ այսպես, փաստերը վկայում են, որ քեռիների և քեռորդիների փոխադարձ կապն ավելի ամուր է եղել, քան հորեղբայրների և եղբոր որդիների կապը և այդ արտացոլվել է ոչ միայն ֆոլկլորում, ժողովրդական ավանդությունների մեջ, այն արտահայտվում է նաև այժմ՝ քուրդ ժողովրդի մեջ։

Այսպիսով մենք հանգում ենք Ֆ. Էնգելսի կողմից ասված այն ճշմարտությանը, թե՝ «Քեռու և քրոջ որդու միջև եղած այս կապի առանձնապես սերտ բնույթը, որը ծագում էր մայրական իրավունքի ժամանակներից և հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների մեջ, հույներին ծանոթ է միայն հերոսական

շրջանի դիցաբանությունից»[1]։ Այս բանը հատուկ է նաև քրդական ժողովրդին, որի մտքի ու կենցաղի հարազատ վկայությունն է մեր վիպերգը։

Մեր վիպերգության հարցադրման կապակցությամբ մայրիշխանության հետքերը քուրդ ժողովրդի կյանքում ցույց տալու համար, ավելորդ չենք համարում մեջ բերել նաև հետևյալ ավանդությունը, որն ասում է, թե՝ «Նախապես թագավորությունը կնոջն է պատկանելիս եղել, բայց իր անգութ վարմունքի համար զրկվել է այդ իրավունքից։ Չնայած կանայք ճոխ սեղանի շուրջը նստած են եղել, բայց նրանցից և ոչ մեկը մի կտոր միս չի տվել քաղցած հղի շանը։ Նրանց միջից միայն մի փոքրիկ ծծկեր տղա է այդ քայլը անում. մի կտոր միս է տալիս շանը, որը դուրս գալով, քաղցածությունից վիժում է և հաջալով[2] աղաչում աստծուն, որ թագավորությունը կնոջից վերցնի և տա տղամարդուն։ Այդ օրվանից աստված կանանց զրկում է թագավորությունից և այն տալիս է տղամարդուն, իսկ կանայք զրկվում են իրենց նախկին իրավունքներից», այսինքն՝ մեր ըմբռնումով, մայրիշխանությունը փոխարինվում է հայրիշխանությամբ։

Թվում է, թե այս ևս ապացույց է այն բանի, ինչ որ մենք մինչև այժմ հետապնդում էինք, այսինքն՝ չնայած դարեր են անցել այն օրվանից, երբ «մայրական իրավունքի տապալումը» տեղի է ունեցել, բայց և այնպես նա դեռևս իր հետքերն ունի անցյալում քրդական կիսաքոչվորական-կիսանստակյաց տոհմերով ապրող ժողովրդի մեջ և այս երևույթի արտացոլումը հատկապես մեծ տեղ է գտել ֆոլկլորում, որի մի մասնիկն է նաև մեր վիպերգը։

---

1 Ֆ. Էնգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 152։

2 Մեզ թվում է, այդ սովորությունից է բխում, որ որոշ գյուղերում կանայք աղոթելու ժամանակ շան նման հաջում էին՝ «ամէ» ասելով և իրենց անվանում էին էգ շուն։

Տոհմատիրության հետքերը «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի» վիպերգում

Ինչպես մայրիշխանության, նույնպես և տոհմատիրության հետքերի մասին մեր վիպերգում կան փաստական տվյալներ, որոնք մեզ առիթ են տալիս հնարավորության սահմաններում շարադրելու և լուսաբանելու վերջինիս էությունը։

Ինչպես արդեն ասել ենք, մեր վիպերգը Մըլլի էլաթի[1] *մասին է, ուստի սկսենք դրանից։*

Ամենից առաջ Մըլլի էլաթի (էլի) մասին խոսվում է մեր վիպերգում. ըստ պատումների՝ նրա մեջ մտել են հետևյալ աշիրաթները, որոնք, մեր կարծիքով՝ ֆրատրիաներ պետք է եղած լինեն՝ Կակա, Մրդեսյա, Կիկանա, Շկակա, Ռըմբազա, Բուդա, Բարազա, Բարանա, Ռըմզրավա[2], *որոնք, վիպերգի տվյալների համաձայն, պետք է բաժանված լինեն երկու խմբի—տոհմի՝* էլբաթա *(էլբավա) և* մալբաթա *(մալբավա) (տես առաջին պատում, էջ 8—9), կամ* Թոռունա *և* Պզմամա *(տես երկրորդ պատում, էջ 22)։*

Մըլլի էլաթը, ինչպես վերևում ասվեց, ըստ վիպերգության, բաժանվում է երկու խմբի—տոհմերի, այն է՝ էլբաթ *և* մալբաթ։ *Այսպես օրինակ՝ Մըլլի Ալի Ամար աղան իր կնոջը պատասխանելիս՝ ասում է. «Խելքս ոչինչ չի կտրում—քո աղջկա մուշթարիները էլբաթ, մալբաթ աշիրաթների մեծամեծներն են։ Ես աղջիկս ոչ ոքի չեմ տա, եթե տամ էլբաթներին, մալբաթներն ինձնից կքոչեն, եթե տամ մալբաթներին, էլբաթներն ինձնից կքոչեն։ Ես այս գործում հիմարացել եմ, աղջիկս ոչ ոքի չտվեցի»։*

Սակայն դրանք ի՞նչ էլբաթ և մալբաթներ (elbat, malbat) *են։*

---

1 *Ժողովրդական ավանդության համաձայն քուրդ կուրմանջները հիմնականում բաժանվում են երկու մեծ մայր ցեղերի. «Մըլ», որ ասել է թև, կողմ, ուժեղ և որի ներկայացուցիչները մեր վիպերգության հերոսներն են՝ համեմատական չափով ապրելով ինքնամփոփ, և «Զիլ», որ ասել է՝ «Շիլ», նմանվելով բուսականության ծիլերին, որոնք ամենուրեք կան։*

2 *Ըստ բրդագետ Ժաբայի՝ «Մըլլի մեծ աշիրաթի հետ կապված են եղել հետևյալ էլերը (18-րդ դարում). Մըլլի—4000 վրան, Բադիլի—2000, Ռուկի—8000 վրան, Ղարաթաբի—3000 վրան, Դաշվանի—6000 վրան, Սլիվի—4000 վրան» (տես* A l e x a n d r e J a b a, „Recueil de notices et récite kourdes", *էջ 7)։*

Դիմենք նրանց ստուգաբանմանը։ Այստեղ և «Էլբաք»-ը, և «մալբաքը»-ը բարդ բառեր են. Էլ և մալ առանձին-առանձին բառեր են, որոնք այսօր էլ կան խոսակցական լեզվում. Էլ—նշանակում է տոհմ, նաև ցեղ։ Մալ նշանակում է տուն, ընտանիք։ Բաք (դ)—պարսկերեն է և նշանակում է «պետ, տեր», սովորաբար դրվելով բարդության ծայրը[1]։

Այսպես ուրեմն, մենք այստեղ ունենք երկու բարդ բառեր՝ Էլբաք և մալբաք, այլ խոսքով՝ տոհմապետ և ընտանիքի պետ կամ տնապետ, այս մի կողմից։

Այնուհետև այստեղ դրվում է թոռունների և պզմամների խնդիրը, որոնք վիպերգի երկրորդ պատումում են հիշվում՝ փոխարինելով Էլբաք և մալբաք բառերին. այսպես՝ Մըլի Ալի Ամար աղան ասում է. «Ով ծերունիներ և հարգարժաններ, ես չգիտեմ ինչպես անեմ՝ եթե աղջկանս պզմամի տամ, թոռունը կխռովի, եթե տամ թոռունին, պզմամը կխռովի»[2]։

Սակայն սրանք ինչ պզմամ և թոռուն են։

Մեզ թվում է, որ դրանք նույն իմաստն ունեն, ինչ որ մալբաք և Էլբաք բառերը, ավելին՝ վերջիններիս պարզաբանման և բացատրական լրացուցիչներն են հանդիսանում։

Այսպիսով մեզ թվում է, որ վիպերգում հիշատակված Էլբաքը և մալբաքը այն երևույթի արտացոլումն է, երբ մայրիշխանության կողքին արդեն զարգացել էր հայրիշխանությունը։

Տոհմատիրության բնորոշ կողմերից մեկը վրեժխնդրությունն (հայֆ) է, որը տեղ է գտել վիպերգում։ Էնգելսը խոսելով իրոկեզական տոհմի մասին, կարևոր տեղ է հատկացնում այդ հարցին։ Նա գրում է.

«Տոհմակիցները պարտական են օգնել ու պաշտպանել միմյանց, հատկապես աջակցել՝ վրեժխնդիր լինելու օտարների հասցրած վիրավորանքների համար։ Անհատն իր ապահովությունը հիմնում էր տոհմի պաշտպանության վրա և կարող էր այդ

---

1 Հ. Աճառյան—«Հայերեն արմատական բառարան», Ե. հատ., էջ 1022—1026։

2 Պզմամ—բառացի նշանակում է քեռեկամ և խոսակցական լեզվում շատ գործածական է՝ արյունակից նշանակությամբ։

Թոռուն, որը քրդերեն նշանակում է նաև ազնվական, նույնպես տոհմի անուն է։ (Տես П. Лерх, „Исследования об иранских курдах", էջ 83)։

անել. ով վիրավորում էր նրան, վիրավորում էր ամբողջ տոհմին։ Այստեղից տոհմի արենակցական կապերից բխում էր արյան վրեժխնդրության պարտականությունը, որ անպայման ընդունվում էր խոլկեցների կողմից»[1]։

Եվ այդ երևույթը անցյալում հատուկ էր քրդերին։ Շատ տեղին է նկատել Խաչատուր Աբովյանը, թե՝ «Քրդերի ամենաբարբարոսական և նույն ժամանակ ազնիվ գործը—այդ արյան վրեժխնդրությունն է»։ Մեր վիպերգը նույնպես արտացոլում է վրեժխնդրության երևույթը։ Այստեղ մեջ ենք բերում Ս. Հայկունու գրի առած առաջին պատումից մի հատված, որը, չնայած մի փոքր շեղված է վիպերգի ընդհանուր շարադրանքից, բայց կարևոր է վերոհիշյալ խնդրի լուսաբանման համար։

Սլիվլին կտակում է իր որդիներին վրեժ առնել իրենց քեռիներից, որոնք պատճառ են դարձել նրա արտաքսմանը այնտեղից և ահա նա «իր մոտ կկանչի Բուլըբ և Կյառըբ որդիներին, որոնց կերդվընցնե, ու կկտակե, որ իր վրեժն լուծեն իրենց քեռիներեն, եթե թերանան՝ հավիտյան պարտավոր մնան։

Սլիվլին մեռավ. Բուլըբ ու Կյառոն մեծացան. նոքա քանի կմեծանային, վրեժխնդրության ոգին ևս կզորանար իրենց մեջ. իրենց խոսակցության առարկան միշտ իրենց հոր կտակն էր, վասն զի իրենց համար մեծ անպատվություն էր, երբ մեկը վրեժ ունենա անկողնու մեջ մեռնի, որպես իրենց հայրը մեռած էր հակառակ քրդական սովորության։

Ուխտեցին անկողնի մեջ չմեռնել, սակայն դեռ փոքր էին. որով քանի տարի ևս ստիպված էին իրենց փոքրիկ տունը կառավարել ընդհոգացողությամբ Ամարի Մլին, որ և իր բազմաթիվ հոտը հանձնած էր սոցա. սոքա ևս իրենց հոր նման հովվության արհեստին վարժ էին»[2]։

---

1 Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 87։

2 Տես Էմինյան ազգագրական ժողովածու, Ե. հատոր, էջ 143։

«Ռաշիդ աղան,—գրում է Րաֆֆին,—Մամըքանների ցեղապետի որդին էր։ Նրա իսկական անունն էր Կրպո. կոչվեցավ Ռաշիդ (քաջ) իր զարմանալի քաջագործությունների համար։ Նա սպանվեցավ Մուքրինների ցեղապետի որդու նենգությամբ։ Ռաշիդի կինը ուխտել էր չվեր առնել իր երեսից սգավորի սև քողը, մինչև իր ամուսնի գերեզմանը չհանգստացնի։ Դա նշանակում է

Այնուհետև, Կառը, Բուլուկի վիրավորվելուց հետո, որին մայրը հայտնել էր իր եղբայրների (Կառի և Բուլուկի քեռիների) մասին, խնդրելով նրանց չսպանել վրեժով լցված, «առբիլյան քաղցած գայլի նման» հարձակվում է իր հարազատ քեռիների վրա և սկսում է կոտորել։

Նա ասում է. «Բուլուկ եղբայր, դու մի մտահոգվիր, եղբայրդ իր ձեռքով քո վրեժն առավ յոթը քեռիներից, բայց մայր Վարդակի սիրո համար ես մի քեռուս ազատեցի, նրա երկու թևերն ու երկու ականջները կտրեցի, թողեցի, որ նրանց տան ժառանգներն խայտառ չվերանան Միրե Արաբայի էլաթում»։

Վրեժխնդրության նույն երևույթը նկատում ենք նաև Բուլուկի մոտ. նա եղբորն ասում է. «Իսկ իմ երկրորդ պատվերն այն է, որ դու իմ վրեժը Ալի Ամար աղայից առնես, եթե տեղն եկավ, իսկ նրա աղջկան քեզ համար բեր»։

Կամ՝ «Երբ որ դուք գնացիք, Ամար աղան թշնամի է, չլինի թե դու Բեջանին նրան տաս, աղջկան կառնես, հետո Բեջանին նրան կտաս»։

Եվ, մի այլ տեղ՝ «Նա սպանվեցի, դու չթողնես թշնամու ձեռքին (Փերիշանին), իմ խոսքը գետնով չտաս, Բեջանին տուր Ամար աղային, Փերիշանին տար քեզ համար»։

Այս նույն բանը մենք նկատում ենք նաև Վարդակա Հասե Դուզնի ու Կառ ու Բուլուկի ընկերների՝ Հասե Մուսեսանի, հայ Պողոսի և Մըրտըր Լքոյի մոտ։ Այսպիսով, վրեժը, որ հերոսների սրբազան պարտքն է համարվում, բղխում է նրանց և առհասարակ քուրդ ժողովրդի աշխարհայացքից։ Այդ առթիվ պրոֆ. Ս. Եղիազարյանը գրում է. От родового быта сильнее всего сохранился обычай кровавой мести: месть за убийство и малейшее оскорбление составляет священный долг для курда... Если человек не в состоянии лично отомстить

քրդի լեզվում՝ մինչև սպանվածի արյան վրեժը չառնվի։ Այս նպատակով նա սնուցանում էր իր 12 տարեկան որդուն, որ առնի հոր վրեժը և կատարի մոր ուխտը։ Որդին մեռնում է կարճատև հիվանդությունից հետո։ Մայրը մի քանի օր անհետանում է իր չադրից։ Նրան գտնում են իր տղամարդի գերեզմանի մոտ այն ժամանակ, երբ իջնում է իր ձիուց, և ոսոխի կտրած գլուխը դնելով ամուսնու շիրիմի վրա, ասում է՝ «Այժմ թող հանգստանան քո ոսկորները»— («Կայծեր», Ա. հատոր, 1904 թ., էջ 273—274)։

своему врагу, то обязанность мести переходит на других родственников. Таким образом, личная месть переходит в родовую, а вражда двух личностей—в междоусобную борьбу двух родов. Иногда вражда продолжается очень долго, переходит даже от одного поколения к другому[1].

Մեր վիպերգը, կարծում ենք, նույն երևույթի արձագանքն է։ Այս նույն երևույթը մենք նկատում ենք նաև «Ռոստամի Զալ»-ի «Սիավուշ» քրդական պատումում։ Սպանված «Սիավուշի» արյունն այնքան է եռ գալիս, մինչև որ Ռոստամը երազում տեսնում և Գևոյի օժանդակությամբ նրա վրեժն առնում է թշնամուց, ապա միայն նրա արյունը դադարում է եռալուց։ Այս մի կողմից, սակայն մեր վիպերգի բնորոշող մյուս կողմը—դա արյան գինը հատուցելն է՝ «խուն գային», որը քրդերի մեջ շատ ընդունված էր։ Արյան գինը հատուցում էին ոչ միայն դրամով, այլև կնոջ փոխանակումով, որը դարձյալ բխում էր տոհմատիրական կարգերից։

Փերիշանի ամուսնությունը Կոռի հետ այստեղ արդեն դուրս է օրինականությունից. Մըլլի Ալի Ամար աղան իր աղջիկը Բուլուկին էր խոստացել, սակայն Բուլուկը չկա, և այժմ Մըլլի Ալի Ամար աղան իր աղջիկը տալով Կոռին, ոչ միայն փոխանակում է Բեջանի հետ, այլև հատուցում է Բուլուկի ու նրա քեռիների արյան գինը, որն և ընդունվում է Վարդակի և Կոռի կողմից։

Էնգելսը գրում է.

«Տոհմական կազմակերպությունից պարտականություն է բխում ժառանգելու ինչպես հոր կամ ազգականների բարեկամական, այնպես նաև թշնամական հարաբերությունները. այնտեղից է բխում նմանապես վերգելդը, այսինքն՝ սպանության կամ վիրավորելու համար արյան վրեժխնդրության փոխարեն վճարվող փողային տուգանքը։ Այս փողային տուգանքը, որ դեռ միայն մի սերունդ առաջ սպեցիֆիկ գերմանական հաստատություն էր համարվում, այժմ ապացուցված է, որ գոյություն ունի հարյուրավոր ժողովուրդների մեջ իբրև տոհմական կազմակեր-

[1] Записки Кавказского отдела имп. русск. геогр. общества, кн. XIII, էջ 38.

պությունից բղխող արյան վրեժխնդրության մի ընդհանրական մեղմացրած ձև»[1]։

Որպեսզի ցեղը կամ տոհմը չթուլանար, պաշտպաներ իր գոյությունը, անհրաժեշտ էր մի միջոց, այն է՝ ուժեղանալ որդեգրումների միջոցով, այլ տոհմերի անդամներ, նույնիսկ ամբողջական տոհմեր ընդունել իր մեջ։

Այս երևույթը շատ սովորական էր քրդերի մեջ և նման էր իրոկեզական տոհմային սիստեմին. «Տոհմը կարող է իր մեջ օտարներ որդեգրել և դրանով նրանց ընդունել ամբողջ ցեղի մեջ... Այդ ձևով հաճախ առանձին, բացառիկ պատճառների շնորհիվ թուլացած տոհմեր նորից ուժեղացվում էին՝ մասսայական որդեգրում կատարելով մի այլ տոհմից, ի հարկե վերջինիս համաձայնությամբ»[2]։

Որդեգրման նման երևույթի արտահայտություն, մեզ թվում է, կա նաև մեր վիպերգում։ Այսպես՝ նրա մեջ ասվում է, որ Սլիվին «եկավ-եկավ, հասավ մի էլ աղասու (ցեղապետ)—Ամարի Մըլի մոտ. ապավինեցավ նորա, որ զինք իր հովանավորության ներքև առնե։ Միլանցի Ամար տեսավ, որ Սլվին լավ ձիավոր է, շատ սիրով ընդունեց, գրեց իր ցեղի վրա։ Սլիվին այդ ցեղի մեջ հատուկ տուն մի եղավ»[3]։

Այստեղ հետաքրքրական է և այն, որ ոչ միայն Սլեմանը կամ Կառն ու Բուլուկն են որդեգրվում Մըլի Ալի Ամար աղայի էլաթում, այլև նրանց հերոս ընկերները՝ Մըրաըը Լըոն, Ալեն Մուսխանին և հայ Պողոսը (Բաղդոն), այդ երեք աներն էլ նրա «թախմից» էին և այդ բոլորին էլ Մըլի Ալի Ամար աղան ընդունում կամ, ինչպես ասում են, որդեգրում է իր ցեղի վրա[4]։

---

1 Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 155։

2 Նույնը, էջ 87—88։

3 Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ե., էջ 133։

4 Սուրմալվի նախկին գավառում ապրում էր «Հասնի» կամ «Հասնացի» ցեղը և որովհետև նա մեծ ցեղ էր, ուրեմն և մյուսների համեմատությամբ ավելի ուժեղ, ուստի նրան ենթարկվում էին այլ մանր տոհմեր, որոնց թվում նաև Օ ր թ ի լ ի տոհմը. վերջինս Սիպկի ցեղից էր, բայց անջատված լինելով մայր ցեղից, ստիպված էր ենթարկվել հասնացիներին և իրեն էլ

Տոհմատիրության հետքերը մեր վիպերգում նշելու համար ավելորդ չէ մի երկու խոսք ասել նաև տոհմական խորհրդի կամ ծերակույտի մասին։

Մեր վիպերգում արդեն հիշատակություն կա այդ խորհրդի մասին. Մըլի Ալի Ամար աղան խորհրդակցում է «ծերունիների և հարգարժանների» հետ, թե ինչպես ամուսնացնել Փերիշանին։ Խորհրդի գոյությունը, իհարկե, պատահական չէ. ծերունիների խորհրդի մասին մեզ հասած բոլոր տեղեկություններն այդ են հաստատում։ Յուրաքանչյուր ցեղ բոլոր տոհմերից ներկայացուցիչներ ուներ, և ահա այդ ներկայացուցիչներն էին, որ ցեղապետի հետ միասին որոշում ու վճռում էին այս կամ այն հարցը։ Քուրդ ցեղերի մեջ «ավագի վրանը կամ տունը փոխարինում են նրանց համար բոլոր դատարանները, ծերակույտը և ատենական տեղերը»[1]։

Այդ ծերակույտներն ամենուրեք գոյություն ունեին, և նրանց անդամները կոչվում էին ռիսպի (rispi), որ, մեր կարծիքով, ռուսպի բառից է, և նշանակում է ծերունի (բառացի՝ երեսը սպիտակացրած). հետագայում լինում էին նաև այնպիսիները, որոնք թեև ծերունիներ չէին, բայց, ըստ ընդունված կարգի, դարձյալ կոչվում էին ռիսպի։

Այդ նկատի ունենալով, մեր վիպերգում գործող ծերակույտը, թվում է, թե նույն դերը պիտի կատարած լինի, ինչ որ բոլոր քրդական ցեղերի ծերակույտները և ինչ որ նկարագրում է քրդական կյանքին խորապես ծանոթ, այդ կյանքը ռեալիստորեն արտահայտող Խաչատուր Աբովյանը։

Նման ծերակույտները, որոնք կառավարում էին քրդական բազմաթիվ ցրված ցեղեր ու տոհմեր, մեզ հիշեցնում են իրոկեզական տոհմը—«Նա [խորհուրդը] էր որոշում սպանված տոհմակցի արյան գինը (Wergeld) կամ արյան վրեժն առնելու հարցը.

կոչել Հասանի Ղալայի Նախկին շրջանի Ցամանչայիր գյուղում, Սիպկի ցեղի մեջ ապրում էին փոքրաթիվ հասնացի ընտանիքներ, որոնք իրենց սիպկի էին կոչում։

1 Տես՝ Խ. Աբովյանի „Курды“ հոդվածը „Кавказ“ թերթում, Թիֆլիս, 1848 թ., № 49։

նա էր օտարներին տոհմի մեջ ընդունում. կարճ ասած՝ նա գերագույն իշխանություն էր տոհմի մեջ»[1]։

Վերջապես, պետք է ասել, որ վերլուծելով վիպերգը տոհմականության հետքերի կապակցությամբ, գտնում ենք, որ քրդերի մեջ տոհմականությունն ընդհանուր հաստատություն է եղել. այդ հաստատվում է Ֆ. Էնգելսի հետևյալ խոսքերով. «տոհմը բոլոր բարբարոսների համար մինչև նրանց մուտքը քաղաքակրթության ասպարեզը և մինչև անգամ նրանից հետո էլ—ընդհանուր հաստատություն է եղել»[2]։ Այս վերաբերում է նաև քուրդ Մըլ ցեղին։

* * *

Վերլուծելով «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգը, ամենից առաջ մեզ համար պարզ ու որոշակի է դառնում անցյալում գիր ու գրականություն չունեցող քուրդ ժողովրդի մտավոր և հոգեկան կյանքի միակ արտադրության՝ ֆոլկլորի լավագույն մասի խորը դեմոկրատական լինելը։ Այնտեղ իր վիթխարի հասակով և հարուստ ու բազմազան ստեղծագործությամբ հանդես է գալիս ժողովուրդն իր դեմոկրատական իղձերով ու մղումներով։

«Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգն այդ պատմական երևույթի փայլուն դոկումենտն է, որն իր ծագման սկզբից մինչև այսօր հարազատ է մնացել ժողովրդին՝ նրա գաղափարներին, փիլիսոփայությանը, որովհետև ժողովուրդն ինքն է այն պահել ու պահպանել, նա ժողովրդի հարազատ ստեղծագործությունն է և ողողված է աշխատավոր ժողովրդի աշխարհայեցողությամբ։ Ահա հիմնականն այս հանգամանքն է։

Հանձին «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգի, մենք ունենք գեղարվեստականորեն հագեցված մի այնպիսի գործ, որի հարուստ լեզվի ուսումնասիրությամբ կարելի է լիակատար կերպով ըմբռնել քրդերեն լեզվի ոգին, նրա քերականական ողջ կանոնները, գաղափար կազմել քրդերեն լեզվի կազմության մա-

---

1 Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 98։

2 Նույնը։

սին, նրա միջից դուրս բերելով այնպիսի բառեր, ոճեր, դարձվածքներ, որոնք կենդանություն են ստանում միմիայն վիպերգում (էլրաթ, մալրաթ) և այլն և որոնց ուսումնասիրությամբ հնարավոր է գաղափար կազմել նաև մի շարք պատմական եղելությունների, անցքերի վերաբերմամբ, որոնց հունով ժողովուրդն անցել է իր պատմական ճանապարհը (մայրիշխանություն, տոհմատիրություն):

«Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի» վիպերգն ստեղծագործվելով Մըլէ աշիրաթի մեջ, այսօր դառել է ողջ քուրդ աշխատավոր ժողովրդի հոգեկան ու մտավոր սնունդը, նրա գեղարվեստական ծարավին հագուրդ տվող սառնորակ աղբյուրներից մեկը: Այս նկատառումներով նրա կրթական, դաստիարակչական նշանակությունը մեծ է:

Մեր վիպերգը լինելով անցյալի ժառանգություն, այսօր մեզ հետաքրքրում է ոչ թե «Թանգարանային հիացմունքով, այլ այն բանի համար, որ անցյալի փորձի վրա հենվելով ստեղծենք նորը» (Կիրպոտին):

Այսպիսով՝ «Կառ ու Բուլուկե Սլեմանե Սլիվլի»-ն սովետական արևի տակ վերակենդանանալով՝ դառնում է ոչ միայն քուրդ ժողովրդի սեփականությունը, այլև նա հարազատ ու սիրելի է դառնում սովետական լայնածավալ երկրի բազմաթիվ ժողովուրդներին, որոնց նորանոր սխրագործություններ և հերոսություններ է ներշնչում ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

„ԿԱՌ ՈՒ ՔՈՒԼՈՒԿԸ ՍԼԵՄԱՆԸ ՍԼԻՎԻ“

(ՀԱՄԱՀԱՎԱՔ ՏԵՔՍՏ)

ԱՌԱՋԱԲԱՆ

Մինչև այժմ գրի է առնվել «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի» վիպերգի երեսուն վարիանտ[1]։ Թե՛ վիպերգն ամբողջական ներկայացնելու և թե՛ ընդհանրապես սովետական ընթերցողին այս վիպերգի բազմաթիվ վարիանտներում արտահայտված գաղափարական ու գեղարվեստական հարստությունը ծանոթացնելու համար անհրաժեշտ համարեցինք կազմելու մի համառոտ համահավաք տեքստ։

Ուստի այն բնագիրը, որ մենք տալիս ենք, հյուսված է մեր ձեռքի տակ գտնված բոլոր պատումներից։ Բացի գրի առնված քրդերեն պատումներից, նկատի ենք առել նաև բանահավաք Ս. Հայկունու երկու պատումները՝ «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի» վեպը՝ հայերեն լեզվով[2]։

---

1 Հ. Ջնդի և Ա. Ավդալ — «Քրդական ֆոլկլոր» գիրքը, էջ 7։
2 «Էմինյան Ազգագրական ժողովածու», 1904 թ., Ե. հատոր, էջ 131—167։

Սլեմանե Սլիվի[1]

Սլեմանն Սլիվին Մըլի Ամար աղայի էլից էր. նա գյուղի նախրապանն էր և այդ գործը վարձով էր կատարում. երբ նախիրը տանում էր արածացնելու, տնանատերերին ասում էր՝ «ձեզանից ամեն մեկն ինձ մի հատ գաթա պիտի տա»:

Նրանք էլ եթե գաթա տային, անասունները լավ կարածացներ, իսկ եթե չտային, վատ կարածացներ, զուլում կարածացներ:

Այդպես էր Սլեմանն Սլիվին:

Բայց մի օր նա շատ բարկացավ, անասուններն Ալխայարների արգելված մարգագետիններում արածացրեց: Դրանից հետո նրա և Ալխայարների մեջ կռիվ ծագեց:

Այս դեպքից հետո Սլեմանն Սլիվին նախրապանությունից հրաժարվեց:

Սլեմանն Սլիվին չորս-հինգ ընկերներ ուներ. ընկերները մուխաննաթ էին: Նրանք այնքան արին, որ Սլեմանն աղքատացավ, այնքան աղքատացավ, որ օրվա հացի կարոտ մնաց:

Սլեմանն Սլիվին մտածում է. «Ես ի՞նչ պիտի անեմ, կամ նորից նախրապան պիտի լինեմ, կամ էլ հովիվ, իսկ այս անզգամ գյուղացիները ինձ վրա պիտի ծիծաղեն: Նրանք պիտի ասեն՝ Սլեմանը նախրապանությունից դուրս եկավ, իր հարստությունը տվեց ընկերներին, ընկերները նրա հարստությունը կերան, իսկ ինքն աղքատացավ, զանե-զուռ ընկավ: Չէ՛, ես պիտի այնպիսի տեղ գնամ, լինեմ ծառա, որ ոչ ոք ինձ չճանաչի»:

Սլեմանն Սլիվին Ալի Ամար աղայի էլից խռովեց, վեր կա-

---

1 Վիպերգի համահավաք տեքստի հայերեն թարգմանությունը տրվում է աննշան կրճատումներով:

ցավ, ձեռնափայտը վերցրեց ու ճանապարհ ընկավ։ Շատ գնաց, թե քիչ՝ մի օտար տեղ հասավ. Խեմուր գետին հանդիպեց. գնաց Արաբական էլը՝ Հասն Դուզիի մոտ և նրա տանը ծառայեց։

Այդ ժամանակ Արաբական էլաթում վախ կար, կողոպուտներ էին կատարվում. քաջ մարդիկ ընկնում էին ավազակախմբերի հետևից ու թալանը հետ խլում։

Սլեմանը շատ քաջ էր. Նրա հռչակը տարածվեց ամեն տեղ։ Ահա թե ինչու, երբ էլաթում երեխաները լաց էին լինում, ծնողները նրանց վախեցնում էին, ասելով՝ «Լռեցեք, Սլեմանը եկավ»։

Սլիվին ծառայում է Արաբե Գեսիի մոտ

Այդ ժամանակ Արաբստանում կար մի միր՝ Արաբե Գեսի անունով։ Նա իշխում էր վեց հազար կոն վրանաբնակների վրա։ Ուներ ընդարձակ արոտավայրեր և մեծ հարստություն։ Անհաշիվ էին նրա հոտերը, նախիրներն ու ձիերի երամակները։ Նա ուներ արաբական ձիու ընտիր հատկություններով օժտված մի զամբիկ, որը հռչակված էր աշխարհի չորս ծայրերում, ամեն տեղ խոսում էին այդ ձիու լավ-լավ հատկությունների մասին. երջանիկ էին համարում այդ ձիու տիրոջը։ Նա այդ ձիով փառավորվում էր. շատերը նրան նախանձում էին. ամենքն էլ փափագում էին ձեռք բերել այդ ձին, որպեսզի իրենք էլ փառավորվեն։

Արաբե Գեսին իր երամակը հանձնեց Սլիվին, որ պահի-պահպանի։ Սլիվին շատ լավ գիտեր այդ գործը և մեծ խնամք էր տանում, երամակը լեռ, դաշտ ու ձոր տանելով՝ արածացնում էր։ Գիշեր-ցերեկ հոգ էր տանում, մտածում էր, թե որտեղ լավ արոտավայրեր կամ մարգագետիններ կան, հետևյալ օրն այնտեղ էր քշում իր երամակը։

Մի օր Սլիվին երամակը տարավ ծովափը։ Հեռու նստած՝ նայում էր ծովին և հանկարծ ինչ տեսնի — ջրից մի ծովաձի դուրս թռավ. այդ հրեղեն ձին մոտեցավ Գեսիի Բեջանին (այդպես էր նրա անունը), որն անմիջապես հղիացավ։ Սլիվին այս բանը չհայտնեց Գեսիին, մտածելով, որ հաջորդ տարին երբ նորից ձիարած վարձվի, Բեջանից ծնած քուռակն ստանա իր վարձի փոխարեն։

Այնպես էլ արավ. նա ամենայն հավատարմությամբ Գեսիի երամակը պահեց-պահպանեց։

Սլիվին իր վարձի փոխարեն ստանում է Բեջանի քուռակը

Հաջորդ տարին Գեսոն ուզեց, որ Սլիվին էլի ձիարած մնա։ Սլիվին իր վարձի փոխարեն պահանջեց Բեջանի քուռակը, որ նոր պիտի ծնվեր։ Թեև Գեսոն կրկնապատիկ ու եռապատիկ վարձ խոստացավ, միայն թե քուռակը չտա, սակայն Սլիվին անդրդվելի մնաց։ Գեսոն էլ չիմանալով, որ քուռակը հրեղեն ձիուց է, մանավանդ որ Սլիվու պես հավատարիմ ձիարած չպիտի գտներ, խոստացավ։

Սլիվին քուռակն ստացավ․ խնամք տարավ, մեծացրեց, մարզեց, արշավի վարժեցրեց և անունը Սուրկ դրեց։

Սլիվին մի գեղեցկադեմ երիտասարդ էր, երբ Սուրկին հեծնում էր, կարծում էր, թե նրա հրեղեն ուժն իր վրա է գալիս։ Նա սիրում էր երամակի շուրջը ձիարշավ անել, սարի ու ժայռերի վրայից Սուրկին թռցնել։ Երբեմն այնքան էր տարվում ձիավարությամբ, որ նույնիսկ երամակը թողնում էր անխնամ։ Այս պատճառով էլ ձիերն օրեցօր սկսեցին նիհարել, հետ գնալ։ Գեսոն երբեմն հարցնում էր․ «Սլիվի, կարծես թե դու էլ էն հին ձիարածը չես, այս ի՞նչ է պատահել քեզ, որ մեր ձիերը նիհարում, հետ-հետ են գնում»։

—Աղա, բան չկա, լավ եմ պահում,—ասում էր Սլիվին, բայց ուշն ու միտքը վրան չէր։ Երբ գալիս էր երամակը ջուրը տանելու ժամանակը, նա մտածում էր՝ երբ Սուրկին հեծնեմ և ավարառության գնամ, քանի՞ մարդու կարող եմ դիմադրել։ Երբ նա ոտքը դնում էր Սուրկի վրա, ձին այնպես էր խրխնջում, որ ամբողջ ցեղի վեց հազար կոնի բնակիչները վրաններից դուրս էին թափվում դիտելու Սլիվի ձիավարությունը։ Սլիվին հաճելի թվաց ձիավորի կյանքը։ Մանավանդ Սուրկի հատկությունները նրան սիրահար դարձրին ձիավարության։ Ուստի նա միշտ ձիուն փարած, հեծած շրջում էր վեր ու վար, լեռ, ձոր ու դաշտ։ Նա թողեց ձիարածությունը և սկսեց ավարառությամբ պարապել։

Սլիվին առևանգում է Վարդակին

Սլիվին այդ ցեղի մեջ տեսավ Վարդակ անունով մի սիրուն աղջիկ, որ Հասե Դուդեի յոթ որդիների քույրն էր․ Սլիվին սիրահարվեց այս աղջկան և իրեն կնության ուզեց։

Հասն Դուզնի յոթ որդիների աչքը Սոսըկի վրա էր, ուստի համար ուխթ դրան ղալանի փոխարեն Սոսըկին պահանջել Սիլվիից։

Սիլվիի համար դա խիստ պահանջ էր, նա որչափ սիրում էր Վարդակին, կրկնապատիկ սիրում էր իր ձիուն։ Ձին նրա համար իր կյանքն էր։ Այդ ձիով նա հռչակ պիտի ստանար։ Նա մերժեց. «Չեմ տալ» — ասաց, սակայն սիրահարության բոցը գնալով բորբոքվեց նրա մեջ։ Մտածում էր մի կերպ Վարդակին ձեռք գցել, փախցնել, բայց վախենում էր Հասն Դուզնի յոթ որդիներից, որոնք ամբողջ Արաբստանում հռչակված, քաջ պատերազմողներ էին և միրև Արաբն Գևնի զորքի գլխավորները։

Սիլվին առերես խոստացավ Սոսըկին Վարդակի համար ղալան տալ, միաժամանակ միամտացրեց Հասն Դուզնի յոթ որդիներին։ Մի օր էլ, երբ Վարդակը եկել էր աղբյուրից ջուր տանելու, Սիլվին հեծավ Սոսըկին, սլացավ դեպի աղբյուրը։ Վարդակին քաշեց, առավ գավակը, քշեց ընկավ Արաբստանի խորքերը և անհետացավ իր ծանոթ լեռների ու կիրճերի մեջ։

Հասն Դուզնի յոթ որդիները կատաղած գայլի պես ընկան Սիլվիի հետևից, ամեն կողմ խուզարկեցին, բայց չգտան։

Սիլվին Վարդակի հետ մնաց այդ լեռներում. իմանալով, որ Վարդնի եղբայրները, քաջ-քաջ մարդիկ հավաքած, փնտրում են իրեն, նա մտածեց, որ այդ երկրում մնալ այլևս անկարելի է, որովհետև իրենից վրեժ կլուծեն։ Նա իր հետ առնելով Վարդակին, Սոսըկի գլուխն ուղղեց դեպի հեռու լեռները։ Երբ Արաբստանի հողից դուրս եկավ, հանդիստ շունչ քաշեց, այլևս երկյուղ չուներ Հասն Դուզնի յոթ որդիներից։ Վերադարձավ եկավ Ամարն Մըլքի մոտ։ Նա իր հովանավորության տակ առավ Սիլվիին։

Մըլք Ամար աղան տեսավ, որ Սիլվին լավ ձիավոր է, շատ սիրով ընդունեց նրան և կրկին գրեց իր ցեղի անդամ։

Սիլվին այդ ցեղի մեջ հաստատ մի տուն եղավ։

Անցան տարիներ, Սիլվին մի որդի ունեցավ, անունը դրեց Բուլուկ։ Ապա մի որդի էլ ունեցավ, անունը Կառ դրեց։

Այնուհետև Սիլվին մեռավ։

Բուլուկն ու Կառը մեծացան[1]։

---

1 Այս հատվածը վերցված է Ս. Հայկունու գրի առած պատումից, որը

Բուլուկի և Փերիշանի տեսակցությունը

Բուլուկի զամբիկ ձիու անունը Սուրկ էր։

Կեսօրվա շոգին Բուլուկն ասաց. «Սուրկին կտանեմ ջրի»։

Սուրկին տարավ աղբյուրը, ջրեց։ Այդ ժամանակ Ամար աղայի հոտը եկել էր աղբյուրի վրա մակաղել։

Ամար աղայի աղջկա անունը Փերիշան էր։ Հասած աղջիկ էր, ինչքան ասես՝ գեղեցիկ։ Երբ Բուլուկը ձին բերեց, Փերիշանն աղբյուրի մոտ կանգնած էր, նա մի ձեռքին պահած ուներ իլիկը, իսկ մյուսում՝ հիվանդ ոչխարների դեղը։

Երբ Բուլուկը Փերիշանին տեսավ, ամբողջ սրտով սիրեց նրան։

Փերիշանն ասաց. «Երանի ես գիտենայի՝ դու ամուսնացած ես, թե ոչ». իսկ Բուլուկը Սուրկին հեծավ, մի մեյդան տվեց Ամար աղայի դռան առջև, քշեց գնաց դեպի իր վրանը։

Հենց այդ ժամանակ Մըրտըր Լըքոն Ամար աղայի վրանումն էր։ Ամար աղան ասաց. «Արդյոք աղբյուրի վրայի ձիավորն ով էր, ինչ լավ ձի էր»։

Լըքոն ասաց. «Այդ ձիավորը Բուլուկն էր»։

Ասաց.— Լըքո, արդյոք Բուլուկն իր ձին չի՞ ծախի։

Ասաց.— Ամար աղա, երբ Բուլուկը եկավ աղբյուրը, Փերիշանն էլ գնաց դեպի աղբյուրը։ Բուլուկը քո Փերիշանին սիրեց, եթե դու ցանկանում ես, այդ հանգամանքն օգտագործիր։ Բուլուկի զամբիկը մայր ունի, նրա անունը Բեջան է, այդ ձին արաբների էլի միրե Արաբե Գեսինն է։

Եթե դու խոստանաս, որ Փերիշանին կտաս Բուլուկին, նա կգնա Բեջանը քեզ համար կբերի։

Ամար աղան չգիտե, թե ո՛ւմ տա Փերիշանին

Այժմ Ամար աղայի աղջկա ուզողները շատ էին՝ էլրաթներ, մալրաթներ, աշիրաթի մեծամեծներ։

Ամար աղան էլ իր աղջիկը որևէ մեկին չտվեց. եթե Ամար

հրատարակված է «Էմինյան ազգագրական ժողովածու» Ե. հատորում, 1904 թ., էջ 131—134։

Լեզվի միօրինակություն պահելու համար վերածեցինք հայերեն գրական լեզվի։

աղան Փերիշանին տար էլբաթներին, մալբաթներն Ամար աղայի մոտից կքոչեին, եթե տար մալբաթներին, էլբաթները կքոչեին։

Ամար աղան ելք չգտավ և իր աղջիկը ոչ ոքի չտվեց։

Ամար աղայի և ծերունիների խորհուրդը

Մի օր ծերունիները և էլաթի մեծամեծները հավաքվեցին Ամար աղայի մոտ, նրա հետ խորհուրդ արին, ասացին.

— Ամար աղա, էլբաթներն էլ, մալբաթներն էլ քո աղջիկն ուզում են, դու ինչու քո աղջիկը որևէ մեկին չես տալիս։

Ամար աղան ասաց. «Հարգարժան ծերունիներ և մեծամեծներ, ես չգիտեմ՝ ինչ անեմ, եթե իմ աղջիկը տամ էլբաթներին, մալբաթները կխռովեն, եթե տամ մալբաթներին, էլբաթները կխռովեն»։

Երբ նրանք այս խոսքերն Ամար աղայից լսեցին, էլ ոչ ոք բան չասաց։

Ամար աղան խորհրդակցում է իր կնոջ հետ

Երեկոյան դիվանը ցրվեց։ Նրանից հետո Ամար աղան դիվանից եկավ տուն. գնաց իր տեղը նստեց։ Տխուր էր, մտածկոտ։

Ամար աղայի կինը երբ այս նկատեց, հարցրեց.— Խեր լինի, Ամար աղա, ինչու ես այդպես տխուր։ Ամեն օրվա նման չես ասում, չես ծիծաղում, եթե դու մտահոգվում ես, հապա չքավորներն ինչ պիտի անեն, այնքան տուն, տեղ, ոսկի, արծաթ ունես, նախիրներ և հոտեր, ուրեմն չքավորը պիտի գնա իրեն խեղդի։ Չլինի՞ թե տկար ես, կամ գուցե զորք է գալիս քեզ վրա։

Ամար աղան ասաց.— Կնիկ, ոչ հիվանդ եմ, ոչ էլ զորք է գալիս։

Կինն ասաց.— Ուրեմն տխրությանդ պատճառն ինչն է։

Ասաց.— Կնիկ, երանի մի մեծ բանակ գար և ինձ կողոպտեր, այդ ավելի լավ կլիներ։

Կինն ասաց.— Ամար աղա, բա էդ ինչ ցավ է, որ քեզ տանջում է, իսկ դու էլ ինձ չես ասում։

Ասաց.— Կնիկ, ճիշտը քեզ ասեմ՝ դու ինձ համար մի աղջիկ չես բերել, այլ մի աստծու կրակ ես բերել։ Երանի թե ոչ դու լինեիր, ոչ էլ քո աղջիկը։ Աստված նրա հոգին չի առնում, որ

նրանից ազատվեմ, կամ էլ իմ հոգին չի առնում, որ նա ինձանից ազատվի։

Կինն ասաց.— Ամի՛ր աղա, ինչո՞ւ ես այդ տեսակ խոսքեր ասում, իմ աղջիկն ի՞նչ է, պոռնի՞կ է, թե՞ գող։ Եթե դու գիտես՝ պոռնիկ է կամ գող, ասա, թող հենց վաղը առավոտ սպանեն, տան շանն ու գայլին ուտելու։

Ամիր աղան կնոջն ասաց.— Կնի՛կ, քո աղջիկը ոչ գող է, ոչ էլ պոռնիկ, բայց էլրաթների և մալրաթների աչքը նրա վրա է, ես չգիտեմ՝ որին տամ, դրա համար էլ մնացել եմ երկու կրակի մեջ։

Ամիր աղայի կինն ասաց.— Ամի՛ր աղա, աստված քեզ միայն մի աղջիկ է տվել, ինչպե՞ս է լեզուդ դառնում, որ դու այդպես ես ասում։ Աստված քեզ խելք ու շնորհք է տվել, քո խելքով էլ աղջիկդ տուր մարդու։ Ափսոս քեզպեսին, դու տղամարդ ես, երկու հազար տների աղա ես, մինչև այժմ չես կարողացել մի հնար գտնել քո աղջիկը մարդի տալու։

Ամիր աղան ասաց.— Կնի՛կ, աստված երկար կյանք տա քեզ, առյուծն առյուծ է, որձ լինի թե էգ, մեկ է, ես չգիտեմ ինչպես անեմ, դու մի ճանապարհ գտիր ինձ համար, որպեսզի ես գլուխս ազատեմ։

Կինն ասաց.— Ամի՛ր աղա, այսօր հանգիստ քնիր, վաղը մի խնջույք սարքիր, ուղարկիր՝ ինչքան աշիրաթներ կան, մալրաթներ, էլրաթներ, բոլորին էլ հավաքիր։ Կանչիր բանգդադա Լըքոյին, հայ Բըդոյին, թող թմբուկ զարնեն, զուռնա փչեն, փարփուր ֆինջանը ոսկյա մատուցարանի վրա դիր, երբ որ հաց կերան, ֆինջանը լցրու սուրճով, Փերիշանի մատանին գցիր մեջը, հետո հայտարարիր. «Ո՛վ դուք բարեկամներ, էլրաթներ, մալրաթներ, ով որ այս ֆինջանի միջի սուրճը խմի, Փերիշանի մատանին գնի իր մատը, պետք է գնա Արարական էլը, Հասե Դուզեի յոթ որդիների միջից Բեջան զամբիկը և մի խումբ սևալանջ ուղտեր բերի, որպես Փերիշանի ղալան։ Աստծու արդար անունով, երեք հարյուր վաթսուն վեց մարգարեների վկայությամբ, ես Փերիշանին կտամ նրան»։

Ամիր աղան ասաց.— Կնի՛կ, առյուծն առյուծ է, որձ լինի թե էգ, մեկ է, քո խելքն իմ խելքից լավ է։

Ամար աղան խնջույք է սարքում

Լույսը բացվեց։

Ալի Ամար աղան առավոտյան վեր կացավ, աղնալի թըմբուկը խփեց, կլկլաններին, մըլլաներին և մրդեսյաններին հավաքեց։ Կանչեց, բերեց ելրաթներին և մալրաթներին։ Խնջույք սարքեց։ Մոտ հազար մարդ հավաքեց։ Բոլորն էլ իրենք իրենց ասում էին, որ այս սուրճի ֆինջանը «մենավոր գալ է»։ Ինչքան մարդիկ եկան, ինչքան քաջեր եկան, ոչ ոք չհամարձակվեց գնա խմի։

Ա՜խ լե, լե, լե, հա՜յ լե, լե, լե, բալո.
Մըլի Ամար աղան խեր չտեսնի,
Շատ լավ դիվան է դրել,
Քառասուն թոխլի, քառասուն խոյ մորթել,
Ջրոջրանում մանրել է,
Փըլում խորովել է,
Ղազանների մեջ եփել է,
Բաքրայի սուփրան փռել է,
Սուրճի ֆինջանը Փերիշանի ձեռքը դրել,
Մեծ խնջույքի նստել,
Այս երեք գիշեր, երեք օր է —
Ոչ ոք չի համարձակվում
Փերիշանի ձեռքից վերցնի։

Մըլի Ամար աղան ասում է.
— Ով որ սուրճի ֆինջանը
Փերիշանի ձեռքից վերցնի
Եվ ինքը խմի,
Գնա թշնամիների մոտ՝
Վեց հազար արաբների վրանների միջից
Բեջանին ինձ համար բերի,
Աստծու և մարգարեների անունով
Փերիշան խանումը ես նրան կտամ,
Նիզակի հետ ինձնից կտանի։

Երեք օր ու երեք գիշեր ֆինջանը
Մնաց Փերիշանի ձեռքին, սուրճը սառավ։

Այդ մեծամեծները որ այնտեղ նստել էին, ոչ ոք չհամարձակվեց։ Սուրճի ֆինջանը էլի մնաց իր տեղը. մարդիկ գողտուկ, աչքի տակով նայում էին ֆինջանին, բայց չէին համարձակվում ֆինջանը վերցնել։

Ամար աղան ասաց.— Ո՛վ դուք երիտասարդներ, չէ՞ որ ձեզ եմ ասում, ինչո՞ւ ձեզանից մեկն ու մեկը ձայն չի հանում։

Ամար աղան կանչում է Կառ ու Բուլուկին

Հետո Ամար աղան ծառաներին ասաց.— Էլի մեջ դարձյալ մարդ մնացե՞լ է, որ չի եկել։

Ծառաներն ասացին.— Բացի այրի Վարդակի երկու տղաներից, ոչ ոք չի մնացել։

Ամար աղայի կինը երբ որ այս լսեց, ասաց.— Ամա՛ր աղա, ուղարկիր թող Բուլուկն ու Կառն էլ գան։ Բուլուկն ասում է. «Ես նիզակ եմ, չեմ տեղավորվում պարկում»։ Ուղարկիր՝ թող նա էլ գա։

Ամար աղան ասաց.— Շուտ երկու եղբայրներին կանչեցեք։

Հենց այդ ժամանակ ծառաները տեսան, որ Կառը դիմացից գալիս է։

Ամար աղայի ծառաները նրան ասացին.— Երիտասարդ, դու լսեցի՞ր, թե Ամար աղան ինչ ասաց։ Դու այստեղ նստիր, մենք գնանք Բուլուկին կանչենք։

Կառն ասաց.— Ոչ, եղբայրներ, ես ինքս կգնամ եղբորս կկանչեմ։

Կառը կանչում է Բուլուկին

Կառը վազեց, տեսավ, որ Բուլուկը հանգիստ իրեն համար նստել է։

Կառն ասաց.— Բուլուկ, եղբայր, Ամար աղան էլի երիտասարդներին հավաքել է, Փերիշանի մատանին դրել է սուրճի ֆինջանի մեջ, ասում է.— Ով որ այս ֆինջանի սուրճը խմի, իմ աղջկա մատանին դնի իր մատը և գնա Արաբական էլը՝ Բեջան դամբիկն ու մի խումբ ակալանջ ուղտեր բերի, ես իմ աղջիկը կտամ նրան։ Բուլուկ եղբայր, չլինի, չիմանամ՝ դու ֆինջանը խմես, գնաս Արաբական էլը։ Մենք այստեղ թռչունների մեջ մենակ ենք, ոչ բարեկամներ ունենք, ոչ էլ թիկունք։

Բուլուկն ասաց.— Դու հանգիստ կաց, ես սուրճը չեմ խմելու։

Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Այդ ժամանակ Բուլուկն Սլեմանը վեր կացավ.
Մի դուլյլ ոչխարի կաթ կթեց,
Ցոթ հաց մեջը բրթեց.
Կոպալն ու թաղիքն այնտեղ թողեց,
Հասավ տուն։
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Համամում լողացավ,
Ղութու ու սնդուկի կողպեքը կոտրեց,
Մի ձեռք նոր շոր հագավ,
Սափրիչի մոտ սափրվեց։
Բոլոզն է գալա թուկի՝
Չորս կողմը սև համուդ,
Նրա շապիկն է ժանեկավոր։
Նրա ծխամորճը յասմինի է,
Նրա քիսան ատլասի է,
Նրա թութունը ջամբալի է,
Նրա գլուխը յաղուբի է։
Ամեն անգամ քառորդ ու կես թուխտ
Ջամբալի թութուն է քաշում։
Եկավ Սոսլկ դուրս քաշեց,
Մերդինի թամբը վրան դրեց,
Չախից, աջից կապերը պնդեց
Տասներկու հոգանի նիզակը հետն առավ,
Ասեց. «Յա ալահ, աստված», հեծավ,
Մի մեյդան էլից վերև,
Մի մեյդան ներքև՝ ձին քշեց։
Նիզակն օդում ճոճեց,
Յոթն ուղտի համետ առավ,
Աջ թևի վրա գցեց։
Ծերունիներն էլ վախեցան,
Ասին.—Էդ անավեր ողի սիրտը երկա՞թ է, թե՞ պողպատ
Իսկ ծանոթ մարդիկ ասացին.
— Սարերի հովիվ է,

Աշխարհում ոչինչ չի հասկացել։

Ղազ Վարդակի նման շորորալեն դեպի դիվանն ուղղվեց։
Գնաց՝ դիվանի տան առաջ կանգնեց,
Նայեց, տեսավ, որ Փերիշանը դարի վրա է կեցել․
Քուլուկը նրան բարևեց։
Գնաց մի նախրապանի բարև էլ դիվանին արեց․
— Հորեղբայր, այդ ինչ դիվան է, որ բոլորել ես։
Դիվանը նրա առջև ոտքի կանգնեց։
— Բալո, աստված ձեզ հետ,
Դուք բուղա եք, դուք բարան եք,
Եթե իմ հորեղբայր Ամար աղան
Ինձ էլ մարդու տեղ դներ, ասեր՝
Մեր բարեկամ Քուլուկն էլ կա,
Ինձ էլ ձեզ պես կկանչեր։
— Որդի, ես մի լավ դիվան եմ բոլորել,
Կիկաններին, մըլլներին, բարազներին
Հավաքել։
Խան ու բարանների,
Քաջ ու արխականների,
Ռըմանների, ռըմթափանների, ռըմդրաճների համար
Քառասուն թոխլի, քառասուն խոյ եմ մորթել,
Ջըռջըռանում մանրել եմ,
Փռում խորովել եմ,
Ղազաններում եփել եմ,
Բաքրայի սուփրա եմ փռել,
Սուրճի ֆինջանը Փերիշանի ձեռքն եմ դրել․
Այս երեք գիշեր ու երեք օր է
Ոչ ոք չի համարձակվել
Ֆինջանը Փերիշանի ձեռքից վերցնել։
Ով որ սուրճի ֆինջանը
Փերիշանի ձեռքից վերցնի,
Եվ ինքը խմի ու
Գնա թշնամիների վրա,
Բեջան ձին ինձ համար բերի,
Փերիշանին ինձանից կստանա։

Երեք օր ու գիշեր է —
Սուրճի ֆինջանը
Փերիշան խանումի ձեռքին սառել է։

Ամար աղան ու Փերիշանը

Բավս, Ամար աղան վեր կացավ,
Տուն գնաց,
Ասաց. «Փերիշան խանում, դե վեր կաց,
Սուրճի ֆինջանը լցրու,
Բեր դիվանի մեջ ման ածիր,
Մեր մեծ հյուրերը Կառն ու Բուլուկն են,
Հենց նոր եկել, նստել են»։

Հենց այդ ժամանակ Փերիշան խանումը վեր կացավ,
Սուրճի ֆինջանը լցրեց և բերեց
Դիվանի մեջ ման ածեց։
Նայեց՝ Բուլուկն աջ կողմն է նստել,
Բուլուկին ախտոտաց,
Սուրճը ձախ ձեռքով ման ածեց.
Եկավ Բուլուկն Սլեմանի կողմը,
Բուլուկն Սլեմանը զայրույթով լցվեց։
Ձեռքը պարզեց, որ ֆինջանը վերցնի,
Ալի Ամար աղան Բուլուկի ձեռքը բռնեց և ասաց.
— Լավ իմացիր, ով որ ֆինջանը խմի,
Գնա Բեջանը բերի, միայն
Նրան կհասնի աղջիկս՝ Փերիշանը.
Բուլուկը երբ Ալի աղայի ձեռքը սեղմեց,
Նրա եղունգների տակից արյուն կաթեց։
Նա Բուլուկի ձեռքը բաց թողեց։

Երբ եղբայր Կառը լսեց,—
Ինքը վերևի անկյունում էր նստել,—
Երեք անգամ եղբորը ձայն տվեց.
— Բուլուկ, եղբայր, դու փոքր ես,
Դու անխելք ես,

Դու մի հասարակ հովիվ ես,
Ինչպե՞ս կարող ես այդքան մեծամեծներին, կիկան ու ձըլլներին
Արհամարհես ու Բեջանը բերես:
Դու ինչպե՞ս կարող ես հարձակվել հզոր թշնամու վրա,
Գնաս Ներքին անապատի վեց հազար
Արաբների վրանի միջից Բեջանը բերես
Եվ ինչպես խայտառակ չլինես:
Քուլուկն ասաց.
— Կառո, եղբայր, ես Քուլուկն եմ,
Լավ Քուլուկն եմ,
Ես մարտիկ եմ, ես հերոս եմ,
Յոթ հարյուր մաքի եմ Բինգյոլում արածացրել.
Այնքան գայլեր և արջեր կան սարում,
Բոլորին էլ քաղցած եմ թողել,
Ինչ կռիվ էլ մանի՝
Քուլուկն Սլեմին ոչ մի բանից չի վախի:

— Քուլուկ, եղբայր, դու փոքր ես,
Անգետ, անհասկացող ես,
Դու ինչպե՞ս կարող ես այդքան
Բուղա ու բարաններին արհամարհես
Ու Բեջան գամբիկը բերես:

— Եղբայր Կառո, դու իմ հայր Սլեմանից չես,
Դու իմ մայր Վարդակից չես,
Ես Քուլուկն եմ, լավ Քուլուկն եմ,
Ես մարտիկ եմ, ես հերոս եմ:
Յոթ հարյուր մաքի քոսա Ռեվանի Բինգյոլում արածացնում եմ,
Որքան գայլ ու արջ սարում կան,
Բոլորին էլ քաղցած եմ թողել:
Արու գառը դանակի համար է՝
Հա՜յ վի՜, վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜, վի՜:

Կառը եղբոր ձեռքը բռնեց և ասաց.
— Դու, անտեր որբուկ, կամենում ես գնալ
Բեջան գամբիկը բերե՞լ:

Բուլուկն ասաց.
— Կառո, եթե դու իմ եղբայրը չլինեիր,
Ես այնպես քո կրծքից կխփեի,
Որ քու սիրտը քթիցդ դուրս գար։
Որովհետև արյունը մեռնում է, կաշին է մնում,
Մարդը մեռնում է, անունն է մնում.
Աշխարհում քաջությունն է մնում։
Ու ֆինջանը վերցրեց, խիտ բեխերի տակով խմեց։
Ֆինջանը գետին խփեց,
Ֆինջանի կտորներն ամեն կողմ թռան,
Մեծ կտորը հորեղբայր Ամար աղայի փեշին դիպավ։
Ասաց. «Այո, ինձ հասավ»։
Երբ Բուլուկը սուրճի ֆինջանը վերցրեց,
Դիվանի միջի մեծամեծներն այնպես իրար անցան,
Իրար գայլանները ոտնատակ տվին,
Զարդուփշուր արին։
Երբ իրենց ձիերն ախոռից դուրս բերին,
Այնքան շփոթվել էին, որ փոխանակ սանձը
Ձիու բերանը դնելու, դնում էին ձիու պոչի տակ։

Բուլուկը պատրաստություն է տեսնում

Երբ դիվանը ցրվեց, մնացին Բուլուկը, Ամար աղան և Կառոն։ Նրանք հաց կերան, վերջացրին, Բուլուկը Կառոյին ասաց. «Եղբայր Կառո, գնա տուն, դամբիկ Սոսկին ինձ համար թամբիր, Համադան ձին էլ քեզ համար, մեր երկուսի զենքերն էլ բեր այստեղ, մենք գնանք»։

Երբ Բուլուկը շուրջը նայեց,
Մըրտըր Լքոյին նկատեց.
Հո՜յ վի, վի, վի։
— Շուտ արա, շտապիր, հո՜յ վի, վի,
Հասիր արաբական սև վրանին, հո՜յ վի, վի,
Ասա Վարդալին թող տասներկու նիզակ ուղարկի,
Հո՜յ վի, վի,
Թող ինձ համար գունավոր վրան ուղարկի, հո՜յ վի, վի.
Ալիե Մուսխանիին, հայ Բղդոյին, Նամաթե Իսային,

Եղբայր Կառին ինձ համար ուղարկի։
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Եթե մայր Վարդակը հարցնի,
— Թե՛ ինչ է պատահել —
Ասա՝ ոչինչ,
Ամար աղայի էլում հարսանիք է,
Ասա՝ թո՛ղ քո որդիներն ուրախությունից հետ չմնան։
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜ վի՜։

Վարդակն իմանում է

Կառը գնաց տուն՝ ձավար վերցրեց, յուղ վերցրեց, զենք վերցրեց։ Վարդակն էլ գնացել էր լողանալու։ Վարդակի աղախինը գաղտուկ գնաց նրա մոտ և ասաց. «Կառը տունը քանդեց, ամեն ինչ բեռնեց»։

Վարդակն իր շորերը հանել էր, որ լողանա. երբ այս լսեց, նա էլ չկարողացավ ոտնամանները հագնել, այլ դուլպաներով վազեց եկավ տուն։ Կառին հանդիպեց, ասաց.— Կա՛ռ, լավ, աստված խեր անի։

Կառն ասաց.— Աստված խերն ու շառն իրար է խառնել. աստված մի չար որդի է տվել քեզ, ոչ նրա հոգին է առնում, որ ես ազատվեմ, ոչ էլ իմ հոգին է առնում, որ նա ազատվի։ Վարդակ, Բուլուկը երդվել է, երեք օր ու երեք գիշեր Սոսըկի մեջքի վրա ուրախություն անի։

Վարդակը շատ խելոք էր։ Մտածեց.— Մի՞թե Ամար աղայի էլաթում հարսանիք է, իմ որդիները տասներկու նիզակ տարան, գունավոր վրան տարան։ Ջանըմ, Կառը, Ալեն Մուսեսանին, Նամաթե Իսան, հայ Բղդոն էլ գնացին։ Կա-չկա՝ մի կռիվ կա, Բուլուկը կգնա կռվի։

Վարդակը վեր կացավ, նրանց հետևից գնաց։ Գնաց, նայեց տեսավ, որ երեք-չորս աղջիկներ կան ճանապարհի վրա՝ եկել են բնդարուկի։ Ասաց.— Աղջկերք, Ամար աղայի տան առաջ այդ ինչ աղմուկ է, ինչ աղաղակ։

Աղջիկները պատասխանեցին.— Մայրի՛կ, Փուլուկը պիտի

գնա վեց հազար տան միջից Բեջան ձին բերի, տա Ամար աղային, որ Ամար աղան էլ Փերիշանին նրան տա:

Վարդակը դիմում է որդիներին

Վարդակը շտապում է արագ-արագ,
Հասնում է Ալի աղայի վրանը,
Քրդերեն խոսում է, արաբերեն հայհոյում:

Մայր Վարդեն ասաց.—Բուլուկ, լաօ, աստված խեր անի, այս յոթ տարի է՝ հայրդ մահացել է, դու երբեք Սոսըկին դուրս չես բերել: Ի՞նչ է քեզ պատահել, լաօ, որ դու Սոսըկին այսօր տանից դուրս ես բերել:

Բուլուկն ասաց.—Մայր Վարդե, գլուխս քեզ մատաղ, Թեմուր գետի մոտերքը մի այծյամ է երևացել, մի գնամ տեսնեմ՝ Սոսըկն ինչ անուն կվաստակի ինձ համար:

Վարդեն ասաց.—Լաօ, ինչո՞ւ ես այդպես ինձ խաբում, ինչո՞ւ չես ասում, որ դու ֆինջանը վերցրել, սուրճը խմել ես և այժմ ուզում ես գնալ արաբների Բեջանը բերել, որպեսզի Փերիշանին քեզ համար վերցնես:

Վարդակը գնաց տղամարդկանց վրանը, խնդրեց Ալի Ամար աղային, որպեսզի իր որդիներին չուղարկի Արաբական Էլը և քեռիների ու նրանց քեռորդիների սպանության պատճառ չդառնա, բայց Վարդակի խնդիրն աղան բանի տեղ չդրեց:

Վարդեն ասաց,

— Ամա՛ր աղա, դու ինչո՞ւ այսպիսի վատ բան արիր,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,
Դու Ղարաջադաղն ինձ վրա շրջեցիր,
Հա՜յ վի՜ վի՜, հա՜յ վի՜ վի՜:
Երկու կապած առյուծներին քեռիների վրա ուղարկեցիր,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜:

Ամար աղան ասաց.—Պետք է գնան, եթե չգնան, նրանց գլուխը դահճի ձեռքում կգտնվի:

Այն ժամանակ Վարդեն կրկին ասաց.
— Ամար աղան թող խեր չտեսնի,
Բալքի իր գրկում երեխա չտեսնի,

Ցորեն ցանի, զիվան քաղի,
Ինչպես տագնապի թմբուկն է խփում.
Մըլիններին, կիկաններին, բող ու բաղաններին հավաքում,
Ֆարֆուր ֆինջանը ոսկյա թախըմի վրա դնում,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜:
Ոչ ոք չի համարձակվում այն վերցնել,
Բացի Բուլուկե Սլեմանից.
Ծամ կտրած Վարդակի խելքն
Այդ երկու առյուծներից բան չի կտրում,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜:
Ո՞վ է տեսել, ո՞վ է լսել,
Որ մարդիկ քեռորդիներին
Քեռիների վրա ուղարկեն կռվի,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜:
Ամար աղա, վերան լինի,
Վերան լինի քո քոշկ ու սարան,
Դու ի՞նչպես ես իմ տղաներին ուղարկում
Կռվի իրենց քեռիների դեմ —
Այնպիսի մի ցավ է, որ դարման չունի:

Ամար աղա, մեռնի քու տղան,
Դու երիտասարդներին ուղարկում ես
Շոգ երկիր, տափաստան, ավազոտ անապատ,
Դու աշխարհն իմ գլխին արիր ավերակ:

Ամար աղան ասաց.— Մայր իմ, ես քո որդիներին բանի չեմ ուղարկում. Նրանք իրենց ցանկությամբ են գնում: Ես ի՞նչ անեմ, այնքան բուղաններ ու բաղաններ եկան, ոչ ոք սուրճի ֆինջանը չվերցրեց. Բուլուկն ասաց. «Ես նիզակ եմ, չեմ տեղավորվում պարկում»: Ամար աղան մատնացույց արավ Բուլուկին:

Բուլուկն ասաց իր մորը.— Դու այստեղից գնալու ես, գնա, թե չէ՝ այս նիզակն այնպես կշարժեմ, ինչպես Մուշի կարմանը, կարմանը քո կրծքին այնպես կխփեմ, որ չորս մատն էլ քո մեջքից դուրս կգա, բայց ի՞նչ անեմ՝ դու իմ մայրն ես, դու ինձ սպիտակ կաթ ես տվել:

Ամար աղան ասաց.
— Մայր իմ, հինա բըմըն հինա,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,

Դու մի վախիր, բան չկա,
Հայ վի, վի, հայ վի, վի,
Թող Բուլուկը գնա Բեջանը բերի,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,
Թող բերի ինձ նվիրի,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,
Փերիշանին աստծու անունով թող ինձնից վերցնի,
Հա՜յ վի՜, վի՜, հայ վի՜, վի՜։

Վարդեն ասաց.
— Բուլուկ, լավո, արի մի՛ գնա, մի՛ գնա։
Բուլուկն ասաց.
— Մայր իմ, գնում եմ։
Վարդակն ասաց.
— Դու սխալվել ես, քո զարդերը կապել ես խաչաձև,
Դու գնում ես զամբիկ Բեջանին բերես
Արաբների վեց հազար տների միջից։
Չորս հարյուր ձիավորներ մելիքներից, կիկաններից քեզ հետ տար,
Քո հորեղբայր Նամաթե Իսան
Դավաճանում է քեզ։
Հետո Վարդակը լռեց։
Բուլուկը վեր կացավ և ասաց.
— Կա՛ռ, վեր կաց բեռները բեռնիր։
Կառն ու Բուլուկը ձիերը դուրս բերին
Ռոմանական թամբերը դրին մեջքներին։
Հագան մարտական շորերը,
Իրենց հետ վերցրին տասներկու հոդ ունեցող նիզակ,
Բասրայի վահաններ ու Բոսամսրի թրեր։
Իրենց հետ քառասուն օրվա մթերք վերցրին.
Հաց, ջուր վերցրին։

Ջուրը նրա համար վերցրին, որովհետև նրանց ճանապարհին ջուր չկար, պետք է ավազոտ անապատով անցնեին, միայն հետո հանդիպեին ջրի և կանաչ վայրերի։ Իրենց հետ տարան Մըտրբը Լըքոյին, հայ Բըզոյին, որպեսզի վալադություն անեն, որովհետև նրանք շատ էին գնացել արաբների երկիրը։ Նրանց

հետ գնացին նաև Հասե Մուսեսանին և Նամաթե Իսային։ Ձիերը բեռնեցին։

Կառն ու Քուլուկը հեծան, դուրս եկան ասպարեզ. այդ ժամանակ խաղ ասացին.

— Մեյդան է, լավ մեյդան է,
Մեյդանն այս քաջերինն է.
Ասպանդակների զնգզնգոցն է,
Ձին կրծոտում է իր լկամը։

Քուլուկն ասում է Կառին.

— Կառ եղբայր, պետք է մենք նրանց աղջկան տեսնենք, հետո գնանք Բեջանին բերենք. դուցե մեզնից մեկը սպանվի, Փերիշանն ասի՝ ոչ, ես սրան չեմ հավանել, ես մյուսին եմ հավանել։

Կառը մեյդանում գոչում ասում է.

— Ամար աղան պետք է իր աղջկան բերի,
Քուլուկը մի անգամ էլ նրանց աղջկանը տեսնի,
Հետո գնա Բեջանին բերի։

Ալի Ամար աղան մեյդանում գոչում է.

— Քուլուկ, լավո,
Ճիշտ է՝ դու ջահիլ ես,
Քո գլխումը խելք չկա,
Մեր աղջիկը որ կա, թելի Փերիշան խանումն է,
Մանր-մանր մրջանն է,
Ջուր է խմում, ջուրը կոկորդում երևում է,
Փայփուր աղբյուրի մոտն է.
Յոթը աղախին իր շուրջն են,
Բոլորն էլ մի տարազով են,
Միայն մի սպիտակ շապիկ է վրայից հագել,
Գնա, դու հավանել ես, գնա.
Չես հավանի, վերադարձի դեպի տուն։

Հիմա արդեն ընկնում են ճանապարհ, գնում են.
Փայփուր աղբյուրի մոտ իրենց բեռները դնում են,
Աղջիկը գալիս է, աղջկան տեսնում են,
Աղջկան հավանում են։

Բուլուկն ասում է Կառին.— Եղբայր Կառ, մենք գնում ենք մեր քեռիների վրա, մի արի մենք իրար փորձենք, եթե փորձից դուրս եկանք, մենք կգնանք, հետո զուցե մեզնից մեկն ու մեկը մեռնի, տեսնենք՝ աղջիկը մյուսին կհավանի՞։ Եթե մենք ուժ չունենանք, չենք գնա։

Կառն ասում է Բուլուկին.— Եղբա՛յր, քո աչքերը պլտի կարմրեն, քեզ վստահել չի կարելի, դու ինձ կխփես։

Բուլուկն ասում է.— Եղբա՛յր, ինչո՞ւ, ես կուրացե՞լ եմ, ինչո՞ւ, իմ եղբայրները շա՞տ են։

Երկուսն էլ այնտեղ իրար են խփում, իրար փորձում են։

Հա՛ իրար են խփում, ջա՛ն իրար են խփում,
Ձիերն իրենց լկամներն են կրծում,
Կռիվ է, կռիվ երկու եղբայրների,
Սրերի շաչյուն, թրերի հնչյուն։
Զանանի ոչ քաֆըր, ոչ մուսուլման,
Բուլուկը Կառի թիկունքին հասնում,
Բուլուկը Կառի հետևից գոչում.
— Ես քո սրտին ու ջիգարին կխփեմ նիզակիս ծայրովը,
Եվ կքցեմ ձիուս ոտքերի տակ։
Բուլուկը Կառի թիկունքին է հասնում,
Մահացու նիզակը քաշում,
Ուզում է Կառի թիկունքը խոցել,
Կառը ձիուց իրեն քցում է գետին։
Ասում է.— Հո՛ւ, հո՛ւ, սև դև,
Դու ցանկանում ես մի կնոջ համար ինձ սպանե՞լ։
Եղբայր Բուլուկը Փերիշանին տեսել է,
Այլևս իր աստծուն մոռացել է։

Բուլուկը հիմա երգ է ասում.
— Հա՛ վի՛, վի՛, հա՛ վի՛, վի՛, հա՛ վի՛, վի՛,
Մշուշը Բուլուկե Սլեմանի աչքերը բռնել է,
Ցանկանում է մի կնոջ համար
Իր եղբորն սպանել,
Աշխարհում առանց եղբոր մնալ։

Փերիշանն ասում է.— Ես Բուլուկին հավանեցի,
Եթե Բուլուկը սպանվի, նրանից հետո՝ Կառին։

Այնուհետև Բուլուկն ասաց.
— Եղբայր Կառ, քամին գալիս է ներքևից,
Խփում է Փերիշանի վրանին, պոկում տեղից,
Տնավեր Բուլուկը նուրբ Փերիշանին այնտեղ է տեսնում։

Փերիշան խանումն ասում է.
— Քամի է, անցյալ գիշերվա քամին
Խփում է Ալի Ամար աղայի
Տասնըչորս սյան
Կոնի վարագույրին ու ցանկապատին,
Ես ափսոսում եմ բարեկամիս՝ գնա սպանվի,
Հա՜յ վի՛, վի՛, հա՜յ վի՛, վի՛։

Բուլուկն ասում է.
— Սիրելիս, այդպես մի՛ ասա,
Սիրելիս, ասա՛,
Քամի է, անցյալ գիշերվա քամի,
Խփում է Բուլուկե Սլեմանի կոնին,
Տասնըչորս սյուն է, բոլորն էլ պողպատ ու երկաթ։
Ով որ գնա արաբների Բեջանը բերի,
Արաբե Գեսից վրեժն առնի,
Էլի իմ բարեկամը Բուլուկն է,
Հա՜յ վի՛, վի՛, հա՜յ վի՛, վի՛։

Կառն ասաց.
— Դու բոլորովին գիժ ես,
Դու ջահել ես, բան չես հասկանում,
Դու քո խոսքերը մտիկ ու հետու ես խփում.
Այս Փերիշանն է, միրի դուստրն է,
Ոսկերից կաղ է, թևերից սախաթ է,
Մենք գնում ենք օտար երկիր,
Մեր արյունը թանգ է նրանից։

Բուլուկն ասաց.
— Կառ, այս Փերիշանն է,
Անվանի ու նշանավոր է,
Ամենքը գիտեն, որ
Նրա պալանը բարձրացել է

Գյուղերի նախիրներով,
Մաքիների հոտերով,
Ձիերի երամակներով,
Յոթ կոտ արծիվների կաթով,
Յոթ բեռ եղջերավոր օձերով,
Մենք գնում ենք օտար երկիր, եթե սպանվենք,
Աստված գիտե, որ
Մեր երկուսի արյունն արժե։

Կառն ու Թուլուկը ճանապարհորդում են

Կառն ու Թուլուկը ճանապարհ ընկան դեպի Արաբական հող։ Բայց Կառն ու Թուլուկն անփորձ էին (վալադներ չէին), նրանք վալադներ ունեին։

Վարդակը տեսավ, որ որդիները գնացին, աշխարհը նրա գլխին շուռ եկավ, նրանց հետևից գնաց և ասաց.

Լա՛վո, ես իմ կրծքի կաթն եմ ձեզ տվել,
Մի ձեր մորը լսեցեք։
Ես գիտեմ՝ դուք գնում եք արաբների միրի հող,
Ուժով Բեջանը պետք է բերեք
Ալի Ամար աղայի համար։

Վարդեն ասաց.— Ուղիղ գնացեք Ղուաջեղարայի ղողանները. այնտեղ այծեմնիկները շատ-շատ են, չլինի թե դուք նրանց սպանեք, մեղք են, ով որ այծեմնիկ սպանի, աստված նրա գործը չի հաջողի։ Հետո պիտի հասնեք Նեխած Լճակներին։ Այդ Լճակներից հեռու գնացեք, որպեսզի ձեր ձիերը նրանցից ջուր չխմեն։ Եթե ձեր ձիերն այդ Նեխած Լճակներից ջուր խմեն, կհիվանդանան։ Հենց այնտեղից էլ արաբների ղողանները երևում են։ Այնտեղից էլ ուղիղ գնացեք և դուք կհանդիպեք էլին։ Թուլուկ, արաբների միրը մոխրագույն ուղտերն աստծու ողորմության համար ազատել է, չլինի թե դուք վերցնեք բերեք։ Նա այդ ուղտերը թողել է չիմաններում և մարգագետիններում՝ իրենց համար արածում են։ Եթե դուք մոխրագույն ուղտերը բերեք, նրանց գոռոցը հասնում է երկինք, քաջ տղամարդու համար վնասակար են (բն այկն), մի՛ բերեք։ Այնտեղ զգույշ կացեք, միրի մարդիկ գաղտնի կգան ձեզ կսպանեն։ Դե՛, գնացեք, ձեզ բարի ճանապարհ։

Քուռուկը քշեց, Վարդեն ընկավ հետևից, ասաց.—Քուռո՛ւկ, Լա՛վո, արի ես ճանապարհների մասին քեզ ասեմ՝

Այսօր դու գնում ես Գրե Բաղալիա, քո կենալու տեղն է։
Սամի քամին հանկարծ բարձրանում է՝
Յավշանների թփերին խփում է, շարժում,
Այն ժամանակ այծեմնիկները դուրս են ցատկում,
Չլինի՝ դու Սոսըկին նրանց հետևից գցես.
Գրե Բաղալիայի դաշտը կայծքարերից է,
Այդ քարերը կայծ ու կրակ են տալիս,
Ձեր ձիերի ոտքերը կկտրատեն,
Ձիերը կվնասվեն,
Ձեզ թշնամիների միջից չեն ազատի։
Այծեմնիկները քաջ տղամարդու համար
Դժբախտություն են բերում։
Լա՛վո, դուք գնում եք՝ աղջիկների օժիտներ չթալանեք։

Վարդակը մեկ անգամ էլ ասում և հետ է դառնում։ Մի անգամ ես իր տղաների հետևից ընկավ, կամաց-կամաց ձին քշեց նրանց հետևից։

Կառը հետ նայեց, ասաց.

— Քուռո՛ւկ, մեր մայրը մեր հետևից է գալիս։

Քուռուկն ասաց Կառին.— Եթե ցանկանում ես, դու էլ հետ դարձիր, որպեսզի ես պատճառ չլինեմ քո արյան։ Քո մայրը գալիս, առակներ է ասում, հո ես չե՞մ վերադառնա։

Վարդակը խոսում ե քեռիների մասին

Վարդակն ասաց.
— Քուռո՛ւկ, լա՛վո, արի մի՛ գնա։
Քուռուկն ասաց.
— Մայր իմ, ես կգնամ։
Վարդակն ասաց.
— Որ գնում ես, քո քեռիների
Որպիսությունն ու նշանները քեզ ասեմ։
Արաբների էլում դուք յոթ քեռիներ ունեք,
Նրանց հայրը Հասե Դուզեն է։
Քուռուկն ասաց.
— Մայր իմ, Վարդե,
Մեր գլուխը քեզ մատաղ,

Այս երեսուն տարի է, թե քառասուն,
Չգիտեմ՝ դու երկնքի՞ց ես եկել, թե՞ երկրից,
Մեզ՝ որբերիս բախտավորության համար ես եկել,
Դե ասա, մեր քեռիներն ինչ տեսակ են։
Վարդեն ասաց.
— Ձեր քեռիները յոթն են,
Յոթն էլ Հասե Դուզեի որդիքն են,
Աստծու առյուծների նման են,
Նրանց ձիերը բոզ ճան-ճանի են,
Սըմ կողի են։
Մեյդանի գլխին նրանք կանգնել են
Քանըչորս պայտ գամերի վրա։
Նրանց ականջները նապաստակային են,
Նրանց մեջքերը նման են թաղի թուլաների,
Նրանց պոչը մորակի նման է,
Նրանց թամբերը Մերդինի են,
Նրանց ասպանդակները Հաջիբուբեկի են,
Նրանց փորքաշները Տարաթի են,
Նրանց լկամները Դիարբաքրի են,
Քաղլան մանադի են,
Նրանց մեջքը բարակ է, պոչերը՝ մորակի նման։
Յոթ օր ու գիշեր անխար ու անջուր կարող են մնալ,
Անփորձ ձիավորին մաղում շուրջ կածեն,
Եթե ուշ դնես՝ յոթն էլ իրար նման են։

Նրանց գլխարկները դավաթուկի են,
Նրանց շորերը Համուդի են,
Նրանց արաները Բասրայի են,
Նրանց կոշիկները Մադանի են,
Նրանց նալչաները ֆանարի են,
Նրանց գիդման Բինջաբալի են,
Նրանց շալիկը արաբական է,
Նրանց դըլչակները Մադրումի են,
Առավոտյան վաղ վեր են կենում,
Թև թևի վրա են գցում,
Գետնի փոշին ու հողը բարձրացնում։
Քեզ շուտ նրանց ծանոթացնեմ՝

Եթե աշխարհ, ալամ գա իմ որդիների վրա, չի կարող։
Ասաց.—Մայր իմ, իմ քեռիներն էլի ինչ տեսակ են։
— Լավո, յոթն էլ մի տեսակ են,
Նրանց գլխին արաբական փուշիներ՝ շուրջն ակալ է,
Նրանց փոխկերը երկար են, Շամ-ղուլթնի են,
Նրանց մեջքին պարսկական շալեր են, շալ-Մաղանի են,
Նրանց ղայլանը մեկ օխա Ջամբալի թութուն է վերցնում,
Մեկ անգամից ամբողջովին ծխում են։
Յոթն էլ նման են կապտամեջք գայլերի,
Այդ յոթ եղբայրն էլ հավասար են Արաբական էլի
Վեց հազար մարդուն։
Եթե շուտ ծանոթանաս նրանց հետ, լավո,
Քեզ ոչ մի վնաս չի հասնի։

Նրանց ձեռքի նիզակները Շամի են,
Կոթերը գետնից ամբողջովին հավաքում են։
Եթե շուտ ծանոթանաս նրանց հետ,
Ոչինչ իմ լավոյին չի վնասի։
Նրանց թրերը ջավահրի են,
Նրանց ջավահիրը կավի մեջ մարդկանց շլացնում է,
Նրանք իմ հոր ուրդն ու օջախը պիտի քանդեն,
Նրանք ձեր սիրտն ու ջիգյարը նիզակների ծայրին կվերցնեն։
Եթե դուք ծանոթանաք ձեր քեռիների հետ,
Ձեզ չեն վնասի, իսկ եթե ոչ՝
Այն ժամանակ նրանք ձեզ կվնասեն։
Ասացեք ձեր քեռիներին կռվի ժամանակ՝
«Մենք կանք, դժվար օրերին
Ծառա ենք մեր յոթ քեռիներին»—
Նրանք ձեզ կազատեն անվնաս։
Նորից լսիր, ես քո քեռիների մասին ասեմ՝
Ձեր քեռիները յոթն են
Յոթն էլ Հասե Դուզևի տղաներն են,
Աստծու կրակի նման են,
Նրանք արծվառունգ են,
Աչքերը կապույտ են,
Նրանց շրթունքները ճաքճքված են,
Նրանց ծխամորճները Մառանի են,

Նրաց շորերը Համուղլի են,
Մեկ ու կես թուխտ Սասունի թութուն վերցնում են,
Նրանց կրակը մաֆտից է,
Փետրվարի գայլերի նման
Իրար ձեռքից փախցնում են։
Երբ վերելք են բարձրանում,
Զամբիկներին խթանում են,
Սանձերն իրենց ձեռքն են հավաքում։
Ծանր կռվի տաք օրերին նրանք
Մեծ բանակի համար լինում են ների։
Երբ որ նրանք իրենց թշնամիներին հանդիպում են.
Զորս եղբայր մեյդանում սպասում են,
Երեք եղբայրն էլ իրենց եղբայրների համար
Դառնում են չարխաչի (կռվի հրավիրակ),
Անփորձ ձիավորին խաբում են,
Թիկունք և գիմաց նրանք կապում են,
Իրենց նիզակներով խփում են, ցած են բերում.
Այդպիսի ձիավորի տունն են քանդում։

Զավակներս, ինձնից ձեզ պատվեր՝
Քեռիներին սպանելիս՝
Մի քեռուն չսպանեք,
Թող խալխն ինձ չասի՝
Անտեր-անտիրական է։
Գուլուկն ասում է.— Մայրիկ, դե՛,
Բավական է ինչքան ասացիր,
Դու հալալ արա տան հացը
Եվ աղը, ես գնում եմ։

Վարդակը բարեմաղթեց նրանց և վերադարձավ. Նրանք իրենց ճանապարհը շարունակեցին։

Վարդակը նամակ է գրում

Վարդակը մի հուզիչ նամակ գրեց իր եղբայրներին։ Նրա մեծ եղբայրը Այբաղն էր. Վարդակն այդ նամակով խնդրում էր մեծ եղբորը հսկել իր քեռորդիներին, որոնք գնացել էին այն կողմերը։

Վարդակը նամակը տվեց Թոփալ Մոլլային, ասաց.— Այս նամակը տար տուր իմ եղբայրներին։ Վարդակը գրում է եղբայրներին, թե Քուլուկը գալիս է Բեջան զամբիկին բերելու և խնդրում է Քուլուկի հետևից չընկնել։ «Եթե կհետապնդեք էլ,— գրում է Վարդակը,— դուք մի ճանապարհով գնացեք, թող տղաներն էլ մի այլ ճանապարհով գնան»։

Մոլլան ձին հեծավ, վարձքն առավ ու գնաց։

Գնաց, ճանապարհին մի քրդական գյուղ նրան հանդիպեց. մոլլան նկատեց, որ այդ գյուղում մեկը մեռել է, մոլլա էլ չկա, որ գնա աղոթի։ Երբ գյուղի քրդերը մոլլային տեսան, գնացին ու նրա ձիու սանձից բռնեցին, ասացին. «Մենք էլ հենց մի մոլլայի ենք սպասում, դու էլ մեր բախտից եկար, դե արի աղոթիր այս մեռելի վրա»։

Մոլլան ասաց. «Ես գործ ունեմ, շտապում եմ». այնինչ մոլլան վաղուց էր սիրում Քուլուկի մորը և օրական երկու ժամի չափ ճանապարհ էր գնում, դիտմամբ ուշանում էր, որ Կառն ու Քուլուկն սպանվեն, իսկ ինքը նրանց մորն առնի։

Գյուղի մարդիկ ասացին. «Քո աղոթքի համար շատ փող կտանք, մեռածի շորերն էլ քեզ կտանք»։ Այդ էլ որ ասին, մոլլան ուրախացավ և ձիուց իջավ։

Վարդակը հետապնդում է տղաներին

Վարդակը վեր է կենում, իր մարդու զենքերը կապում, իր մարդու զարդերը վերցնում, գնում է ձիերի գոմը, բարկությունից զամբիկների մեջքին խփում, ոչ մեկը նրա ձեռքի տակ չի դիմանում, միայն մի երեք տարեկան քուռակ մայր Վարդակի ձեռքի տակից բարձրանում է։ Մայր Վարդակն իսկույն Այնթափի թամքը նրա մեջքին է դնում, Կառ ու Քուլուկի ցավից իրան կորցրած՝ քուռակի երկու կողերը ջարդում, ընկնում է տղաների հետևից։

Կառը հետ է դառնում, նայում է Քուլուկին և ասում.— Եղբայր Քուլուկ, մի բարակ մշուշ այն կողմից շարժվում է, կարծես վատ նշան լինի, ավերիչ քամի լինի, հոգեառ հրեշտակ լինի։

Քուլուկն ասում է.— Դու իմ հայր Սլեմանից չես, դու մշուշից էլ ես վախենում, դու իմ հորից չես, ով գիտե, ումից ես։

Քուլուկը նայում, տեսնում է, որ մշուշն արդեն իրենց հա-

սավ։ Բուլուկն ասում է.—Եղբայր Կառ, Հայլոկի գլուխը հետ դարձրու, նրա թամքն ամրացրու, մի երկու գլուխ վազ տուր, այդ ձիավորի վրա քշիր, ասա՝ «Դու բարեկա՞մ ես, թե՞ թշնամի»—իմացիր, վերադարձիր, մենք կկռվենք։

Վարդակը Կառին ասաց.—Այն ձիավորը, որ մինչև այստեղ ձեր ետևից է ընկել, կարո՞ղ է բարեկամ լինել։

Երկուսն էլ հասնում, խփում են իրար։ Վարդակը մի ապտակ է հասցնում Կառին։ Կառը ձիու վրայից գետին է գլորվում։ Կառի աչքերը ներքևից մոր աչքերին են հանդիպում. նա մորը ճանաչում, ասում է.—Մայր, շատ ուրախ եմ, որ դու ես և ոչ թե մի օտար։ Այս ճանապարհի վրա ինձ կսպանեիր, ես անտերանտիրական կկորչեի։

Վարդակն ասաց.—Լավ, ես մի կինարմատ եմ, եթե դուք ինձ չեք կարողանում գլխադրել, հապա ինչպես կարող եք գլխադրել իմ յոթ եղբայրներին։

Բուլուկը վերադառնալով և տեսնելով իր մորը, կռվում, բարկանում, ասում է.—Ի՞նչ ես ագռավի նման կռկռում, մեր հետևից ընկնում, մեր հայրը մեռել է, այժմ ոչ ոք մեզ մարդու տեղ չի դնում։

Վարդակը թախանձագին խնդրում է Բուլուկին հետ դառնալ, բայց նա չի լսում և Վարդակը ճարահատյալ վերադառնում է։

Բուլուկը մոր խրատը չի կատարում

Կառն ու Բուլուկը ձիավորների հետ արդեն բավական ճանապարհ էին գնացել։ Գիշեր-ցերեկ գնում էին, վերջապես մի օր հասան Ղռաջե դարան։ Հետո նրանք էլ իրենց ճանապարհը շարունակեցին, հասան Գրե Բաղալիա և այնտեղ կանգ առան։

Առավոտյան դեմ Սամի քամին բարձրացավ. այծյամները յավշանի թփերի տակից դուրս եկան, փախան։

Նամաթն ասաց,—Բուլուկ, քեզ մատաղ, մի նրանց հետևից ընկնիր։

Բուլուկն ասաց.—Հորեղբայր, ես ինչո՞ւ նրանց հետևից ընկնեմ, դու նրանց հետապնդիր։

Նամաթն ասաց.—Լավ, դո՛ւ ես Սոսըկին հեծել, մենք ինչ ենք հեծել։

Բուլուլն ասաց.—Դու էլ Սոսըկի քրոջն ես հեծել, բացի այդ, իմ մոր պատվերն է, որ այծյամների հետևից չընկնեմ։

Նամաթն ասաց.—Վաղը դու պետք է Փերիշանի հետ ուրախանաս, իսկ մենք ինչո՞վ ուրախանանք, և, բացի դրանից, որբուկ, մեզնից ո՞վ է ծնողներին լսել, որ դու քո մոր ասածով ես շարժվում։

Նամաթի խոսքերը Բուլուլին դուր չեկան։ Ասաց.—Հորեղբայր, դու ինձ վիրավորեցիր։

Բուլուլը վեր կացավ, այծյամին հետապնդեց։ Կավրե չախմախից դուրս բերեց, հետապնդեց դեպի Գըրե Գավ-գավ։ Գըրե Գավ-գավայից դուրս բերեց, հետապնդեց դեպի արանը։ Արանից դուրս բերեց, գնաց դեպի Թառանը։ Թառանից դուրս բերեց, քցեց չիմանները, չիմաններից դուրս բերեց, քցեց ավազուտները։ Ավազուտները փուխր էին, Սոսըկը ոտքերով մեջը խրվեց։ Այծյամը նորից ազատվեց։ Ավազուտներից դուրս եկավ, քշեց դեպի Խեմուր գետը։ Յոթ օր, յոթ գիշեր նրան հետապնդեց, մինչև որսաց։

Արդեն երեկո էր, ճոկանը իր առջից վերցրեց, այծյամը գցեց թամբի վրա, ձին քշեց, եկավ Գոլա Գանիի վրա (Նեխած Լճակի մոտ)։

Եղբայր Կառը Բուլուլին ասաց.—Տունդ քանդվի, վերանընի, դու այդ անասունին սպանեցիր, դու մեր մորը չլսեցիր։

Բուլուլն ասաց.—Կառ ջան, միայն հենց նոր Սոսըկի ականջները քրտնել են։

Նամաթն ասաց.—Տունդ քանդվի, հենց այնտեղից բռնեց բերեց։

Կառն ասաց.—Չէ՞ որ մեր մայրը մեզ պատվիրեց այծյամներին չհետապնդել, դու ինչո՞ւ մեր մոր պատվերը գետին գցեցիր, այծյամին հետապնդեցիր։

Բուլուլն ասաց.—Է՜, եթե այծյամին չհետապնդեմ, եթե նրա մսից չպատրաստեմ իմ նախաճաշն ու ընթրիքը, եթե վաճառականներին չթալանեմ, եթե քաջություններ չանեմ, հապա ի՞նչպես պիտի գնամ վեց հազար տան մեջ, ի՞նչպես պիտի Բեջանին բերեմ։

Բուլուկն ասաց.—Տղաներ, վրանն ամրացրեք․ Ալին Մուսեյանի, դու ինձ համար կերակուր եփիր, Լըքոյե Մըրտըը, դու ցախ հավաքիր, եղբայր Կնա, դու արթուն կաց, ես հոգնել եմ, պիտի քնեմ, հսկիր, որ Սոսըկը չգնա Նեխած Լճակից ջուր չխմի։

Բոլորն էլ քնեցին։

Նամաթը կամաց վեր կացավ, Սոսըկը բաց թողեց, տարավ Նեխած Լճակի մոտ, ինքը կամացուկ վերադարձավ, եկավ, իր տեղում քնեց։

Սոսըկ զամբիկը շատ ջուր խմեց Նեխած Լճակներից։ Նրա փորն ուռավ։ Սոսըկը գետնի վրա փռվեց, ճանճերը հավաքվեցին նրա աչքերի վրա, մի խոսքով՝ Սոսըկը փչասվեց։

Կառը վեր կացավ, տեսավ, որ Սոսըկը ձիերի մեջ չկա։ Այս կողմ վազեց, այն կողմ վազեց, բայց ձիուն չտեսավ, բարձրացավ մի բլուրի վրա, նայեց և նկատեց, որ Սոսըկը Նեխած Լճակի մոտ գետնի վրա փռվել է։ Շտապեց, գնաց Սոսըկի մոտ։ Նկատեց, որ Սոսըկը հիվանդ է, կամաց-կամաց բերեց ձիերի մեջ։

Կառը Բուլուկին վեր կացրեց, ասաց.—Եղբա՛յր իմ, մեր մեջ դավաճան մարդ կա։ Ես Սոսըկին ամուր կապել էի, չգիտեմ՝ ո՞վ է վեր կացել ձիուն տարել Նեխած Լճակի մոտ։ Եկ վերադառնանք։ Դու քո մոր պատվերը չկատարեցիր, աստված մեզ չի օգնի։

Բուլուկն ասաց.—Կառ, մենք ինչպես վերադառնանք տուն. Ամար աղան պիտի ասի՝ «Բուլուկը մի գյադա է, վախից վերադարձավ»։ Մենք այստեղ մի երկու օր սպասենք, գուցե աստված մեր գործը հաջողի, թող Սոսըկն էլ առողջանա, հետո մենք կգնանք կռվի։

Դավաճան Նամաթն ասաց.—Բուլուկը ճիշտ է ասում, մենք այստեղ կսպասենք, մինչև որ Սոսըկը լավանա։

Բուլուկն ասաց Կառին.—Ինչո՞ւ ես տխրում, երեք օր երեք գիշեր ես Սոսըկի մեջքի վրա եմ կռվել, թող կես օր ճանապարհ գնա, կես օր հանգստանա։

Այնտեղ էլ մի գութանահերկ կար։ Բզզոն գլառուն էր, Լոխման հաքիմ էր, նա բերում, ջուր է բաց թողնում այդ գութանահերկ արտի վրա. մի ամբողջ օր, մի ամբողջ գիշեր ջուրը ծծվում է հողի մեջ և այդ գութանահերկը ցեխ է դառնում։ Սոսըկի ականջ-

ներից և ոտքերից արյուն է անում։ Բղդոն Սոսըկին հեծնում, երկու գլուխ Սոսըկին գուլթանահերկի գլխից քշում է, երրորդ անգամ որ շուրջանակի քշում է, Սոսըկն իր ձագարաձև սմբակներով հողը գետնի տակից բարձրացնում է։ Բուլուկը թույլ չի տալիս, որ չորրորդ, հինգերորդ անգամն էլ քշի, որով Սոսըկի սրտի ամբողջ ցավը դուրս կգար։ Ասաց.— Բղդո, բավական է, իմ Սոսըկին այնքան էլ մի հոգնեցնիր, նրա ցավն արդեն դուրս եկավ։ Բղդոն ինչքան էլ ուզում է քշել, բայց Բուլուկը թույլ չի տալիս։

Հետո Բուլուկը վեր կացավ, Սոսըկին թամբեց, հեծավ, գցեց գուլթանահերկ արտի մեջ։ Մի մեյդանով Սոսըկն անցավ մյուս կողմը, իսկ վերջին մեյդանի ժամանակ կանգ առավ։ Այդ ժամանակ Կառն ասաց.

Իմ եղբոր քոլոզի շարը
Վրայից սահեց, ընկավ։
Եղբայր, ծամը կտրած Վարդակը խելոք էր,
Երկու առյուծներից ոչ մեկը չի ազատվի։

Բուլուկն ասաց Կառոյին.

Դու խելք էլ մի մտահոգվիր,
Երեք օր ու երեք գիշեր
Սոսըկի մեջքի վրա կռվել եմ,
Թող կես օր գնա, կես օր հանգստանա։
Էլի քո եղբայրը քեզ համար կմնա։

Այնուհետև, վաղ առավոտյան Բուլուկը վեր կացավ, ձին հեծավ, քշեց բլրակի գլուխը, նայեց անապատին, նայեց, տեսավ՝ ճանապարհը վերջանում է, արդեն հասել են։ Վերադարձավ իր ընկերների մոտ, ասաց.— Հորեղբայր Բղդո, դու այստեղից շատ ես գնացել-եկել, մի արի հեծի, մենք գնանք բլրակի գլուխը, նայենք՝ մի մեծ ստվեր է երևում, Հալեբ քաղաքն է նմանվում, չլինի՞ թե իմ քեռիների վրաններն են։

Բղդոն ասաց.— Այո՛, այո՛, Բուլուկ, քո քեռիների վրաններն են։ Բուլուկ, եթե դու գնաս, բարձրանաս այն բլրակը, կհոգնես։ Այն բլրակից քո ողորմած հերը մի նապաստակ դուրս բերեց, իր զամբիկը քշեց վրան, նապաստակը գետնից վերցրեց, գցեց թամբի վրա, վերցրեց բերեց։ Ես այն ժամանակ 22 տարեկան էի,

քո հոր հետ էի։ Այդ բլրակը՝ Հայլիի բլրակն է։ Որդյակս, այդ օրը մենք կես գիշերին հարձակվեցինք Ալխավանե Կիկլի օբայի վրա։ Ես էի, քո հերը և Դալի-ղարդաշը։ Մենք քո մորն օբայից հանեցինք, փախցրինք. ես այն ժամանակ 22 տարեկան էի, հիմա ծերացել եմ, դե հիմա հաշվիր։ Բուլուկ, դու էլ քաջ ես, այսօր քո հերոսությունը պիտի տեսնեմ։

Մի քանի օր մնացին, հետո ձիերը հեծան, գնացին հասան Թումար սարին, տեսան, որ արաբների էլն արդեն այնտեղ է, ոչ սկիզբն է երևում, ոչ վերջը, մի ձորակում իջան և մնացին մինչև առավոտ։

Առավոտյան Բուլուկը վեր կացավ, եղբայր Կառին ասաց. «Եղբայր, դուք այստեղ սպասեցեք, ես գնամ արաբների վրանները տեսնեմ»։ Բուլուկը վեր կացավ, ոտքով գնաց արաբական էլի մեջ. մի պառավի դռան մոտ կանգնեց, ասաց.—Պառավ, մի բաժակ թան տուր ինձ։

Պառավն էլ մի չերեփ վերցրեց, Բուլուկի գլխին խփեց, ասաց.—Այստեղից կորիր, հո դու էլ չեղա՞ր Բուլուկն Սլեմին, ինձնից թան ես ուզում, գնա Արաբե Գեսիի վրանը, հացն էլ կտան քեզ, թան էլ։

Բուլուկն այնտեղից գնաց դեպի Արաբե Գեսիի վրանը։ Արաբե Գեսին (արաբական միր) էլի աղան էր, մի կողմը դհոլ էր, մյուս կողմը՝ զուռնա, ուրախության մեջ էին. Բուլուկն այնտեղ մի ժամ սպասեց, բայց տեսնելով, որ ոչ ոք իր վրա ուշադրություն չի դարձնում, վեր կացավ, եկավ իր եղբայր Կառի մոտ։

Կառը Բուլուկին ասաց.—Եղբայր, դու արաբական վրանները գնացիր, ինչ կար այնտեղ, ինչ չկար։

Բուլուկն ասաց.—Եղբայր, ես գնացի մի պառավի վրանի առաջ կանգնեցի, ծարավ էի, նրանից թան ուզեցի։ Պառավը վեր կացավ, ասաց. «Դե կորիր, հո դու էլ Բուլուկն Սլեմանին չես, որ թան տամ, գնա արաբական վրանը, այնտեղ ուրախություն է, հարսանիք է, ամեն ինչ կա»։

Ես գնացի դեպի Արաբե Գեսիի վրանները, այնտեղ դահուլ-զուռնա, հարսանիք կար։ Ես մի ժամից ավելի կանգնեցի, ոչ ոք ինձ ուշադրություն չդարձրեց, ոչ ոք ինձանից մի բան չհարցրեց, ես էլ վերադարձա, եկա։

Կառոն տկլոր ուղտեր է բերում

Երեկոյան, երբ մութը վրա հասավ, Բուլուկն ասաց.—Կառ, վեր կաց, ձին հեծիր, գնա ման արի, գուցե մի երամակ սևալանջ ուղտեր գտնես, բերես:

Կառը ձին հեծավ, քշեց, բարձրացավ բլրի գլուխը, այնտեղից նայեց վրաններին: Արաբե Գեսիի էլը մեծ էր: Ասաց.—Վալլա, ես չեմ կարող: Չհամարձակվեց, հետ դարձավ: Չորս կողմը նայեց, տեսավ՝ մի երամակ ուղտեր են արածում այնտեղ:

Արաբների միրը մոխրագույն ուղտերն ազատել, թողել էր, որ նրանք մարգագետիններում արածեն: Կառը ուղտերը գցեց նիզակների առաջ, քշեց, բերեց: Նրանց ձայնը երկինքն էր հասնում:

Բուլուկը երբ այս տեսավ, ասաց.—Կառ, տունդ չքանդվի, այս ինչ ուղտեր են, դու մեր մոր պատվերը հողին հավասարեցրիր: Եղբայր, չէ՞ որ ես քեզ ասեցի սևալանջ ուղտեր բերես, դու այս ուղտերն ինչու ես բերել, սրանք անիծված են:

Կառն ասաց.—Արաբե Գեսիի էլը մեծ էր, ես ինչպես կարող էի գնալ նրա առաջ:

Բուլուկը մի սուր հայացք գցեց եղբայր Կառի վրա և ասաց.—Դու իմ հորից չես, այս ինչ ուղտեր են, որ դու բերել ես, դու նախիրներ բերեիր, հոտեր բերեիր, ձիերի երամակներ բերեիր, որպեսզի ձիավորները մեզ հետապնդեին, և մենք այդ միջոցին կարողանայինք Բեջանին ձեռք գցել:

Բուլուկը հարձակվում է վաճառականի վրա

Բուլուկը Սուրկին քաշեց, մի անգամ խթանեց, տասներկու հոդ ունեցող նիզակը վերցրեց, դրեց իր առջև, գոռաց, ինչպես ապրիլ ամսվա ամպերն են որոտում, այդպես էլ Սուրկին խթանեց ու գնաց:

Գնաց հասավ մի ձորակի, տեսավ մի քարավան է գալիս: Բուլուկն ասաց.—Տղա, էդ ինչ ուղտեր են:

Քարավանապետն ասաց.—Ի՞նչ է, դու կույր ես, դու էլի՞ց չես, էս կյանքի՞ց չես, դու չգիտե՞ս այս ինչ քարավան է: Սրանք իմ աղայի ուղտերն են, նրանց բեռներն էլ՝ իմ աղայի աղջկա

օժիտը։ Ես Էրզրումից եմ գալիս։ Այս քարավանը գդալներ և շաքարի գլուխներ է բերում՝ արաբական միրի աղջկա և Հասե Դուղեի տղայի նշանդրեքի համար։

Քուլուկն ասաց.—Լավ, այդպես մի՛ ասիր, ասա և՛ շաքար է, և՛ գդալներ, մենք տանում ենք Քուլուկն Սլեմանի և Փերիշանի շիրանին (նշանդրեքին)։

Քարավանապետն ասաց.—Դու քեզ կորցրե՞լ ես, ինչ է։

Քուլուկն Սլեմանին հարձակվեց քարավանապետի վրա, սպանեց նրան, իսկ մյուսները, բացի մի ուղտապանից, վախից գոռացին, փախան սարը։

Քուլուկն Սլեմանը քարավանը քշեց բերեց, ուղտապանին էլ հետը։

— Կառ եղբայր,—ասաց Քուլուկը,—մարդ այսպես թալան կբերի։ Ահա թե հերոս մարդիկ ինչպես են։

Կառն նրան պատասխանեց.—Ցալաքը քեզ բարեկամ է։

Քուլուկը ձիուց իջավ, գնաց իր վրանը և այնտեղ նստեց։

Քուլուկը լուր է ուղարկում միրին

Քուլուկը ուղտապանին կանչեց, ասաց.—Երիտասարդ, ես քեզ չեմ սպանում, որ կատարես իմ այս պատվերը։ Գնա Արաբե Գեսիին ասա, որ Կառ ու Քուլուկն Սլեմանին արդեն Կովրե Զախմախան են եկել՝ Թառեշի դարայի մոտ։ Ասա Քուլուկն ասում է՝ ես գիշերով եկա նրա տունը, գնդակ դրեցի նրա կրծքի վրա, ես նրա ուղտերի քարավանը տարա, նրա քարավանը թալանեցի, քարավանապետին սպանեցի, Բեջանին էլ կտանեմ, դու վեց հազար տան աղա ես, եթե կարողություն ունես, արի ես և դու կռվենք։

Ծառան եկավ գնաց։

Արաբե Գեսին տավլոտյան վեր կացավ, գնաց, որպեսզի նամազ անի։ Նայեց, տեսավ՝ ուղտապանը ներքևից գալիս է, ասաց.—Տղա, ինչ կա։

Ասաց.—Աղա, Կառի ու Քուլուկի ավազակախումբը եկավ մեր առաջը կտրեց, մեզ թալանեց։

Միրն ասաց.—Կառ ու Քուլուկի անունն էլ չասես, ասա ավազակները տարան։

Ամբողջ էլը տագնապի մեջ ընկավ։

Բուլուկը պատրաստվում է Բեջանին բերելու

Արդեն առավոտ էր։ Արևը ծագեց։ Բուլուկը նայեց, տեսավ՝ մեկը մի ձի է բերում ջուր տալու։ Բուլուկն ասաց.—Կառո, վեր կաց, գնա մի տես՝ այդ ինչ ձի է։ Լավ ձի է երևում, նրա ձեռքից վերցրու բեր։

Կառն ասաց Բուլուկին.—Ինչու, ես թռչուն եմ, որ այդ ծովի վրայից թռչեմ։

Բուլուկն ասաց Կառոյին.—Դու ջրի առվակները ծով ես համարում, դու Սլեմանի զավակը չես։ Դու ձին տուր եղբորդ, ես կհեծնեմ։

Բուլուկը հեծավ։

Բուլուկը հանդիպում է Վալոյին

Վալոն արաբների միրի քրոջ որդին էր։ Արաբների միրից նա խռովել, ելել էր, անցել էր գետի մյուս կողմը։

Բուլուկը հեծավ, քշեց, գնաց կանգնեց նրա վրանի առջև։ Վալոյի կինը տիկ էր հարում։ Բուլուկն ասաց.—Քույրիկ, մի քիչ մածնաթան տուր խմեմ։

Վալոն վերմակի տակից նրան էր նայում։ Վալոյի կինը մածնաթան տվեց Բուլուկին։ Բուլուկը խմեց, շնորհակալ եղավ նրանից, գնաց։

Վալոյի կինն ասաց ամուսնուն.—Դա Բուլուկե Սլեմին է, որ ասում են, դա Բուլուկե Սլեմինն է։

Վալոն ասաց.—Սուս կաց, աղջի։ Բուլուկե Սլեմին եթե գիտենա, որ մենք արաբական միրի բարեկամն ենք, կգա մեզ կսպանի։

Բուլուկը Բեջանին բերում է

Բուլուկը քշեց, գնաց։

Բալո, առավոտը կանուխ
Բուլուկը Խեմուր գետի ափին մի աղբյուրի մոտ իջավ,
Նայեց, տեսավ մի հարս այն կողմից եկավ։
Ասաց.—Քույրիկ, արի լինենք քույր ու եղբայր։
Ասաց.—Դու ինչ ես ուզում հարցնել։
Ասաց.—Արաբի Գեսիի Բեջանն ինչ նշաններ ունի։

Ասաց.—Քառասուն քեհլանների մեջ Բեջանն առանձին է։
Նրա ոտքերը կողպեքով ամրացված են,
Բանալին պահվում է միրի աղջկա դոշակի տակ,
Օրը մի անգամ կողպեքը բացում,
Բերում է ջրելու.
Նրա ջուր խմելու ամանն արծաթից է,
Բերում է աղբյուրի վրա ջրում և էլի տանում։

Քուլուկը նայեց, շնորհակալություն հայտնեց նրան, քշեց գնաց գետի մոտ։ Ասաց այն մարդուն, որը ձին բերել էր գետի մոտ.—Քեռօղլի, գետի հունը որտեղից է։

Այն մարդն էլ ասաց.—Հորեղբայր, ինչո՞ւ, դու էլից չես, էս կյանքի՞ց չես։

Ասաց.—Վալլա, լավ, ես էլից եմ ու տոհմից եմ, որ Քուլուկի ավազակախումբը միրի քարավանին խփել է տարել, այս երեք օր ու երեք գիշեր է իմ աչքերը պատել են մութ ու մշուշ։ Ես մոլորվել եմ, չգիտեմ՝ որտեղ է հունը։

Նա էլ Քուլուկին ասաց.—Ճիշտ այդպես է, քո ասածն է։

Ասում են՝ Կառի ու Քուլուկի ավազակախումբը դուրս է եկել Կավրե Զախմախան։ Ես դամբիկը բերել եմ ջրեմ, մի քիչ գարի կտանք, հետո կհեծնենք ու ավազակախմբին կհետապնդենք։

Քուլուկն ասաց.—Եթե այս ջուրը ծանծաղ լինի, կարո՞ղ եմ անցնել։

Այն մարդն ասաց.—Հունը հրե՜ն, վերևումն է, բայց, վալլա, քու գրաստը մեծ է, կարող է անցնել հենց այստեղից։

Քուլուկն Սլեմին վիրավորվեց, սանձը ձիու բերանից հանեց, ասաց՝ մինչև ես գնամ այնտեղ, նա ձին կփախցնի։

Քուլուկը ձին քշեց ջրի մեջ։ Ձին անցավ ջուրը և դուրս եկավ մյուս ափը։ Ասաց.—Տղա՛, այս ի՞նչ ձի է։

Մի անգամ էլ տղան ասաց.—Հորեղբայր, ի՞նչ է, դու էլի՞ց չես, էս կյանքի՞ց չես։

Ասաց.—Լավ, էլից եմ։

Տղան ասաց.—Սա Բեջան դամբիկն է։

Քուլուկն ասաց.—Տղա՛, սուտ մի՛ խոսիր, սա Բեջան դամբիկը չէ։

Բեջան զամբիկը քաֆալ զամանով է,
Կողպեքով է, մետաքսե շապիկով է:

Պուլուկը մեկ անգամ էլ ասաց.— Բեջան զամբիկն արաբական միրի աղջիկն է բերում ջրելու:

Տղան ասաց Պուլուկին.— Այս գիշեր հարսանիք էր: Արաբ միրի աղջիկը հարսանիքից եկել, քնած էր մնացել, չուզեցին քնից վեր կացնել, այդ պատճառով ես վերցրի բերի ջրելու:

Պուլուկն ասաց,— Եթե դու սուտ չես ասում, մի նրա կողպեքը բաց արա:

Բացեց:

Պուլուկը նայեց, համոզվեց, որ իսկապես Բեջան զամբիկն է, ասաց.— Ձի՞ լինի մի հեծնեմ, տեսնեմ՝ նրա քայլվածքն ինչպես է:

Երիտասարդն ասաց.— Այդ անհնարին է, երբեք չի լինի:

Երբ երիտասարդն այս ասաց, քիչ մնաց Պուլուկը զայրույթից պայթի. երիտասարդը նոր միայն գլխի ընկավ, որ իր հետ խոսողը հենց ինքը՝ Պուլուկն է: Երիտասարդն ուզեց Բեջանին հեծնել ու փախչել, բայց Պուլուկը չթողեց:

Պուլուկը հետ դառավ, ասաց.— Ես քո և Արաբե Դևի հերը... Բեջանին ո՞ւր ես փախցնում: Պուլուկը Բեջանին երիտասարդի ձեռքից խլեց: Նրա ատամներից երկուսը հանեց խփեց ճակատին, ասաց.— Ես Պուլուկե Սլեմինն եմ: Գնա ասա արաբների միրին՝ ես նրա հերը կանիծեմ, մարդիկ նրա համար չորս բեռ թեփ են թողել աշխարհի վրա: Սուրըկը հիվանդացել է, թե չէ ես պիտի գայի նրա վրանի մոտ, պիտի թափ առնեի և նիզակս նրա կուրծքը խրեի, ես հենց այնտեղ էլ Բեջան զամբիկը պետք է խլեի: Ասա արաբների միրին, որ մենք Հարավյա աղբյուրումն ենք գտնվում: Եթե կգա, թող մեծ բանակով գա: Գնա պատմիր քո միրին ինչ որ տեսար, Պուլուկե Սլեմին ես եմ:

Այս անելուց հետո Պուլուկը Բեջանին փախցրեց, բերեց: Եկավ Կարի մոտ, ասաց.— Ահա քեզ Բեջանը:

Ջիպանը գնաց, արաբների միրի մոտ կանգնեց. երկու ձեռք դառուլ-զուռնա արաբների վրանի առջև խփում էին, մեծ հարսանիք էր, բոլորը պարում էին:

Ջիպանն էլ վախից առանց այլեայլության պոչից բռնեց, պարեց և իրեն համար ողբերգում էր մինչև ուշ երեկո:

Ջիրապանի ճակատին երկու ատամները ինչպես երկու ճրագ փայլում էին։ Մի մարդ նրան տեսնում, ասում է.—Ջիրապան, տնաքանդ, այդ ինչ օրի ես հասել։

Ասաց.—Եղբայր, այսօր ինձ մի մարդ հանդիպեց, աստծու կրակի էր նման, ինձ հանդիպեց, Բեջանին խլեց իմ ձեռքից, երկու ատամս էլ հանեց, ճակատիս ամրացրեց։

Գուլուկն ուզում է կռվել

Կառն ասաց եղբորը.—Մենք Մըլի Ամար աղայի ուզածը բերել ենք։ Եկ վերադառնանք, քանի դեռ արաբների միրի էլը մեր հետևից չի ընկել, մեզ չի ոչնչացրել, եղբայր Գուլուկ, մենք Բեջանի համար էինք եկել, նրան էլ բերինք, պետք է մենք վերադառնանք։

Գուլուկը նորից վեր կացավ ու ասաց Կառին.—Դու իմ հորից չես, ո՞վ գիտե իմ մայրը քեզ ինչ վանքի մացառի տակ է հղիացել։ Մինչև այստեղ մի մեծ կռիվ չսարքեմ, երբեք երեսս չեմ դարձնի դեպի Մըլի Ամար աղայի էլը։ Ո՛չ, թող խալխը չասի, թե՝ շունն էլ դաղտնի մտնում է մառանը և մորթի փախցնում։ Վալլահ, աստծու անունով, մինչև որ ես մի կռիվ չսարքեմ, այս հող ու ջրից որևէ տեղ չեմ գնա։ Դու իմ եղբայրը չես, Կառ, քեզնից աղամարդ դուրս չի գա, մինչև որ ես Արաբե Գեսիին չսպանեմ, այստեղից չեմ գնա։

Մի պառավ կին հանդիպում է Գուլուկին

Առավոտ էր արդեն։
Մի արաբ պառավ կին, երեսն անլվա,
Հայրը բորոտ, մայրը կորած, ասաց.
— Գուլուկ, լավո, դու խև ես,
Գուլուկ, լավո, դու ծուռ ես,
Եթե դու երկու հազար ձիավոր էլ հաղթես,
Սենջար լեռան խփես՝
Հազար յոթ հարյուր ձիավորի գլուխ թռցնես,
Այն ցանկությունը, որ դու ունիս՝
Երբեք գլուխ չես բերի,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։

Արաբե Գեսիի նամակը

Բալո, արդեն լուսադեմ էր,
Արաբե Գեսին մի նամակ է գրել,
Ուղարկել է Հասե Դուգեին.
«Խեմուր գետում մի ձիավոր է երևացել,
Կայծակի քամի է, տղամարդկանց արմատը կորեց,
Պատիվը որ կա, աստծու համար է»։
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Բալո, արդեն լուսադեմ էր.
Հասե Դուգեի որդիները
Տների տանիքների վրա գնում-գալիս են,
Մեծ եղբայրը փոքրին կանչել է.
— Թռչունը որ թռչուն է,
Մեր սահմանով չի անցնի,
Գնա առաջ,
Եթե այդ ձիավորը տագնապի ձիավոր է,
Ինձ նամակ բեր,
Եթե կռվի ձիավոր է,
Գլուխը Թռցրու բեր,
Հա՜յ վի՜, վի՜, վի՜։

Փոքրիկն այդ ժամանակ ընդառաջ է գնացել,
Նայել է, տեսել, որ մի կին է,
Նամակը ձեռքումն է,
Եվ նամակի մեջ գրված է.
«Խեմուր գետում մի ձիավոր է երևացել,
Ոչ ոք չգիտի՝ հոգեառ հրեշտակն է,
Կայծակի՞ քամին է, թե՞ կարկտի երակն է,
Մեր մարդկանց արմատը կորել է,
Պատիվը որ կա, աստծու համար է»։
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։

Զորքը գալիս է եղբայրների վրա

Միրն այնտեղ տագնապի թմբուկ զարկեց, ասաց.—Հեծեք ձիերը, ընկնենք ավազակների հետևից։

Արաբների միրի զորքը Հասն Դուզնի որդիների հետ դուրս եկավ։ Նրանց զորքն եկավ՝ վեց հազարի չափ։

Բուլուկը նայեց, տեսավ՝ մեծ զորք է գալիս. բոլոր մեր-խաս (քաջ), ձիավարժ հեծյալները, նիզակ խաղացողները և մի են հավաքվել։ Նրանք Կառ ու Բուլուկի հետևից ընկան։ Աղբյուր-ների մոտ, ճակատ կազմած, իրար մոտեցան։ Կառն ասաց Բու-լուկին.—Բեջանին հեծիր և ապա կռվիր, ես գիտեմ՝ Սուրկը Նե-խած Լճակներից ջուր է խմել, նա մեզ կանպատվի։

Բուլուկն ասաց.—Ես վեր կենամ, ուրիշի ձիով քաջություն-ներ անեմ, որ լուր գնա Մըլլի Ամար աղայի էլը, ասեն, թե քաջու-թյունը նրանցը չէր, նրանք Բեջան ձիով փախան եկան։ Ես կսպանվեմ, բայց երբեք պատերազմի դաշտից չեմ փախչի։ Արու-գառը դանակի համար է։

Եղբայրները պատրաստվում են կռվի

Բուլուկը Սուրկի թամբն ամրացրեց, մարտական շորեր հագավ, տասներկու հոգանի նիզակը վերցրեց դրեց իր աջև, թամբի վրա, Բոսամորի թուրը կապեց մեջքին, վահանը գցեց թիկունքին, աստծուն ու տղամարդկանց աղոթեց, հեծավ, մի քանի անգամ ձին փորձեց, անցավ պատերազմի ճակատը։

Կառը Բուլուկին ասաց.

— Դու հասկացմ՞ր՝ մենք ինչ մեծ հանցանք
գործեցինք։
Հա՜յ ձորեր, հա՜յ, հա՜յ ձորեր,
Հասն Դուզնի որդիների զորքը
Եկավ քարերով ու հողերով,
Թող Վարդակը չսպասի, որ
Մեկն առյուծներից վերադառնա։

Բուլուկն ասաց Կառին.

— Ես Բուլուկն եմ, Բուլուկն Սլեմին եմ,
Ես երդվել եմ ու վստահ եմ,
Ես երեք օր, երեք գիշեր
Նրանց մեջ կկռվեմ,
Թող աստված ու մարդիկ գիտենան՝

Քո եղբոր սպանությունը կա՞,
Բայց նրա փախուստը չկա։
Հա՜յ վի՜, վի՛, հա՜յ վի՜, վի՛։

Կառն ասաց.

— Ես Կառն եմ, ես եմ, էլի ես եմ,
Ես երդվել եմ իմ եղբոր գլխովը,
Կսպանվեմ՝ ոչ կփախչեմ, ոչ կվազեմ,
Ներքևի անապատի չորս կրծքանի
Առյուծն էլի ես եմ.
Վերջիվերջո Հասան Դուզնի յոթ որդիների
Դահիճն էլի ես եմ։

Կառն ասաց Քուլուկին.

— Արի մի մեյդան տուր Սոսըկին,
Տեսնենք՝ ինչպես կլինի։
Քուլուկը մի մեյդան տվեց Սոսըկին,
Սոսըկը Քուլուկի տակ շնչահատ եղավ։

Կառն ասաց.

— Քանի դեռ Ֆալաքը բարեկամ էր,
Սոսըկը Քուլուկի տակ թռչում էր,
Ֆալաքը երես շրջեց,
Սոսըկը իմ եղբոր տակ ձնավեց։

Քուլուկն ասաց Կառին.

Ես երեք օր ու երեք գիշեր
Սոսըկի մեջքի վրա եմ կռվել,
Դու իսկի էլ մի՛ մտահոգվիր։

Կառն ու Քուլուկը չեն ուզում քեռիների դեմ կռվել

Քուլուկն ընկավ քեռիների կողմը, բայց քեռիները և քեռորդիները դեռ իրար չէին ճանաչում։ Երբ Քուլուկը նիզակները քեռիներին էր ուղղում, բոլորին ի մի էր հավաքում, բայց երբ քեռիները հարձակվում էին Քուլուկի վրա, Քուլուկը, ինչպես

բաղե, նրանց ձեռքից ազատվում էր. ոչ ոք չէր կարող նրա փոշուն անգամ հասնել։

Կառը գնաց Բուլուկի մոտ, ասաց.—Չլինի՞ թե դու մեր քեռիներին չես ճանաչում, սրանք մեր յոթ քեռիներն են։ Չէ՞ որ մեր մայր Վարդեն նրանց նշանների մասին մեզ ասաց՝ լոկ և լոկ սրանք են։ Չլինի՞ թե դու նրանց վնաս տաս։ Ապա Կառն ասաց.

Եղբայր Բուլուկ,
Սրանք Հասե Դուդեի յոթ որդիներն են,
Յոթ կապտամեջք գայլեր են,
Նրանց շորերը Մաղանի են,
Նրանց կոշիկները չարկազի են,
Նրանց ձիերը բարակ մեջք ունեն,
Մտրակի պես պոչ ունեն։
Մուշի գերանները նրանց ծխամորճերն են,
Ծխելու համար իրար ձեռքից փախցնում են,
Մինչև վերջինին է հասնում հերթը,
Արդեն վերջացնում է։

Կառը շտապ մոտեցավ քեռիներին և սկսեց նրանց գովաբանել, ասաց.—

Մենք որ կանք, Վարդակի որդիներն ենք,
Դժվար օրերին մենք ծառա ենք մեր քեռիներին։

Մեր քեռիները մեր գլխի թագն են,
Մեզ կազատեն անվնաս, մեզ
Կուղարկեն մեր մոր՝ Վարդակի մոտ։

Քեռիները նոր միայն իմացան, որ այս երկուսը քույր Վարդակի զավակներն են։ Քեռիներն իրար ասացին.—Թող ցրվեն։ Բեջանը նրանց հալալ լինի, բայց փոքրիկ քեռին չհնազանդվեց, ասաց.—Ո՞վ գիտե՝ նրանք ովքեր են, ասում են՝ մենք ձեր քրոջ որդիներն ենք, շատ էլ Վարդակի անունը լսել են, այդ երբեք չի լինի և չի կարող լինել. ես քաջության անունը չեմ գցի։ Պատիվը որ կա, աստծու անունով է։ Եղբայրների խորհուրդը չընդունեց, քաջության անունը չգցեց, քշեց Կառի ու Բուլուկի վրա, քրոջ տղաներին չճանաչեց։

Նազարի սուր նիզակը ճոճում էր քրոջ որդիների վրա։ Քեռորդիներն էլ խուսափելով՝ ազատվում էին, չէին ուզում, որ քեռու և քեռորդիների միջև թշնամություն լինի։

Բուլուկը վիրավորվում է

Բուլուկը միայնակ էր։ Փոքրիկ քեռին հոգով ու սրտով ցանկանում էր քաջություն գործել, անուն հանել, արյուն թափել։ Բուլուկն իր ձիուն խթանեց, քշեց քեռիների վրա։ Աստծու կամքով յոթն էլ նրա առջևից փախան։ Բուլուկը նրանց հետապնդեց։ Ինքն իրեն ասում էր.— Ես յոթին էլ կբռնեմ, նրանց ձեռքն ու ոտքը կկապեմ, հետո էլ կասեմ՝ ես ձեր քեռորդին եմ։

Քեռիները փախան, բայց շուտով դեմ առան մի հեղեղատի. նրանց ձիերը հեղեղատի վրայով թռան։ Սոսըկը Նեխած Լճակներից ջուր էր խմել—հեղեղատից չկարողացավ թռչել, ընկավ հենց մեջ տեղը։

Սոսըկը տիղմում թաղվեց, այլևս չկարողացավ դուրս գալ հեղեղատից։

Փոքրիկ քեռին իր քրոջ որդուն չճանաչեց. նիզակի երկու հարված հասցրեց Բուլուկի թիկունքին։ Բուլուկը Ջուդի լեռան նման Սոսըկի մեջքից ընկավ ցած ու հառաչեց, հառաչեց, ասաց.— Խնայված հարվածը տիրոջն է դառնում, ես չգիտեի, որ քեռիներս ինձ թշնամություն պիտի անեն։ Ո՛վ դուք, Հասե Դուդեի զավակներ, Խեմուր գետը ոլորապտույտ է, ձեր բախտը ժպտաց, Սոսըկի գլուխը փետացել է, ոտքերը երկանք են դառել, շնորհալի Սոսըկն ինձ օգուտ չբերեց, դուք ինձ սպանեցիք, չէ՞ որ ես ձեր քրոջ որդին եմ, Բուլուկն եմ։

Քեռիները նոր միայն հավատացին, որ այդ երկուսն էլ իրենց քույր Վարդակի որդիներն են։ Այդ ժամանակ Բուլուկին վերցրին, դրեցին ծառի ստվերում, իրենք էլ հավաքվեցին Բուլուկի շուրջը և սկսեցին նայել գեղեցկությանը։

Հա՜յ վի՛, վի՛, հա՜յ վի՛, վի՛։

Հասե Դուդեի տղաներն ասում են.— Վալլա, քեռիներն ու քեռորդիներն են։

Այդ ժամանակ մոլլան էլ Վարդակի նամակը բերում, տալիս է Այբաղին. Այբաղը նամակը կարդում, տեսնում է, որ Վար-

դակն արցունքի ջրով է գրել, ասում է.— Մոլլա, անիծված, նամակը բերում էիր, շուտ բերեիր։

Վեր կացան մոլլայի գլուխը թռցրին։

Նամաթի վատությունը

Զորքը տեսնելով, թե ինչպես Բուլուկը յոթ կտրիճներին փախցրեց, փախուստի դիմեց։ Կառն ընկավ զորքի հետևից և ամեն անգամ մի քանի մարդ էր սպանում։

Նամաթն էլ, երբ բլուրի վրայից տեսավ, որ Բուլուկն ընկավ, զորքը փախչում է, նոր միայն ասաց.— Գնանք Կառին ու Բուլուկին օգնենք։

Եկան Կառի մոտ, ասացին.

— Ո՞ւր է Բուլուկը։

Կառն ասաց.— Ես կռվով տարվեցի, չգիտեմ՝ Բուլուկն ուր գնաց։

Գնացին տեսան՝ Բուլուկը ձիու վրայից գետին է ընկել. գլուխը դրել է գետնի վրա, չի շարժվում։

Աշխարհը Կառի գլխին շուռ եկավ։ Բշեց եկավ եղբայր Բուլուկի մոտ, տեսավ, որ խորը հառաչում, զառանցում և Վարդակին է հիշում։

Կառն ասաց.— Բուլուկ, եղբայր, այս ի՞նչ բերիր քո գլխին, ինձ ամոթով թողեցիր թշնամիների մոտ։ Կառը Բուլուկին բարձրացրեց, դրեց մի բարձր տեղ, ասաց.— Եղբայր Բուլուկ, դե հիմա դու տես, թե ինչ եմ անելու։

Կառի կռիվը քեռիների հետ

Կառն այլևս քեռի չհարցրեց։ Կատաղած գայլի նման քեռիների մեջն ընկավ. հենց որ նիզակն ուղղում էր, ամեն անգամ քեռիներից մինը ձիուց գլորվում էր, նրա մարմինը գրողի ծոցն էր ուղարկվում։ Նա չթողեց, որ քեռիներից մեկնումեկը ողջ վերադառնա Արաբական էլը։ Կառը մեկ էլ նկատեց, որ կռվի դաշտում այլևս մարդ չկա, մնացել է միայն քեռիներից մեկը, նա էլ դեպի արաբական միրի էլն է փախչում։ Կառը հարձակվեց նրա վրա, ողջ-ողջ բռնեց նրան։ Նրա ձեռքերն ու ականջները կտրեց, հետո միայն ազատեց իր մոր սիրուն։ Այդ մեկ քեռուն չսպանեց, որպեսզի իր քեռիների սերունդը երկրի երեսից չջնջվի։

Կառը վերադարձավ Տուլուկի մոտ և ասաց.— Եղբայր իմ Տուլուկ, բոլորովին չմտածես, եղբայրդ քո վրեժն իր ձեռքով առավ։ Յոթ քեռիներից միայն մեկին ազատեցի, այն էլ մայր Վարդակի սիրուն. Նրա ձեռքերն ու ականջները կտրեցի։ Ես նրան չսպանեցի, որպեսզի նրանց սերունդը միրի արաբի էլաթում չջնջվի։ Եղբայր Տուլուկ, դե հիմա ասա՝ ով է քաջը։

Տուլուկն ասաց.— Եղբայր Կառ,
Երբ փալաքն ինձ բարեկամ էր,
Սուրկն իմ տակ թռչում էր,
Երբ փալաքը երես շրջեց,
Սուրկն իմ տակ անվստահելի էր։

Այս կողմ, հա՜, այս կողմ,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜.
Եղբայր Կառն ընկել էր նրանց մեջ,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,
Ա՛յ տնքանդ, դու ինչո՞ւ ինձ համար չթողիր մի քեռի,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։

Եղբայր Կառն ընկավ զորքի մեջ՝ մենակ նա ողջ մնաց, որ իր տնից դուրս չէր եկել. եկողների արմատը ջնջեց։ Այդ ժամանակ Կառը եկավ, ասաց.— Եղբայր Տուլուկ, ինչ վերք ես ստացել։

Տուլուկն ասաց.

Խեմուր գետը հորձանքոտ է,
Սուրկի գլուխը դառել է փայտ,
Սուրկի ոտքերն են երկանք կտրել,
Բախտը նրանց ժպտաց,
Սուրկը իմ տակ ոչ մի օգուտ չբերեց։
Զգիտեմ՝ նրանց ձեռքերը
Տամոտ էր, թե ջերմոտ,
Վեց հարված ինձ հասցրին։

Կառն ասաց.

Եղբայր, ես այդ քեզ չեմ հարցնում։

Բուլուկն ասաց.

Սևաբերան հազար ոչխար դաշտում լինի,
Հազար կնքված քիսա գետնի վրա լինի,
Թող մի օր մարդու անունը
Այսպես աշխարհքի երեսին լինի,
Հա՛յ վի՜, վի՜, հա՛յ վի՜, վի՜:

Բուլուկն ասաց.—Եղբայր, քեռիս չէր իմ դահիճը. երբ որ միրի տղան մեր սպանությունը լսեց, գնաց աղջիկների հետ պար բռնեց:

Այդ ժամանակ Կառը գնաց միրի տղայի գլուխը թռցրեց, նրա սիրտն ու թոքը բերեց, ասաց.—Եղբայր, դե այժմ վեր կաց տես, թե ես ինչ եմ արել, տես՝ ինչ եմ նվեր բերել եղբորս:

Բուլուկն ասաց.—Եղբայր, դա չէ իմ դահիճը, իմ դահիճը միրն է, երբ նա լսեց մեր սպանության մասին, սկսեց ջրիդ խաղալ:

Այդ ժամանակ Կառը գնաց միրին սպանեց:

Աստծու հրամանով հենց այդ ժամանակ ամպերը դուրս եկան, անձրև եկավ, արյուն բարձրացավ, գլուխները քշեց-տարավ: Կառի ուխտը կատարվեց:

Հա՛յ վի՜, վի՜, հա՛յ վի՜, վի՜:

Բուլուկը Սուրկին սպանում է

Այնտեղ Նամաթը, Կառը և մյուսները հավաքվեցին Բուլուկի վրա:

Արդեն երեկո էր: Բուլուկը վիրավոր էր, կանչեց, ասաց.—Եղբայր Կառ, մի Սուրկին բեր, բեր իմ աչքի առջև տեսնեմ, թե ինչո՞ւ այս անտերն անհավատարմություն արեց:

Կառը Սուրկին բերեց, Բուլուկի առջև քաշեց: Բուլուկը ձեռքը տարավ դեպի իր թուրը, դուրս քաշեց և հետևից Սուրկի ոտքերին խփեց:

Կառը բղավեց, ասաց.—Ինչո՞ւ խփեցիր:

Բուլուկն ասաց.—Ինչո՞ւ չխփեմ: Դու Սուրկին այստեղ կթողնեիր, թիկունքդ կդարձնեիր, կգնայիր: Արաբ Գեսիի բեբիվանները (կթող աղջկերք) կգային Սուրկին կբռնեին, կհեծնեին: Կաթի տիկերը կդնեին իրենց առջև, կասեին՝ սա Բուլու-

կն Սլեմանի Սուրկն է, մի ժամանակ սրանով էր կռվում։ Այդքանը ինձ համար շատ ամոթ է։ Դե, դու Սուրկին պատանք արա, գետինը փորիր, թաղենք։

Բուլուկն ասաց.—Եղբայր, դու իմ դիզմանները (երկարաճիտ կոշիկներ) քաշիր։ Երբ Կառը գիզմանները քաշեց, նրանց մեջ արյունը լերդացել էր։

Բուլուկի կտակը

Բուլուկն ասաց.—Մի բաժակ սառը ջուր տուր ինձ։

Կառն ասաց.—Եղբայր, սառը ջուրը քո վերքի համար լավ չէ։ Այս ասելով, Կառը ջուրն ուշացնում էր, որպեսզի Բուլուկը առժամանակ ողջ մնա։

Բուլուկն ասաց.—Եղբայր, ես մեռնելու եմ, փառք աստծո, ինչ ասես՝ բերել եմ։ Ինձ համար մի ձեռք շոր կարիր։ Հորեղբայր Բղդո, դու էլ ինձ համար մի դագաղ շինիր, փայտ շատ կա, տախտակները շատ են։ Իմ աջ ձեռքը պատուհանից հանիր, իմ դագաղը դիր առաջին ուղտի վրա, Բեջանի սանձը գցիր իմ թևին։ Մի ձու դիր իմ ձեռքի մեջ, երբ որ մայր Վարդեն գա քարավանի առաջ, նա հեռվից հեռադիտակով կնայի, կիմանա, որ Կառը կա, Բուլուկը չկա։ Երբ որ գա, ձեզ հասնի, նա ձեզ կարկառ կանի, իսկ երբ որ իմ ձեռքը տեսնի, պիտի ասի. «Կառ, լավո, ո՞ւր է իմ Բուլուկը»։

Կա՛ռ, ասա քո Բուլուկն առաջին ուղտի վրա է, նա առաջին ուղտին կնայի, իմ ձեռքը պատուհանից հետ ու առաջ կշարժվի։ Նա պիտի ասի. «Կառ, լավո, Բուլուկի ձեռքն ինչո՞ւ է շարժվում»։ Դու իրեն ասա. «Բուլուկն ասում է, թող մայրս լաց չլինի, ես արար աշխարհը մի ձու արեցի, ձուն էլ քարին խփեցի, աշխարհը երկու դուռ է, մեկով մարդը գալիս է, մյուսով գնում է... Աշխարհն այդպես եկել է, այդպես էլ կգնա։ Թող Փերիշանին նրանց ձեռքում չթողնի, եղբայր Կառի համար ուղի։ Իսկ երկրորդ պատվերս այն է որ, դու, Կառ, իմ վրեժն Ալի Ամար աղայից առնես և նրա աղջիկը քեզ համար բերես։ Ա՛խ, Կառ, երանի մեկ անգամ էլ Փերիշանի երեսը տեսնեի։

Այս եղավ Բուլուկի վերջին խոսքը. Նրա աչքերն սպիտակեցին, թասաձև խոր ընկան, ջուր խմեց, եղբայր Կառի ծնկների վրա մահացավ։

Կառը լաց եղավ, ասաց.

— Վա՜յ, մեզ, վա՜յ մեզ.
Թող քո եղբոր աչքերը կուրանան,
Խումար սարում իմ եղբորն սպանեցին,
Ոչ ոք չի գա մեզ օգնության։

Մըրտըը Լեքոն էլ շատ լաց եղավ, ասաց.—Կառ, այսուհետև սպասելն աննպատակ է։

Կառը վերադառնում է

Կառը, վիրավոր սրտով, ուղտերի քարավանը ճանապարհ դրեց։ Եղբայր Բուլուկի դագաղը դրեց առաջին ուղտի վրա։ Բոլոր ուղտերը բարձեց։ Առաջին ուղտը սև շորերով ծածկեց։ Երեսը դարձրեց դեպի Մըլի Ալի ամար աղայի էլը։

Գնացին։

Ասպ ձին թամբեց սևով. Բուլուկի ռազմական շորերը գցեց թամբի վրա, Բոսամորի թուրը, դավաթուկի քոլոզը թամբին կապեց, սև համուզյա փուշին քցեց նրա վրա, Բոսամորի թուրը հետը կախեց, տասներկու հազանի նիզակը սևով պատեց, թամբին ամրացրեց։ Ինչպես Բուլուկը պատվիրել էր, այնպես էլ արին. ճանապարհ ընկան։ Կարճ ժամանակամիջոցից հետո նրանք հասան Մըլի Ալի Ամար աղայի հողը։

«Աչքալույս» են տանում Վարդակին

Մի հովիվ լուր տարավ Վարդակին, թե՝ «Աչքդ լույս, Բուլուկի հրոսախումբը, որ գնացել էր, վերադարձավ»։

Լուրն Ամար աղային էլ հասցրին. «Բուլուկը Բեջանին բերեց, ուղտերն էլ բերեց»։

Վարդակը երկու ձեռք թմբուկ-զուռնա վերցրեց, եկավ Բուլուկին ընդառաջ։ Նայեց, տեսավ, որ Բուլուկը նրանց մեջ չկա, Կառն էլ տխրած՝ ձիավորների մեջ է։ Ասաց.—Տղաներ, թմբուկի ձայնը կտրեք։ Մայր Վարդակը վեր կացավ կարճ ճանապարհով տղաներին դիմավորեց։ Նորից հեռվից նկատեց, որ սիրելի Բուլուկը ձիավորների մեջ չկա։ Վարդակը չորս կողմը մռնչաց՝ նման ուղտի, գայլի, գոմեշի. եկավ, մոտեցավ քարավանին, նորից հե-

ռադիտակով նայեց. Կառը կա, Բուլուկը չկա, հասավ նրանց, ասաց.— Կառ, լավո, ո՞ւր է իմ Բուլուկը:

Ասաց.— Առաջին ուղտի վրա է:

Վարդակը լաց եղավ, ասաց.— Կառ, լավո, իմ Բուլուկն ինչո՞ւ է ձեռքը շարժում:

Ասաց.— Մայրիկ, ասում է՝ ես արար աշխարհը մի ձու արեցի, ձուն էլ քարին խփեցի, կոտրեցի. աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա:

Վարդակի բարկությունն իջավ. «Աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա»: Իր հոր օջախը քանդեց: Լաց ու կոծով եկան՝ վրանի մոտ: Բուլուկի դիակն իջեցրին, վրանը սևով ծածկեցին: Հետո Վարդակն ասաց.

Թող պատճառ դարձողները խեր չտեսնեն,
Իրենց դրկում երեխա չտեսնեն,
Ցորեն ցանեն դիվան վերցնեն...

Վարդակը լաց եղավ, ասաց.

Ամար աղա, աստված քու տունն ավերի
Ինչո՞ւ իմ որդիներիս ուղարկեցիր թշնամու վրա,
որ սպանվեն:
Ինչպես ես իմ որդուս դիակի վրա սուգ եմ անում,
Դու էլ քո տան վրա սուգ ու շիվան անես:

Ժողովուրդն էլ վրանի շուրջը հավաքվեց, լաց ու կոծից հետո Բուլուկի դիակը գերեզմանատանը թաղեցին: Այնուհետև ժողովուրդը վրանի շուրջը հավաքվեց՝ «գլուխդ ողջ լինի» ասացին Վարդակին ու Կառին և գնացին:

Ի վերջո Մըրտըր Հըքոն ասաց.— Մայրիկ, ոչինչ, թող Կառը քեզ համար սաղ լինի. Բուլուկն ինձ ասաց. «Ասա մայր Վարդակին, թող Փերիշանին եղբայր Կառի համար ուզի»:

Վարդակն ի՛նչ է մտածում

Վարդակը շատ խելոք էր. մտածեց՝ քանի որ Բուլուկն սպանվել է, հավանական է, որ իմ բոլոր եղբայրներն սպանվել են: Վախենում էր Կառից հարցնել՝ «Եղբայրներս ողջ են, թե՞ սպանվել են»: Վարդակը մտածեց, եթե Կառին մի կերպ չվիրավորեմ, նա ինձ ոչինչ չի ասի: Վարդակն ասաց.

Կառո, լավո,
Իմ Բուլուկը գլխի փունջը սանրում է,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Ասում են Բուլուկը մարդկանց սպանում է,
Կառը Թիկունքից փախչում է,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։

Կառն ասաց.

Մայր իմ Վարդակ,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜.
Բավական է ինձ հարվածես,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜.
Այո՛, ես Կավրե Զախմախայում
Վերջ տվի նրանց,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։

Վարդակը նոր միայն հասկացավ, որ իր եղբայրներն սպանվել են։ Վարդակը շատ լաց եղավ իր եղբայրների համար, բայց խելույն մի բան մտածեց. «Սա օտար էլ է, ինչու՞ եմ լաց լինում։ Եղբայրներս և որդիս Փերիշանի համար սպանվեցին։ Մի տեսնենք՝ Փերիշանը Կառին կառնի՞, թե՞ չի առնի։ Ես իմ որդու հարսանիքը կանեմ, հետո միայն եղբայրներիս և տղայիս սուգը»։

Փերիշանի ցանկությունը

Փերիշանը վրանի առջև կանգնել էր.

Վարդակն ասաց.

— Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜,
Իմ վրա դուրս եկավ մի մեծ ամպ,
Ասում են՝ իմ Բուլուկին սպանել են,
Վերջ են տվել իմ բարեկամներին,
Հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Իմ վրա եկավ կատաղի քամին,
Խփում է արաբական կոնի վարագույրին
Եվ շարժում է. հա՜յ վի՜, վի՜, հա՜յ վի՜, վի՜։
Թող աստված Ամար աղայի որդուն սպանի,
Նրա վրանը վրանների միջից վերցնի,

Հա՛յ վի՛, վի՛, հա՛յ վի՛, վի՛։
Ես չգիտեի, որ եղբայր Կառը
Իմ հոր սերնդին վերջ կտա,
Հա՛յ վի՛, վի՛, հա՛յ վի՛, վի՛,
Իմ Բուլուկը կսպանվի,
Ոչ ոք իմ տանը չի մնա,
Հա՛յ վի՛, վի՛, հա՛յ վի՛, վի՛։

Փերիշանն ասաց.

Մայր իմ, իմ վրա դուրս եկավ մի սև ամպ,
Թող քո Բուլուկը դրախտի մեջ փթթած վարդ լինի,
Հա՛յ վի՛, վի՛, հա՛յ վի՛, վի՛։
Քանի որ Բուլուկն սպանվել է,
Թող եղբայր Կառը նրա տեղը ապրի,
Հա՛յ վի՛, վի՛, հայ վի՛, վի՛։

Ամար աղան ասաց.

Վարդակ, դու ինչու ես անիծում,
Ես քո որդուն հո բռնի չուղարկեցի՞,
Ինքը գնաց, հա՛յ վի՛, վի՛, հա՛յ վի՛, վի՛։

Ամար աղայի կինը լաց եղավ, ասաց.

Իմ Բուլուկը շատ քաջ էր
Իմ աչքերի լույսն էր,
Արաբների երկրում մեռավ,
Իմ Փերիշանն աշխարհի մեջ անբախտ մնաց։

Նամարի ցանկությունը

Նամաթն Ամար աղային գաղտնի ասաց. — Ամա՛ր աղա, դու ինչու համար ես մի գյադայի վրա լաց լինում։ Բեջան զամբիկը, ուղտերը ես եմ բերել։ Կառն ու Բուլուկն արաբների առջևից փախան։ Ես մենակ կռվեցի։ Փերիշանին տուր իմ տղային։

Նա էլ իր անպետք որդու համար էր այդպես անում, ուզում էր Փերիշանին տանել իր կուտ ուտող որդու համար։

Մըրտըը Լըքոն այս խոսքերը լսեց, գնաց Փերիշանի և Ամար աղայի կնոջ մոտ, ասաց.—Մայրիկ, Նամաթը սուտ է

տանում, Քուլուկն ինքը Բեջանն էլ, ուղտերն էլ բերեց։ Նամաթը դավաճանեց։ Քուլուկի ձին թողեց Նեխած Լճակների վրա, ձին հիվանդացավ, կռվում ընկավ, թշնամիները Քուլուկին սպանեցին։

Փերիշանը դեմ է Նամաթին

Փերիշանը լաց եղավ, ասաց.—Մայրիկ, ինձ սպանեցեք, տվեք շներին, մի՛ տաք Նամաթի տղային։

Հետո Փերիշանը գաղտնի գնաց, Քուլուկի գերեզմանի վրա լաց եղավ, մի երգ ասաց.

Իմ ազիզ Քուլուկ, հողի տակից վեր կաց,
Քո թուրը, վահանը կապիր մեջքիդ,
Ինձ թոռունների էլից փախցրու,
Խարդախ Նամաթի տղայից ազատիր

Վարդակն ուզում է Փերիշանին Կառի համար բերել

Անցավ մի քանի օր։ Վարդակը ասաց.—Կառ, դու իմ եղբայրներից քանիսի՞ն ես սպանել։

Կառն ասաց.—Վեցին. մեկին էլ քո սիրո համար թողեցի, որպես քո ծնողների սերունդները երկրի երեսից չջնջվեն։ Միայն մեկը ողջ մնաց, բայց նրա ձեռքերն ու ականջները կտրեցի։

Վարդակն ասաց.—Նրան էլ դու պետք է սպանեիր, որպեսզի իմ սիրտը հովանար։

Վարդակը վեր կացավ, գնաց Ամար աղայի տունը՝ իր հարսի խնդրի համար, բայց Մըլի Ամար աղան աղջիկը չտվեց։ Վարդակը, ճարը հատած, եկավ իր որդու մոտ, ասաց.—Մըլի Ամար աղան աղջիկը չտվեց, մի կողմից Քուլուկն սպանվեց, մյուս կողմից՝ քո յոթ քեռիները, բացի դրանից. Մըլի Ամար աղան Բեջանին հենվում է, բեխերը ոլորում։

Կառը կռվում է

Կառը վեր կացավ, գնաց Մըլի Ամար աղայի դեմ կռվի։ Մենակ ձեռքը՝ Շեր Ալին էլ լինի, ձայն չի հանի։ Ի՞նչ աներ, նամուսի գործ էր։ Կռվում էր դաշտում։ Նա ոչ մեկին թույլ չէր տալիս իր դեմը կանգնի։ Մըլի Ամար աղայի երկու ծառաներն սպանվեցին, բայց երկու կողմից Կառի վրա եկան, թիկունքից

երկու հարվածով նրան վիրավորեցին։ Կառը չէր ուզում փախչել, նա լավ էր համարում մեռնել, քան փախչողի անուն վաստակել։ Նա շարունակեց կռվել մինչև երեկո, բայց կռվողները շատացան։ Վերքերը տանջում էին Կառին։ Նա իր շորերից պատռում էր, դնում էր վերքերի վրա, բայց վերքերը շատ էին և վտանգավոր։ Մըլի Ամար աղայի մարդիկ նորից շատացան, Կառը կրկին ուժերը հավաքեց, ասաց.—Ա՛խ լը մըն պըշտ (ա՜խ իմ թիկունքը) և Ջուդ լեռան նման ձիու վրայից ցած գլորվեց, ընկավ ձիու ոտքերի առջև։

Մըլի Ամար աղայի արյունախում ծառաները վրա վազեցին, Կառին սրանիներով սպանեցին։

Վարդակն էլ իր որդիների ու եղբայրների ծանր վշտից իրեն սպանեց և շեն վրանը միրազխորը սեփականեց։

ԿԱՌ ՈՒ ՔՈՒԼՈՒԿԵ ՍԼԵՄԱՆԵ ՍԼԻՎԻ

(ՔՐԴԵՐԵՆ)

Кәрр у ’К’улыкә Слэманә Сливи*

Слэманә Сливи

Слэманә Сливи жы эла ′әмәр а’гаә мыли бу: ә’в гаванә г’унд б’у, ә′ви шых’улә х’у бы дәстә х’у дыда ’хәдандьнә. ’Вәхтә кы ә’ви гаран дыбырә ’черә, хайә дә’вәрра дыгот, к’у һәрйәк жы ’вә жы бона мын йәк ’катә мынра һазыр быкын. Һәкәр ’вана жи ’катә-һазыр быкырана, дә’вар рынд ды’чәранд, лә һәкәр һазыр нәкырана, хыраб ды’чәранд.

Слэманә Сливи йәки ’усабу, лә рожәкә з′әф һәрс бу: дә’вар лы чайр-чиманә ′әлә-Сйара ’чәранд, лы джиә ’хорых. Пәй ’вә йәкә ор’та ’ви у ′әлә-Сйарада шәр пәшда һат. Ду ’вә Слэманә Сливи жы гавинә дәст к’ышанд.

Чар-пәндж һәвалә Слэман дыбын, лә бәлә һавалә мыхәнәт дыбын; ә’вана а’хлә Слэман жы дә′вләтә рут дыкын. Слэман ’уса ’кәсиб дыбә, ’вәки нанә ’ви рожә дәст на’кәбә. Слэман дыбежә:—әзә чы быкым, гәрәкә бывым гаван йан жи шыван, лә гунди ’вә лы мын бы’кәнын, ’вә бежын—Слэман дә′вләта х’у да һәвалә х’у, һәвала дә′влә т хар, ’кәсиб бу, дәрйа ’кәт, әз гәрәкә джики ’уса һәрым быбым х′улам, ’вәки мын нас нәкын.

Слэманә Сливи жы эла ′әли ′әмар а’га хәйди, рабу дарә дәстә х’у һылда рә ’кәт, чу. ’Пыр чу, һындык чу, чу дәр’кәт джики хәриб, расти ’чәмә Хәмурә һат; чу нава эла ′әрәба, лы джәм ’һәсә Дудә у лы мала ’вида ′хулых кыр.

Иджар нава ′әрәба ′талан, тырс һәбу, гәләк джара ды’кәтын пәй ’талана вәдыгәрандын.

Иджар ә’в Слэман ’хочах бу, навә ’ви дәр’кәт, иджар хәл’хә мирә ′әрәба гава зарә ’вана дыгырйан, дыготын: „Һышбын, Слэман, һат“.

---

* Քրդերեն տեքստը տպագրվում է ադրբեջանական նոր այբուբենով։

Сливи лы джэм 'эрэбэ Гэси дыхэбытэ

'Ви 'вэхти лы 'эрэбстанэ мирэк һэбу; навэ 'ви 'эрэбэ Гэси бу; эла 'ви шэш 'һэзар кон бу; гэлэк һэбуна 'ви һэбу. Гэлэк кэри-суриэ 'ви һэбун; пэз у дэ'варэ 'ви һэбун, 'уса жи илхиэд һэспа. Мы'һинэк 'ви 'эрэбстани һэбу, нав у дэнгэ 'вэ 'тэмамйа дынйаэ бэла бубу, лы һэр дэра дэрэ'ха 'вэ һэспэда хэбэр дыдан: хазыла х'у бы хайэ 'вэ һэспэ данин, гэлэка 'чэвнэбари жэ дыкарын, һэр йэки дыхаст 'вэ һэспэ дэст бинэ, 'вэки э'в бы х'у жи 'кэф у эш'х быбын.

'эрэбэ Гэси һэспэд х'у кырын бэр Сливи, 'вэки бы'чэринэ. Сливи бэй'тэрэки зор бу; гэлэки хэмх'ур бу жы бона һэспа. Илхиэ х'у дыбырэ дэшта, гэлйа, лы һэр дэра ды'черанд; шэв у рож ды'чэранд, һэр'тым дыфыкыри 'ка лы 'кэдэрэ джиэ 'чэрэ һэйэ, 'вэки һэспа бывэ лы 'вэдэрэ бы'чэринэ. Рожтра дынэ һэсп дыбырэ 'вэдэрэ ды'чэранд.

Сливи рожэкэ һэсп бырын лы бэр дэвэ б'эрэ, бы х'у дур рунышт у лы б'эрэ дынэри, һэма 'ви 'вэхти лэ ныһэри, дит кы, чы бывинэ, жы б'эрэ һэспэки б'эри дэр'кэт, 'эв һэспэ б'эри х'у авитэ сэр мы'һина Бэджана 'эрэбэ Гэси, Бэджан жи жы 'ви һэспи ф'эл бу. Сливи эва йэка дит у жы Гэсира нэгот, фыкри: „'вэки, эгэр сала тэ жи бывэ бэй'тэрэ 'ви, 'ви чахи дэ'вса һэ'хэ х'у дыкарэ джануйа Бэджанэ быхазэ.

Слэманэ Сливи 'уса жи кыр, э'ви диса мы'хати лы һэспа кыр.

Сливи дэ'вса һэ'хэ х'у джанйа Бэджанэ дыстинэ

Салтыра дын 'эрэбэ Гэси диса кыр к'у, 'вэки Сливи быкэ бэй'тэрэ х'у, э'ви чахи Сливи дэ'вса һэ'хэ х'у джанйа Бэджанэ хаст, 'вэки 'тэзэ 'вэ фырк быбйа. 'эрэбэ Гэси гэлэк у гэлэк тыштэд дынэ жэра гот 'вэки һылдэ, 'тэк джанйа Бэджанэ нэхазэ, лэ Слэманэ Сливи 'хайл нэбу. 'эрэбэ Гэси жи ныза нбу, 'вэки джан'у жы һэспэ бэ'рйэ. Гэлэки 'хэдырэ Слэманэ Сливи занбу, чыма к'у э'в бэй'тэрэки баш бу, рабу хэбэр даэ.

Сливи джан'у жэ стәнд, мәзын кыр, һинкыр, навэ 'вэ дани Сосык. Слэманэ Сливи хортәки гәләки бәдә'в бу, 'вәхтэ кы Сосыкэ (джанйа Бэджанэ) сйар дыбу, 'ви 'тырэ 'хә'вата Сосыкэ бы 'вира й'әк дыбә. ә'ви гәләк джара лы дора илхиэ дыда джырида, лы сәр кәвыра, лы сәр джә'в у канйара Сосык дыда чәрхандынэ, ә'в бы х'у һини сйарбунэ бу; һәр тышт бир дыкыр; гәләк джара илхи бэхай дыһышт, дыда джирда, джырид дыкыр, жы әвэ йәкэ жи һәспэ бәр 'ви рож бы рож храб дыбун: жар дыбун. әва йәка 'әрәбэ Гэси жи 'тәхмин кыр, ләма нав-нава жы Слэманэ Сливи дыпырси: „Слэман, ча'ва дых'унэә, ту бәй'тәрэ бәрэ нини, чы лы тә 'хә'вмйә, һәсп чыма 'ва жар дыбын, чы буйә".

— А'га, тыштәки накә, әз рынд хай дыкым, Слэманэ Сливи 'ва дыгот, лэ 'һыш у а'хылэ 'ви лы сәрэ 'ви нинбу.

'Вәхтэ авдайна һэспа, Слэман дыфыкыри: „әзэ гәло чычах лы Сосыкэ сйар быбым, һәрымә шэр, гәло пэшйа чәнд мэра дыкарым шәр быкым". Гава ә'ви лынгэ х'у дадани зәнгуйа Сосыкэ, Сосыкэ дыкырә 'һирә-'һир. 'Ван 'вәхта ә'в мәрывэ шәш 'һәзар конэ 'әрәба дәрды'кәтын дәрва лы 'ви, сйарбуна 'ви и Сосыкэ дынерин.

Слэманэ Сливи гәләки жы һәспэ 'һыздыкыр, илаһи к'у һәспәкә мина Сосыкэ; ә'в лы сәр сйарбунэ бәнги бу, лома жи гав у сә'һәт жы һәспэ дур нәды'кәт, лэ сйар дыбу: дычу жэрэ и жорэ, 'чиэ, дәштэ у нә'вала.

ә'ви жы бәй'тәриэ дәст 'кышанд, дәст бы шэр, 'хочахиэ кыр.

Слэман 'Вәрдәкэ дырәвинә

Слэманэ Сливи ды нава 'вэ элэда 'хизәкә бәдә'в дит, навэ 'вэ 'Вәрдәк бу: ә'в бы х'у жи хушка 'һәфт быра бу, 'хиза 'һәсэ Дудэ. Слэманэ Сливи лы сәр 'Вәрдәкэ бәнги бу, кырк быстинә, һәма 'ч'әвэд ла'вэ 'һәсэ Дудэ жи зуда лы Сосыкэ бун, тэра дитын, 'вәки дә'вса 'хәлән Сосыкэ быхазын.

әва пырса жы бона Слэман гәләки чәтын бу, ә'ви чы'ха к'у 'Вәрдәкэ 'һыз дыкыр, а'в'ха жи, һәла ду 'хат зэдә

жы Сосыкэ 'hыз дыкыр, hэсп жы бона 'ви 'әмырэ 'ви бу, бы 'вэ hэспэ ә'ви гәрәкэ навәки 'хәндж 'хазандж быкыра, ә'ви нәда. „Надым", 'ва гот, лэ агырэ бәнгибунә чы'ха чу, а'в'ха лэ зоркыр, дыфыкыри бы тәhәрәки 'Вәрдәкэ дәст бинә, бырәвинә, лэ жы к'урэд 'hәсэ Дудә дытырсйа. ә'вана лы 'тәмамйа 'әрәбсганэ бы нав у дәнгбун; шәркырэд зорбун у сәр'вэрэ әскәрэ мирэ 'әрәбэ Гэси бун.

Слэманэ Сливи 'ва хәбәр даэ, 'вәки Сосыкэ быдә 'хәләнэ 'Вәрдәкэ. 'Вәхтәки к'урэд 'hәсэ Дудә да ба'вәркырынэ.

Рожәкэ Слэман дит, ку 'Вәрдәк чу сәр каниэ, 'вәки авэ бинә. Слэман лы Сосыкэ сйар бу, ху гиhандә каниэ. Дәстэ 'Вәрдәкэ гырт, лы 'тәркуйа х'у сйар кыр, ажот чу мына бу, ажот чу, чу джиэ 'уса, 'вәки бы 'ви насын.

Ла'вэд 'hәсэ Дудә но'тлани г'урэд hар 'кәтын ду Слэманэ Сливи, лы hәр дәра гәрйан, лэ нәдитын.

Слэман бы 'Вәрдәкәра 'тәвай лы 'ван 'чйа ма; ә'в дәр 'hәму бы 'ви нас бун, 'тәхмин кыр, 'вәки 'ва навә, к'урэд 'hәсэ Дудә бы мәрхаса 'вэ 'ви у 'Вәрдәкэ быгырын, фыкыри, 'вәки лазымә жы 'ви 'вәлати hәрә, к'урэд 'hәсэ Дудә иро на, рожәкә дынэ 'вэ 'hәйфа х'у hылдын.

Слэманэ Сливи сәрэ х'у hылда бы 'Вәрдәкәра 'тәвай, жы 'ван дәра дур к'әт, сәрэ Сосыкэ бәр бы 'чйэ кыр. ә'в жы 'әрәбстанэ дәр'кәт, дылбар бу, дыhа тырса 'ви жы ла'вэд 'hәсэ Дудә 'т'унәбу, вәгәрйа hатә гыhишт эла 'әли 'әмәр а'гаэ мыли, х'у спартә 'ви, ә'ви жи Слэманэ Сливи hылда нава эла х'у.

'әмәрэ мыли дит, ку Слэманэ Сливи сйарәки быготына тәйә, лаи'х дит, 'вәки диса лы сәр эла х'у 'hәсаб бықә.

Слэманэ Сливи ды нава эла 'вида бу хаймал. Чәнд сал дәрбаз бун, к'урәк жы 'вира бу, навэ 'ви данин 'К'улык, пашэ к'урәки дын жи бу, навэ 'ви жи данин Кәрр.

Пашэ Силиви мыр.

'К'улык у Кәрр мәзын бун.

Навә мы'һина 'К'улык Сосык бу, гәрма нивро, 'К'улык го:

— әзә Сосык бывым ав быдым.

Сосык бырә сәр каниә, авда.

Пәзә 'әмәр а'га лы сәр авә мә'гәл бубу.

Навә 'хиза 'әмәр а'га 'Пәришан бу, 'хиза азәп бу, чы'хас бәжи бәдә'в бу.

'Вәхтә К'улык чу сәр каниә, 'тәшйа П'әришанә дәстда бу, дәрманә к'уләка бын пычәнгә бу, ә'в жи һат пәзә бавә х'у дәрман быкә.

Гава 'ч'әвә 'К'улык бы 'ч'әвә 'Пәришанә 'кәт, бист у чар дыла 'һәбанд.

'Пәришанә го:—Хәра хадәра мын занбуйа чыка т'у азәпи йан бы жыни.

'К'улык Сосыкә сйар бу, мәйданәк да Сосыкә, бәр бы конә х'у чу.

һәма 'вә дәмә Лы'коә мыртыб конә, 'әмәр а'га бу.

'әмәр а'га го:—Гәло ә'в сйарә каниә 'кибу, машәла мы'һина 'вира.

Лы'ко го:—ә'в 'К'улык бу.

Го:—Гәло, Лы'ко, ә'в мы'һинә нафрошә?

Го:—'әмәр а'га, 'вәхта 'К'улык һат сәр каниә, дылә 'К'улык 'кәтә 'Пәришанә, 'вәки ту дыхази, макәкә (дәкә) 'вә һәйә, навә 'вә Бәджанә, мы'һина 'әрәбә Гәсийә, а'гаә шәш 'һәзар мала, 'вәки ту 'Пәришанә быди 'К'улык, 'К'улыке 'вә һәрә жы тәра Бәджанә бинә.

'әмәр а'га нызанә 'хизә быдә 'кә

Иджар 'хиза 'әмәр а'га 'Пәришан гыһишти бу. Иджар мыштәриә 'вә 'хизә әлбат, малбат, һәрча гырә-гырә 'әширәтә лә рабунә хазгиниә.

'әмәр а'га 'хиза х'у жы йәкира нәда. Иджар 'әмәр а'га 'вәки 'хиз быда әлбатара, малбат жы 'әмәр а'га бар дыкыр, 'вәки быда малбатара, әлбат бар дыкыр.

'әмәр а'га тәда ма шаш, 'хиза х'у нәда.

Шэ'вра 'əмəр а'га у руспийан

Рожəкэ руспийан у ма'хуланэ элэ бəрəв бун ба 'əмəр а'га, пэ ширəт кырын, готын к'у:

— 'əмəр а'га, малбат жи, элбат жи 'хиза тə дыхазын, т'у чыма 'хиза х'у нади жы 'вана?

'əмəр а'га гот:—Гəли руспйан вə ма'хулан, əз нызаным ча'ва быкым, һəргэ 'хизэ быдым элбата, малбатэ быхəйдə, һəргэ быдым малбата, элбатэ быхəйдə.

'əв чах к'у жы 'əмəр а'га əв джаб быһистын, иди кəсəк тыштəк нəгот.

Шэ'вра 'əмəр а'га бы жынэра

Эварэ ди'ван бəла бу, иджа 'əмəр а'га эварэ жы ди'ванэ һатə малэ. Чу лы сəр джиэ х'у рунышт—мəлул бу. Душырмиш бу.

Жына 'əмəр а'га, 'вəки 'əмəр а'га 'уса дит, пырс кыр, гот:

— Хэр бə 'əмəр а'га, т'у чыма у'са мəлули? Нола һəрро набэжи, на'кəни, 'вəки т'у душырмиш дыби, 'кəсибэ 'вэ чы быкə, а'в'ха мал, зэр, зивэ тə һəйə, быра 'кəсиб һəрə х'у быхəны'хинə. Нəвə т'у бэ'кэфи, нəхаши йан əскəр сəр тəда гыртйə?

'əмəр а'га һылани го: Жынэ, нə нəхашым, нə жи əскəр һатйə.

Жынэ гот:—Лэ сəбəбйа мəлулйа тə чйə?

'əмəр а'га һылани гот:—Жынэ, жынэ, хазыл əскəрəки гран быһата, жы мынра 'талан быкыра, эвэ хəбəрэ чэтыр бу.

Жынэ һылани гот:—'əмəр а'га, лэ əв чы дəрдə, дəрдэ тə, к'у т'у жы мынра навэжи.

Гот:—Жынэ, расти жы тəра бэжым, тə 'хизəк жы мынра нанйə, тə бəлакə хадэ аниə, нə т'у би, нə 'хиза тəбə, хадэ р'уһэ 'вэ настинə, əз жэ хылаз быбым, йа хадэ р'уһэ мыын быстинə, 'хизык жы мын хылаз бə.

Жынэ гот:—'əмəр а'га, т'у чыма 'вэ хəбəрэ дыбэжи, 'хиза мын чйə 'хавə йан дызə? һəркэ т'у зани 'хавə, дызə, бэжə быра сывэда бык'ужын, быдын тə'жи-'тула быра бых'ун.

'əмəр а'га һылани жынэра гот:—Жынэ, 'хиза тə нə 'хавə, нə жи дызə, һəма 'ч'əвэ элбата жи 'кəтйə 'хиза тə, 'ч'əвэ малбата жи 'кəтйə 'хиза тə. əз нызаным быдымə 'кижани. Сəва вэ хəбəрэ əз к'əтыма ор'та д'у агыра

Жына 'əмəр а'га гот:—'əмəр а'га, хадэ жы тəра 'хизəк дайə, ча'ва давэ тə дыгəрə т'у 'уса дыбэжи. Хадэ жы тəра фəрасəт, а'хыл дайə 'хиза ху бы ах'ылэ х'у быдə мэр, 'һəйфа тə, ту мэри, а'гаэ ду 'һəзар малани 'һəта ныһа ныкари фəндəки чэки, к'у гышк жы тə бырəвын.

'əмəр а'га гот:—Жынэ, хадэ 'əмырэ тə дырэжкə, шəр шэрə, чы нэрə, чы мэйə. əз нызаным чы быкым, т'у рэкэ дайнə пэшйа мын, бəлки əз сəрэ х'у хылазкым.

Жынэ гот:—'əмəр а'га, иро архаин 'палдə, сыбэ зу зиафəтəки бықə, бышинə чы'ха 'əширəт һəйə, малбат, элбат бəрəв быкə бинə, гази Лы'коэ бəнгзадə, Б'гдоэ əрмəникə, быра дəфэ, зырнэ хиныи, фəрфур финджанэ сəр'тахыма зəрин дайнə, чычах нан харын, финджана фəрфури 'тыжи 'ха'вə быкə, гыстила 'Пəришанэ бавэжə тэда, пашэ газикə, гəли пызмама, элбата, малбата, һəркəсэ əвэ финджанэ быx'уə, гыстила 'Пəришанэ дайнə 'тылйа х'у гəрəкэ һəрə нава эла ə'рəба, нава 'һəфт к'урэ 'һəсэ Дудэ, мы'һина Бэджанэ бы 'хəн'тəрəки дəвэ пышт рəш бинə 'хəлəнэ 'Пəришанэ, бы шəртэ 'һəлалйа хадэ, бы ш'əдəти сэсыд шэст у шəш 'пəхəмбəра, əзэ 'Пəришанэ быдымə 'ви.

'əмəр а'га го:—Жынэ, шəр к'у шэрə, чы жынə, чы мэрə, а'хылэ тə жы йə мын чэтырə.

'əмəр а'га гази элбат, малбата дыкə

Сывэ сафи бу. 'əли 'əмəр а'га сывэ рабу лы дəфа һə'варэ да; эла Кикан, Мылан у Мырдэсйа лы һəв джванд; гази кыр ани һат элбат, малбат, зиафəт кыр, нэзики 'һəзар мэран бəрəв бун, 'һəму дылэ х'уда дыготын, к'у əв „фин-

